Tacis

Ընդհանուր բնութագիրը

Առանձնահատկությունները

Տրամադրողը

Ստացողը

Անհրաժեշտ է...

Տրամադրումը

Ուժը կորցնելը

Փաստաթղթերը

Լիցենզավորման գործընթացի հայեցակարգ



WWW.LICENSING.AM

Երևան - 2001

Էլիո Ջերմանո

Եվրոպական հանձնաժողովի
պատվիրակության ղեկավար, դեսպան

Ավելի քան մեկ տարի է, ինչ Հայաստանում ուժի մեջ է մտել Հայաստանի եւ Եվրամիության միջեւ կնքված գործընկերության եւ համագործակցության համաձայնագիրը: Կարծում եմ՝ Համաձայնագրի արդյունավետ իրականացումը պետք է առաջնահերթություն հանդիսանա Հայաստան - Եվրամիություն հարաբերությունների համար:

Համաձայնագրի որոշ կետերը, որոնք մասնավորապես առնչվում են առեւտրի եւ ներդրումների ոլորտների հետ, պահանջում են հայկական իշխանությունների մշտական մասնակցությունը: Իշխանությունների ակտիվ ներգրավվածությունը այս գործընթացում բացառիկ կարեւորություն ունի բարենպաստ ներդրումային մթնոլորտի, ինչպես նաեւ հայ եւ եվրոպացի ձեռներեցների արդյունավետ գործունեությանն անհրաժեշտ օրենսդրական դաշտի ստեղծման համար: Այս պարագայում, կարեւորագույն դեր են խաղում նաեւ հասարակական կազմակերպությունները եւ հասարակության այլ օղակները՝ հետեւելով այդ ուղղությամբ կառավարության կողմից կատարվող քայլերին եւ, ինչու ոչ, երբեմն շտկելով եւ լրացնելով բացթողումները:

Եվրամիության TACIS տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում իրականացվող այս նախաձեռնությունը յուրօրինակ է թեկուզ միայն այնքանով, որ, լինելով փոքրածավալ, այն այնուամենայնիվ լուծում է տալիս մեծ խնդիրների: Ծրագրի արդյունքում օտարերկրյա եւ տեղացի ձեռներեցներն ու ներդրողները կենտրոնացված, համակարգված եւ մատչելի տեղեկություններ են ստանում Հայաստանում գործունեություն ծավալելու համար ներկայացված պահանջների եւ գործունեության տեսակների արտոնագրման մասին: Արդյոք դա չէ՞, որ անհրաժեշտ է գործարարների համար «թափանցիկ» եւ բարենպաստ միջավայր ստեղծելու եւ նրանց վստահությունը բարձրացնելու համար: Ակնհայտ է, որ արդյունավետ համագործակցությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կառավարությունը եւ գործարարները ձեւավորեն գործող օրենքների եւ կանոնակարգերի նկատմամբ ընդհանուր մոտեցում: Իսկ դա իր հերթին հնարավոր է միայն այն դեպքում, երբ կողմերը հավասարապես իրազեկ են եւ վստահ իրենց գիտելիքների մեջ: Այստեղ է, որ ծրագրի արդյունքում ստեղծված տեղեկագիրը եւ ինտերներտային էջը դառնում են դիրքերը հավասարեցնելու հզոր գործիք:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ծրագիրն իրականացնողներին՝ ավստրիական «Robert Toneian Handelsagentur» եւ հայաստանյան «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» կազմակերպություններին, կատարված մանրակրկիտ, ծավալուն եւ քրտնաջան աշխատանքի համար: Այս նախաձեռնություններն ի վերջո կոչված են խթանել Հայաստանի զագացումն ու բարգավաճումը, ինչպես նաեւ Եվրոպայի եւ Հայաստանի ինտեգրացման գործընթացը: Հիանալի է, որ դրանք ավարտվում են հաջողությամբ:

Ա. Դարբիլյան

Մարդկային զարգացման միջազգային
կենտրոնի հոգաբարձուների խորհրդի
նախագահ

Հայաստանի տնտեսության զարգացման հրամայականն այսօր թերևս իրոք թիվ մեկ հիմնախնդիրն է թե՛ պետականության ամրապնդման, թե՛ միջազգային տնտեսությանն ինտեգրման և թե՛ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների կատարելագործման ճանապարհին: Հետանկախացման տարիներին աշխարհի, այդ թվում և սփյուռքահայ շատ գործարարների հետաքրքրությունների շրջանակում հայտնվեց Հայաստանն իր տնտեսա-աշխարհագրական հնարավորություններով ու ներուժով:

Ակնհայտ է, որ առկա մտահոգացումներն իրականություն են դառնում միայն համապատասխան միջավայրի առկայության պայմաններում. միջավայր, որ պիտի խթանի քաղաքակիրթ բիզնեսի կայացումը Հայաստանում: Այս տեսանկյունից առկա են դեռևս շատ արգելքներ և դեռ շատ բան կա անելու: Եվրոմիության TACIS ծրագրի շրջանակներում մեր կողմից փորձ կատարվեց համակարգել և հնարավորինս մատչելիորեն ներկայացնել տնտեսական գործունեություն սկսելու համար անհրաժեշտ բոլոր տիպի թույլտվությունների և լիցենզիաների տրամադրման ընթացակարգերը: Նշված ոլորտը հատկապես Հայաստանում փոքր և միջին բիզնեսի ծավալման տեսանկյունից թերևս ամենախրթիններից է: «Տվյալ տնտեսական գործունեության տեսակով զբաղվելու համար լիցենզիա անհրաժե՞շտ է, թե ոչ, պետական ո՞ր մարմինն ու ի՞նչ ընթացակարգով է տալիս, ինչպիսի՞ պահանջներ են առկա և ի՞նչ փաստաթղթեր են պահանջվում» հարցերը, որպես կանոն, չափազանց դժվարությամբ էին պատասխան գտնում՝ շատ հաճախ ստիպելով տնտեսվարող սուբյեկտներին պետական չինովնիկների հետ հարաբերվելու այլ ճանապարհներ փնտրել:

Հենց այս խնդիրների գիտակցմամբ էր, որ մենք որոշեցինք համախմբել այս դաշտը կանոնակարգող՝ գոյություն ունեցող ողջ նորմատիվ և օրենսդրական բազան, խմբավորել այն և ներկայացնել բացատրությունների ձևով: Պետք է նշեմ նաև, որ համապատասխան օրենքների, կարգերի, կանոնակարգերի, կանոնների և հրամանների վերլուծության ժամանակ հանդիպելով բազմաթիվ անհամապատասխանությունների ու բացթողումների՝ մենք այնուամենայնիվ զերծ ենք մնացել դրանց անդրադառնալուց՝ ներկայացնելով ընթացակարգերն այնպես, ինչպես կան և իրագործվում են:

Հուսով եմ, որ կատարված աշխատանքն ինչ-որ չափով կնպաստի Հայաստանում ներդրումներին խոչընդոտող գործոնների վերացման գործընթացին:

Ծրագրի մասին

«Հայաստանում տնտեսական գործունեության առանձին տեսակներով զբաղվելու համար անհրաժեշտ լիցեզիաները» վերնագրով ծրագիրը համատեղ իրականացրել են Եվրոպական «Robert Toneian Handelsagentur» (toneian@surfeu.at) և հայաստանյան Մարդկային զարգացման միջազգային կենտրոն (www.ichd.org) կազմակերպությունները Եվրոմիության TACIS ծրագրի շրջանակներում:

Ծրագրի հիմնական նպատակն էր ստեղծել մի համապարփակ և օգտվելու համար հարմար համակարգ, որը կամբողջացներ գոյություն ունեցող լիցենզիաների, արտոնագրերի, թույլտվությունների և որակավորման վկայագրերի տրամադրման գործընթացները, ուղղակիորեն հիմնված լինելով գործող կարգերի, կանոնակարգերի, որոշումների ու օրենքների վրա՝ տեղեկատվությունը կհրամցներ հստակ կանոնավորված և մատչելի ձևով: Այս ինտերնետային էջում ամփոփվել են կատարված աշխատանքի արդյունքները, ներկայացվել են շուրջ 60 ընթացակարգեր, որոնցով կանոնակարգվում են ավելի քան 460 տնտեսական գործունեության ձևեր, որոնք պահանջում են պետական այս կամ այն մարմնի թույլտվությունը:

Այստեղ հնարավոր է գտնել ոչ միայն առանձին տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու համար անհրաժեշտ լիցենզիաների և թույլտվությունների ընթացակարգերը, այլև, եթե պահանջվում է, տվյալ գործունեությունն իրականացնող ընկերության ղեկավար անձանց կամ հատուկ մասնագետների որակավորման վկայագրերի ստացման գործընթացները: Ցանկացած ընթացակարգ, եթե ուղղակիորեն կապվում է այլ ընթացակարգերի հետ, պարունակում է անցումներ համապատասխան մասերում: Եթե տվյալ ընթացակարգը կանոնակարգող նորմատիվ ակտը պարունակում է նաև անհրաժեշտ փաստաթղթերի հաստատված ձև, ապա դրանց էլեկտրոնային տարբերակը ևս հասանելի է, որը կարելի է պարզապես լրացնել ու ներկայացնել լիցենզավորող մարմնին:

Հուշարար

Ընդհանուր բնութագիրը

Այս ենթակետի տակ որպես կանոն կարելի է գտնել այն ոլորտների կամ գործունեության տեսակների ցանկը, որոնց լիցենզավորումը կատարվում է տվյալ ընթացակարգով:

Առանձնահատկությունները

Այստեղ հիմնականում կարելի է գտնել տվյալ լիցենզիայի կամ թույլտվության առանձին այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են գործունեության ժամկետը, այն տարածքը որտեղ գործում է այն և այլն:

Տրամադրողը

Բաժնում տրված են լիցենզավորող մարմնին վերաբերող տվյալներ, հասցեն և հեռախոսի համարը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախարարությունների և գերատեսչությունների կառուցվածքային և կադրային փոփոխությունները զգալիորեն արագ են կատարվում մեզանում, տրվել են հիմնականում պետական մարմինների աշխատակազմերի հեռախոսահամարները, որոնք համեմատաբար ավելի կայուն են և որտեղից մշտապես կարելի է ճշտել կոնկրետ ստորաբաժանման ղեկավարի տվյալներն ու հեռախոսահամարը:

Ստացողը

Այս ենթակետի տակ ներկայացված է, թե ով կարող է ստանալ տվյալ լիցենզիան: Բացի լիցենզիա ստացողի իրավաբանական կարգավիճակին ներկայացվող պահանջներից, եթե այդպիսիք կան, տրված են նաև այն պահանջները, որոնք դրվում են նրա առջև կոնկրետ այս կամ այն տնտեսական գործունեությամբ զբաղվելու թույլտվություն ստանալու դեպքում:

Անհրաժեշտ է ...

Այս բաժինը պարունակում է տեղեկատվություն այն մասին, թե լիցենզիա ստանալու համար ինչպիսի կոնկրոտ քայլեր պետք է ձեռնարկել, ինչ ձեռքբերել, ինչպիսի փաստաթղթեր նախապատրաստել, որքան է կազմում պետական տուրքի այն չափը, որ տվյալ կոնկրետ դեպքում անհրաժեշտ է վճարել և այլն:

Տրամադրումը

Այստեղ, որպես կանոն, ներկայացված են բուն լիցենզավորման ընթացակարգին առնչվող այնպիսի կետեր, ինչպիսիք են փաստաթղթերի ընդունումը, քննարկման ժամկետները, քննարկման առանձնահատկությունները, այլ տվյալներ, մերժումը, մերժման հիմքերը և իրավական հետևանքները և այլն:

Ուժը կորցնելը

Բաժնում ներկայացված են այն բոլոր դեպքերը, որոնք կարող են հիմք հանդիսանալ տվյալ լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչման, տուգանելու, գործողության կասեցման կամ չեղյալ համարման համար, ինչպես նաև յուրաքանչյուրը դեպքում հնարավոր հետևանքները:

ՑԱՆԿ

Ծրագրի մասին 2

Հուշարար 3

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ, ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՌԻԵԼՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 7

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ», «ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ" ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 11

3. ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 13

4. ՊԱՅԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 16

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 18

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՎՏՄՈԲԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 22

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 25

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ, ԲԵՌՆԵՐԻ ԵՎ ՓՈՍՏԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 28

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ, ԲԵՌՆԵՐԻ ԵՎ ՓՈՍՏԻ ՎԵՐԳԵՏՆՅԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 31

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԴԱՆԱՎԵՐԻ ԿԵՆՑԱՂ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 33

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄ (ԱՎԻԱՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 36

12. ԱՆՄԱՔՍ ԱՌԵՎՏՐԻ ԽԱՆՈՒԹՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 39

13. ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 42

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 46

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 49

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 54

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 57

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 60

19. ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 63

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 67

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՐՄՆԱՆՅՈՒԹԻ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 71

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 74

23. ՀԱՏՈՒԿ ՁՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 77

24. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՁՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 80

25. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ (ԼԻՑԵՆԶԻԱՅԻ) ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 82

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 85

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 90

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԴԻՈՅԻ ԵՎ ՀԵՌՈՒՏԱՏԵՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 93

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 95

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՅԻՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 98

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՁԵՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 100

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՁԵՆՔԻ ԱՌԵՎՏՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 103

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՁԵՆՔԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 106

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՁԵՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 109

35. ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 113

36. ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 119

37. ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 125

38. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 129

39. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 134

40. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ԱՐԺՈՒԹՅԻՆ ԴԻԼԵՐԻ ԿԱՄ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 136

41. ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 138

42. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐՆԵՐԻ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 141

43. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 145

44. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋՆՈՐԴԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԻՆԿԱՍԱՏՈՐՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 149

45. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐԻ ԵՎ ԲՈՐՍԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 151

46. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲՈՐՍԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 154

47. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 156

48. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՈՒԴԻՏԻ ԳԾՈՎ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 159

49. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 162

50. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ (ԲՐՈՔԵՐԱՅԻՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 166

51. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 168

52. ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ.....171

53. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ.....173

54. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 178

55. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ.....181

56. ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 183

57. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ.....187

58. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 190

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ, ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՌԻԵԼՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության պետի 1998թ. սեպտեմբերի 10-ի թիվ 183-կ հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետեւյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - անշարժ գույքի չափագրում,
  - կադաստրային քարտեզագրում,
  - շուկայական գնահատում,
  - ռիելտորական գործունեություն:
- **Ոչ տնտեսական բնույթի գործունեության համար լիցենզիա հարկավոր չէ:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **տրամադրվում է 2 տարի ժամկետով,**
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **լիցենզիայի տրամադրման համար փորձաքննության պահանջ չկա, այսինքն տվյալ գործունեությամբ զբաղվելու համար ապրանքների, առարկաների, սարքավորումների, ինչպես նաեւ լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերի փորձաքննական եզրակացություն չի պահանջվում,**
- **լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան որակավորում,**
- **լիցենզիա ունեցող անձանց նկատմամբ հաշվետվության պահանջ չկա,**
- **տվյալ ընթացակարգով լիցենզավորման ենթակա յուրաքանչյուր գործունեության տեսակի համար անհրաժեշտ է ձեռք բերել առանձին լիցենզիա,**
- **լիցենզիայի փոխանցումը եւ օտարումն արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Արշակունյաց փողոց - 7,
    - Հեռախոս՝ 587828:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական անձինք, իրավաբանական եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները:**
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է՝**
  - ունենալ գործավարական մատյան եւ կատարել գրանցումներ՝ կատարված աշխատանքների վերաբերյալ,
  - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել գործավարական մատյանի գրանցումները հիմնավորող փաստաթղթերը,
  - պահպանել գործունեության ընթացքում ի հայտ եկած ծառայողական, առեւտրային գաղտնիքները,
  - փոստային հասցեի եւ հիմնադիր փաստաթղթերի փոփոխության դեպքում 10-օրյա ժամկետում տեղյակ պահել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության համապատասխան ստորաբաժանմանը,
  - Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության կողմից կատարվող ստուգումների ընթացքում համագործակցել եւ աջակցել վարչության աշխատակիցներին,

- մասնակցել Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության «Անշարժ գույքի պետական կադաստրի տեղեկատվական կենտրոն» ՊՓԲԸ-ի կողմից կազմակերպվող ամենամյա որակավորման կատարելագործման դասընթացներին:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ունենալ համապատասխան որակավորում.**
  - տվյալ գործունեությամբ զբաղվելու լիցենզիա ստացած անձինք պարտավոր են անցնել «Անշարժ գույքի պետական կադաստրի տեղեկատվական կենտրոն» ՊՓԲԸ-ի կողմից կազմակերպվող որակավորման դասընթացները եւ տվյալ գործունեության ընթացքում տարին մեկ անգամ մասնակցել այդ դասընթացներին,
  - չափագրման ու կադաստրային քարտեզագրման գործունեություններով զբաղվելու համար անհրաժեշտ է առնվազն 3 տարվա պրակտիկ (դաշտային) մասնագիտական ստաժ,
  - շուկայական գնահատման եւ ռիելտորական գործունեությունների լիցենզավորմամբ զբաղվելու համար անհրաժեշտ է բարձրագույն կրթություն:
- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - ֆիզիկական անձիք պետք է ներկայացնեն՝
    - լիցենզիա ստանալու հայտ,
    - առաջին անգամ լիցենզիա ստանալու համար՝
      - պետք է ներկայացնեն Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության «Անշարժ գույքի պետական կադաստրի տեղեկատվական կենտրոն» ՊՓԲԸ-ի կողմից կազմակերպված որակավորման դասընթացների ավարտական վկայականի պատճենը,
    - լիցենզիայի ժամկետը երկարացնելու դեպքում՝
      - կենտրոնի կողմից կազմակերպված որակավորման կատարելագործման ամենամյա դասընթացներին մասնակցած լինելու վերաբերյալ տեղեկանք,
    - չափագրման ու կադաստրային քարտեզագրման գործունեությունների համար՝
      - հայտ ներկայացնող անձիք ներկայացնում են նաեւ առնվազն 3 տարվա պրակտիկ (դաշտային) մասնագիտական ստաժ ունենալու վերաբերյալ փաստաթուղթ,
    - շուկայական գնահատման եւ ռիելտորական գործունեությունների լիցենզավորման համար՝
      - նաեւ բարձրագույն կրթության վկայականի պատճենը,
    - որակավորման դասընթացներն ավարտած, սակայն լիցենզիա ստանալու համար չդիմած կամ լիցենզիայի գործողության դադարեցման պահից մեկ տարի հետո լիցենզավորման համար դիմած հայտատուն ավարտելու օրվանից մեկ տարի հետո լիցենզավորման համար դիմելու դեպքում պետք է ներկայացնի նաեւ տեղեկանք՝ լիցենզավորման համար դիմելու տարվա ընթացքում որակավորման կատարելագործման ամենամյա դասընթացներին մասնակցած լինելու վերաբերյալ,
    - մեկից ավելի գործունեությամբ զբաղվելու համար հայտ ներկայացնելու դեպքում հայտատուն գործունեության յուրաքանչյուր տեսակի լիցենզավորման համար ներկայացնում է որակավորման դասընթացներն ավարտելու վերաբերյալ համապատասխան վկայական եւ պետական տուրքի վճարի վերաբերյալ անդորրագիր:
  - իրավաբանական անձինք պետք է ներկայացնեն՝
    - լիցենզիա ստանալու հայտ,
    - հիմնադիր պայմանագրի պատճեն,
    - կանոնադրության պատճեն, որտեղ պետք է ամրագրված լինեն լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները,
    - պետական գրանցման վկայականի պատճեն,
    - հայտատուի կառավարման բարձրագույն մարմնի համաձայնությունը (որոշումը)՝ լիցենզիա ստանալու համար,
    - տվյալներ լիցենզավորված գործունեությամբ զբաղվող աշխատողների որակավորման մասին,
    - լիցենզիա ստանալու համար վճարված պետական տուրքի անդորրագիրը,
- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:
  - Տվյալ ընթացակարգով լիցենզավորման ենթակա յուրաքանչյուր գործունեության տեսակի համար անհրաժեշտ է վճարել առանձին:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12 եւ 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում Լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները՝**
  - լիցենզավորող մարմինը պարտավոր է դիմումի ներկայացման օրվանից սկսած՝ 15 օրվա ընթացքում կամ տրամադրել լիցենզիա, կամ մերժել այն՝ հիմնավորելով մերժման պատճառները,
- **Որոշման ընդունումը՝**
  - լիցենզավորման կամ մերժման վերաբերյալ որոշումն ընդունվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության խորհրդի կողմից,
- **Մերժումը՝**
  - լիցենզիա տալը կարող է մերժվել, եթե՝
    - ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ վերոհիշյալ պահանջներին
    - ներկայացված փաստաթղթերում առկա են ոչ հավաստի տեղեկություններ,
    - լիցենզիայի մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները, իրավական հիմքերը:
  - լիցենզավորող մարմինն իրավունք չունի հայտը մերժել չհիմնավորված պատճառով,
  - լիցենզիայի գործողության սկիզբը,
    - լիցենզիայի գործողության սկիզբ է համարվում լիցենզիաների գրանցամատյանում համապատասխան որոշման գրանցման օրը եւ ուժի մեջ է մտնում պետռեգիստրում գրանցվելուց հետո:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ դադարեցումը

- **Կասեցումը՝**
  - լիցենզիայի գործողության կասեցման ժամկետը չի կարող գերազանցել 45 օրը,
  - լիցենզիայի գործողությունը կասեցնելու որոշման մասին, 3-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է լիցենզիա ստացած անձին՝ պահանջելով վերադարձնել լիցենզիայի բնօրինակը,
  - լիցենզիա ստացած անձը պարտավոր է սահմանված ժամկետում վերացնել խախտումները եւ այդ մասին գրավոր տեղեկացնել վարչություն,
  - լիցենզիա ստացած անձի կողմից կատարված խախտումները սահմանված ժամկետում վերացվելու դեպքում նրան է տրվում լիցենզիայի բնօրինակը, եւ վերականգնվում է լիցենզիայի գործողության ժամկետը,
  - լիցենզիայի գործողության կասեցումը չի ազդում լիցենզիայի գործողության ընդհանուր ժամկետի վրա:
- **Դադարեցումը՝**
  - Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել, եթե՝
    - գործունեությունը դադարեցնելու մասին կա լիցենզավորված անձի դիմումը,
    - լուծարվել է տվյալ իրավաբանական անձը,
    - լրացել է լիցենզիայի գործողության համար սահմանված ժամկետը,
    - սահմանված ժամկետում լիցենզիա ստացած անձի կողմից չեն վերացվել խախտումները,
    - լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվել են ոչ հավաստի տեղեկություններ,
    - լիցենզավորված անձը չի մասնակցել ամենամյա որակավորման կատարելագործման դասընթացներին,
    - օրացուցային 1 տարվա ընթացքում կրկնակի անգամ կասեցվել է լիցենզիայի գործողության ժամկետը,
    - լիցենզավորված անձը 6 ամսից ավել չի զբաղվել լիցենզավորված գործունեությամբ,
    - լիցենզավորված անձը չի կատարել նախատեսված այլ պահանջներ:
  - Լիցենզիայի գործողության դադարեցման մասին որոշումը 3-օրյա ժամկետում ուղարկվում է լիցենզավորված անձին՝ պահանջելով վերադարձնել տրված լիցենզիայի բնօրինակը եւ հրապարակվում է մամուլում:
  - Լիցենզիայի գործողության դադարեցման մասին որոշման ընդունման պահից լիցենզիա ստացած անձը զրկվում է համապատասխան գործունեությամբ զբաղվելու իրավունքից:
  - Լիցենզիայի գործողության դադարեցման մասին որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

- Լիցենզիան կորցնելու դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է այդ մասին գրավոր դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչություն, հայտարարություն տալ մամուլում, որից հետո 15-օրյա ժամկետում ստանալ լիցենզիայի կրկնօրինակը՝ վճարելով պետական տուրք:
- Լիցենզիա ստացած անձի բացակայությամբ նրա լիցենզիայի գործունեության կասեցման կամ դադարեցման մասին որոշումներն ընդունվում են այն դեպքում, երբ տվյալ անձը առնվազն երկու անգամ գրավոր ծանուցվելուց հետո չի ներկայացել հարցի քննարկմանը:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ», «ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ" ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ բնապահպանության նախարարի 1998 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 178 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետևյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն,
  - ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման տեխնոլոգիական նախագծային աշխատանքների կատարում:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **գործունեության վերոհիշյալ տեսակներով զբաղվելու լիցենզիա համապատասխան մասնագետներին և երկրաբանական ուսումնասիրություններ կատարող կազմակերպություններին տրվում է մինչև 25 տարի ժամկետով,**
- **գործունեության լիցենզիան այլ կազմակերպության փոխանցելն արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երևան 375002, Մոսկովյան- 35,
    - Հեռախոս՝ 52 10 99:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ ՀՀ-ում գործող կազմակերպությունները:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ներկայացնել լիցենզիա ստանալու հայտ,**
- **տեղեկանք հայտատու կազմակերպությունում համապատասխան որակավորման մասնագետների առկայության մասին, ինչպես նաև նրանց մասնագիտական կրթության վկայականի պատճեն.**
- **կազմակերպության մասնագետների կողմից նախկինում ինքնուրույն կատարված լիցենզավորման ենթակա աշխատանքների ցանկը, կատարման ժամկետները, նշելով այդ աշխատանքների հաշվետվությունների և (կամ) նախագծերի պահպանման տեղը:**
- **վճարել պետական տուրքը,**
  - 24 հազար դրամ,
  - լիցենզիայի վերագրանցման դեպքում տուրք չի վճարվում,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
- **Լիցենզիայի կրկնօրինակը.**
  - լիցենզիայի վկայագիրը կորցնելու դեպքում այդ մասին գրավոր հայտնվում է ՀՀ բնապահպանության նախարարությանը, որի որոշմամբ էլ տրվում է լիցենզիայի կրկնօրինակը (վճարելով 24 հազար դրամ պետական տուրք):

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները՝**
  - լիցենզիայի տրման կամ մերժման որոշումը կայացվում է ՀՀ բնապահպանության նախարարության լիցենզավորող հանձնաժողովի նիստերում, որոնք կազմակերպվում են ամսական 2 անգամ:
- **Որոշման ընդունումը.**
  - որոշումը կայացվում է ՀՀ բնապահպանության նախարարության լիցենզավորող հանձնաժողովի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Լիցենզիան տրվում է հանձնաժողովի արձանագրության հիման վրա, կնքվում է նախարարության կնիքով և գրանցվում հատուկ մատյանում:
- **Լիցենզիայի վերաձևակերպումը.**
  - կազմակերպությունների վերակազմավորման կամ վերանվանման դեպքում լիցենզիան վերաձևակերպվում է ՀՀ բնապահպանության նախարարության որոշմամբ:
- **Մերժումը՝**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե այն չի համապատասխանում ՀՀ նախարարների խորհրդի 1991 թ. մարտի 5-ի թիվ 161 որոշմամբ հաստատված «ՀՀ տարածքում տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու կարգի» պահանջներին, մասնավորապես.
    - եթե լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտում և նրան կցվող փաստաթղթերում կան սխալ տեղեկություններ, անհամապատասխանություններ իրականությանը,
    - համապատասխան որակավորման բացակայության դեպքում,
  - լիցենզավորող մարմինն իրավունք չունի հայտը մերժել աննպատակահարմարության շարժառիթով,
  - լիցենզիայի հայտի մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները և իրավական հիմքերը, հայտատուին ծանուցվում է տեղեկանքի ձևով,
  - լիցենզիայի հայտի մերժման մասին որոշումը հայտատուն իրավունք ունի 30 օրվա ընթացքում գանգատարկել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության կասեցումը, դադարեցումը եւ ուժը կորցրած ճանաչելը

- **Լիցենզիան անվավեր ճանաչելը.**
  - Լիցենզիան անվավեր է ճանաչվում, եթե՝
    - լուծարվել է կազմակերպությունը,
    - խախտվել են ՀՀ նախարարների խորհրդի 1991 թ. մարտի 5-ի թիվ 161 որոշմամբ հաստատված "ՀՀ տարածքում տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու կարգի" պահանջները,
    - լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվող մասնագետը ազատվել է տվյալ կազմակերպությունից և այն չի համալրվել վերոհիշյալ պահանջներին բավարարող նոր մասնագետով,
    - լիցենզիան ստանալուց հետո երկու տարվա ընթացքում չեն իրականացվել լիցենզավորված գործունեության տեսակները,
- **գործունեության լիցենզիան չեղյալ համարելուց հետո այն չի վերականգնվում: Լիցենզիան չեղյալ համարելու պատճառների վերացումից հետո կազմակերպությունը լիցենզավորման նոր հայտ կարող է ներկայացնել ընդհանուր հիմունքներով:**

3. ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ ընդերքի օրենսգրքով, ՀՀ կառավարության 1994 թ. օգոստոսի 15-ի թիվ 374 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ արտոնագիրն անհրաժեշտ է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի օգտագործման ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**

Արտոնագրի առանձնահատկությունները

- **արտոնագիրը տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **արտոնագիր ստացող ձեռնարկությունը ՀՀ բնապահպանության նախարարության հետ կնքում է «Ընդերքից օգտվելու պայմանագիր»,**
- **պայմանագիրը տրվում է մինչև 25 տարի ժամկետով,**
  - լրահետախուզման կամ շահագործական հետախուզման արդյունքներով նույն հանքավայրում օգտակար հանածոների պաշարների փոփոխության դեպքում ընդերքն օգտագործման տալու պայմանագրի ժամկետները կողմերի համաձայնությամբ կարող են փոխվել,
- **արտոնագրում նշվում են օգտակար հանածոների հանքավայրերի ամբողջ պաշարների կամ դրանց որոշակի մասի օգտագործման նպատակներն ու ուղղությունները,**
- **յուրաքանչյուր հանքավայրի շահագործման արտոնագիրը, որպես կանոն, տրվում է ընդերքի մեկ օգտագործողի: Առանձին դեպքերում տարբեր ձեռնարկությունների կողմից օգտակար հանածոների որեւէ հանքավայրի շահագործում կարող է կատարվել տեխնոլոգիապես համաձայնեցված սխեմայով՝ ապահովելով նախագծային բոլոր լուծումների իրականացումը,**
- **տարբեր հանքավայրերի շահագործման համար ընդերքն օգտագործողին տրվում է առանձին արտոնագիր,**
- **արտոնագիրը տրվում է մրցութային կարգով, եթե նոր շահագործվող հանքավայրերի հետախուզումը իրականացվել է պետական բյուջեի հաշվին: Մրցույթի պայմանները սահմանում է ՀՀ բնապահպանության նախարարությունը,**
  - արտոնագրի տրամադրման ժամանակ նախապատվություն է տրվում այն ձեռնարկություններին, որոնք տվյալ հանքավայրի հայտնաբերումը եւ հետախուզումն իրականացրել են իրենց միջոցների հաշվին:

Արտոնագրող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375002, Մոսկովյան- 35,
    - Հեռախոս՝ 55 55 09:

Արտոնագիր ստացողը

- **Արտոնագիր կարող են ստանալ ՀՀ-ում գործող այն ձեռնարկությունները, որոնց կանոնադրություններում նշված է համապատասխան գործունեության ոլորտը:**
- **Հանքօգտագործողը պարտավոր է ապահովել.**
  - երկրաբանամարկշեյդերական աշխատանքների իրականացումը,
  - օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառումը,
  - հետախուզված, արդյունահանված եւ ընդերքում թողնված պաշարների ու դրանց պարունակած օգտակար բաղադրիչների վերաբերյալ սահմանված կարգով տարեկան հաշվետվություն ներկայացնելը,
  - ՀՀ բնապահպանության նախարարության ընդերքի վարչության երկրաբանամարկշեյդերական վերահսկողական ծառայության համար համապատասխան պայմանների ստեղծումը՝ տեղերում իրենց պարտականությունների իրականացման նպատակով,
  - տարեկան համապատասխան վիճակագրական հաշվետվությունները դիտարկվող բնագավառի լիազորված պետական կառավարման մարմիններին սահմանված կարգով ներկայացնելը,
  - աշխատանքների անվտանգ կատարումը,

- ընդերքից օգտվելու հետեւանքով խախտված հողամասերն անվտանգ վիճակի բերելը, ինչպես նաեւ դրանք տնտեսության մեջ օգտագործման համար պիտանի դարձնելը,
- մթնոլորտային օդի, հողի, անտառների, ջրի եւ շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաեւ շինությունների ու այլ կառույցների, բնության, պատմության եւ մշակույթի հուշարձանների՝ ընդերքի օգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից զերծ պահումը,
- հետախուզական լեռնային փորվածքների եւ հորատանցքերի պահպանումը, եթե դրանք կարող են օգտագործվել օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ժամանակ ու տնտեսական այլ նպատակներով, եւ սահմանված կարգով դրանց լուծարումը, եթե հետագա օգտագործման ենթակա չեն:

Արտոնագիր ստանալու եւ պայմանագրի կնքման համար անհրաժեշտ է...

- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - Արտոնագիր ստանալու համար.
    - ձեռնարկությունները, որոնք տվյալ հանքավայրի հայտնաբերումը եւ հետախուզումն իրականացրել են իրենց միջոցների հաշվին, ներկայացնում են.
      - արտոնագիր ստանալու հայտ,
      - ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերը,
      - ընդերքից օգտվելու համար պետական իշխանության մարմինների համաձայնությունը,
      - տեղեկանք օգտակար հանածոների պաշարների մասին,
      - արտադրության ծրագրված տարեկան ծավալները եւ արտադրատեսակների անվանացանկը,
        - նշված ձեռնարկությունն իրավունք ունի ՀՀ բնապահպանության նախարարության ընդերքի պետական վարչությունից ստանալ իր միջոցներով հետախուզված հանքավայրի վերաբերյալ համակողմանի տեղեկատվություն, որը հնարավորություն կընձեռի մշակել հանքավայրի տեխնիկատնտեսական հիմնավորումը եւ շահագործման նախագիծը,
    - գործող հանքարդյունահանող ձեռնարկություններն արտոնագիր ստանալու համար պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝
      - արտոնագիր ստանալու հայտ,
      - տեղեկանք օգտակար հանածոների պաշարների մասին,
      - ձեռնարկության վերջին երեք տարվա գործունեության փաստացի եւ նախագծային հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկանք,
      - ընդերքից եւ հողատարածքից օգտվելու համար նախկինում տրված փաստաթղթերի պատճենները, այդ թվում՝ հանքավայրի շահագործման նախագծի հաստատման մասին որոշումը եւ լեռնահատկացման ու հողահատկացման ակտերը:
  - Պայմանագիր կնքելու համար՝
    - նոր շահագործվող հանքավայրերի օգտագործման պայմանագրերի կնքման համար ներկայացվում են հետեւյալ փաստաթղթերը՝
      - արտոնագրի պատճենը,
      - հանքավայրի շահագործման նախագիծը եւ տեխնիկատնտեսական հիմնավորումը, որը սահմանված կարգով համաձայնեցված է դիտարկվող բնագավառի հատկապես լիազորված պետական կառավարման մարմինների, ինչպես նաեւ պետական իշխանության տեղական մարմինների հետ համատեղ:
    - գործող հանքարդյունահանող ձեռնարկությունները պայմանագիր կնքելու համար պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝
      - արտոնագրի պատճենը,
      - ձեռնարկության վերջին երեք տարվա գործունեության փաստացի եւ նախագծային հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկանք,
      - ընդերքից եւ հատկացված հողատարածքներից օգտվելու համար նախկինում տրված փաստաթղթերի պատճենները, այդ թվում՝ հանքավայրի շահագործման նախագծի հաստատման մասին որոշման եւ լեռնահատկացման ու հողահատկացման ակտերի պատճենները:
- **պայմանագրում սահմանվում են՝**
  - օգտակար հանածոների տարեկան արդյունահանման եւ պաշարների մարման քանակները,
  - հանքարտադրատեսակների անվանացանկը,
  - տարեկան թողարկման քանակները:
- **պայմանագրում արտացոլվում են՝**
  - շահագործման համար հատկացված տեղամասի հիմնական եւ ուղեկից օգտակար հանածոների քանակները, դրանցում հիմնական եւ ուղեկից բաղադրիչների պարունակությունը,
  - ձեռնարկության տարեկան արտադրողականությունն՝ ըստ արդյունահանվող օգտակար հանածոյի եւ թողարկվող հանքարտադրանքի,
  - արտադրանքի որակի համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական պայմաններին եւ հաստատված լավորակությանը (կոնդիցիային):
- **պայմանագրին կցվում են՝**
  - պաշարների հաշվարկի գծապատկերային (սխեմայական) հատակագիծը (կտրվածքներով),

- տվյալ պայմանագրով օգտագործման տրվող հանքավայրի համապատասխան տեղամասի սահմանները,
- հանքավայրում պարփակված պաշարների քանակը եւ որակը,
- պաշարների հաշվարկային բլոկներն ըստ կատեգորիաների:

- **վճարել վարձավճար.**
  - վարձավճարը հաշվարկվում է մարվող պաշարների տարեկան քանակին համապատասխան,
  - Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով տարբեր տեսակի օգտակար հանածոների օգտագործման եւ երկրաբանահետախուզական աշխատանքների համար կատարված ծախսերի հատուցումը կատարվում է ըստ տարեկան մարվող պաշարների քանակի,
  - վարձաչափերը փոփոխվում են սահմանված կարգով հաշվարկված արդյունաբերական մեծածախ գների տարեկան ամփոփ ինդեքսին համապատասխան,
  - վարձավճարը հաշվառվում է արտադրանքի ինքնարժեքի մեջ:

Արտոնագրի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - արտոնագրի տրամադրման ժամկետները.
    - արտոնագրի տրամադրման հանար անհրաժեշտ փաստաթղթերի քննարկման եւ արտոնագրի տրամադրման համար անհրաժեշտ է 6 ամիս ժամանակաշրջան,
  - պայմանագրի կնքման ժամկետը.
    - նոր շահագործվող հանքավայրերի օգտագործման համար՝ 1 ամիս,
    - գործող հանքարդյունահանող ձեռնարկությունների հետ՝ 15 օր
- **Լեռնահատկացումը.**
  - կատարվում է արտոնագրի եւ պայմանագրի հիման վրա,
  - լեռնահատկացումն իրականացվում է Հայլեռտեխհսկողության վարչության ակտով,
  - ակտում սահմանվում են ընդերքի օգտագործման տրվող տեղամասերի տարածական չափերը:
- **Հողահատկացումը.**
  - կատարվում է արտոնագրի, պայմանագրի եւ լեռնահատկացման ակտի հիման վրա՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի եւ այլ օրենսդրական ակտերի

Արտոնագրի գործողության դադարեցումը

- Գործող հանքարդյունահանող ձեռնարկության անբավարար գործունեության դեպքում (հանքավայրի շահագործման երկրաբանական, լեռնատեխնիկական, որակական-տեխնոլոգիական, բնապահպանական եւ արտադրատնտեսական պահանջների լրիվ կամ մասնակի անտեսում) արտոնագրում կարող են սահմանվել ժամկետներ, որոնց ընթացքում ձեռնարկությունը պարտավոր է իր գործունեությունը համապատասխանեցնել արտոնագրի նպատակային խնդիրներին: Եթե ձեռնարկությունը սահմանված ժամկետում ի վիճակի չէ լուծել արտոնագրի նպատակային խնդիրները, ապա այն չեղյալ է համարվում, իսկ շահագործվող հանքավայրը դառնում է ընդհանուր հիմունքներով արտոնագրման օբյեկտ:
- Ընդերքի ոչ նպատակային օգտագործման եւ պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում ընդերքից օգտվելու իրավունքը դադարեցնելու մասին որոշումը կայացվում է թույլ տրված խախտումների վերաբերյալ ընդերքն օգտագործողին գրավոր ծանուցումից 3 ամիս հետո:

4. ՊԱՅԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ լեռտեխնիկական հսկողության վարչության 1999 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 30 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է ՀՀ տարածքում պայթեցման աշխատանքներ իրականացնելու համար:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **տրամադրվում է 3 տարի ժամկետով,**
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել լիցենզիայի տրամադրման համար փորձաքննության պահանջ,**
- **լիցենզիա ունեցող անձանց նկատմամբ հաշվետվության պահանջ չկա,**
- **լիցենզիայի փոխանցումն ու օտարումն արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության լեռտեխնիկական հսկողության վարչություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
  - Երեւան 375009, Զրաշատի փողոց - 1,
  - Հեռախոս՝ 561152:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռներեցները:**
- **Լիցենզիան տրվում է դիմողին կամ լիազորագրի առկայության դեպքում նրա ներկայացուցչին՝ մեկ օրինակից:**
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է՝**
  - պահպանել հաստատված սանիտարահիգիենիկ նորմաները,
  - պահպանել գործող պետական ստանդարտները եւ անվտանգության կանոնները:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - անհատ ձեռներեցները պետք է ներկայացնեն՝
    - լիցենզիա ստանալու հայտ,
    - անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայականի պատճենը,
  - իրավաբանական անձիք պետք է ներկայացնեն՝
    - լիցենզիա ստանալու հայտ,
    - հիմնադիր պայմանագրի պատճենը,
- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12 000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24 000 դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12 եւ 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում Լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**

- լիցենզավորող մարմինը պարտավոր է դիմումի ներկայացման օրվանից սկսած 15 օրվա ընթացքում կամ տրամադրել լիցենզիա, կամ մերժել այն՝ հիմնավորելով մերժման պատճառները: Լիցենզիայի տրամադրման կամ մերժման մասին որոշումը հայտատուին հանձնվում է որոշումը կայացնելուց հետո 3 օրվա ընթացքում, լիցենզիայի համար պետական տուրքի մուծման անդորրագիրը ներկայացնելու դեպքում:
- Փորձաքննական եզրակացության անհրաժեշտության դեպքում՝ լիցենզիայի ընդունման կամ մերժման որոշման մասին տեղեկացնել հայտատուին փորձաքննական եզրակացության ստացման օրվանից 10 օրվա ընթացքում:

- **Մերժումը՝**
  - լիցենզիա տալը կարող է մերժվել, եթե՝
    - չեն պահպանվում հաստատված սանիտարահիգիենիկ նորմերը
    - չեն պահպանվում պետական ստանդարտները եւ անվտանգության կանոնները
  - լիցենզիայի մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները, իրավական հիմքերը,
  - լիցենզավորող մարմինն իրավունք չունի հայտը մերժել չհիմնավորված պատճառով:

Լիցենզիայի գործողության ուժը կորցնելը եւ չեղյալ համարելը

- **Ուժը կորցնելը՝**
  - իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման դեպքում նրան տրված լիցենզիան կորցնում է ուժը,
  - իրավաբանական անձի վերակազմավորման դեպքում լիցենզիան վերաձեւակերպվում է մեկ ամսվա ընթացքում:
- **Չեղյալ համարումը՝**
  - Լիցենզիայի գործողությունը կարող է չեղյալ համարվել, եթե՝
    - լիցենզիա ստացած անձի գործունեության ընթացքում հայտնաբերվել են խախտումներ, որոնք սահմանված ժամկետներում չեն վերացվել,
    - լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվել են ոչ հավաստի տեղեկություններ,
    - չեն պահպանվել տվյալ գործունեության համար հաստատված նորմերը:
  - Լիցենզիայի գործողության չեղյալ համարման մասին որոշումը 3-օրյա ժամկետում ուղարկվում է լիցենզավորված անձին, պետական ռեգիստր եւ ՀՀ պետական եկամուտների նախարարություն:
  - Լիցենզիայի չեղյալ համարելու վերաբերյալ հարցի քննարկման ընթացքում լիցենզավորման գործընթացում գտնվող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը իրավունք ունի ծանոթանալ իր գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին, ինչպես նաեւ ներկա գտնվել հարցի քննարկմանը:
  - Լիցենզիա ստացած անձի բացակայությամբ նրա լիցենզիայի գործունեության դադարեցման մասին որոշումներն ընդունվում են այն դեպքում, երբ տվյալ անձը առնվազն երկու անգամ գրավոր ծանուցվելուց հետո չի ներկայացել հարցի քննարկմանը:
  - Լիցենզիան չեղյալ համարվելու դեպքում համապատասխան իրավաբանական անձանցից կամ անհատ ձեռնարկատերերից նոր լիցենզիայի ստացման հայտերն ընդունվում են ընդհանուր կարգով:
  - Լիցենզավորող մարմնի կայացրած որոշումները կարող են բողոքարկվել դատարանում:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով, «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 126 հրամանով հաստատված հրահանգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է քաղաքաշինության բնագավառի հետեւյալ ոլորտներում գործունեություն իրականացնելու համար.**
  - քաղաքաշինական փաստաթղթերի մշակում (ինժեներական հետազննում, նախագծում եւ փորձաքննություն),
  - շինարարության իրականացում (շինմոնտաժային աշխատանքներ, շենքերի ու շինությունների տեխնիկական հետազոտում եւ որակի տեխնիկական հսկողություն),
  - միջնորդային ծառայություններ:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **տրամադրվում է 3 տարի ժամկետով,**
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **գործունեության յուրաքանչյուր ոլորտի համար անհրաժեշտ է ստանալ առանձին լիցենզիա,**
- **ըստ գործունեության ոլորտների տեսակների ստացվող լիցենզիաների քանակը չի սահմանափակվում,**
- **լիցենզիայի գործողության սկիզբ է համարվում լիցենզավորման կենտրոնի կողմից այդ մասին որոշում կայացնելու օրը,**
- **լիցենզիան ուժի մեջ է մտնում անհատ ձեռներեցի կամ ձեռնարկությունը Պետռեգիստրում գրանցվելուց հետո,**
- **լիցենզավորված սուբյեկտներին արգելվում է զբաղվել լիցենզավորման ենթակա, սակայն լիցենզիայում չնշված այլ գործունեությամբ,**
- **օտարերկրյա պետությունների ֆիզիկական եւ իրավաբանական անձանց՝ համապատասխան երկրներում ստացած լիցենզիաների ճանաչումը Հայաստանի Հանրապետությունում սահմանվում է համապատասխան երկրների հետ կնքած ՀՀ միջպետական (միջկառավարական) համաձայնագրերով:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և քաղաքաշինության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1,
    - Հեռախոս՝ 52 35 92:
- **Լիցենզավորման գործընթացն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության նախարարության լիցենզավորման կենտրոնի կողմից:**

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզավորման սուբյեկտներ են համարվում ՀՀ տարածքում քաղաքաշինական գործունեություն իրականացնող կամ դրա մտադրությունն ունեցող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք:**
- **Օտարերկրյա պետությունների ֆիզիկական կամ իրավաբանական անձինք ՀՀ տարածքում քաղաքաշինական գործունեությամբ կարող են զբաղվել այս ընթացակարգով լիցենզիաներ ձեռք բերելուց հետո, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան չի նախատեսվում:**
- **Առաջին անգամ լիցենզավորվող սուբյեկտների համար սահմանվում են հետեւյալ լրացուցիչ պայմանները.**
  - քաղաքաշինական փաստաթղթերի մշակման աշխատանքներ կատարելու մտադրություն ունեցող հայտատուների համար լիցենզավորման պայման է հանդիսանում տվյալ բնագավառում (մասնագիտությամբ) առնվազն 2 տարվա գործունեության իրականացումը (աշխատանքային ստաժի առկայությունը) կամ մասնագիտական տեստավորման դրական արդյունքը,
  - որակի տեխնիկական հսկողություն եւ շենքերի ու շինությունների տեխնիկական հետազոտում իրականացնելու մտադրություն ունեցող հայտատուների համար լիցենզավորման պայման է հանդիսանում տվյալ բնագավառում (մասնագիտությամբ) առնվազն 5 տարվա գործունեության իրականացումը (աշխատանքային ստաժի) առկայությունը:

- **Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, շինմոնտաժային աշխատանքների իրականացման եւ միջնորդային ծառայությունների բնագավառում հայտերն ընդունվում են միայն իրավաբանական անձանցից:**
- **Համալիր նախագիծ բաց թողնելու իրավունք ունեն իրավաբանական անձինք, որոնք պետք է ունենան կամ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման բոլոր անհրաժեշտ բաժինների լիցենզիաներ, կամ միջնորդային ծառայությունների գծով համապատասխան լիցենզիա:**
- **Շինարարության տեխնիկական հսկողություն եւ կառույցների տեխնիկական հետազոտում իրականացնելու մտադրություն ունեցող իրավաբանական անձ հանդիսացող հայտատուների մասնագիտական կազմը բաղկացած պետք է լինի միայն լիցենզավորված ֆիզիկական անձանցից:**
- **Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման եւ շինարարության տեխնիկական հսկողության բնագավառում բացառության կարգով կենտրոն կարող են ներկայացվել բարձրագույն կրթություն չունեցող, բայց տվյալ բնագավառում հարուստ փորձ ձեռք բերած միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող ֆիզիկական անձանց հայտերը:**
- **Նախագծերի փորձաքննություն իրականացնելու համար հայտեր ներկայացրած իրավաբանական անձինք պետք է համալրված լինեն բավարար մասնագիտական որակավորում եւ ստաժ ունեցող, անհրաժեշտ որակներ դրսեւորած ֆիզիկական անձանցով, որոնց ներկայությունը փորձագիտական հանձնաժողովներում հայտի քննարկման ժամանակ պարտադիր է:**
- **Շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու համար հայտ ներկայացրած կազմակերպության ղեկավարը, կամ գլխավոր ինժեները պետք է ունենան շինարարական կրթություն:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.**
  - իրավաբանական անձ հանդիսացող հայտատուները լիցենզավորման կենտրոն են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝
    - սահմանված ձեւի հայտ,
    - ձեռնարկության (կազմակերպության) կանոնադրությունը (հիմնադիր փաստաթուղթը), որտեղ պետք է ամրագրված լինեն լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները (տեսակը),
    - տվյալներ ձեռնարկության (կազմակերպության) մասնագիտական կազմի մասին (այդ թվում նրանց մոտ լիցենզիայի առկայությունը),
    - նախկինում կատարված աշխատանքների (ծառայությունների) վավերացված ցանկ,
    - վճարված տուրքի անդորրագիրը:
  - Լիցենզիա ստանալուց հետո, եթե իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտի մասնագիտական կազմում կատարվում է փոփոխություն, ապա այդ մասին անպայման իրազեկվում է լիցենզավորման կենտրոնը:
  - Ֆիզիկական անձ հանդիսացող հայտատուները լիցենզավորման կենտրոն են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝
    - սահմանված ձեւի հայտ,
    - կրթության վկայական (պատճենը),
    - քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային ստաժի մասին,
    - նախկինում կատարված աշխատանքների (ծառայությունների) ցանկ,
    - տուրքի չափի վճարը հավաստող անդորրագիր:
- **վճարել պետական տուրքը,**
    - ֆիզիկական անձինք՝ 12 000 դրամ,
    - իրավաբանական անձինք՝ 24 000 դրամ:
    - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12 եւ 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
    - Պետական տուրքը վճարվում է քաղաքաշինական գործունեության լիցենզավորման ենթակա ոլորտների յուրաքանչյուր ենթաբաժնի համար՝ անկախ գործունեության տեսակների քանակից:
  - Լիցենզիայի կրկնօրինակի տրամադրումը.
    - Հայտատուի կողմից լիցենզիան կորցնելու դեպքում տրվում է կրկնօրինակ՝ 24 000 դրամ պետական տուրք վճարելուց հետո:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - Լիցենզավորման կենտրոնը պարտավոր է լիցենզիա տրամադրելու կամ հայտը մերժելու մասին որոշումն ընդունել հայտը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 30-օրյա ժամկետում:
  - Լիցենզիայի տրամադրման կամ հայտը մերժելու մասին որոշումը հայտատուին է հանձնվում որոշումն ընդունելուց հետո 3-օրյա ժամկետում:
- **Մերժումը՝**
  - Լիցենզիա ստանալու մասին հայտը լիցենզավորման կենտրոնի կողմից կարող է մերժվել հետեւյալ դեպքերում.
    - երբ հայտատուն չունի մասնագիտական որակավորում (բավարար մասնագիտական բազա) կամ նրա կողմից իրականացված աշխատանքները չեն բավարարում նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի եւ ստանդարտների պահանջներին,
    - ձեռնարկության (կազմակերպության) հիմնադիր փաստաթղթերում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների բացակայության դեպքում,
    - կեղծված կամ (եւ) իրականությանը չհամապատասխանող տվյալներ եւ փաստաթղթեր ներկայացնելու պատճառով:
  - Մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառը եւ դրա իրավական հիմքերը:
  - Մերժված սուբյեկտներից լիցենզիա ստանալու համար նոր հայտ ընդունվում է ոչ շուտ, քան մերժման որոշումից 3 ամիս անց:
  - Աննպատակահարմարության հիմնավորումով լիցենզիայի հայտի մերժումն արգելվում է:
  - Մերժման մասին որոշման պատճենը ստանալուց հետո, 30 օրվա ընթացքում հայտատուն իրավունք ունի այն բողոքարկել դատարան:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ դադարեցումը

- **Կասեցումը.**
  - Լիցենզիայի գործողության կասեցումը կիրառվում է քաղաքաշինական գործունեության այն տեսակների և օբյեկտների համար, որոնց իրականացման ընթացքում թույլ է տրվել իրավախախտում:
  - Լիցենզիայի գործողությունը կասեցվում է մինչև բացահայտված խախտումները վերացնելը, բայց ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում:
  - Լիցենզիայի գործողության կասեցման դեպքում իրավաբանական անձանց թույլատրվում է համապատասխան գործունեություն իրականացնել միայն կասեցման պատճառ համարվող խախտման հետևանքները վերացնելու համար:
  - Խախտման հետևանքները սահմանված ժամկետից շուտ վերացնելու պահից լիցենզիայի գործողությունը վերականգնվում է:
- **Դադարեցումը.**
  - Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու լիցենզիայի գործողությունը դադարեցվում է՝
    - լիցենզիա ստանալու համար լիցենզավորման կենտրոն կեղծ փաստաթղթեր և ոչ ստույգ տվյալներ ներկայացնելու փաստերի բացահայտման դեպքում,
    - երբ նույն լիցենզիայի գործողության ընթացքում երկու անգամ տույժի ենթարկվելուց հետո թույլ է տրվել նույն բնույթի իրավախախտում,
    - լիցենզիայի գործողության կասեցման ժամկետում գործունեությունը նույն օբյեկտում իրականացնելու դեպքում, բացառությամբ կասեցման պատճառ համարվող խախտումները վերացնելու համար պահանջվող աշխատանքների,
    - բացահայտված խախտումները լիցենզիայի գործողությունը կասեցնելու որոշմամբ չվերացվելու դեպքում,
    - քաղաքաշինական օրենսդրության, նորմերի, կանոնների ու ստանդարտների այնպիսի խախտումների դեպքում, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել վթարային իրավիճակների կամ (և) վտանգ են պարունակում մարդկանց կամ շրջակա միջավայրի համար:
  - Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու լիցենզիայի գործողության դադարեցումը կիրառվում է գործունեության այն տեսակների նկատմամբ, որոնց իրականացման ընթացքում թույլ է տրվել իրավախախտում:
  - Լիցենզիաների գործողության կասեցման կամ դադարեցման մասին որոշումներն ընդունվում են կենտրոնի կողմից՝ քաղաքաշինական պետական տեսչության, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, փորձաքննության մարմինների, դատաքննչական մարմինների, շինարարությունում տեխնիկական հսկողություն իրականացնող սուբյեկտների, պատվիրատուների ու սպառողների միջնորդագրերի հիման վրա:
  - Լիցենզավորման կենտրոնը վերը նշված սուբյեկտների կողմից միջնորդագրեր ստանալիս 15-օրյա ժամկետում (անհրաժեշտության դեպքում փորձագիտական հանձնաժողովների, կամ փորձագիտական կազմակերպությունների, կամ անհատ փորձագետների եզրակացության հիման վրա) կայացնում է որոշում լիցենզիաների գործողությունը կասեցնելու, դադարեցնելու կամ միջնորդագիրը մերժելու վերաբերյալ:

- Լիցենզիայի գործողության կասեցումը չի ազդում լիցենզիայի գործողության ընդհանուր ժամկետի վրա:
- Լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում համապատասխան սուբյեկտներից նոր լիցենզիայի հայտերը ընդունվում են ընդհանուր կարգով:
- Լիցենզիաների գործողության կասեցման կամ դադարեցման վերաբերյալ հարցերի քննարկման ընթացքում լիցենզավորված սուբյեկտներն իրավունք ունեն ծանոթանալ իրենց գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին, ինչպես նաեւ ներկա գտնվել հարցի քննարկմանը:
- Լիցենզավորված սուբյեկտների բացակայությամբ նրանց լիցենզիաների գործողության կասեցման կամ դադարեցման մասին որոշումները կարող են ընդունվել միայն այն պարագայում, երբ նրանք ծանուցում ստանալով հանդերձ երկու անգամից ավել չեն ներկայացել հարցի քննարկմանը:
- Լիցենզիաների գործողության կասեցման, դադարեցման կամ այդ մասին միջնորդագիրը մերժելու մասին կենտրոնը ծանուցում է (3 օրվա ընթացքում) լիցենզավորված, ինչպես նաեւ միջնորդագիր ներկայացնող սուբյեկտներին, միաժամանակ զանգվածային լրատվության միջոցներով եւ (կամ) ինֆորմացիոն թերթիկներով տեղյակ է պահում հասարակությանը կայացրած որոշումների մասին:
- Լիցենզավորման կենտրոնի կայացրած որոշումները կարող են բողոքարկվել դատարանում:
- Մինչեւ դատարանի վճռի կայացումը կենտրոնի որոշումները մնում են ուժի մեջ:
- Կենտրոնի կայացրած որոշմամբ լիցենզավորված սուբյեկտներին պատճառված վնասները ենթակա են փոխհատուցման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՎՏՄՈԲԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ տրանսպորտի նախարարի 1997թ. ապրիլի 17-ի թիվ 1160003 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է տնտեսական գործունեության իրականացնելու նպատակով ուղևորների և բեռների ավտոմոբիլային փոխադրումների ծառայությունների մատուցման համար:**
- **Ավտոմոբիլային փոխադրումների ծառայություններ են համարվում.**
  - եթե բեռը չի պատկանում ավտոմեքենայի սեփականատիրոջը կամ օգտագործողին,
  - միջմարզային, միջպետական երթուղիներով, չվերթերով, պատվերով կատարվող, ինչպես նաև տաքսամոտորային ուղևորափոխադրումները:
- **Ձեռնարկությունը, անհատ ձեռներեցը իրավունք ունի առանձին հայտերով ստանալ թե՛ ուղեւորափոխադրումների, թե՛ բեռնափոխադրումների լիցենզիաներ:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **տրամադրվում է մինչև 5 տարի ժամկետով՝ կախված հայտատուի պահանջից և փոխադրամիջոցի տեխնիկական վիճակից,**
  - լիցենզիայի ներդիրների ուժի մեջ լինելու ժամկետները կարող են սահմանափակվել ավտոմոբիլների վարձակալության պայմանագրի ժամկետով, ավտոմոբիլը ժամանակավոր օգտագործման ստացման լիազորագրի ժամկետով,
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **փորձագիտական քննություն կարող է նշանակվել ըստ անհրաժեշտության,**
- **լիցենզիա ունեցող անձանց նկատմամբ հաշվետվությունների ներկայացման պահանջ չկա,**
- **լիցենզիայի հետ միասին հայտ ներկայացնողին հանձնվում է լիցենզիայի ներդիրներ՝ լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտին կից ցուցակում թվարկված յուրաքանչյուր միավոր ավտոմոբիլի համար մեկ հատ, որն աշխատանքի ընթացքում փակցվում է ավտոմոբիլի հողմահար ապակու տակ,**
- **սույն լիցենզիան, ինչպես նաև նրա ներդիրը չի կարող փոխանցվել կամ օտարվել:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Նալբանդյան- 28,
    - Հեռախոս՝ 52 88 10:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ կազմակերպական-իրավական բոլոր տեսակների Հայաստանի ձեռնարկությունները և անհատ ձեռներեցները (բացառությամբ գործող պետական մասնագիտացված ավտոտրանսպորտային ձեռնարկությունների):**
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է՝**
  - կատարել ավտոփոխադրումների համապատասխան բնագավառին վերաբերվող՝ գերատեսչական նորմատիվ ակտերի պահանջները.
  - հնարավորություն ընձեռնել լիցենզավորող պետական կառավարման մարմնի լիազորված անձանց ստուգելու լիցենզիա ստանալու հայտին կից փաստաթղթերում եղած տեղեկությունների համապատասխանությունը իրականությանը.
  - թույլատրել լիցենզավորվող մարմնի լիազորված անձանց ուսումնասիրել եւ եզրակացություն տալ գործող տեխնիկական նորմերին տրանսպորտային միջոցի համապատասխանության մասին:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն ներկայացնել համապատասխան հայտ կցել ավտոմոբիլային փոխադրումների ծառայություններով զբաղվողի մասնագիտության վերաբերյալ անհրաժեշտ հետևյալ փաստաթղթերը.**
  - Ձեռնարկության, անհատ ձեռներեցի պետական գրանցման (ռեգիստր) վկայականի եւ վկայականի ներդիրի պատճենները,
  - ձեռնարկությանը պատկանող կամ վարձակալած, լիազորագրով ժամանակավոր օգտագործման համար ստացած այն ավտոմոբիլների ցուցակը եւ տեխնիկական անձնագրերը (հայտի գրանցումից հետո վերադարձվում են հայտատուին), որոնցով կատարվելու են լիցենզավորվող փոխադրումները: Վարձակալությամբ կամ լիազորագրով օգտագործման համար վերցրած ավտոմոբիլների դեպքում ներկայացվում է նաեւ վարձակալման պայմանագրի, լիազորագրի՝ պետական նոտարի կողմից հաստատված պատճենը,
  - ձեռնարկության՝ ավտոմոբիլային բանած գազերի թունավորության վերահսկման-կարգավորման կետի՝ Հայպետստանդարտի կողմից ատեստավորման վկայականի պատճենը: Այդպիսի կետ չունեցող ձեռնարկությունների, ինչպես նաեւ անհատ ձեռներեցների համար վերահսկման-կարգավորման կետ ունեցող որեւէ ձեռնարկության հետ իր ավտոմոբիլների բանած գազերի թունավորության կարգավորման վերաբերյալ պայմանագրի պատճենը:
  - Անհատ ձեռներեցը եւ ձեռնարկությունը ներդիրներ ստանալու համար ներկայացնում է նաեւ.
    - վարորդական իրավունքի վկայականի պատճենը.
    - սեղմված բնական գազով աշխատող ավտոմոբիլի դեպքում՝ դրա վրա աշխատելու թույլտվության պատճենը.
    - առողջական վիճակի վերաբերյալ բժշկական հանձնաժողովի տեղեկանքի պատճենը:
  - Հարկային տեսչության գրանցման կոդը:
- **վճարել պետական տուրքը,**
  - 50 հազար դրամ,
  - լիցենզիայի վերագրանցման դեպքում տուրք չի վճարվում,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 50-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
- **Լիցենզիա ունեցող ձեռնարկությունը, անհատ ձեռներեցն այլ ավտոմոբիլների համար նոր ներդիրներ կարող է ստանալ.**
  - ներկայացնելով միայն ձեռնարկությանը պատկանող կամ վարձակալած, լիազորագրով ժամանակավոր օգտագործման համար ստացած նոր ավտոմոբիլների ցուցակը եւ տեխնիկական անձնագրերը: Վարձակալությամբ կամ լիազորագրով օգտագործման համար վերցրած ավտոմոբիլների դեպքում ներկայացվում է նաեւ վարձակալման պայմանագրի՝ լիազորագրի պետական նոտարի կողմից հաստատված պատճենը:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - Լիցենզիան տալու կամ մերժելու մասին որոշումը կայացվում է հայտը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում, իսկ հայտին կցվող փաստաթղթերում պարունակող տվյալների վերաբերյալ համապատասխան մասնագիտական (փորձագետների) եզրակացության անհրաժեշտության դեպքում՝ այդ եզրակացությունը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:
  - Լիցենզիան հայտատուին է հանձնվում տեղեկանքի ձևով որոշում կայացնելուց հետո 3 օրվա ընթացքում:
- **Որոշման ընդունումը.**
  - լիցենզավորման կամ մերժման վերաբերյալ որոշումն ընդունվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից,
- **Վերագրանցումը.**
  - անհատ ձեռներեցի բնակության, կամ ձեռնարկության գրանցման վայրի փոփոխման, ինչպես նաեւ ձեռնարկության վերակազմավորման այլ կազմակերպական-իրավական տեսակի, ինչպես նաև ավտոմեքենայի պետհամարանիշի փոփոխման դեպքում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը վերագրանցում է լիցենզիան կամ նրա ներդիրը համապատասխան հայտ ստանալուց հետո 3 օրվա ընթացքում (առանց պետական տուրքի գանձման),
- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտնում և նրան կցվող փաստաթղթերում կան սխալ տեղեկություններ, անհամապատասխանություններ իրականությանը,

- ավտոմոբիլի տիպը չի համապատասխանում հայտնում նշված գործունեության տեսակով զբաղվելուն,
- ավտոմոբիլը սահմանված կարգով պետական տեխնիկական զննություն չի անցել,
- անհատ ձեռներեցը չունի տվյալ գործունեությամբ զբաղվելու համար պահանջվող որակավորումը,
- նրա առողջական վիճակի մասին բժշկական հանձնաժողովի տեղեկանքը ժամկետանց է,

– լիցենզավորող մարմինն իրավունք չունի հայտը մերժել աննպատակահարմարության շարժառիթով,

– լիցենզիայի հայտի մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները և իրավական հիմքերը, այն հայտատուին է հանձնվում որոշումն ընդունելուց հետո 3 օրվա ընթացքում,

– լիցենզիայի հայտի մերժման մասին որոշումը հայտատուն իրավունք ունի 30 օրվա ընթացքում գանգատարկել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության կասեցումը, դադարեցումը եւ ուժը կորցրած ճանաչելը

- **Ուժը կորցրած ճանաչելը՝**

– լիցենզիան, ինչպես նաև միայն տվյալ ավտոմոբիլին վերաբերվող լիցենզիայի ներդիրը ուժը կորցրած ճանաչելը կատարվում է հետևյալ դեպքերում՝

- լրացել է անհատ ձեռներեցի առողջական վիճակի բժշկական քննության տեղեկանքում նշված գործողության ժամկետը,
- Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության, վերահսկող պետական մարմինների ակտերի հիման վրա, կապված լիցենզիա ունեցողի կողմից վերոհիշյալ պայմանների խախտումների հետ,

– լիցենզիայի կամ նրա ներդիրի ուժի մեջ լինելը չթույլատրելու մասին Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը կայացնում է որոշում՝ սահմանելով ժամկետ՝ չթույլատրելու պատճառների հիմք հանդիսացող խախտումների վերացման համար, որոշման մասին հայտնվում է ձեռնարկությանը, անհատ ձեռներեցին,

– լիցենզիայի կամ նրա ներդիրի ուժի մեջ լինելը վերականգնվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության նոր որոշումով՝ խախտումների վերացման մասին ձեռնարկության, անհատ ձեռներեցի կողմից հիմնավորվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո 5 օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում խախտումները չվերացնելու դեպքում չթույլատրված լիցենզիան կամ նրա ներդիրը կարող են ճանաչվել ուժը կորցրած, որի մասին Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը կայացնում է որոշում և այդ մասին եռօրյա ժամկետում ծանուցագրում է ձեռնարկությանը, անհատ ձեռներեցին,

– լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը ձեռնարկությունը, անհատ ձեռներեցն իրավունք ունի 30 օրվա ընթացքում գանգատարկել դատական կարգով,

– ձեռնարկությունը, անհատ ձեռներեցն իր գործունեության դադարեցման դեպքում լիցենզիան հանձնում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը, և այդ լիցենզիան համարվում է ուժը կորցրած: Հանձնման են ենթակա նաև սահմանված ժամկետում խախտումները չվերացնելու պարագայում ուժը կորցրած ճանաչված լիցենզիան և ներդիրները,

– ուժը կորցրած ճանաչված լիցենզիայի փոխարեն նոր լիցենզիայի ստացումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչի 1995 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 59 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետեւյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - կանոնավոր (չվացուցակով) և չարտերային (չվացուցակից դուրս) օդային փոխադրումներ, որոնք դասակարգվում են՝
    - ուղեւորների, բեռների եւ փոստի օդային փոխադրումներ,
    - ուղեւորների օդային փոխադրում,
    - բեռների եւ ուղեւորների օդային փոխադրում,
    - բեռների եւ փոստի օդային փոխադրում,

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Հայաստանի Հանրապետությունում գրանցված եւ վերոհիշյալ գործունեության համար լիցենզավորված ձեռնարկությունների կողմից առանձնացված ստորաբաժանումների ստեղծման դեպքում նույնատիպ գործունեության նոր լիցենզիա չի պահանջվում:**
- **Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ձեռնարկությունների կողմից օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեության իրականացման նպատակով ստեղծվող առանձնացված ստորաբաժանումները ենթակա են լիցենզավորման այս ընթացակարգով՝ անկախ նրանց պետական գրանցում ստացած երկրում գործունեության տվյալ տեսակով լիցենզավորման կարգից:**
- **Այն դեպքում, երբ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի լիցենզավորվող գործունեությունը իրականացվում է տարբեր վայրերում, տրվում են հիմնական լիցենզիայի վավերացված կրկնօրինակները, դրանցում նշելով գործունեության իրականացման հասցեները:**
- **Օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեությամբ զբաղվել ցանկացող անձանց կողմից նոր ձեռնարկությունների ստեղծման դեպքում տրվում է նախնական լիցենզիա ՀՀ Ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցվելու համար: Նախնական լիցենզիան համարվում է անվավեր եւ ենթակա է ետ վերադարձման հիմնական լիցենզիայի ստացման պահից:**
- **Ձեռնարկություններին կարող է տրվել օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման մի քանի տեսակներով միաժամանակ զբաղվելու լիցենզիաներ:**
- **Օդային փոխադրումներ իրականացնելու լիցենզիայի ժամկետը՝**
  - նախնական լիցենզիան՝ երեք ամիս ժամկետով,
  - նախնական լիցենզիայի ստացման օրվանից երեք ամսվա ընթացքում շահագործողի վկայականը չստանալու դեպքում նախնական լիցենզիան ենթակա է ետ վերցման:
- **Լիցենզիայի օտարումը կամ փոխանցումն արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն**
  - հասցե / հեռախոսներ՝
    - 375042, Ձվարթնոց - 42,
    - Հեռախոս՝ 28 20 66:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները եւ անհատ ձեռներեցները:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - Նախնական լիցենզիայի ստացման համար՝
    - հայտ,

    - հիմնադիր փաստաթղթերը:
  - Հիմնական լիցենզիայի ստացման համար՝
    - հայտ,
    - հիմնադիր փաստաթղթերը,
    - պետական գրանցման վկայականի պատճենը,
    - շահագործողի վկայականը (սերտիֆիկատ)՝ համաձայն ԻԿԱՕ-ի ուղեցույցի (տրվում է ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից սահմանված կարգով եւ պայմաններով):
- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
- **Լիցենզիայի կրկնօրինակը.**
  - Այն դեպքում, երբ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի լիցենզավորվող գործունեությունը իրականացվում է տարբեր վայրերում, տրվում է հիմնական լիցենզիայի վավերացված կրկնօրինակները, դրանցում նշելով գործունեության իրականացման հասցեները եւ վճարելով 24 հազար դրամ պետական տուրք:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Որոշման ընդունումը.**
  - ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունում լիցենզիայի ստացման մասին հայտերի քննարկման ընթացքում ՀՀ ՔԱԳՎ համապատասխան ծառայությունների կողմից կարող են անցկացվել ներկայացված տեղեկությունների եւ փաստաթղթերի վավերականության ստուգումներ:
  - Լիցենզիաների տրամադրման հարցը լուծվում է ՀՀ ՔԱԳՎ լիցենզավորման հանձնաժողովում եւ ստորագրվում ՀՀ ՔԱԳՎ պետի կողմից:
- **Լիցենզիայի վերաձևակերպումը.**
  - Լիցենզիա ստացած ձեռնարկության կազմակերպական-իրավական ձեւի փոփոխության դեպքում այն վերացուցակագրվում է՝ սահմանված կարգի համաձայն:
- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - օդանավերը կամ որեւէ օդաչուական տեխնիկա չի համապատասխանում թռիչքների անվտանգությունն ապահովելու ընդունված պահանջներին,
    - շահագործման վկայականն իր բնույթով չի համապատասխանում գործունեությանը, որի իրագործման համար պահանջվում է լիցենզիա,
    - կցված փաստաթղթերը բովանդակում են սխալ տեղեկություններ,
  - մերժման որոշումը կայացնելուց հետո վերջինիս մասին գրավոր հաղորդվում է հայտատուին եռօրյա ժամկետում՝ նշելով պատճառը,
  - բացասական պատասխան ստանալու դեպքում հայտատուն իրավունք ունի 30 օրվա ընթացքում դիմել դատարան՝ մերժման որոշումը վերանայելու եւ հասցված վնասը փոխհատուցելու համար:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը եւ անվավեր համարելը

- **Ուժը կորցնելը.**
  - լիցենզիան կորցնում է իր ուժը, եթե ձեռնարկության գործունեությունը դադարեցվում է,
- **Լիցենզիան անվավեր ճանաչելը.**
  - լիցենզիան անվավեր կարող է համարվել եթե՝
    - գործունեության ընթացքում բացահայտվում են հայտում եւ փաստաթղթերում թույլտվություն ստանալու համար ներկայացված են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
    - լիցենզիայում նշված պայմանները չեն կատարվում սեփականատիրոջ կողմից,

- ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից սահմանված ժամկետում ինֆորմացիա չի հաղորդվում իրականացվող գործունեության մասին,
- լիցենզիայի սեփականատիրոջ գործունեությունը շրջապատին եւ մարդկանց առողջությանը վնաս է հասցնում:

– եթե լիցենզիայի սեփականատիրոջ գործունեության ընթացքում հայտնաբերվում է լիցենզիան անվավեր համարելու հիմք, ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից հատկացվում է ժամկետ՝ թույլ տրված խախտումները վերացնելու համար,

– լիցենզիան անվավեր կհամարվի ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից նշված ժամկետում խախտումները չվերացվելու դեպքում,

– լիցենզիան անվավեր համարելու որոշումն այն կայացնելուց հետո 3 օրվա ընթացքում ուղարկվում է լիցենզիայի սեփականատիրոջը: Վերջինս այն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում պարտավոր է լիցենզիան հանձնել ՀՀ ՔԱԳՎ:

– լիցենզիան անվավեր համարելու որոշման պատճեն ստանալուց հետո սեփականատերը 30 օրվա ընթացքում իրավունք ունի գանգատարկել այն դատարանում:

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ, ԲԵՌՆԵՐԻ ԵՎ ՓՈՍՏԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչի 1995 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 59 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետեւյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - ուղեւորների, բեռների եւ փոստի վերգետնյա սպասարկում օդանավակայանում,
    - ուղեւորային՝ ուղետոմսերի հաշվառում եւ ուղեբեռների ձեւակերպում.
    - բեռների եւ փոստի ձեւակերպում եւ դրանց տեսակավորում.
    - բեռների եւ փոստի օդանավ տեղ հասցնելն ու այնտեղից իջեցնելը:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Հայաստանի Հանրապետությունում գրանցված եւ վերոհիշյալ գործունեության համար լիցենզավորված ձեռնարկությունների կողմից առանձնացված ստորաբաժանումների ստեղծման դեպքում նույնատիպ գործունեության նոր լիցենզիա չի պահանջվում:**
- **Օտարերկրյա ձեռնարկությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեության իրականացման նպատակով ստեղծվող առանձնացված ստորաբաժանումները ենթակա են լիցենզավորման այս ընթացակարգով՝ անկախ նրանց պետական գրանցում ստացած երկրում գործունեության տվյալ տեսակով լիցենզավորման կարգից:**
- **Այն դեպքում, երբ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի լիցենզավորվող գործունեությունը իրականացվում է տարբեր վայրերում, տրվում է հիմնական լիցենզիայի վավերացված կրկնօրինակները, դրանցում նշելով գործունեության իրականացման հասցեները:**
- **Օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեությամբ զբաղվել ցանկացող անձանց կողմից նոր ձեռնարկությունների ստեղծման դեպքում տրվում է նախնական լիցենզիա ՀՀ Ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցվելու համար: Նախնական լիցենզիան համարվում է անվավեր եւ ենթակա է ետ վերցման հիմնական լիցենզիայի ստացման պահից:**
- **Ձեռնարկություններին կարող է տրվել օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման մի քանի տեսակներով միաժամանակ զբաղվելու լիցենզիաներ:**
- **Ուղևորների, բեռների և փոստի վերգետնյա սպասարկման գործունեությամբ զբաղվելու համար նոր ստեղծվող ձեռնարկություններին տրվում է նախնական լիցենզիա, պետական ռեգիստրում գրանցվելու համար: Գործունեության այս տեսակով զբաղվելու համար հիմնական լիցենզիայի տրման պահից, նախնական լիցենզիան համարվում է անվավեր և ենթակա է ետ վերցման:**
- **Լիցենզիայի օտարումը կամ փոխանցումն արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն**
  - հասցե / հեռախոսներ՝
    - 375042, Ձվարթնոց - 42,
    - Հեռախոս՝ 28 20 66:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները եւ անհատ ձեռներեցները:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.**
  - Նախնական լիցենզիայի ստացման համար՝
    - հայտ,
    - հիմնադիր փաստաթղթերը:

- Հիմնական լիցենզիայի ստացման համար՝
  - հայտ,
  - հիմնադիր փաստաթղթերը,
  - պետական գրանցման վկայականի պատճենը,
  - գործունեության այս տեսակով զբաղվելու համար անհրաժեշտ մասնագետների պրոֆեսիոնալ պիտանիությունը հավաստող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաեւ աշխատանքի թույլտվություն:

- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

- **Լիցենզիայի կրկնօրինակը.**
  - Այն դեպքում, երբ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի լիցենզավորվող գործունեությունը իրականացվում է տարբեր վայրերում, տրվում է հիմնական լիցենզիայի վավերացված կրկնօրինակները, դրանցում նշելով գործունեության իրականացման հասցեները եւ վճարելով 24 հազար դրամ պետական տուրք:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Որոշման ընդունումը.**
  - ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունում լիցենզիայի ստացման մասին հայտերի քննարկման ընթացքում ՀՀ ՔԱԳՎ համապատասխան ծառայությունների կողմից կարող են անցկացվել ներկայացված տեղեկությունների եւ փաստաթղթերի վավերականության ստուգում:
  - Լիցենզիաների տրամադրման հարցը լուծվում է ՀՀ ՔԱԳՎ լիցենզավորման հանձնաժողովում եւ ստորագրվում ՀՀ ՔԱԳՎ պետի կողմից:

- **Լիցենզիայի վերածնակերպումը.**
  - Լիցենզիան ստացած ձեռնարկության կազմակերպական-իրավական ձեւի փոփոխության դեպքում այն վերացուցակագրվում է:

- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - կցված փաստաթղթերը բովանդակում են սխալ տեղեկություններ,
  - մերժման որոշումը կայացնելուց հետո վերջինիս մասին գրավոր հաղորդվում է հայտատուին եռօրյա ժամկետում՝ նշելով պատճառը,
  - բացասական պատասխան ստանալու դեպքում հայտատուն իրավունք ունի 30 օրվա ընթացքում դիմել դատարան՝ մերժման որոշումը վերանայելու եւ հասցված վնասը փոխհատուցելու համար:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը եւ անվավեր համարելը

- **Ուժը կորցնելը.**
  - լիցենզիան կորցնում է իր ուժը, եթե ձեռնարկության գործունեությունը դադարեցվում է:

- **Լիցենզիան անվավեր ճանաչելը.**
  - լիցենզիան անվավեր կարող է համարվել երբ՝
    - գործունեության ընթացքում բացահայտվում են հայտում եւ փաստաթղթերում թույլտվություն ստանալու համար ներկայացված են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
    - լիցենզիայում նշված պայմանները չեն կատարվում սեփականատիրոջ կողմից,
    - ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից սահմանված ժամկետում ինֆորմացիա չի հաղորդվում իրականացվող գործունեության մասին,
    - լիցենզիայի սեփականատիրոջ գործունեությունը շրջապատին եւ մարդկանց առողջությանը վնաս է հասցնում:
  - եթե լիցենզիայի սեփականատիրոջ գործունեության ընթացքում լինում է լիցենզիան անվավեր համարելու հիմք, ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից հատկացվում է ժամկետ՝ թույլ տրված խախտումները վերացնելու համար,
  - լիցենզիան անվավեր կհամարվի ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից նշված ժամկետում խախտումները չվերացվելու դեպքում,

- լիցենզիան անվավեր համարելու որոշումն այն կայացնելուց հետո 3 օրվա ընթացքում, ուղարկվում է լիցենզիայի սեփականատիրոջը: Վերջինս այն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում պարտավոր է լիցենզիան հանձնել ՀՀ ՔԿԳՎ,
- լիցենզիան անվավեր համարելու որոշման պատճենը ստանալուց հետո սեփականատերը 30 օրվա ընթացքում իրավունք ունի գանգատարկել այն դատարանում:

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ, ԲԵՌՆԵՐԻ ԵՎ ՓՈՍՏԻ ՎԵՐԳԵՏՆՅԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչի 1995 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 59 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է ուղեւորների, բեռների եւ փոստի վերգետնյա սպասարկման գծով տերմինալների շահագործման ծառայություններ իրականացնելու համար.

Լիցենզիայի առանձնահատկությունները

- Հայաստանի Հանրապետությունում գրանցված եւ վերոհիշյալ գործունեության համար լիցենզավորված ձեռնարկությունների կողմից առանձնացված ստորաբաժանումների ստեղծման դեպքում նույնատիպ գործունեության նոր լիցենզիա չի պահանջվում:
- Օտարերկրյա ձեռնարկությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեության իրականացման նպատակով ստեղծվող առանձնացված ստորաբաժանումները ենթակա են լիցենզավորման այս ընթացակարգով՝ անկախ նրանց պետական գրանցում ստացած երկրում գործունեության տվյալ տեսակով լիցենզավորման կարգից:
- Այն դեպքում, երբ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի լիցենզավորվող գործունեությունը իրականացվում է տարբեր վայրերում, տրվում է հիմնական լիցենզիայի վավերացված կրկնօրինակները, դրանցում նշելով գործունեության իրականացման հասցեները:
- Օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեությամբ զբաղվել ցանկացող անձանց կողմից նոր ձեռնարկությունների ստեղծման դեպքում տրվում է նախնական լիցենզիա ՀՀ Ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցվելու համար: Նախնական լիցենզիան համարվում է անվավեր եւ ենթակա է ետ վերցման հիմնական լիցենզիայի ստացման պահից:
- Նոր ստեղծվող ձեռնարկություններին տրվում է նախնական լիցենզիա, պետական ռեգիստրում գրանցվելու համար: Գործունեության այս տեսակով զբաղվելու համար հիմնական լիցենզիայի տրման պահից նախնական լիցենզիան համարվում է անվավեր և ենթակա է ետ վերցման:
- Ձեռնարկություններին կարող է տրվել օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման մի քանի տեսակներով միաժամանակ զբաղվելու լիցենզիաներ:
- Լիցենզիայի օտարումը կամ փոխանցումն արգելվում է:

Լիցենզավորող մարմինը

- Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
  - հասցե / հեռախոսներ՝
    - 375042, Ձվարթնոց - 42,
    - Հեռախոս՝ 28 20 66:

Լիցենզիա ստացողը

- Լիցենզիա կարող են ստանալ իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները եւ անհատ ձեռներեցները:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- Ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.
  - Նախնական լիցենզիայի ստացման համար՝
    - հայտ,
    - հիմնադիր փաստաթղթերը:
  - Հիմանական լիցենզիայի ստացման համար՝
    - հայտ,
    - հիմնադիր փաստաթղթերը,
    - պետական գրանցման վկայականի պատճենը,

- գործունեության այս տեսակով զբաղվելու համար անհրաժեշտ մասնագետների պրոֆեսիոնալ պիտանիությունը հավաստող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաեւ աշխատանքի թույլտվություն:

- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
- **Լիցենզիայի կրկնօրինակը.**
  - Այն դեպքում, երբ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի լիցենզավորվող գործունեությունը իրականացվում է տարբեր վայրերում, տրվում է հիմնական լիցենզիայի վավերացված կրկնօրինակները, դրանցում նշելով գործունեության իրականացման հասցեները եւ վճարելով 24 հազար դրամ պետական տուրք:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Որոշման ընդունումը.**
  - ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունում լիցենզիայի ստացման մասին հայտերի քննարկման ընթացքում, ՀՀ ՔԱԳՎ համապատասխան ծառայությունների կողմից կարող են անցկացվել ներկայացված տեղեկությունների եւ փաստաթղթերի վավերականության ստուգում:
  - Լիցենզիաների տրամադրման հարցը լուծվում է ՀՀ ՔԱԳՎ լիցենզավորման հանձնաժողովում եւ ստորագրվում ՀՀ ՔԱԳՎ պետի կողմից:
- **Լիցենզիայի վերածևակերպումը.**
  - Լիցենզիան ստացած ձեռնարկության կազմակերպական-իրավական ձեւի փոփոխության դեպքում այն վերացուցակագրվում է՝ սահմանված կարգի համաձայն:
- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - կցված փաստաթղթերը բովանդակում են սխալ տեղեկություններ,
  - մերժման որոշումը կայացնելուց հետո վերջինիս մասին գրավոր հաղորդվում է հայտատուին եռօրյա ժամկետում՝ նշելով պատճառը,
  - բացասական պատասխան ստանալու դեպքում հայտատուն իրավունք ունի 30 օրվա ընթացքում դիմել դատարան՝ մերժման որոշումը վերանայելու եւ հասցված վնասը փոխհատուցելու համար:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը եւ անվավեր համարելը

- **Ուժը կորցնելը.**
  - լիցենզիան կորցնում է իր ուժը, եթե ձեռնարկության գործունեությունը դադարեցվում է,
- **Լիցենզիան անվավեր ճանաչելը.**
  - լիցենզիան անվավեր կարող է համարվել երբ՝
    - գործունեության ընթացքում կբացահայտվեն հայտում եւ փաստաթղթերում թույլտվություն ստանալու համար ներկայացված են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
    - լիցենզիայում նշված պայմանները չեն կատարվում սեփականատիրոջ կողմից,
    - ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից սահմանված ժամկետում ինֆորմացիա չի հաղորդվում իրականացվող գործունեության մասին,
    - լիցենզիայի սեփականատիրոջ գործունեությունը շրջապատին եւ մարդկանց առողջությանը վնաս է հասցնում:
  - եթե լիցենզիայի սեփականատիրոջ գործունեության ընթացքում հայտնաբերվում է լիցենզիան անվավեր համարելու հիմք, ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից հատկացվում է ժամկետ՝ թույլ տրված խախտումները վերացնելու համար,
  - լիցենզիան անվավեր կհամարվի ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից նշված ժամկետում խախտումները վերացնելու դեպքում,
  - լիցենզիան անվավեր համարելու որոշումն այն կայացնելուց հետո 3 օրվա ընթացքում ուղարկվում է լիցենզիայի սեփականատիրոջը: Վերջինս այն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում պարտավոր է լիցենզիան հանձնել ՀՀ ՔԱԳՎ,
  - լիցենզիան անվավեր համարելու որոշման պատճենը ստանալուց հետո սեփականատերը 30 օրվա ընթացքում իրավունք ունի գանգատարկել այն դատարանում:

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԴԱՆԱՎԵՐԻ ԿԵՆՑԱՂ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչի 1995 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 59 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետեւյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - օդանավերի կենցաղ-սանիտարական սպասարկում,
    - օդանավերի մաքրում.
    - օդանավերի կենցաղային սարքավորումների քիմմաքրում.
    - օդանավերի արտաքին լվացում:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Հայաստանի Հանրապետությունում գրանցված եւ վերոհիշյալ գործունեության համար լիցենզավորված ձեռնարկությունների կողմից առանձնացված ստորաբաժանումների ստեղծման դեպքում նույնատիպ գործունեության նոր լիցենզիա չի պահանջվում:**
- **Օտարերկրյա ձեռնարկությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեության իրականացման նպատակով ստեղծվող առանձնացված ստորաբաժանումները ենթակա են լիցենզավորման այս ընթացակարգով՝ անկախ նրանց պետական գրանցում ստացած երկրում գործունեության տվյալ տեսակով լիցենզավորման կարգից:**
- **Այն դեպքում, երբ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի լիցենզավորվող գործունեությունը իրականացվում է տարբեր վայրերում, տրվում է հիմնական լիցենզիայի վավերացված կրկնօրինակները, դրանցում նշելով գործունեության իրականացման հասցեները:**
- **Օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեությամբ զբաղվել ցանկացող անձանց կողմից նոր ձեռնարկությունների ստեղծման դեպքում տրվում է նախնական լիցենզիա ՀՀ Ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցվելու համար: Նախնական լիցենզիան համարվում է անվավեր եւ ենթակա է ետ վերցման հիմնական լիցենզիայի ստացման պահից:**
- **Նոր ստեղծվող ձեռնարկություններին տրվում է նախնական լիցենզիա՝ պետական ռեգիստրում գրանցվելու համար: Գործունեության այս տեսակով զբաղվելու համար հիմնական լիցենզիայի տրման պահից նախնական լիցենզիան համարվում է անվավեր և ենթակա է ետ վերցման:**
- **Ձեռնարկություններին կարող է տրվել օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման մի քանի տեսակներով միաժամանակ զբաղվելու լիցենզիաներ:**
- **Լիցենզիայի օտարումը կամ փոխանցումն արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն**
  - հասցե / հեռախոսներ՝
    - 375042, Ձվարթնոց - 42,
    - Հեռախոս՝ 28 20 66:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները եւ անհատ ձեռներեցները:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.**
  - Նախնական լիցենզիայի ստացման համար՝
    - հայտ,
    - հիմնադիր փաստաթղթերը:

- Հիմնական լիցենզիայի ստացման համար՝
  - հայտ,
  - հիմնադիր փաստաթղթերը,
  - պետական գրանցման վկայականի պատճենը,
  - գործունեության այս տեսակով զբաղվելու համար անհրաժեշտ մասնագետների պրոֆեսիոնալ պիտանիությունը հավաստող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաեւ աշխատանքի թույլտվություն:

- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

- **Լիցենզիայի կրկնօրինակը.**
  - Այն դեպքում, երբ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի լիցենզավորվող գործունեությունը իրականացվում է տարբեր վայրերում, տրվում են հիմնական լիցենզիայի վավերացված կրկնօրինակները, դրանցում նշելով գործունեության իրականացման հասցեները եւ վճարելով 24 հազար դրամ պետական տուրք:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Որոշման ընդունումը.**
  - ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունում լիցենզիայի ստացման մասին հայտերի քննարկման ընթացքում ՀՀ ՔԱԳՎ համապատասխան ծառայությունների կողմից կարող են անցկացվել ներկայացված տեղեկությունների եւ փաստաթղթերի վավերականության ստուգում:
  - Լիցենզիաների տրամադրման հարցը լուծվում է ՀՀ ՔԱԳՎ լիցենզավորման հանձնաժողովում եւ ստորագրվում ՀՀ ՔԱԳՎ պետի կողմից:

- **Լիցենզիայի վերածևակերպումը.**
  - Լիցենզիան ստացած ձեռնարկության կազմակերպական-իրավական ձեւի փոփոխության դեպքում այն վերացուցակագրվում է սահմանված կարգի համաձայն:

- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - կցված փաստաթղթերը բովանդակում են սխալ տեղեկություններ,
  - մերժման որոշումը կայացնելուց հետո վերջինիս մասին գրավոր հաղորդվում է հայտատուին եռօրյա ժամկետում՝ նշելով պատճառը,
  - բացասական պատասխան ստանալու դեպքում հայտատուն իրավունք ունի 30 օրվա ընթացքում դիմել դատարան՝ մերժման որոշումը վերանայելու եւ հասցված վնասը փոխհատուցելու համար:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը եւ անվավեր համարելը

- **Ուժը կորցնելը՝**
  - լիցենզիան կորցնում է իր ուժը, եթե ձեռնարկության գործունեությունը դադարեցվում է,

- **Լիցենզիան անվավեր ճանաչելը՝**
  - լիցենզիան անվավեր կարող է համարվել երբ՝
    - գործունեության ընթացքում բացահայտվում են հայտում եւ փաստաթղթերում թույլտվություն ստանալու համար ներկայացված են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
    - լիցենզիայում նշված պայմանները չեն կատարվում սեփականատիրոջ կողմից,
    - ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից սահմանված ժամկետում ինֆորմացիա չի հաղորդվում իրականացվող գործունեության մասին,
    - լիցենզիայի սեփականատիրոջ գործունեությունը շրջապատին եւ մարդկանց առողջությանը վնաս է հասցնում:
  - եթե լիցենզիայի սեփականատիրոջ գործունեության ընթացքում հայտնաբերվում է լիցենզիան անվավեր համարելու հիմք, ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից հատկացվում է ժամկետ՝ թույլ տրված խախտումները վերացնելու համար,
  - լիցենզիան անվավեր կհամարվի ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից նշված ժամկետում խախտումները չվերացնելու դեպքում,

- լիցենզիան անվավեր համարելու որոշումն այն կայացնելուց հետո 3 օրվա ընթացքում, ուղարկվում է լիցենզիայի սեփականատիրոջը: Վերջինս այն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում պարտավոր է լիցենզիան հանձնել ՀՀ ՔԱԳՎ,
- լիցենզիան անվավեր համարելու որոշման պատճեն ստանալուց հետո սեփականատերը 30 օրվա ընթացքում իրավունք ունի գանգատարկել այն դատարանում:

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄ (ԱՎԻԱՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչի 1995 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 59 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետեւյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - ուղեւորային, բեռնային և փոստային օդային փոխադրումների իրացում (ավիատոմսերի վաճառք), որն իրագործվում է.
    - ճամփորդական գրասենյակներում,
    - ինքնուրույն գործակալություններում,
    - տուրիստական գործակալություններում:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Հայաստանի Հանրապետությունում գրանցված եւ վերոհիշյալ գործունեության համար լիցենզավորված ձեռնարկությունների կողմից առանձնացված ստորաբաժանումների ստեղծման դեպքում նույնատիպ գործունեության նոր լիցենզիա չի պահանջվում:**
- **Օտարերկրյա ձեռնարկությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեության իրականացման նպատակով ստեղծվող առանձնացված ստորաբաժանումները ենթակա են լիցենզավորման այս ընթացակարգով՝ անկախ նրանց պետական գրանցում ստացած երկրում գործունեության տվյալ տեսակով լիցենզավորման կարգից:**
- **Այն դեպքում, երբ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի լիցենզավորվող գործունեությունը իրականացվում է տարբեր վայրերում, տրվում են հիմնական լիցենզիայի վավերացված կրկնօրինակները, դրանցում նշելով գործունեության իրականացման հասցեները:**
- **Օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեությամբ զբաղվել ցանկացող անձանց կողմից նոր ձեռնարկությունների ստեղծման դեպքում տրվում է նախնական լիցենզիա ՀՀ Ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցվելու համար: Նախնական լիցենզիան համարվում է անվավեր եւ ենթակա է ետ վերցման հիմնական լիցենզիայի ստացման պահից:**
- **Նոր ստեղծվող ձեռնարկություններին տրվում է նախնական լիցենզիա, պետական ռեգիստրում գրանցվելու համար: Գործունեության այս տեսակով զբաղվելու համար հիմնական լիցենզիայի տրման պահից նախնական լիցենզիան համարվում է անվավեր և ենթակա է ետ վերցման:**
- **Ձեռնարկություններին կարող է տրվել օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման մի քանի տեսակներով միաժամանակ զբաղվելու լիցենզիաներ:**
- **Լիցենզիայի օտարումը կամ փոխանցումն արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - 375042, Ձվարթնոց - 42,
    - Հեռախոս՝ 28 20 66:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները եւ անհատ ձեռներեցները:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.**
  - Նախնական լիցենզիայի ստացման համար՝
    - հայտ,
    - հիմնադիր փաստաթղթերը:

- Հիմնական լիցենզիայի ստացման համար՝
  - հայտ,
  - հիմնադիր փաստաթղթերը,
  - պետական գրանցման վկայականի պատճենը,
  - գործունեության այս տեսակով զբաղվելու համար անհրաժեշտ մասնագետների պրոֆեսիոնալ պիտանիությունը հավաստող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաեւ աշխատանքի թույլտվություն:
  - տեղեկանք բանկից,
  - տարածքի վարձակալման պայմանագրի կամ սեփականության վկայականի պատճենը,
  - տարածքի հատակագիծ
    - տարածքի մակերեսը պետք է լինի 30 քառ. մետրից ոչ պակաս,
    - մուտքը դեպի տարածք պետք է սկսվի մայթեզրից,
  - խիստ հաշվառման բլանկների պահպանությունը հավաստող փաստաթուղթ,
  - տեղեկանք չհրկիզվող պահարանների մասին,
  - զբաղեցրած տարածքի շուրջօրյա պահպանության իրականացման նպատակով ներկայացնել պայմանագիր այն կազմակերպության հետ, որը լիազորված է եւ իրականացնում է անվտանգության ծառայություն,
  - տեղեկանք հակահրդեհային միջոցների առկայության մասին:
- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
- **Լիցենզիայի կրկնօրինակը.**
  - Այն դեպքում, երբ ձեռնարկության կամ անհատ ձեռներեցի լիցենզավորվող գործունեությունը իրականացվում է տարբեր վայրերում, տրվում է հիմնական լիցենզիայի վավերացված կրկնօրինակները, դրանցում նշելով գործունեության իրականացման հասցեները եւ վճարելով 24 հազար դրամ պետական տուրք:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Որոշման ընդունումը.**
  - ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունում լիցենզիայի ստացման մասին հայտերի քննարկման ընթացքում, ՀՀ ՔԱԳՎ համապատասխան ծառայությունների կողմից կարող են անցկացվել ներկայացված տեղեկությունների եւ փաստաթղթերի վավերականության ստուգում:
  - Լիցենզիաների տրամադրման հարցը լուծվում է ՀՀ ՔԱԳՎ լիցենզավորման հանձնաժողովում եւ ստորագրվում ՀՀ ՔԱԳՎ պետի կողմից:
- **Լիցենզիայի վերածևակերպումը.**
  - Լիցենզիան ստացած ձեռնարկության կազմակերպական-իրավական ձեւի փոփոխության դեպքում այն վերացուցակագրվում է՝ սահմանված կարգի համաձայն:
- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - կցված փաստաթղթերը բովանդակում են սխալ տեղեկություններ,
    - չեն ապահովվել վերոհիշյալ պահանջները,
  - մերժման որոշումը կայացնելուց հետո վերջինիս մասին գրավոր հաղորդվում է հայտատուին եռօրյա ժամկետում՝ նշելով պատճառը,
  - բացասական պատասխան ստանալու դեպքում հայտատուն իրավունք ունի 30 օրվա ընթացքում դիմել դատարան՝ մերժման որոշումը վերանայելու եւ հասցված վնասը փոխհատուցելու համար:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը եւ անվավեր համարելը

- **Ուժը կորցնելը.**

- լիցենզիան կորցնում է իր ուժը, եթե ձեռնարկության գործունեությունը դադարեցվում է,

- **Լիցենզիան անվավեր ճանաչելը.**
  - լիցենզիան անվավեր կարող է համարվել, երբ՝
    - գործունեության ընթացքում բացահայտվում են հայտում եւ փաստաթղթերում թույլտվություն ստանալու համար ներկայացված են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
    - լիցենզիայում նշված պայմանները չեն կատարվում սեփականատիրոջ կողմից,
    - ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից սահմանված ժամկետում ինֆորմացիա չի հաղորդվում իրականացվող գործունեության մասին,
    - լիցենզիայի սեփականատիրոջ գործունեությունը շրջապատին եւ մարդկանց առողջությանը վնաս է հասցնում:
  - եթե լիցենզիայի սեփականատիրոջ գործունեության ընթացքում հայտնաբերվում է լիցենզիան անվավեր համարելու հիմք, ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից հատկացվում է ժամկետ՝ թույլ տրված խախտումները վերացնելու համար,
  - լիցենզիան անվավեր կհամարվի ՀՀ ՔԱԳՎ-ի կողմից նշված ժամկետում խախտումները չվերացնելու դեպքում,
  - լիցենզիան անվավեր համարելու որոշումն այն կայացնելուց հետո 3 օրվա ընթացքում ուղարկվում է լիցենզիայի սեփականատիրոջը: Վերջինս այն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում պարտավոր է լիցենզիան հանձնել ՀՀ ՔԱԳՎ,
  - լիցենզիան անվավեր համարելու որոշման պատճեն ստանալուց հետո սեփականատերը 30 օրվա ընթացքում իրավունք ունի գանգատարկել այն դատարանում:

12. ԱՆՄԱՔՍ ԱՌԵՎՏՐԻ ԽԱՆՈՒԹՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ մաքսային վարչության պետի 1999 թվականի փետրվարի 4-ի թիվ 15-ՄՎ հրամանով հաստատված հրահանգով

Ընդհանուր բնութագիրը

- Տվյալ թույլտվությունն անհրաժեշտ է ազատ մաքսային գոտիներում անմաքս առևտրի խանութների հիմնադրման և գործունեության իրականացման համար:

Առանձնահատկությունները

- Անմաքս առևտրի խանութը մաքսային ռեժիմ է, որը թույլ է տալիս Հայաստանի Հանրապետությունից և այլ երկրներից օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքների ներմուծում անմաքս առևտրի խանութի տարածք և հետագայում դրանց իրացում՝ մաքսային հսկողության ներքո, առանց հարկային և մաքսային մարմինների կողմից մաքսատուրքի, ավելացված արժեքի և ակցիզային հարկերի և դրանց փոխարինող հաստատագրված վճարների գանձման:
- ,,Ներմուծում անմաքս առևտրի խանութ,, մաքսային ռեժիմով հայտարարագրվում են միայն ՀՀ օրենսդրությանը և սույն հրահանգին համապատասխան հիմնադրված հատուկ խանութներում (անմաքս առևտրի խանութներ) իրացման ենթակա ապրանքները:
- Անմաքս առևտրի խանութներում իրացման ենթակա բոլոր ապրանքները՝ անկախ այն փաստից դրանք ներմուծվում են ՀՀ-ից թե այլ երկրներից, ենթակա են հայտարարագրման ,,ներմուծում անմաքս առևտրի խանութ,, մաքսային ռեժիմով:
- Անմաքս առևտրի խանութի հիմնադրի կողմից անմաքս առևտրի խանութներում իրացման նպատակով ՀՀ-ում ձեռք բերված ապրանքները ՀՀ-ում գրանցված պայմանադիր կողմը այդ ապրանքները հայտարարագրում է ,,արտահանում ազատ շրջանառության համար,, մաքսային ռեժիմով և համարվում են ՀՀ-ից արտահանված:
- Անմաքս առևտրի խանութներ կարող են հիմնադրվել այն միջազգային ուղևորային հաղորդակցության համար բաց օդանավակայանների կամ ֆիզիկական անձանց կողմից սահմանը հատելու համար նախատեսված ՀՀ անցումային կետերի տարածքներում, որոնք ՀՀ կառավարության կողմից սահմանվել են որպես մաքսային հսկողության գոտիներ:
- Պետք է բացառվի անմաքս առևտրի խանութի սրահից կամ պահեստից «Ներմուծում անմաքս առևտրի խանութ» մաքսային ռեժիմով հայտարարագրված ապրանքների դուրս հանումն առանց մաքսային հսկողության՝ բացառությամբ հաճախորդի կողմից գնված ապրանքի դուրս հանման:
- Անմաքս առևտրի խանութները հիմնադրվում են բացառապես ՀՀ սահմանով ուղևորվող քաղաքացիներին սպասարկելու նպատակով՝ բացառությամբ ՀՀ ժամանող քաղաքացիներին ենթակացիզային, ինչպես նաև ՀՀ-ում ձեռք բերված անմաքս առևտրի խանութ արտահանված ապրանքատեսակներով սպասարկելու:
- Թույլտվությունը տրվում է երեք տարին չգերազանցող ժամանակահատվածի համար:

Թույլտվություն տվող մարմինը

- Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն.
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375015, Մ. Խորենացու փողոց - 3,
    - Հեռախոս՝ 53 91 95:

Թույլտվություն ստացողը

- Անմաքս առևտրի խանութի գործունեության համար թույլտվությունը տրվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված այն առևտրային կազմակերպություններին, որոնց տնօրինության տակ է գտնվում ստորև նշված պահանջներին համապատասխանող տարածք.
  - Անմաքս առևտրի խանութի սրահները պետք է գտնվեն.
    - ՀՀ-ից մեկնող ուղևորներին սպասարկելու նպատակով հիմնադրված սրահները՝ ՀՀ մաքսային սահմանը հատող ֆիզիկական անձանց կողմից մաքսային ձևակերպման համար սահմանված տեղից հետո: Նշված սրահների դիրքը պետք է բացառի այդ սրահներում ՀՀ ժամանող ֆիզիկական անձանց ներկայության հնարավորությունը:
    - ՀՀ ժամանող ուղևորներին սպասարկելու նպատակով հիմնադրված սրահները՝ մինչև ՀՀ մաքսային սահմանը հատող ֆիզիկական անձանց կողմից մաքսային ձևակերպման համար սահմանված տեղերը: ՀՀ ժամանած քաղաքացիների կողմից անմաքս առևտրի սրահում ձեռք բերված ապրանքները ենթակա են մաքսային ձևակերպման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Թույլտվություն ստացողը պետք է ունենա.
  - առևտրի սրահ,

– պահեստային տարածք՝ որը պետք է գտնվի մաքսային հսկողության գոտում:

Թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ է...

- **Թույլտվություն ստանալու համար տարածքի տնօրինության իրավունք ունեցողը պետք է դիմում ներկայացնում ՀՀ պետական եկամուտների նախարարություն, որը պետք է բովանդակի՝**
  - դիմորդի լրիվ և կրճատ իրավաբանական անվանումը, կազմակերպական-իրավական ձևը,
  - հարկ վճարողի հաշվառման համարը,
  - դիմորդի գտնվելու վայրը,
  - պետական գրանցման վկայականի տվյալները,
  - տարադրամի և դրամի բանկային հաշիվների համարները, այդ բանկերի անվանումները, հասցեները,
  - առևտրային սրահների և պահեստի համար նախատեսված տարածքների գտնվելու վայրը, մակերեսը (քառ.մ),
  - թույլտվության ժամկետը,
  - տարածքի նյութատեխնիկական հագեցվածության բնութագիրը,
  - դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:
- **Դիմումին կից ներկայացվում են՝**
  - տարածքի սեփականության (պատկանելիության) կամ վարձակալության (օգտագործման, տնօրինման) իրավունքը հաստատող համապատասխան փաստաթղթերի պատճենները (կանոնադրություն, պայմանագիր, պետական գրանցման վկայական և այլն),
  - անմաքս առևտրի խանութի նախատեսվող տեղերի (առևտրասրահների, օժանդակ տեղերի և պահեստի) գծագրերը և հատակագծերը,
  - անմաքս առևտրի խանութում ապրանքների բեռնային, առևտրային և այլ գործողություններ կատարելու համար իրավունք (անմաքս առևտրի խանութ մուտք գործելու իրավունք) ունեցող աշխատողների ցուցակը:
- **Ներկայացվող փաստաթղթերի պատճենները հաստատվում են տնօրենի կողմից:**

Թույլտվության տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - Թույլտվության տրման համար դիմումը քննարկվում է ստացման օրից մինչև երեսուն օրվա ընթացքում, եթե ներկայացվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:
- **Թույլտվություն տալը.**
  - Անմաքս առևտրի խանութի հիմնադրման թույլտվությունը տրվում է երկու օրինակից: Թույլտվության առաջին օրինակը մնում է ՀՀ պետական եկամուտների նախարարությունում, իսկ երկրորդը տրվում է անմաքս առևտրի խանութի հիմնադիրին: Նախարարության կողմից թույլտվության պատճենը տրվում է այն մաքսատանը, որի գործունեության տարածքում հիմնադրվում է անմաքս առևտրի խանութը:
- **Մերժումը.**
  - Թույլտվության մերժման դեպքում, ՀՀ պետական եկամուտների նախարարությունը քննարկումներից հետո 10-օրյա ժամկետում գրավոր տեղյակ է պահում դիմորդին, նշելով մերժման պատճառները:
  - Թույլտվության մերժման դեպքում կրկնակի դիմումը կարող է քննարկվել մերժման որոշումից ոչ շուտ, քան երեք ամիս հետո՝ մերժման համար հիմք հանդիսացող պատճառները վերացնելուց հետո:

Թույլտվության չեղյալ համարումը, կասեցումը եւ գործունեության դադարեցումը

- **Թույլտվության չեղյալ համարումը և կասեցումը.**
  - Անմաքս առևտրի խանութի հիմնադրման թույլտվությունը չեղյալ է համարվում կամ թույլտվության գործունեությունը կասեցվում է ՀՀ պետական եկամուտների նախարարության կողմից:
  - թույլտվությունը չեղյալ է համարվում, եթե այն չպետք է տրվեր հաստատված կանոնակարգի համաձայն կամ այն տրվել է թերի կամ կեղծ տեղեկությունների (տեղեկություններ պարունակող փաստաթղթերի) հիման վրա:
  - նախարարությանը թույլատրվում է մինչև երեք ամիս ժամկետով կասեցնել թույլտվության գործունեությունը, եթե կան բավարար հիմքեր ենթադրելու, որ անմաքս առևտրի խանութի տերը չի իրականացնում օրենսդրությամբ սահմանված իր պարտականությունները,

- թույլտվության գործունության կասեցումից հետո ապրանքների իրացումն անմաքս առևտրի խանութում արգելվում է: Բոլոր չիրացված ապրանքները մուտքագրվում են անմաքս առևտրի խանութի պահեստ,
- թույլտվության չեղյալ համարումը կամ գործունեության կասեցումն իրականացվում է ՀՀ պետական եկամուտների նախարարի հրամանով, անպայման նշելով նման որոշման կայացման պատճառը:

- **Գործունեության դադարեցումը.**
  - անմաքս առևտրի խանութի գործունեության դադարեցումը կատարվում է թույլտվության չեղյալ հայտարարման, խանութի հիմնադիրի ցանկության և թույլտվության ժամկետի լրանալու դեպքում,
  - անմաքս առևտրի խանութի գործունեության դադարեցման որոշման կայացման օրվանից սրահներում գտնվող ապրանքները ենթակա են անհապաղ տեղափոխման խանութի պահեստ,
  - գործունեության դադարեցման մասին որոշման կայացումից հետո «Ներմուծում անմաքս առևտրի խանութ» մաքսային ռեժիմով ապրանքների հայտարարագրում և իրացում չի թույլատրվում,
  - անմաքս առևտրի խանութի հիմնադիրը պարտավոր է խանութի գործունեության դադարեցման մասին որոշման կայացման օրվանից հետո երեքօրյա ժամկետում պահեստում գտնվող ապրանքների վերաբերյալ ամփոփիչ հաշվետվություն ներկայացնել մաքսատուն,
  - «Ներմուծում անմաքս առևտրի խանութ» մաքսային ռեժիմով հայտարարագրված ապրանքները ենթակա են կրկնակի հայտարարագրման «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով:

13. ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կարգավորվում է ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 733 որոշմամբ հաստատված կանոնակարգով

Ընդհանուր բնութագիրը

- Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է մաքսային պահեստների հիմնադրման և գործունեության իրականացման համար.
- Մաքսային պահեստը մեկ կամ մի քանի հատուկ առանձնացված և հարմարեցված շենքերի, բաց հրապարակների կամ այլ վայրերի համախումբ է, որտեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մաքսային ռեժիմի գործողությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող Հայաստանի Հանրապետության բեռնա-մաքսային հայտարարագրերի լրացման կարգով սահմանված այլ մաքսային ռեժիմների ենթակա ապրանքները պահպանվում են մաքսային հսկողության ներքո՝ առանց մաքսատուրքի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի գանձման և դրանց նկատմամբ ոչ տարիֆային բնույթի սահմանափակումների կիրառման:
- Բաց է համարվում այն մաքսային պահեստը, որից օգտվելու իրավունք ունեն արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները:
- Մասնագիտացված է համարվում այն մաքսային պահեստը, որում կարող են պահպանվել բացառապես փոխադրվող ապրանքներ, եթե դրանք փոխադրողը պահեստի կազմակերպիչն է, կամ մաքսային պահեստի կազմակերպչին պատկանող ապրանքներ:

Առանձնահատկությունները

- Լիցենզիան պատրաստվում է տպագրական եղանակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության սահմանած միասնական ձևի:
- Լիցենզիան պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
  - լիցենզիայի համարը,
  - մաքսային պահեստի տեսակը (բաց կամ մասնագիտացված),
  - կազմակերպչի լրիվ անվանումը,
  - կազմակերպչի գտնվելու վայրը,
  - մաքսային պահեստի գտնվելու վայրը,
  - լիցենզիա տալու ամսաթիվը և լիցենզիայի գործողության դադարման ամսաթիվը.
  - Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության սահմանած այլ հատուկ պահանջներ:
- Լիցենզիային կից տրվում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության կողմից հաստատված հավելվածը, որում նշվում են՝
  - կազմակերպչի անվանումը և հասցեն,
  - մաքսային պահեստի հասցեն,
  - մաքսային պահեստի մակերեսը (քառ. մետր),
  - մաքսային պահեստի տեսակը (բաց կամ մասնագիտացված):
- Բաց մաքսային պահեստների կազմակերպման համար տրվող լիցենզիայի գործողության ժամկետը երկու տարի է, իսկ մասնագիտացված մաքսային պահեստների կազմակերպման համար՝ երեք տարի: Մինչև լիցենզիայի գործողության ժամկետը լրանալը կազմակերպիչն իրավունք ունի սույն կանոնակարգին համապատասխան դիմել նոր լիցենզիայի ստանալու համար:
- Լիցենզիան կազմակերպչին իրավունք է տալիս մաքսային պահեստ կազմակերպել միայն մեկ՝ լիցենզիայում նշված հասցեում (վայրում):
- Մի քանի հասցեով մաքսային պահեստ կազմակերպելու համար միևնույն կազմակերպիչն սույն կանոնակարգին համապատասխան կարող է դիմել և ստանալ մեկից ավելի լիցենզիա:
- Լիցենզիան չի կարող օտարվել երրորդ անձի կամ գրավադրվել:

Լիցենզավորող մարմինը

- Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն.
  - հասցե / հեռախոսներ՝

- Երեւան 375015, Մ. Խորենացու փողոց - 3,
- Հեռախոս՝ 53 91 95:

Լիցենզիա ստացողը

- **Մաքսային պահեստի կազմակերպման համար լիցենզիա տրվում է ՀՀ-ում գործող իրավաբանական անձանց, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաճյուղերին:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն ներկայացնել՝**
  - դիմում՝ երկու օրինակից, որում, ի թիվս այլ տեղեկությունների, նշվում են՝
    - դիմողի անվանումը,
    - կազմակերպական-իրավական տեսակը և գտնվելու վայրը.
    - պետական գրանցման վկայականի տվյալները,
    - մաքսային պահեստի հասցեն.
    - մաքսային պահեստի մակերեսը (քառ. մ"տր).
    - մաքսային պահեստի տեսակը (բաց կամ մասնագիտացված).
    - դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.
  - դիմումին կից ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.
    - դիմողի հիմնադիր փաստաթղթերի պատճենները,
    - դիմողի կառավարման իրավասու մարմնի կողմից հիմնադիր փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար,
    - մաքսային պահեստի տարածքի սեփականության կամ վարձակալության (օգտագործման) իրավունքի վկայականի պատճենը,
    - մաքսային պահեստների համար նախատեսված շենքերի ծրագրերը և հատակագիծը,
    - մաքսային պահեստ մուտք գործելու իրավունք ունեցող անձանց ցանկը,
    - պահպանության ծառայություն վարձելու դեպքում՝ համապատասխան պայմանագրի բնօրինակը,
    - պահպանությունը սեփական ծառայության միջոցով իրականացնելու դեպքում պահպանության ծառայության անձնակազմի (աշխատողների) ցուցակը անձնագրային տվյալներով,
    - պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգերի տեխնիկական անձնագրերն ու այդ համակարգերը տեղադրելու համար պատասխանատու անձի տեղեկանքը մաքսային պահեստի տարածքում նշված համակարգերը դրանց տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,
    - տեղեկանք՝ հայտատուի կանոնադրական հիմնադրամի փաստացի համալրված մեծության վերաբերյալ:

– Նոր ստեղծվող իրավաբանական անձինք լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն են ներկայացվում՝

  - դիմում՝ երկու օրինակից, որում, ի թիվս այլ տեղեկությունների, նշվում են՝
    - դիմողի անվանումը,
    - կազմակերպական-իրավական տեսակը և նախատեսվող գտնվելու վայրը,
    - մաքսային պահեստի հասցեն.
    - մաքսային պահեստի մակերեսը (քառ. մետր),
    - մաքսային պահեստի տեսակը (բաց կամ մասնագիտացված),
    - հայտարարություն սեփական պահպանության ծառայություն ստեղծելու կամ այն վարձելու մտադրության մասին,
    - դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,
  - դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.
    - հիմնադիրների կողմից հաստատված հիմնադիր փաստաթղթերի պատճենները.
    - մասնակցի (փայատիրոջ) անվամբ տրված՝ մաքսային պահեստի տարածքի սեփականության կամ վարձակալության (օգտագործման իրավունքի վկայականի պատճենը կամ տարածքի սեփականատիրոջ (վարձակալի) համաձայնությունը տվյալ տարածքը վարձակալությամբ կամ ենթավարձակալությամբ դիմողին տալու վերաբերյալ՝ կցելով տվյալ տարածքի նկատմամբ իր իրավունքը հավաստող համապատասխան վկայականը:

– Եթե կազմակերպչի կողմից նախկինում կազմակերպված մաքսային պահեստին տրված լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել, ապա կազմակերպիչը դիմումում նշում է նաև այդ պահեստի գործունեության ժամկետը և լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու պատճառները: Կազմակերպիչը դիմումում տեղեկություններ է հաղորդում նաև այն դեպքերի մասին, երբ՝

  - այդպիսի լիցենզիան ուժը կորցրած ճանաչված կազմակերպչի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսը պատկանում է իրեն լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու պահին,
  - կազմակերպիչ ընկերության խորհրդի անդամը կամ ընկերության կառավարման մարմիններում այլ պաշտոն զբաղեցնող անձը կամ բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) իր (իրենց) հետ համագործակցող անձանց հետ ունի (ունեն) ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոս, կամ այդ անձանց ամուսինները, ծնողները, երեխաները, քույրերը, եղբայրներն այդպիսի լիցենզիան ուժը կորցրած ճանաչված կազմակերպիչ ընկերությունում լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու պահին գրավել են պաշտոններ:

– Եթե դիմողը գործող կարգի համաձայն ստացել է լիցենզիա և դիմում է նոր հասցեով մաքսային պահեստ կազմակերպելու լիցենզիա ստանալու համար, ապա դիմումին կցվում են միայն այն փաստաթղթերը, որոնք բացակայել են գործող լիցենզիայի ստացման համար ներկայացված փաստաթղթերում: Այս դեպքում դիմողը

ներկայացնում է գրավոր հայտարարություն այն մասին, որ նախկինում ներկայացված փաստաթղթերում որևէ փոփոխություն չի կատարվել՝ հղում կատարելով նախկինում ներկայացված համապատասխան փաստաթղթերին:

- **վճարել պետական տուրքը,**
  - 24000 դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում Լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը.**
  - Դիմումն ու կից փաստաթղթերն առձեռն ստանալիս՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը դիմումը ներկայացնող անձի ներկայությամբ ստուգում է փաստաթղթերի առկայությունը (ըստ դիմումում պարունակվող ցանկի), կատարում համապատասխան նշումներ դիմումի երկու օրինակի վրա և ընդունում այն: Ընդունված դիմումի մեկ օրինակը վերադարձվում է (փոստով առաքվում է) դիմողին:
- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը լիցենզիա ստանալու վերաբերյալ դիմումն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում նշանակում է քննարկում՝ առնվազն 5 օր առաջ դիմողին գրավոր տեղեկացնելով քննարկման վայրի (հասցեի), ամսաթվի ու ժամի մասին և վերջինիս հնարավորություն է ընձեռում մասնակցելու քննարկմանը:
- **Հայտի բավարարումը.**
  - Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը դիմումը քննարկում է, անկախ դիմողի ներկայացուցչի ներկայությունից:
  - Մերժման հիմքերի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը բավարարում է դիմումը՝ դրա մասին արձակելով համապատասխան հրաման:
    - Դիմումում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (սխալների, վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների և նման այլ բացթողումների) առկայության դեպքում լիցենզիա ստանալու վերաբերյալ դիմումը կարող է բավարարվել վերապահումով՝ տվյալ թերությունների վերացման դեպքում միայն լիցենզիան դիմողին տալու պայմանով, որի մասին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարն արձակում է համապատասխան հրաման:
  - Լիցենզիա ստանալու վերաբերյալ դիմումը բավարարելու դեպքում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի համապատասխան հրամանի պատճենը եռօրյա ժամկետում առաքվում է դիմողին կամ առձեռն հանձնվում վերջինիս ներկայացուցչին:
  - Հայտը բավարարելու վերաբերյալ արձակված հրամանը համարվում է նոր ստեղծվող ձեռնարկության համար 120 օր ժամկետով տրված նախնական լիցենզիա Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների գրանցման պետական ռեգիստրում գրանցվելու համար, առանց տվյալ գործունեությամբ զբաղվելու իրավունքի:
  - Գործող իրավաբանական անձը կարող է հայտը բավարարելու վերաբերյալ արձակված հրամանի պատճենը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն ներկայացնել համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը, որից հետո նախարարությունը եռօրյա ժամկետում դիմողին է տալիս լիցենզիան:
    - Եթե նախարարությունը լիցենզիա ստանալու վերաբերյալ դիմումը բավարարել է վերապահումով, ապա դիմողն այդ հրամանի պատճենը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն է ներկայացնում համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը և անհրաժեշտ փաստաթղթերը, որից հետո նախարարությունը եռօրյա ժամկետում լիցենզիան տալիս է դիմողին:
    - Նոր ստեղծվող ձեռնարկությունը լիցենզիա ստանալու վերաբերյալ դիմումը բավարարելու մասին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի հրամանը ստանալուց հետո 120 օրվա ընթացքում նախարարություն է ներկայացնում պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգերի տեխնիկական անձնագրերն ու այդ համակարգերը տեղադրելու համար պատասխանատու անձի տեղեկանքը մաքսային պահեստի տարածքում նշված համակարգերը դրանց տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին և պահանջվող տեղեկանքը՝ հայտատուի կանոնադրական հիմնադրամի փաստացի համալրված մեծության վերաբերյալ, որոնք ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում վերը նշված կարգով նախարարությունը քննարկում է դրանք և ընդունում համապատասխան որոշում:
- **Մերժումը.**
  - ՀՀ պետական եկամուտների նախարարությունը քննարկման արդյունքում պատշաճ հիմնավորմամբ կարող է մերժել դիմումը, եթե՝
    - դիմումում կամ կից փաստաթղթերում առկա տեղեկությունները լիարժեք չեն՝ նշելով բացակայող կամ ոչ լիարժեք տեղեկությունները,

- մաքսային պահեստի համար նախատեսվող շենքերը (շինությունները) պատշաճ պայմաններ չեն ապահովում՝ մաքսային հսկողություն իրականացնելու համար,
- դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

– Լիցենզիա ստանալու վերաբերյալ դիմումի մերժումը ձևակերպում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի հրամանով, որի պատճենը եռօրյա ժամկետում առաքվում է դիմողին կամ առձեռն հանձնվում վերջինիս ներկայացուցչին:

Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը

- **Լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝**
  - կազմակերպիչը գործել է վերը նշված պահանջների կամ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրության պահանջների խախտմամբ,
  - լիցենզիան ստանալու համար դիմումը ներկայացնելիս կամ դրանից հետո մինչև լիցենզիան ստանալու պահը կազմակերպիչը խեղաթյուրել է պահանջվող տեղեկությունները կամ ներկայացրել է ոչ լիարժեք տեղեկություններ, որոնք ճիշտ կամ լիարժեք ներկայացնելը կարող էր հանգեցնել լիցենզիա ստանալու դիմումի մերժմանը,
  - կազմակերպիչը դիմել է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջնորդությամբ:
- **Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու իր մտադրության մասին գրավոր տեղեկացնում է կազմակերպչին՝ քննարկումից առնվազն քսան օր առաջ, գրության մեջ նշելով՝**
  - լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու իրավական հիմքերն ու հետեւանքները,
  - նախարարությանը հայտնի այն փաստերն ու փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսանում լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար՝ կցելով այդ փաստաթղթերի պատճենները.
  - քննարկման վայրը (հասցեն), ամսաթիվը և ժամը,
  - այն պաշտոնատար անձի անունն ու պաշտոնը, որին կարող են դիմումներ և միջնորդություններ ներկայացվել:
- **Նախարարությունը քննարկում է հարցը՝ անկախ տվյալ կազմակերպչի ներկայությունից:**
- **Քննարկման ընթացքում մասնակցող անձն իրավունք ունի ներկայացնել առարկություններ և ապացույցներ, տալ իրեն հետաքրքրող հարցեր:**
- **Նախարարությունը, հիմնավորված անհրաժեշտության դեպքում, իր կամ քննարկմանը մասնակցող անձի միջնորդությամբ կարող է մինչև մեկ ամիս ժամկետով հետաձգել կամ ընդհատել հարցի քննությունը՝ դրամ մասին տեղեկացնելով քննարկմանը մասնակցող անձին:**
- **Քննարկմանը մասնակցող անձի փաստարկները լսելուց և ներկայացված փաստաթղթերն ու մյուս ապացույցներն ուսումնասիրելուց հետո նախարարությունը, հաստատված փաստերի հիման վրա, ընդունում է համապատասխան որոշում, որը կենսագործվում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի հրամանով:**
- **Քննարկման արդյունքում կազմակերպչի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում նախարարությունը հանձնարարում է տվյալ կազմակերպչին անմիջապես դադարեցնել գործունեությունը: Դրա կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի պարտադիր կատարման ենթակա հրամանն անմիջապես ուղարկվում է տվյալ կազմակերպչին, Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրը վարող մարմին և հրապարակվում հեռուստատեսությամբ կամ առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլում:**
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ հրամանի պատճենն ստանալուց հետո կազմակերպիչն անմիջապես.**
  - դադարեցնում է լիցենզավորված գործունեությունը,
  - ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության հետ համաձայնեցված ժամկետներում իր տարածքից ,,մաքսային պահեստ,, բառերը պարունակող բոլոր ցուցակներն ու նշանները հանելու համար,
  - նախարարության հետ համաձայնեցված ժամկետներում ապահովում է մաքսային պահեստում տեղավորված ապրանքների դուրսբերումը (այդ թվում՝ այլ մաքսային պահեստ տեղափոխումը),
  - 5-օրյա ժամկետում վերադարձնում է լիցենզիայի բնօրինակը:
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի հրամանը կարող է գանգատարկվել դատական կարգով:**
- **Այն կազմակերպիչը, որի լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել, ինչպես նաև տվյալ կազմակերպչի կանոնադրական հիմնադրամի 1/3-ից ավելին ունեցող անձը կազմակերպչի լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելուց հետո մեկ տարվա ընթացքում իրավունք չունի դիմելու լիցենզիա ստանալու համար: Նշված սահմանափակումը չի գործում այն դեպքում, երբ կազմակերպչի լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել իր միջնորդության հիման վրա:**

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կարգավորվում է ՀՀ Հարկային տեսչության պետի 1998 թվականի դեկտմբերի 25-ի թիվ 01/59 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետեւյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների ծառայությունների մատուցում:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **տրամադրվում է 3 տարի ժամկետով,**
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **լիցենզիա ունեցող անձանց նկատմամբ հաշվետվությունների ներկայացման պահանջ չկա,**
- **սույն լիցենզիան անվանական փաստաթուղթ է և չի կարող փոխանցվել կամ օտարվել:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375015, Մ. Խորենացու փողոց - 3,
    - Հեռախոս՝ 53 91 95:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ այն իրավաբանական անձիք և անհատ ձեռներեցները, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառման համար թույլատրված հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայություններով զբաղվելու համար ստեղծում են հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման կենտրոններ:**
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է՝**
  - պահպանել հսկիչ-դրամարկղային մեքենաների տեղնիկական սպասարկման և նորոգման ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը,
  - հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման կենտրոններ ստեղծել հիմնական կառույց հանդիսացող և կապով ապահովված շինություններում,
  - հնարավորություն ընձեռնել պետական եկամուտների նախարարության լիազորված անձանց ստուգելու լիցենզիա ստանալու դիմումին կից փաստաթղթերում եղած տեղեկությունների համապատասխանությունը իրականությանը, կատարել ուսումնասիրություններ եւ կազմել եզրակացություններ օրենսդրությամբ սահմանված նորմերին կենտրոնի աշխատանքի համապատասխանության մասին:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ձեռք բերել կամ վարձակալել հիմնական կառույց հանդիսացող և կապով ապահովված շինություն որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման կենտրոնի գրասենյակ.**
- **ՀՀ պետական եկամուտների նախարարություն ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - դիմում՝ նշելով հայցորդի կազմակերպական-իրավական տեսակը, լրիվ անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը և բանկային հաշվի համարը,
  - դիմումին կցվում է նաև՝
    - հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման կենտրոնների համար նախատեսված տարածքների (շինությունների) հասցեները,
    - այդ տարածքների նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը,

- տարածքների վարձակալության դեպքում վարձակալության պայմանագրերը,
  - հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման կենտրոնի հիմնադիր փաստաթղերի պատճենները,
  - այն հսկիչ-դրամարկղային մեքենաների մոդելների ցանկը, որոնց տեխնիկական սպասարկումը և նորոգումը կատարվելու է տվյալ կենտրոնի կողմից՝ համաձայն արտադրողի հետ կնքած պայմանագրի,
  - վերոհիշյալ մոդելների շահագործման փաստաթղթերի փաթեթի պատճենը՝ հայերեն լեզվով:
- **վճարել պետական տուրքը.**
  - ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24000 դրամ,
  - լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար ֆիզիկական և իրավաբանական անձիք պետք է վճարեն ևս 24000 դրամ տուրք,
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12 եւ 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում Լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - լիցենզավորող մարմինը պարտավոր է դիմումի ներկայացման օրվանից սկսած՝ 15 օրվա ընթացքում կամ տրամադրել լիցենզիա, կամ մերժել այն՝ հիմնավորելով մերժման պատճառները:
- **Որոշման ընդունումը.**
  - լիցենզավորման կամ մերժման վերաբերյալ որոշումն ընդունվում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության համապատասխան հանձնաժողովի կողմից: Որոշման մեկ օրինակը տրվում է դիմողին:
- **Լիցենզիայի կրկնօրինակի տրամադրումը.**
  - Լիցենզիա ստացողի մոտ լիցենզիայի կրկնօրինակի կարիք առաջանելու դեպքում այդ մասին տեղյակ է պահվում ՀՀ պետական եկամուտների նախարարությանը: Վերջինս դիմումն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում տալիս է նոր լիցենզիա՝ դրա վրա կատարելով «կրկնօրինակ» նշագրումը:
- **Վերաձևակերպումը.**
  - հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման կենտրոնի գործունեությունն իրականացնելու հասցեն (հասցեները, եթե գործունեությունն իրականացվում է տարբեր վայրերում) փոփոխվելու դեպքում լիցենզիան ենթակա է վերաձեւակերպման ՀՀ օրենսդրության համաձայն:
- **Մերժումը.**
  - լիցենզիա տալը կարող է մերժվել, եթե.
    - ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ վերոհիշյալ պահանջներին,
    - ներկայացված փաստաթղթերում առկա են ոչ հավաստի տեղեկություններ,
    - լիցենզիայի մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները, իրավական հիմքերը:
  - լիցենզավորող մարմինն իրավունք չունի հայտը մերժել աննպատակահարմարության շարժառիթով:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը

- **Լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝**
  - ներկայացված փաստաթղթերից որևէ մեկում հայտնաբերվել է կեղծ տեղեկատվություն,
  - խախտվել են լիցենզիա ստացողի վերոհիշյալ պարտավորությունները,
  - լիցենզիա ստացած կենտրոնը լուծարվել է,
  - ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին առաջարկությունը ներկայացնում է լիցենզավորող հանձնաժողովը: Լիցենզիան ճանաչվում է ուժը կորցրած ՀՀ պետական եկամուտների նախարարի հրամանով, որը հրապարակվում է 2000-ից ոչ պակաս տպաքանակ ունեցող մամուլում: Հրամանի մեկ օրինակը տրամադրվում է կազմակերպությանը:**

- Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանը ստանալուց հետո կենտրոնը պարտավոր է դադարեցնել հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման եւ նորոգման գործունեությունը եւ այդ մասին տեղյակ պահել օգտագործողներին:
- Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը կարող է գանգատարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կարգավորվում է ՀՀ կառավարության 1999թ. հունվարի 14-ի թիվ 10 որոշմամբ հաստատված կանոնակարգով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 1999թ. հունվարի 21-ի թիվ 10 հրամանով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետևյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - էթիլային սպիրտի, սննդային սպիրտի, ալկոհոլային խմիչքների՝ օղու, լիկյոր-օղու արտադրանքի, կոնյակի, խաղողի և այլ գինիների, գինեմյութի, 8 տոկոսից բարձր ալկոհոլ պարունակող այլ խմիչքների՝ բացառությամբ գարեջրի, արտադրություն,
  - նշված արտադրատեսակներից յուրաքանչյուրի արտադրության կազմակերպման համար ստացված լիցենզիան բավարար է այդ ապրանքատեսակի ցանկացած տարատեսակի (նմուշի) արտադրության կազմակերպման համար:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **լիցենզիայի գործողության ժամկետը 3 տարի է, իսկ շշալցման իրավունքով ոգելից խմիչքների (բացառությամբ գինիների և գարեջրի) արտադրության լիցենզիան տրվում է անժամկետ,**
- **լիցենզիան իրավունք է տալիս ոգելից խմիչքների արտադրություն կազմակերպել միայն մեկ՝ լիցենզիայում նշված հասցեով (վայրում),**
- **մի քանի հասցեով ոգելից խմիչքների արտադրություն կազմակերպելու համար միևնույն կազմակերպիչը կարող է սույն կանոնակարգին համապատասխան դիմել և ստանալ մեկից ավելի լիցենզիա,**
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **փորձագիտական քննություն կարող է նշանակվել ըստ անհրաժեշտության,**
- **լիցենզիա ունեցող անձիք պարբերաբար լիցենզավորող և հարկային մարմիններին հաշվետվություններ են ներկայացնում և ենթակա են մշտական վերահսկողության լիցենզավորող մարմնի կողմից:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Նալբանդյան- 48,
    - Հեռախոս՝ 52 46 41:
- **Նախարարությունը լիցենզիա ստացողին ծանոթացնում է ոգելից խմիչքների արտադրության իրականացման բնագավառում վերջինիս իրավունքների և պարտականությունների հետ, ապահովում համապատասխան օրենսդրական ակտերի, տեղեկատուների, անհրաժեշտ այլ փաստաթղթերի տրամադրումն ու համապատասխան խորհրդատվությունը, ոգելից խմիչքների արտադրության վերաբերյալ առևտրական գաղտնիքի պահպանումը:**

Լիցենզիա ստացողը

- **Հայաստանի Հանրապետությունում ոգելից խմիչքների արտադրություն կազմակերպելու լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետության այն առևտրային կազմակերպությունները և օտարերկրյա առևտրային կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաճյուղերը, որոնք.**
  - չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ,
  - ունեն առնվազն 20 մլն դրամի (խաղողի և այլ գինիների, գինեմյութի դեպքում՝ 4 մլն դրամի) չափով համալրված կանոնադրական հիմնադրամ:
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է ապահովել.**
  - ոգելից խմիչքների արտադրության համար նախատեսված տարածքի պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգերով պաշտպանվածությունը,
  - ոգելից խմիչքների արտադրության համար բավարար շենքային, տեխնոլոգիական և նյութատեխնիկական պայմանները,
  - ոգելից խմիչքների արտադրության համար նախատեսված տարածքում բացառապես ոգելից խմիչքների արտադրության կազմակերպումը,

- Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության կողմից՝ ոգելից խմիչքների արտադրության ծավալների վերաբերյալ սահմանված կարգով և հարկային մարմնի կողմից գրանցված ու կնքված սարքերի միջոցով հաշվառման վարումը և պետական մարմիններին տվյալների տրամադրումը, իսկ ոգելից խմիչքների շշալցման իրականացման դեպքում՝ նաև շշերի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության հետ համաձայնեցված քանակներով շշալցվող ոչ ստանդարտ և ոչ զանգվածային արտադրության համար նախատեսված շշերի) մեքենայացված դրոշմավորումը,
- ոգելից խմիչքների արտադրության և իրացման հետ կապված ընթացիկ հարկային պարտավորությունների անվերապահ կատարումն ու հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով հարկային ապառքներ չկուտակելը,
- յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով իր բանկային հաշիվներում միջին օրական 6 մլն դրամ (խաղողի և այլ գինիների, գինենյութի արտադրության կազմակերպման դեպքում՝ 1 մլն դրամ) գումարի առկայությունը,
- ոգելից խմիչքների արտադրության համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանները,
- արտադրվող ոգելից խմիչքների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր սերտիֆիկացումը,
- շշալցման իրավունքով ոգելից խմիչքների (բացառությամբ գինիների և գարեջրի) արտադրության լիցենզիա ստանալուց հետո յուրաքանչյուր հաջորդ մեկ տարվա համար "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան տուրքի գումարի վճարումը՝ նախքան այդ ժամկետի սկիզբը.
  - շշալցման իրավունքով ոգելից խմիչքների (բացառությամբ գինիների և գարեջրի) արտադրության տարեկան տուրքը կազմում է 5 մլն դրամ:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել դիմում երկու օրինակից՝ նշելով.**
  - դիմողի անվանումը,
  - կազմակերպական-իրավական ձևը և գտնվելու վայրը,
  - պետական գրանցման վկայականի պատճենը,
  - ոգելից խմիչքների արտադրության համար նախատեսված տարածքի գտնվելու վայրը (փոստային հասցեն),
  - ոգելից խմիչքների արտադրության համար նախատեսված տարածքի մակերեսը (քառակուսի մետրերով),
  - դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,
- **դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը.**
  - դիմողի՝ լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման հնարավորություն նախատեսող հիմնադիր փաստաթղթի պատճենը,
  - ոգելից խմիչքների արտադրության համար նախատեսված տարածքի սեփականության կամ վարձակալության (օգտագործման) իրավունքի վկայականի պատճենը,
  - պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգի տեխնիկական անձնագիրը և այդ համակարգը տեղադրելու համար պատասխանատու անձի տեղեկանքը ոգելից խմիչքների արտադրության համար նախատեսված տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,
  - հայտատուի կողմից տրված տեղեկանքը հայտատուի կանոնադրական հիմնադրամի փաստացի համալրված մեծության մասին,
  - տեղեկանք տարածքային սանէպիդ (ՀՀՀ) կենտրոնից հայտում նշված արտադրամասի համար սանիտարահիգիենիկ պայմանների մասին,
  - տեղեկանք ՀՀ արտոնագրային վարչությունից ապրանքային նշանի արտոնագրման մասին,
  - Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչության կողմից տրված հայտատուի նորմատիվ փաստաթղթի (արտադրանքի տեխնիկական պայմանների և ստանդարտների) գրանցման մասին տեղեկանքը,
  - տվյալ գործունեությամբ զբաղվող մասնագետի համապատասխան որակավորումը վկայող փաստաթուղթ (դիպլոմի պատճենը կամ քաղվածք աշխատանքային գրքույկից):
- **պետական տուրքը.**
  - "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան տուրքի գումարը շշալցման իրավունքով ոգելից խմիչքների (բացառությամբ գինիների և գարեջրի) արտադրության համար կազմում է 5 մլն դրամ:
- **երկրորդ անգամ դիմելը.**
  - Եթե հայտատուի կողմից նախկինում կազմակերպված ոգելից խմիչքների արտադրության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել, ապա դիմումում նշվում է նաև այդ արտադրության կազմակերպման ժամկետը և լիցենզիան ուժը

կորցրած ճանաչվելու պատճառները: Հայտատուն դիմումում տեղեկություններ է հաղորդում նաև այն դեպքերի մասին, երբ՝

- հայտատուն, որի լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել, լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պահին տիրապետում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսին,
- հայտատու ընկերության խորհրդի անդամը կամ ընկերության կառավարման մարմիններում այլ պաշտոն զբաղեցնող անձը կամ բաժնետերը (բաժնետերերը), որն իր հետ համագործակցող անձանց հետ միասին տիրապետում է ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին, կամ այդ անձանց ամուսինները, ծնողները, երեխաները, քույրերը, եղբայրներն այն կազմակերպիչ ընկերությունում, որի լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել, լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պահին զբաղեցրել են պաշտոններ:

– Եթե դիմողն արդեն իսկ լիցենզիա ստացել է և դիմում է նոր հասցեով ոգելից խմիչքների արտադրության կազմակերպման լիցենզիա ստանալու համար, ապա դիմումին կցվում են միայն այն փաստաթղթերը, որոնք բացակայել են գործող լիցենզիայի ստացման համար ներկայացված փաստաթղթերի փաթեթում: Այս դեպքում դիմողը ներկայացնում է գրավոր հայտարարություն, որ նախկինում ներկայացված փաստաթղթերում որևէ փոփոխություն չի կատարվել:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը.**
  - ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, դիմումն ու կից փաստաթղթերն առձեռն ստանալիս, դիմումը ներկայացնող անձի ներկայությամբ ստուգում է փաստաթղթերի առկայությունը (ըստ դիմումին կից ցանկի), դիմումի երկու օրինակի վրա կատարում է համապատասխան նշումներ և ընդունում այն: Ընդունված դիմումի մեկ օրինակն անմիջապես վերադարձվում է դիմումը ներկայացնող անձին կամ փոստով առաքվում դիմողին:
- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - նախարարությունը լիցենզիա ստանալու մասին դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում դիմում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն՝ դիմողի հարկային պարտավորությունների մասին տեղեկանք ստանալու համար, որը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության կողմից տրամադրվում է 5-օրյա ժամկետում,
  - նախարարությունը լիցենզիա ստանալու մասին դիմումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում կազմակերպում է քննարկում՝ առնվազն 5 օր առաջ դիմողին գրավոր տեղեկացնելով քննարկման վայրի (հասցեի), ամսաթվի ու ժամի մասին և հնարավորություն է ընձեռում վերջինիս մասնակցել քննարկմանը:
- **Որոշման ընդունումը.**
  - նախարարությունը դիմումը քննարկում է դիմողին տեղեկացված օրն ու ժամին՝ անկախ դիմողի ներկայացուցչի ներկայությունից:
- **Հայտի բավարարումը.**
  - բավարարվում են լիարժեք ձևակերպված հայտերը՝ դրա մասին, որպես քննարկման արդյունք, եռօրյա ժամկետում կայացնելով համապատասխան որոշում,
  - դիմումում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (սխալներ, վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ և նման այլ բացթողումներ) առկայության դեպքում լիցենզիա ստանալու մասին դիմումը կարող է բավարարվել նշված թերությունների վերացման դեպքում, որի մասին նախարարությունը եռօրյա ժամկետում տեղեկացնում է դիմողին,
  - նախարարության ծանուցումից հետո, 30 օրվա ընթացքում ուղղված փաստաթղթերը նախարարություն ներկայացվելու դեպքում, նախարարությունը բավարարում է լիցենզիա ստանալու մասին դիմումը՝ եռօրյա ժամկետում դրա վերաբերյալ ընդունելով համապատասխան որոշում,
  - լիցենզիա ստանալու մասին դիմումը բավարարելու դեպքում նախարարության համապատասխան որոշման պատճենը երեք օրվա ընթացքում առաքվում է դիմողին կամ առձեռն տրամադրվում վերջինիս ներկայացուցչին,
  - դիմողն ընդունված որոշման պատճենը ստանալուց հետո կարող է 30 օրվա ընթացքում նախարարություն ներկայացնել համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը, որից հետո նախարարությունը եռօրյա ժամկետում դիմողին է տրամադրում լիցենզիան:
- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - դիմումում կամ կից փաստաթղթերում արտացոլված տեղեկությունները լիարժեք չեն՝ նշելով բացակայող կամ ոչ լիարժեք տեղեկությունները,
    - դիմումին կից ներկայացված կամ հարկային մարմիններից ստացված փաստաթղթերը չեն բավարարում վերը նշված պայմաններին,
    - համապատասխան որակավորման մասնագետի բացակայության դեպքում:

– Նախարարությունը եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ձևակերպում է լիցենզիա տալու մասին դիմումի մերժումը, որի պատճենը երեք օրվա ընթացքում առաքվում է դիմողին կամ առձեռն տրամադրվում է վերջինիս ներկայացուցչին:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ ուժը կորցրած ճանաչելը

- **Կասեցումը.**
  - ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը կասեցնում է շշալցման իրավունքով ոգելից խմիչքների (բացառությամբ գինիների և գարեջրի) արտադրության լիցենզիայի գործողությունը, եթե լիցենզիա ստացած կազմակերպությունը խախտել է իր առջև դրված՝ վերը նշված պարտականությունները,
  - լիցենզիայի գործողության կասեցման նախարարության սահմանած ժամկետը չի կարող գերազանցել 45 օրը,
  - լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում կազմակերպությունը չի կարող իրականացնել շշալցման իրավունքով ոգելից խմիչքների (բացառությամբ գինիների և գարեջրի) արտադրության գործունեություն: Լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում կազմակերպության կողմից նման գործունեություն իրականացնելը դիտարկվում է որպես առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվել և առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
  - նախարարությունը լիցենզիայի գործողության կասեցմանն անդրադառնում է կասեցման համար հիմք հանդիսացած խախտումների վերացման վերաբերյալ նախարարությանը կազմակերպության կողմից տեղեկացվելուց հետո 15 օրվա ընթացքում, իսկ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում նման տեղեկություններ չներկայացվելու դեպքում՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետից հետո 15 օրվա ընթացքում,
  - եթե նախարարությունը լիցենզիայի գործողության կասեցմանն անդրադառնում է 45-օրյա կասեցման ժամանակահատվածի ավարտից հետո, ապա անկախ այդ ժամկետից, լիցենզիայի գործողությունը կասեցված է մնում մինչև նախարարության կողմից դրան անդրադառնալը, որը սակայն պետք է կատարվի 15-օրյա ժամկետից ոչ ուշ: Նշված ժամկետում լիցենզիայի գործողության կասեցմանը նախարարության չանդրադառնալու դեպքում կասեցումը համարվում է դադարեցված, իսկ լիցենզիայի գործողությունը՝ վերականգնված:
- **Ուժը կորցրած ճանաչելը.**
  - լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե՝
    - լիցենզավորված կազմակերպությունը գործել է վերոհիշյալ պահանջների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտմամբ,
    - կազմակերպությունը լիցենզիա ստանալու մասին դիմումը ներկայացնելիս կամ դրանից հետո մինչև լիցենզիան ստանալու պահը ներկայացրել է կեղծ կամ ոչ լիարժեք տեղեկություններ, եթե դրանց ճիշտ կամ լիարժեք ներկայացնելը կարող էր հանգեցնել լիցենզիա ստանալու դիմումի մերժմանը,
    - կազմակերպությունը դիմել է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջնորդությամբ,
    - կազմակերպությունը լուծարվել է,
    - կազմակերպությունը լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում չի վերացրել կասեցման համար հիմք հանդիսացող խախտումը կամ կասեցման համար հիմք հանդիսացող խախտում թույլ տալուց հետո 2 տարվա ընթացքում թույլ է տվել լիցենզիայի գործողությունը կասեցնելու համար հիմք հանդիսացող խախտում,
  - նախարարությունը լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու իր մտադրության մասին գրավոր տեղեկացնում է կազմակերպությանը քննարկումից առնվազն քսան օր առաջ, գրության մեջ նշելով՝
    - լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու իրավական հիմքերը,
    - քննարկման վայրը (հասցեն), ամսաթիվը և ժամը,
  - նախարարությունը գրության մեջ նշված օրը, ժամին և վայրում քննարկում է հարցը՝ անկախ տվյալ կազմակերպության ներկայացուցչի ներկայությունից,
  - մասնակցող անձը քննարկման ընթացքում իրավունք ունի ներկայացնել առարկություններ և ապացույցներ, տալ իրեն հետաքրքրող հարցեր,
  - նախարարությունը, անհրաժեշտության դեպքում, իր կամ քննարկմանը մասնակցող անձի միջնորդությամբ, կարող է մինչև մեկ ամիս ժամկետով հետաձգել կամ ընդհատել հարցի քննարկումը՝ դրա մասին տեղեկացնելով քննարկմանը մասնակցող անձին,
  - նախարարությունը, քննարկմանը մասնակցող անձի փաստարկները լսելուց և ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո, հաստատված փաստերի հիման վրա ընդունում է համապատասխան որոշում, որը կենսագործվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով,
  - նախարարությունը քննարկման արդյունքում կազմակերպչի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում նշված որոշումն անմիջապես ուղարկում է տվյալ կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն, Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրը վարող մարմին և հրապարակում հեռուստատեսությամբ կամ առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլում,

– կազմակերպությունը լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշման պատճենը ստանալուց հետո անմիջապես՝
  - դադարեցնում է լիցենզավորված գործունեությունը,
  - նախարարության հետ համաձայնեցված ժամկետներում ապահովում է արտադրված ոգելից խմիչքների օտարումը,
  - 5-օրյա ժամկետում նախարարություն է վերադարձնում իր լիցենզիայի բնօրինակը,
– այն կազմակերպությունը, որի լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել, ինչպես նաև տվյալ կազմակերպության կանոնադրական հիմնադրամի 1/3-ից ավելին ունեցող անձը կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելուց հետո մեկ տարվա ընթացքում իրավունք չունեն դիմելու այսօրինակ լիցենզիա ստանալու համար: Նշված սահմանափակումը չի տարածվում այն դեպքի վրա, երբ լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել կազմակերպության միջնորդագրի հիման վրա:

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարի 1997թ. սեպտեմբերի 8-ի թիվ 128 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետեւյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - Հայաստանի Հանրապետությունում ալկոհոլային խմիչքների մանրածախ վաճառքի կազմակերպում:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է միայն տվյալ մարզի համար,**
- **լիցենզիայի գործողության ժամկետը 2 տարի է,**
- **լիցենզիան իրավունք է տալիս ալկոհոլային խմիչքների մանրածախ վաճառք կազմակերպել միայն մեկ՝ լիցենզիայում նշված հասցեով (վայրում),**
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **լիցենզիան անվանական փաստաթուղթ է, այն չի կարող փոխանցվել, տրամադրվել կամ վաճառվել այլ տնտեսավարող սուբյեկտներին:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարածքային մարմիններ՝ ՀՀ մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան,**

Լիցենզիա ստացողը

- **Ալկոհոլային խմիչքների մանրածախ վաճառքի կազմակերպման լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կազմակերպական-իրավական բոլոր տեսակի ձեռնարկությունները և անհատ ձեռներեցները անկախ սեփականության ձևից:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Տնտեսավարման վայրի տարածքային կառավարման մարմին՝ մարզպետարան (Երևանի քաղաքապետարան) ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.**
  - գործունեության իրականացման հայտ,
  - հիմնադիր փաստաթղթերի պատճենները (եթե տնտեսավարող սուբյեկտը չունի պետական գրանցում, ապա այդ մասին համապատասխան գրառում է կատարվում "հատուկ պահանջներ" մասում),
  - լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիր,
  - ոչ պրոֆիլային գործունեությամբ զբաղվող պետական ձեռնարկությունների համար վերադաս պետական կառավարման լիազոր մարմնի միջնորդագիրը համապատասխան գործունեություն իրականացնելու համաձայնության մասին,
  - տեղեկանք սանիտարա-հիգիենիկ նորմաներն ապահովելու մասին,
  - տեղեկանք հակահրդեհային անվտանգության միջոցառումներն ապահովելու մասին:
- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12 եւ 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում Լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը՝**

- փաստաթղթերի ընդունումը կատարվում է լիցենզավորող մարմնի գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու միջոցով:

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները և որոշման ընդունումը.**
  - տնտեսավարող սուբյեկտի կողմից հայտի ներկայացման օրվանից ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է ընդունված փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրություն և դրական եզրակացության դեպքում մարզպետի կամ Երևանի քաղաքապետի հաստատմանն է ներկայացվում լիցենզիա տրամադրելու վերաբերյալ որոշման կամ կարգադրության նախագիծ,
  - կարգադրության ստորագրման օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում լրացվում է համապատասխան լիցենզիան և տրվում տնտեսավարող սուբյեկտին:

- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել՝
    - լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հայտնաբերման դեպքում,
    - եթե հայտատուի ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությանը վերը նշված պահանջներին,
  - աննպատակահարմարության շարժառիթներով լիցենզիայի տրամադրման մերժումն արգելվում է:

- **Վերաձևակերպումը.**
  - տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեությունն իրականացնելու հասցեն (հասցեները, եթե գործունեությունն իրականացվելու է տարբեր վայրերում) փոփոխվելու դեպքում լիցենզիան ենթակա է վերաձևակերպման,
  - ձեռնարկության իրավական-կազմակերպական տեսակի փոփոխման, ինչպես նաև հիմնադիր փաստաթղթերում փոփոխումներ կատարվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը դիմում է տարածքային կառավարման մարմնին և ստանում է լիցենզիայի վերաձևակերպված տարբերակը:

- **Ժամկետի երկարաձգումը.**
  - Լիցենզիայի գործունեության ժամկետի երկարացումը իրականացվում է լիցենզիա ստանալու համար սահմանված կարգին համապատասխան:

Լիցենզիայի գործողության իրավունքի դադարեցումը

- **Ժամանակավոր դադարեցումը և չեղյալ համարումը.**
  - տարածքային կառավարման մարմնի որոշմամբ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել կամ ժամանակավորապես դադարեցվել,
  - լիցենզիայի գործողության դադարեցման կամ ժամանակավոր դադարեցման հիմք կարող են հանդիսանալ ՀՀ օրենսդրությամբ վերահսկողություն իրականացնող գործադիր մարմինների կողմից տարածքային կառավարման մարմիններին ներկայացված հայտերը,
  - արգելվում է լիցենզիայով նախատեսված գործունեության կասեցումը մինչև դադարեցման կամ ժամանակավոր դադարեցման մասին որոշման ընդունումը,
  - լիցենզիայի դադարեցման մասին որոշման ընդունումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտը գրավոր իրազեկվում է որոշման մասին, որին կցվում է քաղվածք որոշումից, իսկ ժամանակավորապես դադարեցման դեպքում՝ նաև թերությունների վերացման միջոցառումների ցանկը,
  - լիցենզիան չեղյալ համարելու համար հիմքերի ի հայտ գալու դեպքում թույլտվություն տված համապատասխան մարմինը սահմանում է ժամկետ՝ ձեռնարկության կողմից թույլ տրված խախտումները վերացնելու համար,
  - սահմանված ժամկետում թույլ տրված խախտումները չվերացնելու դեպքում գործունեության թույլտվությունը կարող է չեղյալ համարվել այն տրամադրած մարմնի կամ ՀՀ կառավարության կողմից հետևյալ հիմքերով՝
    - եթե թույլտվություն ստանալու համար ներկայացված հայտի և հիմնավորումների մեջ տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
    - եթե ձեռնարկության գործունեությունը վնաս է հասցնում շրջակա միջավայրի կամ մարդկանց առողջությանը.
    - եթե ձեռնարկությունը չի կատարում թույլտվության մեջ նշված հատուկ պահանջները,
  - լիցենզիայի գործողության դադարեցման որոշման մասին եռօրյա ժամկետում ծանուցագիր է ուղարկվում համապատասխան տարածքային հարկային մարմնին, պետական ռեգիստրի բաժանմունքին և սպասարկող բանկին,
  - լիցենզիայի գործողության դադարեցման մասին որոշումը տնտեսավարող սուբյեկտը կարող է գանգատարկել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
  - տնտեսավարող սուբյեկտի գործունեության դադարեցման դեպքում լիցենզիան համարվում է ուժը կորցրած,

- լիցենզիան չեղյալ համարելու մասին որոշման պատճեն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտն իրավունք ունի այն գանգատարկել դատարանում:

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարի 1997թ. սեպտեմբերի 8-ի թիվ 128 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետեւյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - Հայաստանի Հանրապետությունում հանրային սննդի գործունեության կազմակերպում:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է միայն տվյալ մարզի համար,**
- **լիցենզիայի գործողության ժամկետը 2 տարի է,**
- **լիցենզիան իրավունք է տալիս հանրային սննդի գործունեություն կազմակերպել միայն մեկ՝ լիցենզիայում նշված հասցեով (վայրում),**
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **լիցենզիան անվանական փաստաթուղթ է, այն չի կարող փոխանցվել, տրամադրվել կամ վաճառվել այլ տնտեսավարող սուբյեկտներին:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարածքային մարմիններ՝ ՀՀ մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան,**

Լիցենզիա ստացողը

- **Հանրային սննդի գործունեության կազմակերպման լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կազմակերպական-իրավական բոլոր տեսակի ձեռնարկությունները և անհատ ձեռներեցները անկախ սեփականության ձևից:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Տնտեսավարման վայրի տարածքային կառավարման մարմին՝ մարզպետարան (Երևանի քաղաքապետարան) ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.**
  - գործունեության իրականացման հայտ,
  - հիմնադիր փաստաթղթերի պատճենները (եթե տնտեսավարող սուբյեկտը չունի պետական գրանցում, ապա այդ մասին համապատասխան գրառում է կատարվում "հատուկ պահանջներ" մասում),
  - լիցենզիայի ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիր,
  - ոչ պրոֆիլային գործունեությամբ զբաղվող պետական ձեռնարկությունների համար վերադաս պետական կառավարման լիազոր մարմնի միջնորդագիրը համապատասխան գործունեություն իրականացնելու համաձայնության մասին,
  - տեղեկանք սանիտարա-հիգիենիկ նորմաներն ապահովելու մասին,
  - տեղեկանք հակահրդեհային անվտանգության միջոցառումներն ապահովելու մասին,
  - խոհարարական արտադրանքի պատրաստման տեխնոլոգիական նկարագիրը,
  - սպասարկող անձնակազմի (խոհարար, հրուշակագործ, մատուցող) մասնագիտական կրթության, համապատասխան որակավորման մասին վկայականների պատճենները կամ քաղվածք աշխատանքային գրքույկից որակավորման համապատասխան կարգ ունենալու վերաբերյալ:
- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12 եւ 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը.**
  - փաստաթղթերի ընդունումը կատարվում է լիցենզավորող մարմնի գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու միջոցով:
- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները և որոշման ընդունումը.**
  - տնտեսավարող սուբյեկտի կողմից հայտի ներկայացման օրվանից ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է ընդունված փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրություն և դրական եզրակացության դեպքում մարզպետի կամ Երևանի քաղաքապետի հաստատմանն է ներկայացվում լիցենզիա տրամադրելու վերաբերյալ որոշման կամ կարգադրության նախագիծ,
  - կարգադրության ստորագրման օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում լրացվում է համապատասխան լիցենզիան և տրվում տնտեսավարող սուբյեկտին:
- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել `
    - լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հայտնաբերման դեպքում,
    - եթե հայտատուի ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությանը վերը նշված պահանջներին,
  - աննպատակահարմարության շարժառիթներով լիցենզիայի տրամադրման մերժումն արգելվում է:
- **Վերածնակերպումը.**
  - տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեությունն իրականացնելու հասցեն (հասցեները, եթե գործունեությունն իրականացվելու է տարբեր վայրերում) փոփոխվելու դեպքում լիցենզիան ենթակա է վերածնակերպման,
  - ձեռնարկության իրավական-կազմակերպական տեսակի փոփոխման, ինչպես նաև հիմնադիր փաստաթղթերում փոփոխումներ կատարվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը դիմում է տարածքային կառավարման մարմնին և ստանում է լիցենզիայի վերածնակերպված տարբերակը:
- **Ժամկետի երկարաձգումը.**
  - Լիցենզիայի գործունեության ժամկետի երկարացումը իրականացվում է լիցենզիա ստանալու համար սահմանված կարգին համապատասխան:

Լիցենզիայի գործողության իրավունքի դադարեցումը

- **Ժամանակավոր դադարեցումը և չեղյալ համարումը.**
  - տարածքային կառավարման մարմնի որոշմամբ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել կամ ժամանակավորապես դադարեցվել,
  - լիցենզիայի գործողության դադարեցման կամ ժամանակավոր դադարեցման հիմք կարող են հանդիսանալ ՀՀ օրենսդրությամբ վերահսկողություն իրականացնող գործադիր մարմինների կողմից տարածքային կառավարման մարմիններին ներկայացված հայտերը,
  - արգելվում է լիցենզիայով նախատեսված գործունեության կասեցումը մինչև դադարեցման կամ ժամանակավոր դադարեցման մասին որոշման ընդունումը,
  - լիցենզիայի դադարեցման մասին որոշման ընդունումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտը գրավոր իրազեկվում է որոշման մասին, որին կցվում է քաղվածք որոշումից, իսկ ժամանակավորապես դադարեցման դեպքում՝ նաև թերությունների վերացման միջոցառումների ցանկը,
  - լիցենզիան չեղյալ համարելու համար հիմքերի ի հայտ գալու դեպքում թույլտվություն տված համապատասխան մարմինը սահմանում է ժամկետ՝ ձեռնարկության կողմից թույլ տրված խախտումները վերացնելու համար,
  - սահմանված ժամկետում թույլ տրված խախտումները չվերացնելու դեպքում գործունեության թույլտվությունը կարող է չեղյալ համարվել այն տրամադրած մարմնի կամ ՀՀ կառավարության կողմից հետևյալ հիմքերով՝
    - եթե թույլտվություն ստանալու համար ներկայացված հայտի և հիմնավորումների մեջ տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
    - եթե ձեռնարկության գործունեությունը վնաս է հասցնում շրջակա միջավայրի կամ մարդկանց առողջությանը.
    - եթե ձեռնարկությունը չի կատարում թույլտվության մեջ նշված հատուկ պահանջները,
  - լիցենզիայի գործողության դադարեցման որոշման մասին եռօրյա ժամկետում ծանուցագիր է ուղարկվում համապատասխան տարածքային հարկային մարմնին, պետական ռեգիստրի բաժանմունքին և սպասարկող բանկին,

- լիցենզիայի գործողության դադարեցման մասին որոշումը տնտեսավարող սուբյեկտը կարող է գանգատարկել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- տնտեսավարող սուբյեկտի գործունեության դադարեցման դեպքում լիցենզիան համարվում է ուժը կորցրած,
- լիցենզիան չեղյալ համարելու մասին որոշման պատճեն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտն իրավունք ունի այն գանգատարկել դատարանում:

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կարգավորվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության 1999թ. հունվարի 21-ի թիվ 10 հրամանով եւ ՀՀ նախարարների խորհրդի 1991 թ. մարտի 5-ի թիվ 161 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է ՀՀ տարածքում սննդամթերքի եւ ծխախոտի արտադրության կազմակերպման համար:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **փորձագիտական քննություն կարող է նշանակվել ըստ անհրաժեշտության,**
- **լիցենզիայի օտարումը կամ փոխանցումը արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Նալբանդյան- 48,
    - Հեռախոս՝ 52 46 41:
  - Լիցենզավորման ենթակա արտադրության իրականացման բնագավառում նախարարությունը համապատասխան ծառայությունների միջոցով կազմակերպում է տնտեսվարող սուբյեկտների իրավունքների եւ պարտականությունների ծանոթացումը, օրենսդրական ակտերի, անհրաժեշտ այլ փաստաթղթերի տրամադրումն ու խորհրդատվությունը:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունները և ֆիզիկական անձինք:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել դիմում երկու օրինակից.**
- **դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը.**
  - տեղեկանք տարածքային սանէպիդ (ՀՀՀ) կենտրոնից հայտում նշված արտադրամասի համար սանիտարահիգիենիկ պայմանների մասին,
  - տեղեկանք հայտում նշված արտադրատեսակների արտադրության կազմակերպման համար նախատեսված շենքային եւ տեխնոլոգիական սարքավորվածության մասին,
  - տեղեկանք տարածքի մասին (վարձակալական պայմանագիրը, կամ սեփականության վկայականը),
  - ՀՀ ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչության կողմից հավատարմագրված համապատասխան լաբորատորիաների կողմից տրված արտադրատեսակի փորձաքննության եզրակացությունը,
  - տվյալ գործունեությամբ զբաղվող մասնագետի համապատասխան որակավորումը վկայող փաստաթուղթ (դիպլոմի պատճենը, կամ քաղվածք աշխատանքային գրքույկից):
- **վճարել պետական տուրքը,**
  - իրավաբանական անձիք՝ 24 000 դրամ,
  - ֆիզիկական անձինք՝ 12 000 դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12-ապատիկ և 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը.**

- ներկայացրած փաստաթղթերի ամբողջությունը եւ իսկությունը ստուգելուց հետո դիմումը ընդունվում եւ գրանցվում է մատյանում, որի մեկ օրինակը համապատասխան նշումով վերադարձվում է անմիջապես դիմումը ներկայացնող անձին կամ փոստով առաքվում է դիմողին,
- տնտեսվարող սուբյեկտներից, բացի չափանիշներով սահմանված փաստաթղթերից այլ փաստաթղթերի պահանջը արգելվում է: Փաստաթղթերի իսկությունը ստուգելուց հետո ընդունվում են նրանց վավերացված պատճենները:

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - հայտերը քննարկվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստերում դիմումի ներկայացումից հետո 15 օրվա ընթացքում,
  - փորձագիտական եզրակացության անհրաժեշտության դեպքում հայտը քննարկվում այդ եզրակացությունը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:
- **Որոշման ընդունումը.**
  - քննարկման վայրի, ամսաթվի ու ժամի մասին հանձնաժողովը տեղեկացնում է դիմողին քննարկումից առնվազն 5 օր առաջ եւ հնարավորություն է ընձեռում վերջինիս մասնակցել քննարկմանը: Հայտը քննարկվում է հանձնաժողովում՝ անկախ դիմողի կամ նրա ներկայացուցչի ներկայությունից:
- **Հայտի բավարարումը.**
  - ներկայացրած նյութերի քննարկման դրական արդյունքում որոշում է կայացվում լիցենզիա տրամադրելու մասին, որի պատճենը եռօրյա ժամկետում հանձնվում է դիմողին,
  - դիմումում կամ կից ներկայացվող փաստաթղթերում ոչ էական թերությունների կամ բացթողումների առկայության դեպքում, լիցենզիա ստանալու դիմումը կարող է բավարարվել տվյալ թերություններն 30 օրվա ընթացքում վերացնելու պայմանով,
  - իցենզիա տրամադրելու մասին որոշման պատճենը ստանալուց հետո դիմողը 30 օրվա ընթացքում նախարարություն է ներկայացնում պետական տուրքի վճարման անդորրագիրը, որից հետո նախարարությունը եռօրյա ժամկետում դիմողին է տրամադրում լիցենզիան,
  - հայտատուին լիցենզիա տրամադրելու մասին որշում կայացնելուց հետո լիցենզիոն հանձնաժողովը 5-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչությանը, ինչպես նաեւ պետական ռեգիստրի եւ պետական եկամուտների նախարարության համապատասխան տարածքային մարմիններին:
- **Վերածնակերպումը.**
  - տնտեսվարող սուբյեկտի իրավաբանական կամ գործունեության իրականացման հասցեի փոփոխման դեպքում լիցենզիան համապատասխան փաստաթղթերի ներկայացումից հետո վերածեւակերպվում է,
  - լիցենզիայի բնօրինակը կորցնելու դեպքում տնտեսվարող սուբյեկտը այդ մասին հայտարարություն է տալիս հանրապետական մամուլում եւ հրատարակման օրվանից մեկ ամիս անց գրավոր դիմում է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ ներկայացնելով թերթի օրինակը լիցենզիայի կրկնօրինակը (անվճար) ստանալու համար:
- **Մերժումը.**
  - Հայտը կարող է մերժվել, եթե ներկայացված հայտի և հիմնավորումների մեջ տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ կամ համապատասխան մասնագետի որակավորման անհամապատասխանության դեպքում:
  - Աննպատակահարմարության շարժառիթով հայտը չի կարող մերժվել:
  - Լիցենզիա ստանալու հայտի մերժման մասին որոշման պատճենը 3-օրյա ժամկետում ուղարկվում է տնտեսվարող սուբյեկտին:
  - Մերժման մասին որոշման պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտը իրավունք ունի այն բողոքարկել դատական կարգով:

Լիցենզիան չեղյալ համարելը

- **Լիցենզիան կարող է չեղյալ համարվել, եթե՝**
  - ներկայացված հայտի և հիմնավորումների մեջ տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
  - ձեռնարկությունը վնաս է հասցնում շրջակա միջավայրին կամ մարդկանց առողջությանը,
  - ձեռնարկությունը չի կատարում լիցենզիայում նշված հատուկ պահանջները:
- **Լիցենզիան չեղյալ համարելու մասին որոշման պատճենը 3-օրյա ժամկետում ուղարկվում է տնտեսվարող սուբյեկտին ՀՀ պետական եկամուտների նախարարության ու պետական ռեգիստրի տարածքային մարմիններին եւ այդ մասին տրվում է հայտարարություն հանրապետական մամուլում:**

- Լիցենզիան չեղյալ համարելու մասին որոշման պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտն իրավունք ունի այն բողոքարկել դատական կարգով:

19. ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Դեղերի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 1998 թ. հոկտեմբերի 7-ի թիվ 616 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետևյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - արդյունաբերական եղանակով դեղերի արտադրություն, բացառությամբ՝
    - թմրադեղերի,
    - բժշկության մեջ օգտագործվող թունավոր և ռադիոակտիվ նյութերի արտադրության:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **այլ պետություններում դեղերի արտադրությամբ զբաղվող կազմակերպություններին Հայաստանի Հանրապետությունում համանման դեղերի արտադրություն իրականացնելու դեպքում իրենց երկրում ունեցած լիցենզիայի հիման վրա տրվում է նոր լիցենզիա, առանց սահմանված լիցենզավորման ընթացակարգն անցնելու,**
- **լիցենզիան տրվում է 10 տարի ժամկետով,**
- **լիցենզիան չի կարող փոխանցվել կամ օտարվել:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երևան 375001, Թումանյան 8,
    - Հեռախոս՝ 52 04 12:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունները:**
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է՝**
  - արտադրել միայն ՀՀ-ում գրանցված դեղեր: Արգելվում են այն դեղերի արտադրությունը, որոնք չեն համապատասխանում հաստատած պահանջներին,
  - պիտակավորել արտադրվող դեղերը,
  - պահպանել պիտակավորմանը ներկայացվող պահանջները,
  - պիտակը, պիտակավորված փաթեթը, թուղթ-ներդիրը, դեղի օգտագործման հրահանգը պետք է պարունակեն տվյալներ՝
    - հաստատված պահանջներին դեղի համապատասխանության մասին,
    - նախազգուշացումներ՝ դեղաչափի գերազանցումից առաջացած վտանգի և դեղը երեխաներին անմատչելի տեղերում պահելու մասին,
  - դեղը մտցնել շրջանառության մեջ, եթե արտաքին կամ առաջնային փաթեթավորման վրա պարզ ընթերցվում է դեղի.
    - արտադրող ֆիրմայի հասցեն և անունը,
    - անվանումը,
    - պատրաստման ամսաթիվը,
    - օգտագործման ձևը,
    - յուրաքանչյուր միավորի և նրա մեջ ազդող նյութի կշիռը (ծավալը) և քանակը,
    - պիտանիության ժամկետը,
    - պահպանման պայմանները,
    - փորձնական օրինակների վրա պետք է լինի «օրինակը չի վաճառվում» նշումը,

- գենային ինժեներիայի մեթոդներով ստացված դեղերի վրա նշել դրա պատրաստման համար օգտագործված ակտիվ նյութը և ձևափոխված միկրոօրգանիզմները,
- օգտագործել ռադիոակտիվ նյութեր չպարունակող դեղաբուսական հումք: Այն պետք է պիտակավորվի «Արտադրանքը ենթարկվել է ճառագայթային ստուգման» նշումով,
- հոմեոպատիկ դեղի պիտակում արտացոլել «հոմեոպատիկ» նշումը,
- ապահովել տեղեկատվություն դեղի փաթեթի մեջ թուղթ-ներդիրի ձևով, որը պետք է պարունակի բուժվողի համար տվյալ դեղի ճիշտ օգտագործման մասին անհրաժեշտ տեղեկություններ,
- դեղերի շրջանառությամբ զբաղվող մասնագետների համար դեղերի մասին տեղեկատվությունը կարող է ներկայացվել մենագրությունների, տեղեկատուների, գիտական հոդվածների, այլ հրատարակությունների, գիտաժողովների և նման այլ միջոցառումների ժամանակ ներկայացված զեկուցումների, ինչպես նաև դեղեր դուրս գրելու իրավունք ունեցող բժիշկների համար նախատեսված հրահանգների ձևով,
- չիրականացնել դեղատոմսով բաց թողնվող դեղերի գովազդը (ռադիոյով, հեռուստատեսությամբ, թերթերով, հանդեսներով, ցուցանակներով, ազդագրերով, լուսային և գովազդային այլ ձևերով),
- չիրականացնել այնպիսի գովազդ, որի պարունակած տեղեկատվությունը սպառողին համոզում է, որ՝
  - դեղի օգտագործումը չի պահանջում բժշկի խորհրդատվություն,
  - դեղը զուրկ է կողմնակի ազդեցությունից,
  - այլ դեղերից առավել արդյունավետ է,
  - դրա օգտագործումն զգալիորեն կբարելավի առողջական վիճակը, իսկ չընդունելու դեպքում կվատացնի այն,
  - կարող է օգտագործվել սննդի մեջ և այլն,
- չիրականացնել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղերի գովազդ,
- ապահովել դեղագործարանի համապատասխանությունը շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆՈՒԿ) պահանջներին,
- ապահովել տվյալ դեղի արտադրության համար մշակված ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչության, Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության հետ համաձայնեցված տեխնիկական պայմանները, որն ընդգրկում է դեղի որակը բնորոշ անհրաժեշտ չափանիշներ, ստանդարտներ և համապատասխանում է արտադրության պատշաճ գործունեության (ՁՄՊ) պահանջներին,
- վճարել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տուրքի գումարը.
  - իրավաբանական անձանցից և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից դեղագործական գործունեություն իրականացնելու համար գանձվող տուրքը կազմում է 10000 դրամ:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել հայտ,**
- **կցել հետևյալ փաստաթղթերը.**
  - դիմողի հիմնադիր փաստաթղթերի պատճենները,
  - կառուցվող դեղագործարանի նախագիծը, որը պետք է համապատասխանի շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆՈՒԿ) պահանջներին,
  - տվյալ դեղի արտադրության համար մշակված ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչության, Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության հետ համաձայնեցված տեխնիկական պայմանները, որն ընդգրկում է դեղի որակը բնորոշ անհրաժեշտ չափանիշներ, ստանդարտներ և համապատասխանում է արտադրության պատշաճ գործունեության (ՁՄՊ) պահանջներին,
  - արտադրվող դեղի նմուշը՝ մասնագիտական փորձաքննության ենթարկելու համար:
- **վճարել պետական տուրքը,**
  - 10000 դրամ,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 10-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
- **լիցենզիայի կրկնօրինակը.**

- լիցենզիա ստացած ձեռնարկությունը լիցենզիան կորցնելու դեպքում դրա մասին գրավոր հայտնում է առողջապահության նախարարություն: Վերջինիս 15-օրյա ժամկետում տալիս է նոր լիցենզիա՝ դրա վրա կատարելով "Կրկնօրինակ" նշագրումը:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - ՀՀ առողջապահության նախարարությունը պարտավոր է արտադրվող դեղի նմուշը 2-օրյա ժամկետում ներկայացնել մասնագիտական փորձաքննության,
  - սահմանված կարգով փորձաքննության եզրակացությունն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում ընդունվում է որոշում լիցենզիա տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ:
- **Որոշման ընդունումը.**
  - լիցենզավորման հետ կապված հարցերի քննարկման ժամանակ լիցենզիա տվող հանձնաժողովի նիստում հայտատուի ներկայությունը պարտադիր է:
- **Հայտի բավարարումը.**
  - աննպատակահարմարության շարժառիթներով լիցենզիա չտալն արգելվում է,
  - որոշման պատճենը 5 աշխատանքային օրվա ընթացքում տրվում է հայտատուին:
- **Մերժումը.**
  - նախարարությունը կարող է մերժել լիցենզիա տալը, եթե՝
    - ներկայացրած փաստաթղթերում առկա են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
    - ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և լիցենզիայի տրամադրման պահանջներին,
  - լիցենզիա տալը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ ուժը կորցրած ճանաչելը

- **Լիցենզիայի գործողության կասեցումը.**
  - առողջապահության նախարարությունն իրավունք ունի կասեցնելու տրված լիցենզիայի գործողությունը՝ սահմանելով խախտումների վերացման ժամկետ.
    - լիցենզիայի տրամադրման կարգի պահանջների, տեխնոլոգիական և սանիտարական նորմերի խախտման դեպքում,
    - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների դեպքում,
  - կասեցման ժամկետը չի կարող գերազանցել 45 օրը,
  - լիցենզիայի գործողության կասեցման դեպքում նախարարությունը համապատասխան որոշմամբ տեղեկացնում է լիցենզիա ստացած ձեռնարկությանը,
  - լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի սկիզբ է համարվում լիցենզիա ստացած ձեռնարկության կողմից համապատասխան ծանուցագրի ստացման օրը,
  - լիցենզիա ստացած ձեռնարկությունը պարտավոր է սահմանված ժամկետում վերացնել խախտումները և դրա մասին տեղեկացնել նախարարությանը,
  - լիցենզիայի գործողության կասեցումը դադարեցնելու մասին որոշումը խախտումները վերացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է լիցենզիա ստացած ձեռնարկություն,
  - լիցենզիայի գործողության կասեցման մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:
- **Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը.**
  - Առողջապահության նախարարությունը լիցենզիան ուժը կորցրած է ճանաչում, եթե՝
    - լիցենզիա ստացած ձեռնարկությունը սահմանված ժամկետում չի վերացրել լիցենզիայի գործողության կասեցման հիմք հանդիսացող խախտումները,
    - լիցենզիա ստացած ձեռնարկությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարվել է,
    - լրացել է լիցենզիայի գործողության ժամկետը,
    - օրենքով սահմանված կարգով անվավեր է ճանաչվել լիցենզիա ստացած ձեռնարկության պետական գրանցումը,
    - մեկ տարվա ընթացքում կրկնակի կասեցվել է լիցենզիայի գործողությունը,

- լիցենզիա ստացած ձեռնարկությունը ներկայացնում է դիմում լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին,

– լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը 3-օրյա ժամկետում ուղարկվում է լիցենզիա ստացած ձեռնարկություն,

– լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով,

– լիցենզիան ուժը ուժը կորցրած ճանաչելու դեպքում ձեռնարկությունը կարող է սահմանված ընդհանուր հիմունքներով դիմել նոր լիցենզիա ստանալու համար:

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարության 1996 թ. հունիսի 24-ի թիվ 188 որոշմամբ հաստատված կարգով և 1998 թ. մարտի 31-ի թիվ 212 որոշմամբ

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության տարածքում բժշկական եւ դեղագործական գործունեություն իրականացնող բոլոր ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների (անկախ սեփականության ձեւից, կազմակերպական-իրավական տեսակից, գերատեսչական ենթակայությունից) եւ ֆիզիկական անձանց՝ բժիշկների, պրովիզորների, միջին բուժաշխատողների եւ դեղագործների համար:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Բժիշկները, պրովիզորները, միջին բուժաշխատողները եւ դեղագործները, ովքեր ունեն համապատասխան կրթություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության սահմանած կարգով մասնագիտական գիտելիքների եւ ունակությունների գնահատման հիման վրա ստանում են մասնագիտական գործունեության լիցենզիա՝ անկախ նրանց աշխատանքի վայրից:**
- **Լիցենզավորվող անձինք, ովքեր իրականացնում են բժշկական եւ դեղագործական գործունեություն որպես անհատ ձեռներեցներ, տվյալ մասնագիտական գործունեության համար Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության սահմանած պայմանների ապահովման դեպքում ստանում են նաեւ անհատ ձեռներեցի բժշկական կամ դեղագործական գործունեության լիցենզիա:**
- **Ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները բժշկական եւ դեղագործական մասնագիտական որոշակի գործունեության համար անհրաժեշտ սանիտարատեխնիկական պայմանների եւ սարքավորումներով ու բուժգործիքներով ապահովվածության առկայության դեպքում ստանում են լիցենզիա:**
- **Բժշկական եւ դեղագործական գործունեություն իրականացնող բժիշկներին եւ պրովիզորներին լիցենզիան տրվում է հետեւյալ ժամկետներով՝**
  - մինչեւ 5 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ ունեցող անձանց՝ 3 տարի ժամկետով,
  - 5-ից մինչեւ 10 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ ունեցող անձանց՝ 4 տարի ժամկետով,
  - 10 տարուց ավելի մասնագիտական աշխատանքի ստաժ ունեցող անձանց՝ 5 տարի ժամկետով:

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375001, Թումանյան 8,
    - Հեռախոս՝ 52 04 12:
  - Լիցենզավորվող հիմնարկների եւ անհատ ձեռներեցների պետական մասնագիտական լիցենզավորումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն իրականացնում է հետեւյալ ստորաբաժանումների միջոցով.
    - պետական լիցենզավորման կենտրոն (ՊԼԿ),
    - լիցենզավորման ճյուղային հանձնաժողովներ (ԼՃՀ),
    - լիցենզավորման կենտրոնական հանձնաժողով (ԼԿՀ):
  - Պետական լիցենզավորման կենտրոնը (ՊԼԿ) իրականացնում է լիցենզավորման աշխատանքների համակարգումը, համապատասխան փաստաթղթերի ձեւակերպումը եւ լիցենզավորվող անձանց մասնագիտական գիտելիքների ստուգումը՝ համակարգչային թեստավորման ձեւով:
  - Լիցենզավորման ճյուղային հանձնաժողովները (ԼՃՀ) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության սահմանած կարգով տալիս են մասնագիտական եզրակացություն՝ լիցենզավորվող սուբյեկտների լիցենզավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ:
  - Լիցենզավորման կենտրոնական հանձնաժողովը (ԼԿՀ) համակարգչային թեստավորման արդյունքների եւ մասնագիտական եզրակացության հիման վրա որոշում է տալ լիցենզիա կամ մերժել լիցենզիա տալը:

Լիցենզիա ստացողը

- Լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետությունում բժշկական եւ դեղագործական գործունեություն իրականացնող բոլոր ձեռնարկությունները, հիմնարկներն եւ կազմակերպությունները (անկախ սեփականության ձեւից, կազմակերպական-իրավական տեսակից, գերատեսչական ենթակայությունից) եւ ֆիզիկական անձինք՝ բժիշկները, պրովիզորները, միջին բուժաշխատողները եւ դեղագործները:
- Այլ պետություններում բժշկական կամ դեղագործական կրթություն ստացած եւ Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական գործունեություն իրականացնող անձինք ենթակա են լիցենզավորման ստորև նշված ընթացակարգի եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն:
- Միջպետական, միջկառավարական եւ միջգերատեսչական պայմանագրերով իրականացվող մասնագիտական ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն հրավիրված օտարերկրյա մասնագետները նշված ծրագրերով բժշկական եւ դեղագործական գործունեություն իրականացնելու համար ենթակա չեն լիցենզավորման:
- Ժամկետային զինվորական ծառայության զորակոչված բժշկական եւ դեղագործական աշխատողները ծառայությունն անցկացնելու ժամկետում համարվում են լիցենզավորված ըստ իրենց բժշկական եւ դեղագործական մասնագիտության՝ որպես զինծառայող մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար:

- **Լիցենզավորվող սուբյեկտն իրավունք ունի.**
  - ստանալ անհրաժեշտ տեղեկություններ եւ փաստաթղթեր լիցենզավորման կարգի եւ ժամկետների մասին,
  - անցնել մասնագիտական գիտելիքների կրկնակի ստուգում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության սահմանած կարգով եւ ժամկետներում,
  - մինչեւ գործող լիցենզիայի ժամկետի լրանալը դիմել լիցենզավորման՝ թույլատրված գործունեության տեսակների եւ ծավալների ընդլայնման նպատակով:
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է.**
  - ներկայացնել լիցենզավորման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը,
  - հնարավորություն ընձեռնել տեղում մասնագիտական ուսումնասիրություն անցկացնելու համար,
  - լիցենզիա ստանալու համար մուծել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարը:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **պետական լիցենզավորման կենտրոն ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.**
  - մասնագիտական գործունեության լիցենզավորման համար լիցենզավորվող անձի կողմից.
    - առաջին անգամ լիցենզավորվող անձը ներկայացնում է.
      - դիմում,
      - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված ձեւի հաշվառման թերթիկը՝ մեկ լուսանկարով,
      - սահմանված կարգով բժշկական կրթություն իրականացնելու իրավունք ունեցող ուսումնական հաստատության կողմից տրված ավարտական վկայականի (դիպլոմի) պատճենը,
      - սահմանված կարգով հետդիպլոմային մասնագիտացում իրականացնելու իրավունք ունեցող հաստատության կողմից տրված մասնագիտացման վկայականի պատճենը,
      - հետդիպլոմային կրթության այլ ձեւերի վկայականների պատճենները,
      - մասնագիտական գործունեության այլ լիցենզիաների պատճենները,
      - աշխատանքային գրքույկի պատճենը:
    - Երկրորդ եւ ավելի անգամ լիցենզավորվող անձը, ի լրումն վերը նշված փաստաթղթերի (բացառությամբ հետդիպլոմային կրթության այլ ձեւերի վկայականների պատճենների), ներկայացնում է նաեւ՝
      - նախորդ լիցենզիայի պատճենը (բնօրինակը ներկայացվում է հանձնաժողովի նիստին՝ անձամբ) ,
      - նախորդ լիցենզիայի գործողության ժամանակահատվածում հետդիպլոմային կրթության (վերապատրաստման եւ կատարելագործման դասընթացներ, դասախոսություններ, սեմինարներ) մասին վկայականների եւ տեղեկանքների պատճենները,
      - հաշվետվություն նախորդ լիցենզիայի գործողության ժամանակահատվածում մասնագիտական գործողության մասին՝ հաստատված հիմնարկի ղեկավարի կողմից,
      - հիմնարկի ղեկավարի կողմից տրված բնութագիրը,
      - գիտական աստիճանի վկայականի պատճենը:
  - լիցենզավորման համար լիցենզավորվող հիմնարկի կողմից.
    - առաջին անգամ լիցենզավորվող հիմնարկի ղեկավարը ներկայացնում է՝
      - դիմում,
      - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված ձեւի հաշվառման թերթիկը,
      - հիմնարկի իրավական-կազմակերպական կարգավիճակի մասին փաստաթղթերի (հրաման, որոշում, պետական ռեգիստրի գրանցման վկայական, կանոնադրություն, պայմանագիր վարձակալության մասին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հիմնադիր փաստաթղթեր) պատճենները,
      - հիմնարկի տարածքի հաստատված հատակագիծը,
      - տեղեկանք բժշկական սարքավորումներով եւ բուժգործիքներով հիմնարկի ապահովվածության մասին,
      - տեղեկանք հիմնարկի կառուցվածքի, գործառնական ստորաբաժանումների եւ հզորությունների մասին ,

    - տեղեկանք պետական հիգիենիկ - հակահամաճարակային ծառայության կողմից,
    - տեղեկանք հիմնարկում իրականացվող մասնագիտական գործունեության տեսակների մասին,
    - հիմնարկի ունեցած մասնագիտական գործունեության այլ լիցենզիաների պատճենները:

  - Երկրորդ եւ ավելի անգամ լիցենզավորվող հիմնարկի ղեկավարը, ի լրումն վերը նշված փաստաթղթերի, ներկայացնում է նաեւ՝
    - նախորդ լիցենզիայի պատճենը /բնօրինակը ներկայացնում է հանձնաժողովի նիստին/,
    - հաշվետվություն նախորդ լիցենզիայի գործողության ժամանակահատվածում հիմնարկի մասնագիտական գործունեության մասին:

- անհատ ձեռներեցի լիցենզավորման համար.
  - Առաջին անգամ լիցենզավորվող անհատ ձեռներեցը ներկայացնում է՝
    - դիմում,
    - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված ձեւի հաշվառման թերթիկը,
    - պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճենը,
    - մասնագիտական գործունեության լիցենզիայի (լիցենզիաների) պատճենը,
    - անհատ ձեռներեցի գործունեության տարածքի հաստատված հատակագիծը,
    - տեղեկանք անհատ ձեռներեցի մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բժշկական սարքավորումներով եւ բուժգործիքներով ապահովվածության մասին,
    - տեղեկանք պետական հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության կողմից:
  - Երկրորդ եւ ավելի անգամ լիցենզավորվող անհատ ձեռներեցը, ի լրումն վերը նշված փաստաթղթերի, ներկայացնում է նաեւ՝
    - անհատ ձեռներեցի նախորդ լիցենզիայի պատճենը /բնօրինակը ներկայացվում է հանձնաժողովի նիստին/,
    - հաշվետվություն նախորդ լիցենզիայի գործողության ժամանակահատվածում անհատ ձեռներեցի մասնագիտական գործունեության մասին:

- **վճարել պետական տուրքը,**
  - միջին բուժաշխատողները և դեղագործները 1000 դրամ, բժիշկներն ու դեղագետները 3000 դրամ, իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները 10 000 դրամ:
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես համապատասխանաբար բազիսային գումարի չափ, դրա 3-ապատիկ և 10-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Որոշման կայացումը.**
  - լիցենզավորման գործընթացն սկսվում է լիցենզավորվող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության սահմանած լիցենզավորման համար պահանջվող փաստաթղթերի պետական լիցենզավորման կենտրոն (ՊԼԿ) ներկայացմամբ,
  - փաստաթղթերի ընդունումից հետո լիցենզավորվող անձինք անցնում են մասնագիտական գիտելիքների ստուգում՝ համակարգչային թեստավորման ձեւով,
  - լիցենզավորվող սուբյեկտների ներկայացրած փաստաթղթերը (լիցենզավորվող անձանց դեպքում՝ նաեւ համակարգչային թեստավորման արդյունքները) հանձնվում են համապատասխան լիցենզավորման ճյուղային հանձնաժողով (ԼՃՀ), որը սահմանված կարգով տալիս է մասնագիտական եզրակացություն,
  - ՊԼԿ-ի ներկայացրած թեստավորման արդյունքները եւ ԼՃՀ-ի մասնագիտական եզրակացությունը ներկայացվում է լիցենզավորման կենտրոնական հանձնաժողով (ԼԿՀ), որը որոշում է տալ լիցենզիա կամ մերժել լիցենզիա տալը,
  - ԼԿՀ-ի որոշումներն իրավաբանական ուժ են ստանում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատվելուց հետո:
- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - լիցենզավորման վերաբերյալ որոշումն ընդունվում է պետական լիցենզավորման կենտրոն համապատասխան փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում, իսկ տեղերում մասնագիտական ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում՝ մինչեւ 2-ամսյա ժամկետում,
- **Մերժումը.**
  - լիցենզիա տալը կարող է մերժվել լիցենզավորման պահանջներին եւ լիցենզավորման չափանիշներին լիցենզավորվող սուբյեկտի անհամապատասխանության դեպքում,
  - լիցենզիա տալը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ անվավեր ճանաչելը

- **Լիցենզիայի գործողության կասեցումը.**
  - լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել լիցենզավորված սուբյեկտի կողմից լիցենզիայի պահանջները խախտելու դեպքում,

- լիցենզիայի գործողության կասեցման որոշումն ընդունում է ԼԿՀ-ն՝ սահմանելով ժամկետ՝ թույլ տրված խախտումները վերացնելու համար,
- սահմանված ժամկետում խախտումները չվերացնելու դեպքում սույն կարգի համաձայն լիցենզիան ճանաչվում է անվավեր:

▪ **Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը.**

- լիցենզիան անվավեր է ճանաչվում լիցենզիայի պահանջներին եւ մասնագիտական որակավորման չափանիշներին լիցենզավորվող սուբյեկտի անհամապատասխանության դեպքում,
- լիցենզիան անվավեր ճանաչելու միջնորդությամբ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, պետական կառավարման տարածքային մարմինները, բժշկական եւ դեղագործական ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները, ինչպես նաեւ այլ մարմիններ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- լիցենզիան անվավեր ճանաչելու որոշումը սահմանված կարգով մեկամսյա ժամկետում կայացնում է ԼԿՀ-ն, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը,
- լիցենզիան անվավեր ճանաչելու որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով:

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՐՄՆԱՆՅՈՒԹԻ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կարգավորվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության 1999թ. հունվարի 21-ի թիվ 10 հրամանով եւ ՀՀ նախարարների խորհրդի 1991 թ. մարտի 5-ի թիվ 161 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է ՀՀ տարածքում սերմնանյութերի և տնկանյութերի արտադրության և իրացման աշխատանքների կազմակերպման համար:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **փորձագիտական քննություն կարող է նշանակվել ըստ անհրաժեշտության,**
- **լիցենզիայի օտարումը կամ փոխանցումը արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Նալբանդյան- 48,
    - Հեռախոս՝ 52 46 41:
- **Լիցենզավորման ենթակա արտադրության իրականացման բնագավառում նախարարությունը համապատասխան ծառայությունների միջոցով կազմակերպում է տնտեսվարող սուբյեկտների իրավունքների եւ պարտականությունների ծանոթացումը, օրենսդրական ակտերի, անհրաժեշտ այլ փաստաթղթերի տրամադրումն ու խորհրդատվությունը:**

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունները և ֆիզիկական անձինք:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել դիմում երկու օրինակից,**
- **դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը.**
  - պետական գրանցման վկայականի պատճենը,
  - հիմնադիր փաստաթղթերը,
  - ՀՀ ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչությունում պետական գրանցումն անցած տեխնիկական պայմանները, գործող ազգային (ՀԱՏ) կամ միջպետական (ԳՈՍՏ) ստանդարտները:
  - հողամասի սեփականության վկայականը կամ վարձակալական պայմանագիրը,
  - տեղեկանք տնկանյութի կամ սերմնանյութի ձեռքբերման վայրի մասին,
  - տեղեկանք արտադրվող սերմնանյութի կամ տնկանյութի իր ծագումով եւ սորտայնությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանայացված սորտերի անվանացանկին համապատասխանության մասին,
  - տեղեկանք տնկանյութի կամ սերմնանյութի (կարտոֆիլի) որակական ցուցանիշների մասին՝ տրված մարզային սերմտեսչության կողմից:
- **վճարել պետական տուրքը,**
  - իրավաբանական անձիք՝ 24 000 դրամ,
  - ֆիզիկական անձինք՝ 12 000 դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12-ապատիկ և 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը.**
  - ներկայացրած փաստաթղթերի ամբողջությունը եւ իսկությունը ստուգելուց հետո դիմումը ընդունվում եւ գրանցվում է մատյանում, որի մեկ օրինակը համապատասխան նշումով վերադարձվում է անմիջապես դիմումը ներկայացնող անձին կամ փոստով առաքվում է դիմողին:
  - տնտեսվարող սուբյեկտներից, բացի չափանիշներով սահմանված փաստաթղթերից այլ փաստաթղթերի պահանջը արգելվում է: Փաստաթղթերի իսկությունը ստուգելուց հետո ընդունվում են նրանց վավերացված պատճենները:
- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - հայտերը քննարկվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստերում դիմումի ներկայացումից հետո 15 օրվա ընթացքում,
  - փորձագիտական եզրակացության անհրաժեշտության դեպքում հայտը քննարկվում այդ եզրակացությունը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:
- **Որոշման ընդունումը.**
  - քննարկման վայրի, ամսաթվի ու ժամի մասին հանձնաժողովը տեղեկացնում է դիմողին քննարկումից առնվազն 5 օր առաջ եւ հնարավորություն է ընձեռում վերջինիս մասնակցել քննարկմանը: Հայտը քննարկվում է հանձնաժողովում, անկախ դիմողի կամ նրա ներկայացուցչի ներկայությունից:
- **Հայտի բավարարումը.**
  - ներկայացրած նյութերի քննարկման դրական արդյունքում որոշում է կայացվում լիցենզիա տրամադրելու մասին, որի պատճենը եռօրյա ժամկետում հանձնվում է դիմողին,
  - դիմումում կամ կից ներկայացվող փաստաթղթերում ոչ էական թերությունների կամ բացթողումների առկայության դեպքում, լիցենզիա ստանալու դիմումը կարող է բավարարվել տվյալ թերություններն 30 օրվա ընթացքում վերացնելու պայմանով,
  - լիցենզիա տրամադրելու մասին որոշման պատճենը ստանալուց հետո դիմողը 30 օրվա ընթացքում նախարարություն է ներկայացնում պետական տուրքի վճարման անդորրագիրը, որից հետո նախարարությունը եռօրյա ժամկետում դիմողին է տրամադրում լիցենզիան,
  - հայտատուին լիցենզիա տրամադրելու մասին լիցենզիոն հանձնաժողովը 5-օրյա ժամկետում տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչությանը, ինչպես նաեւ պետական ռեգիստրի եւ պետական եկամուտների նախարարության համապատասխան տարածքային մարմիններին:
- **Վերածևակերպումը.**
  - տնտեսվարող սուբյեկտի իրավաբանական կամ գործունեության իրականացման հասցեի փոփոխման դեպքում լիցենզիան համապատասխան փաստաթղթերի ներկայացումից հետո վերածեւակերպվում է,
  - լիցենզիայի բնօրինակը կորցնելու դեպքում տնտեսվարող սուբյեկտը այդ մասին հայտարարություն է տալիս հանրապետական մամուլում եւ հրատարակման օրվանից մեկ ամիս անց գրավոր դիմում է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ ներկայացնելով թերթի օրինակը լիցենզիայի կրկնօրինակը (անվճար) ստանալու համար:
- **Մերժումը.**
  - հայտը կարող է մերժվել, եթե ներկայացված հայտի և հիմնավորումների մեջ տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ կամ համապատասխան որակավորման բացակայության դեպքում,
  - աննպատակահարմարության շարժառիթով հայտը չի կարող մերժվել,
  - լիցենզիա ստանալու հայտի մերժման մասին որոշման պատճենը 3-օրյա ժամկետում ուղարկվում է տնտեսվարող սուբյեկտին,
  - մերժման մասին որոշման պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտը իրավունք ունի այն բողոքարկել դատական կարգով:

Լիցենզիան չեղյալ համարելը

- **Լիցենզիան կարող է չեղյալ համարվել, եթե՝**
  - ներկայացված հայտի և հիմնավորումների մեջ տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
  - ձեռնարկությունը վնաս է հասցնում շրջակա միջավայրին կամ մարդկանց առողջությանը,
  - ձեռնարկությունը չի կատարում լիցենզիայում նշված հատուկ պահանջները:

- Լիցենզիան չեղյալ համարելու մասին որոշման պատճենը 3-օրյա ժամկետում ուղարկվում է տնտեսվարող սուբյեկտին, ՀՀ պետական եկամուտների նախարարության ու պետական ռեգիստրի տարածքային մարմիններին եւ այդ մասին տրվում է հայտարարություն հանրապետական մամուլում:
- Լիցենզիան չեղյալ համարելու մասին որոշման պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտն իրավունք ունի այն բողոքարկել դատական կարգով:

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կարգավորվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության 1999թ. հունվարի 21-ի թիվ 10 հրամանով եւ ՀՀ նախարարների խորհրդի 1991 թ. մարտի 5-ի թիվ 161 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է ՀՀ տարածքում ջրամբարների կառուցման եւ շահագործման աշխատանքների կազմակերպման համար:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,
- փորձագիտական քննություն կարող է նշանակվել ըստ անհրաժեշտության,
- լիցենզիայի օտարումը կամ փոխանցումը արգելվում է:

Լիցենզավորող մարմինը

- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն.
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Նալբանդյան- 48,
    - Հեռախոս՝ 52 46 41:
- Լիցենզավորման ենթակա արտադրության իրականացման բնագավառում նախարարությունը համապատասխան ծառայությունների միջոցով կազմակերպում է տնտեսվարող սուբյեկտների իրավունքների եւ պարտականությունների ծանոթացումը, օրենսդրական ակտերի, անհրաժեշտ այլ փաստաթղթերի տրամադրումն ու խորհրդատվությունը:

Լիցենզիա ստացողը

- Լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունները:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել դիմում երկու օրինակից.
- դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը.
  - ջրամբարների կառուցման բնագավառում՝
    - պետական գրանցման վկայականի պատճենը,
    - հիմնադիր փաստաթղթերը,
    - ՀՀ ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչությունում պետական գրանցումն անցած տեխնիկական պայմանները, գործող ազգային (ՀԱՏ) կամ միջպետական (ԳՈՍՏ) ստանդարտները:
    - տեղեկանք կազմակերպության արտադրական կարողությունների մասին կամ շինարարությունն իրականացնող ձեռնարկությունների հետ կնքված պայմանագրեր,
    - տեղեկանք կազմակերպության ղեկավար եւ ինժեներատեխնիկական անձնակազմի մասնագիտական որակավորման վերաբերյալ,
    - տեղեկանք վերջին հինգ տարում ջրամբարաշինարարությամբ զբաղվելու մասին:
  - ջրամբարների շահագործման բնագավառում՝
    - պետական գրանցման վկայականի պատճենը,
    - հիմնադիր փաստաթղթերը,
    - ՀՀ ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչությունում պետական գրանցումն անցած տեխնիկական պայմանները, գործող ազգային (ՀԱՏ) կամ միջպետական (ԳՈՍՏ) ստանդարտները:
    - տեղեկանք ղեկավար եւ ինժեներատեխնիկական անձնակազմի մասնագիտական որակավորման վերաբերյալ,
    - տեղեկանք շահագործման համար անհրաժեշտ սարքավորումների առկայության վերաբերյալ,
    - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված ջրամբարի վարձակալության պայմանագիր:

- **վճարել պետական տուրքը,**
  - իրավաբանական անձինք՝ 24 000 դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը.**
  - ներկայացրած փաստաթղթերի ամբողջությունը եւ իսկությունը ստուգելուց հետո դիմումը ընդունվում եւ գրանցվում է մատյանում, որի մեկ օրինակը համապատասխան նշումով վերադարձվում է անմիջապես դիմումը ներկայացնող անձին կամ փոստով առաքվում է դիմողին,
  - տնտեսվարող սուբյեկտներից, բացի չափանիշներով սահմանված փաստաթղթերից այլ փաստաթղթերի պահանջը արգելվում է: Փաստաթղթերի իսկությունը ստուգելուց հետո վերջիններս ընդունվում են նրանց վավերացված պատճենները:
- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - հայտերը քննարկվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստերում դիմումի ներկայացումից հետո 15 օրվա ընթացքում,
  - փորձագիտական եզրակացության անհրաժեշտության դեպքում հայտը քննարկվում է այդ եզրակացությունը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:
- **Որոշման ընդունումը.**
  - քննարկման վայրի, ամսաթվի ու ժամի մասին հանձնաժողովը տեղեկացնում է դիմողին քննարկումից առնվազն 5 օր առաջ եւ հնարավորություն է ընձեռում վերջինիս մասնակցելու քննարկմանը: Հայտը քննարկվում է հանձնաժողովում, անկախ դիմողի կամ նրա ներկայացուցչի ներկայությունից:
- **Հայտի բավարարումը.**
  - ներկայացրած նյութերի քննարկման դրական արդյունքում որոշում է կայացվում լիցենզիա տրամադրելու մասին, որի պատճենը եռօրյա ժամկետում հանձնվում է դիմողին,
  - դիմումում կամ կից ներկայացվող փաստաթղթերում ոչ էական թերությունների կամ բացթողումների առկայության դեպքում լիցենզիա ստանալու դիմումը կարող է բավարարվել տվյալ թերություններն 30 օրվա ընթացքում վերացնելու պայմանով,
  - լիցենզիա տրամադրելու մասին որոշման պատճենը ստանալուց հետո դիմողը 30 օրվա ընթացքում նախարարություն է ներկայացնում պետական տուրքի վճարման անդորրագիրը, որից հետո նախարարությունը եռօրյա ժամկետում դիմողին է տրամադրում լիցենզիան,
  - հայտատուին լիցենզիա տրամադրելու մասին լիցենզիոն հանձնաժողովը 5-օրյա ժամկետում տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչությանը, ինչպես նաեւ պետական ռեգիստրի եւ պետական եկամուտների նախարարության համապատասխան տարածքային մարմիններին:
- **Վերաձևակերպումը.**
  - տնտեսվարող սուբյեկտի իրավաբանական կամ գործունեության իրականացման հասցեի փոփոխման դեպքում լիցենզիան համապատասխան փաստաթղթերի ներկայացումից հետո վերաձեւակերպվում է:
  - լիցենզիայի բնօրինակը կորցնելու դեպքում տնտեսվարող սուբյեկտը այդ մասին հայտարարություն է տալիս հանրապետական մամուլում եւ հրատարակման օրվանից մեկ ամիս անց գրավոր դիմում է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ ներկայացնելով թերթի օրինակը լիցենզիայի կրկնօրինակը (անվճար) ստանալու համար:
- **Մերժումը.**
  - հայտը կարող է մերժվել, եթե ներկայացված հայտի և հիմնավորումների մեջ տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ կամ համապատասխան որակավորման բացակայության դեպքում,
  - աննպատակահարմարության շարժառիթով հայտը չի կարող մերժվել,
  - լիցենզիա ստանալու հայտի մերժման մասին որոշման պատճենը 3-օրյա ժամկետում ուղարկվում է տնտեսվարող սուբյեկտին:
  - մերժման մասին որոշման պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտը իրավունք ունի այն բողոքարկել դատական կարգով:

Լիցենզիան չեղյալ համարելը

- **Լիցենզիան կարող է չեղյալ համարվել, եթե՝**
  - ներկայացված հայտի և հիմնավորումների մեջ տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
  - ձեռնարկությունը վնաս է հասցնում շրջակա միջավայրին կամ մարդկանց առողջությանը,
  - ձեռնարկությունը չի կատարում լիցենզիայում նշված հատուկ պահանջները:
- **Լիցենզիան չեղյալ համարելու մասին որոշման պատճենը 3-օրյա ժամկետում ուղարկվում է տնտեսվարող սուբյեկտին ՀՀ պետական եկամուտների նախարարության ու պետական ռեգիստրի տարածքային մարմիններին եւ այդ մասին տրվում է հայտարարություն հանրապետական մամուլում:**
- **Լիցենզիան չեղյալ համարելու մասին որոշման պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտն իրավունք ունի այն բողոքարկել դատական կարգով:**

23. ՀԱՏՈՒԿ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 1999 թվականի հուլիսի 14-ի թիվ 80 հրամանով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ թույլտվությունն անհրաժեշտ է հատուկ ջրօգտագործման իրավունք ստանալու համար: Հատուկ ջրօգտագործմանը վերաբերվում են.**
  - ջրային օբյեկտների կամ դրանց բաղկացուցիչ մասի (մակերեւույթային կամ ստորերկրյա) ջրերի օգտագործումը բնակչության խմելու կամ կենցաղային նպատակներով, գյուղատնտեսության, արդյունաբերության, էներգետիկայի, ջրային տրանսպորտի եւ այլ տնտեսական պահանջները բավարարելու նպատակով, ինչպես նաեւ արդյունաբերական, կոմունալ-կենցաղային, դրենաժային եւ այլ կեղտաջրերի արտահոսքերի համար, եթե հիշյալ ջրօգտագործումները իրականացվում են հետեւյալ կառույցների կամ տեխնիկական սարքավորումների շինարարության եւ շահագործման միջոցով,
  - շարժական, ստացիոնար կամ լողացող կառույցները, որոնք նախատեսված են մակերեւութային կամ ստորգետնյա ջրերից մեխանիկական կամ ինքնահոս ջրառի համար,
  - ստորգետնյա ջրերից ջրառ կատարող պոմպային սարքավորումները,
  - ստորգետնյա ջրերի հորերի եւ կապտաժային աղբյուրների կառույցները,
  - որոնք աշխատում են առանց ջրի մակարդակի ստիպողական իջեցման,
  - ջրահեռացման շինությունները, որոնք նախատեսված են մակերեւութային ջրային օբյեկտները արդյունաբերական, կոմունալ-կենցաղային կոլեկտորային դրենաժային եւ անձրեւային կեղտաջրերի, ինչպես նաեւ հանքերից մղվող ջրերի արտահոսքի համար,
  - գյուղատնտեսային հողատարածություններին կեղտաջրեր մղող կառույցները,
  - ամբարտակները եւ այլ ջրակարգավորող կառույցները,
  - հիդրավլիկ էլեկտրակայանները /մերձպատվարային, դերիվացիոն, հիդրոակումուլիացիոն),
  - ջերմային եւ ատոմային էլեկտրակայանների ջրատնտեսական կառույցները, որոնք նախատեսված են ջրամատակարարման, ջրահեռացման եւ ջրի հովացման համար,
  - ոռոգման, ջրարփիացման եւ չորացման համակարգերը:

Թույլտվության առանձնահատկությունները

- **Ստորերկրյա ջրերի հաստատված պաշարներով հանքավայրերից ջրառ իրականացնելու հատուկ ջրօգտագործման թույլտվությունը տրվում է ընդերքօգտագործման պայմանագրի հիման վրա:**

Թույլտվություն տվող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375002, Մոսկովյան- 35,
    - Հեռախոս՝ 52 10 99:
  - Մակերեւութային ջրային օբյեկտներից ջրառի եւ կեղտաջրերի թափման մասով հատուկ ջրօգտագործման ձեւակերպումն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների պահպանման վարչությունը:
  - Ստորերկրյա ջրային օբյեկտներից ջրառի մասով հատուկ ջրօգտագործման ձեւակերպումն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարության ընդերքի պահպանության վարչությունը:

Թույլտվություն ստացողը

- **Թույլտվություն կարող են ստանալ հատուկ ջրօգտագործման տեսակների ցանկում նշված ջրօգտագործողները:**

Թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ է...

- **Նոր հատուկ ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար ներկայացնել՝**
  - հայտ՝ նախարարի տեղակալի անունով՝ նշելով ջրօգտագործման նպատակը, բնական ջրաղբյուրը եւ ջրապահանջը,

- տեղանքի հաստատված հատակագիծ (սխեմա),
- ջրօգտագործման եւ ջրահեռացման անհատական նորմաները,
- գործունեությունից առաջացած կեղտաջրերի դեպքում նաեւ վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի /ԹՍԱ/ նորմաները:

- **Հատուկ ջրօգտագործման թույլտվության գործունեության ժամկետների երկարացման համար ներկայացնել՝**
  - հայտ՝ նախարարի տեղակալի անունով՝ նշելով ջրօգտագործման նպատակը, ջրապահանջը (եթե դրանք փոփոխության են ենթարկվել),
  - ժամկետանց հատուկ ջրօգտագործման թուլտվությունը,
  - հորատանցքի անձնագիրը եւ ռեժիմային դիտարկումների նյութերը.
  - ջրօգտագործման եւ ջրահեռացման անհատական նորմաները,
  - գործունեությունից առաջացած կեղտաջրերի դեպքում նաեւ վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի նորմաները,
  - տեղեկանք բնօգտագործման եւ բնապահպանական վճարների վերաբերյալ՝ համաձայնեցված տարածքային բնապահպանական պետական տեսչության (ՏԲՊՏ) հետ:
- **Հայտը հանձնելուց երեք աշխատանքային օրվա ընթացքում հատուկ ջրօգտագործման թույլտվությունը ստանալու դեպքում անհրաժեշտ է ստանալ հետեւյալ համաձայնությունները՝**
  - պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային ծառայությունների մարմինների հետ՝ ստորերկրյա ջրօգտագործման բոլոր դեպքերում,
  - պետական անասնաբուժական ծառայության մարմինների հետ՝ անասնաբուծության, ձկնաբուծության ու կենդանական ծագում ունեցող սննդամթերք եւ հումք մթերող ու վերամշակող կազմակերպությունների կարիքների համար ջրօգտագործման դեպքերում,
  - ՀՀ առողջապահության նախարարության հետ՝ բուժիչ եւ առողջարարական նպատակներով ջրօգտագործման դեպքերում,
  - Հայլեռտեխսկողության հետ՝ լեռնաարդյունաբերական կազմակերպությունների կողմից օգտագործման դեպքերում,
  - ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ՝ բնակավայրերում ստորերկրյա ջրհաններ կառուցելու դեպքում,
  - ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ՝ ջրերը գյուղատնտեսական արտադրության ոլորտում օգտագործելու դեպքում:

Թույլտվության տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - ստանալով հայտը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կողմից պետք է լրացվեն թույլտվության ձեւերը եւ հանձնվեն հայտատուին՝ անհրաժեշտ համաձայնությունների ստացման համար:
- **Որոշման ընդունումը.**
  - Վերոհիշյալ համաձայնությունների առկայության դեպքում նախարարությունը 1 շաբաթվա ընթացքում պարտավոր է որոշում կայացնել հայտը բավարարելու կամ մերժելու մասին եւ ընդունված որոշման մասին 3 օրվա ընթացքում տեղյակ պահել հայտատուին,
  - հատուկ ջրօգտագործման թույլտվության առաջին օրինակը տրվում է ջռօգտագործողին, երկրորդ օրինակը մնում է նախաարությունում, իսկ երրորդը՝ ջրային ռեսուրսների պահպանման վարչությունում վերցվում է միասնական հաշվառման եւ արխիվի վարման համար:
- **Մերժումը.**
  - թույլտվություն ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - ներկայացված փաստաթղթերի փաթեթն ամբողջական չէ,
    - փաստաթղթերը չեն համապատասխանում ներկայացված պահանջներին:

Թույլտվության գործողության դադարեցումը

- **Ջրօգտագործման իրավունքը դադարում է, եթե՝**
  - վերացել է ջրօգտագործման անհրաժեշտությունը կամ ջրօգտագործողը հրաժարվել է դրանից,
  - լրացել է ջրօգտագործման ժամկետը,
  - լուծարվել է ջրօգտագործող ձեռնարկությունը, կազմակերպությունը, հիմնարկը,

- ջրատնտեսական կառուցվածքները հանձնվել են ուրիշ ջրօգտագործողների,
- անհրաժեշտություն է առաջացել ջրային օբյեկտները հանել անջատ օգտագործումից,
- խախտվել են ջրերի օգտագործման ու դրանց պահպանության կանոնները,
- ջրային օբյեկտը չի օգտագործվել նպատակային նշանակությամբ:

24. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 1999 թվականի հուլիսի 14-ի թիվ 80 հրամանով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ համաձայնությունն անհրաժեշտ է երկրորդային ջրօգտագործման իրավունք ստանալու համար:**

Համաձայնության առանձնահատկությունները

- **Հատուկ ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրօգտագործողներն իրավունք ունեն նաեւ երկրորդային ջրօգտագործման:**

Համաձայնություն տվող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375002, Մոսկովյան- 35,
    - Հեռախոս՝ 52 10 99:
  - Երկրորդային ջրօգտագործման ձեւակերպումն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների պահպանման վարչությունը՝ բոլոր դեպքերում, իսկ հանքային ջրերի օգտագործման դեպքում նաեւ ընդերքի պահպանման վարչությունը:

Համաձայնություն ստացողը

- **Համաձայնություն կարող են ստանալ այն ջրօգտագործողները, որոնք իրականացնում են ջրառ կամ կեղտաջրերի արտահոսք, օգտվելով կենտրոնացված կամ առաջնային ջրօգտագործողի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերից:**
- **Այն ջրօգտագործողները, որոնք ջրամատակարարման եւ ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում են բացառապես խմելու-կենցաղային կամ կոմունալ-կենցաղային կեղտաջրերի հեռացման նպատակով, համաձայնության կարիք չունեն:**

Համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - հայտ՝ նախարարի տեղակալի անունով՝ նշելով ջրօգտագործման նպատակը, սնող ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգը եւ ջրապահանջը,
  - ջրօգտագործման եւ ջրահեռացման անհատական նորմաները,
  - գործունեությունից առաջացած կեղտաջրերի դեպքում նաեւ վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները:

Համաձայնության տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները եւ որոշման ընդունումը.**
  - ստանալով հայտը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կողմից պետք է լրացվի համաձայնության ձեւը եւ ներկայացվի նախարարի տեղեկալին՝ համաձայնեցման, որը 5 օրվա ընթացքում որոշում է կայացնում հայտը մերժելու կամ ընդունելու մասին,
  - նախարարությունը պարտավոր է ընդունված որոշման մասին 3 օրվա ընթացքում տեղյակ պահել հայտատուին,
  - հատուկ ջրօգտագործման թույլտվության առաջին օրինակը տրվում է ջրօգտագործողին, երկրորդ օրինակը մնում է նախարարությունում՝ հաշվառման եւ արխիվի վարման համար:
- **Մերժումը՝**
  - թույլտվություն ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - ներկայացված փաստաթղթերի փաթեթն ամբողջական չէ,
    - փաստաթղթերը չեն համապատասխանում ներկայացված պահանջներին:

Համաձայնության գործողության դադարեցումը

- **Ջրօգտագործման իրավունքը դադարում է, եթե՝**
  - վերացել է ջրօգտագործման անհրաժեշտությունը կամ ջրօգտագործողը հրաժարվել է դրանից,
  - լրացել է ջրօգտագործման ժամկետը,
  - լուծարվել է ջրօգտագործող ձեռնարկությունը, կազմակերպությունը, հիմնարկը,
  - ջրատնտեսական կառուցվածքները հանձնվել են ուրիշ ջրօգտագործողների,
  - անհրաժեշտություն է առաջացել ջրային օբյեկտները հանել անջատ օգտագործումից,
  - խախտվել են ջրերի օգտագործման ու դրանց պահպանության կանոնները,
  - ջրային օբյեկտը չի օգտագործվել նպատակային նշանակությամբ:

25. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ (ԼԻՑԵՆԶԻԱՅԻ) ՏՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ սոցիալական ապահովության նախարարի 1998 թվականի հուլիսի 20-ի թիվ 97-Պ հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետեւյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում աշխատանքի տեղավորման ծառայությունների մատուցում:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **տրվում է 3 տարի ժամկետով,**
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **լիցենզիան ենթադրում է պարբերական հաշվետվությունների պահանջ:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375009, Տերյան- 69,
    - Հեռախոս՝ 52 68 31:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետության ոչ պետական ձեռնարկությունները:**
- **Լիցենզիա ստացած կազմակերպությունը պարտավոր է՝**
  - վճար գանձել աշխատանքի տեղավորմանը միջնորդելու ծառայության համար՝ գործատուի և քաղաքացու միջև աշխատանքային պայմանագրի կնքումից հետո,
  - ներկայացնել քաղաքացիներին հավաստի տեղեկություններ թափուր աշխատատեղերի, աշխատանքի պայմանների, աշխատանքի վարձատրության վերաբերյալ, իսկ այլ երկրներում աշխատանքի տեղավորման առաջարկության դեպքում նաև սոցիալ-աշխատանքային հարցերով կնքված միջպետական համաձայնագրերի, այդ երկրների սոցիալ-աշխատանքային հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսդրական նորմերի, տվյալ երկրի մուտքի և ելքի պայմանների մասին,
  - պահպանել քաղաքացիների և գործատուների միջև իրենց մասնակցությամբ կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները,
  - նախարարություն տեղեկություններ ներկայացնել աշխատանքի տեղավորման անձանց մասնագիտական, կրթական, սեռա-տարիքային կազմի, աշխատանքի վայրի և բնույթի, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի մասին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10 օրվա ընթացքում,
  - նախարարության կողմից ուսումնասիրությունների ընթացքում ձեռնարկությունը պարտավոր է ուսումնասիրություն իրականացնող անձանց ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև տալ համապատասխան պարզաբանումներ իր գործունեության առանձին հարցերի կապակցությամբ,
  - 5-օրյա ժամկետում գրավոր դիմել նախարարություն լիցենզիան կորցնելու, իրավաբանական հասցեի, ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերում փոփոխությունների կամ լրացումների մասին:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարություն ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.**
  - գործունեության իրականացման հայտ,
  - ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները,
  - պետական գրանցման վկայականի պատճենը,
  - հաշվի համարը, սպասարկող բանկի հասցեն և ռեկվիզիտները,

- հարկային տեսչությունում գրանցված հարկ վճարողի հաշվառման համարը հաստատող տեղեկանք,
- լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիր:

- **վճարել պետական տուրքը,**
  - 24 հազար դրամ,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
- **Լիցենզիայի կրկնօրինակը.**
  - լիցենզիան կորցնելու դեպքում այդ մասին գրավոր հայտնվում է ՀՀ սոցիալական ապահովության նախարարությանը, որի որոշմամբ էլ կորցրած լիցենզիան համարվում է անվավեր և 15-օրյա ժամկետում տրվում է լիցենզիայի կրկնօրինակը՝ դրա վրա կատարելով «Կրկնօրինակ» նշագրումը (վճարելով 24 հազար դրամ պետական տուրք):

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը.**
  - փաստաթղթերի ընդունումը կատարվում է գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու միջոցով:
- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - փաստաթղթերը ներկայացնելու պահից 15-օրյա ժամկետում նախարարությունը պարտավոր է որոշում կայացնել լիցենզիա տալու կամ մերժելու վերաբերյալ: Լիցենզիա տալու կամ մերժելու մասին որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում տրվում է հայտատուին:
- **Լիցենզիայի վերածևակերպումը.**
  - ձեռնարկության իրավաբանական հասցեի, կազմակերպական իրավական տեսակի փոփոխման, ինչպես նաև հիմնադիր փաստաթղթերում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում նախարարությունը ձեռնարկության գրավոր դիմումի հիման վրա 15-օրյա ժամկետում տալիս է լիցենզիայի վերածևակերպված տարբերակը: Նման դեպքերում, մինչև լիցենզիայի վերածևակերպումը, ձեռնարկությունն իր գործունեությունը իրագործում է նախկին լիցենզիայի հիման վրա:
- **Մերժումը.**
  - նախարարությունը կարող է մերժել լիցենզիա տալը, եթե հայտատուն ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգի պահանջներին,
  - աննպատակահարմարության շարժառիթներով թույլտվության մերժումը արգելվում է,
  - մերժման մասին որոշման պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում ձեռնարկությունը իրավունք ունի այն բողոքարկել դատարանում:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ չեղյալ համարելը

- **Կասեցումը.**
  - նախարարությունն իրավունք ունի մինչև 45 օր ժամկետով կասեցնել տրված լիցենզիայի գործողությունը, եթե.
    - լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերում ի հայտ են եկել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
    - խախտվել են վերը նշված պայմանները,
  - ձեռնարկությունը պարտավոր է լիցենզիայի գործողության կասեցված ժամկետում վերացնել խախտումները և այդ մասին գրավոր տեղեկացնել նախարարությանը, որի հիման վրա նախարարությունը կարող է վերականգնել լիցենզիայի գործողությունը,
  - լիցենզիայի գործողության կասեցման կամ նրա վերականգնման որոշման մասին ձեռնարկությանը գրավոր ծանուցվում է որոշում կայացնելուց հետո 3 օրվա ընթացքում:
- **Չեղյալ համարելը.**
  - ձեռնարկությանը տրված լիցենզիան նախարարության կողմից չեղյալ է համարվում, եթե.
    - մեկ տարվա ընթացքում կրկնակի կասեցվել է լիցենզիայի գործողությունը,
    - այդ մասին գրավոր դիմել է ձեռնարկությունը,
    - ձեռնարկությունը լուծարվել է,
  - լիցենզիան չեղյալ համարելու մասին որոշումը հրապարակվում է մամուլում,

- լիցենզիան չեղյալ համարելու մասին որոշում ընդունելու պահից ձեռնարկությունը զրկվում է աշխատանքի տեղավորման գործունեություն իրականացնելու իրավունքից:

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2000 թվականի հունիսի 7-ի թիվ 11 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման ու արտահանման գործունեության իրականացման համար:**
- **Լիցենզիան տրվում է գործունեության հետեւյալ տեսակների իրականացման համար.**
  - բնական գազի ներկրում,
  - բնական գազի արտահանում,
  - էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրում,
  - էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանում:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **ներկրման լիցենզիաները տրվում են ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից կազմակերպված հրապարակային մրցույթով, որի պայմանները սահմանում է նույն հանձնաժողովը,**
- **ներկրման լիցենզիան առանց հրապարակային մրցույթի անցկացման կարող է տրվել այն դեպքերում, երբ՝**
  - ներկրումն իրականացվում է նախկինում կնքված պայմանագրի համաձայն (պայմանագիրը կնքված է մինչ լիցենզավորման համակարգին անցնելը),
  - ներկրումն իրականացվում է կամ պետք է իրականացվի միջպետական կամ ՀՀ կառավարության, կամ նրա կողմից լիազորված անձի եւ առաքողի միջեւ կնքված պայմանագրի (համաձայնագրի) շրջանակներում,
  - բնական գազ ներկրողը եւ սպառողը նույն անձն է, պայմանով, որ ներկրված բնական գազը եւ նրանով արտադրված էլեկտրական կամ ջերմային էներգիան ենթակա չեն վաճառքի,
- **արտահանման լիցենզիաները տրվում են միայն ՀՀ ներքին շուկայի հագեցման դեպքում: Բնական գազի արտահանման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետություն բնական գազ օտարերկրյա առաքողի համաձայնությունը, եթե արտահանվող գազը արդյունահանված չէ Հայաստանի Հանրապետությունում,**
- **հանձնաժողովը սահմանում է էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման առավելագույն սակագին,**
- **վերը նշված գործողության տեսակների համար տրվող լիցենզիաների գործողության ժամկետները հետեւյալն են՝**
  - բնական գազի ներկրման դեպքում՝ համաձայն հրապարակային մրցույթի պայմանների,
  - էլեկտրական էներգիայի ներկրման դեպքում՝ համաձայն հրապարակային մրցույթի պայմանների,
  - բնական գազի արտահանման դեպքում՝ համաձայն օտարերկրյա սպառողի հետ կնքված պայմանագրի ժամկետների, բայց ոչ ավելի, քան մեկ տարի.
  - էլեկտրական էներգիայի արտահանման դեպքում՝ համաձայն օտարերկրյա սպառողի հետ կնքված պայմանագրի ժամկետների, բայց ոչ ավելի, քան մեկ տարի,
  - առանձին դեպքերում, երբ ներկրումը կամ արտահանումն իրականացվում է միջպետական կամ ՀՀ կառավարության, կամ նրա կողմից լիազորված անձի եւ օտարերկրյա առաքողի կամ սպառողի միջեւ ստորագրված համաձայնագրով, լիցենզիայի գործողության ժամկետը կարող է սահմանվել այդ համաձայնագրի ժամկետին համապատասխան: ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը, ելնելով բնական գազի եւ էլեկտրական էներգիայի շուկայական գների կանխատեսումներից, կարող է բացառության կարգով սահմանել լիցենզիայի գործողության այլ ժամկետներ,
  - առանձին դեպքերում, երբ հնարավոր չէ հստակ սահմանել էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանվող քանակությունը, արտահանման ռեժիմները եւ արտահանման ժամանակահատվածը՝ պայմանավորված գնորդի կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) սպառման անկանխատեսելի ռեժիմներով, էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիան կարող է տրվել մինչեւ մեկ տարի ժամկետով,
- **անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը դիմողից կարող է պահանջել ֆինանսական երաշխիքներ,**
- **լիցենզիայի օտարումը կամ փոխանցումն արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողով.**

- հասցե / հեռախոսներ՝
  - Երեւան 375009, Իսահակյանի 18,
  - Հեռախոս՝ 52 25 22:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ ՀՀ-ում գործող իրավաբանական անձինք:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - դիմում,
  - այլ փաստաթղթեր՝ համաձայն ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից հաստատված ցանկի,
  - ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը կարող է դիմողից պահանջել նաեւ լիցենզիա տալու կամ մերժելու վերաբերյալ որոշման ընդունման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն,
  - երբ հնարավոր չէ հստակ սահմանել էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանվող քանակությունը, արտահանման ռեժիմները եւ արտահանման ժամանակահատվածը՝ պայմանավորված գնորդի կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) սպառման անկանխատեսելի ռեժիմներով, լիցենզիան կարող է տրվել մինչեւ մեկ տարի ժամկետով՝ հետեւյալ փաստաթղթերը հանձնաժողով ներկայացնելուց հետո.
    - էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի եւ արտահանողի միջեւ ստորագրված էլեկտրական էներգիայի (հզորության) գնման մտադրությունների մասին արձանագրություն (հուշագիր), որում նշվում են արտադրողի կողմից առաքվող (վաճառվող), էլեկտրական էներգիայի (հզորության) կանխատեսվող քանակությունը եւ առաքման կանխատեսվող ժամանակահատվածը,
    - արտադրողի եւ գնորդի միջեւ ստորագրված՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման մտադրությունների մասին արձանագրություն (հուշագիր), որում նշվում են արտահանվող էլեկտրական էներգիայի (հզորության) կանխատեսվող քանակությունը եւ արտահանման կանխատեսվող ժամանակահատվածը,
  - նման դեպքերում փաստացի արտահանումն սկսելուց առնվազն 5 օր առաջ արտահանման լիցենզիա ստացած անձը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացնում՝
    - էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի հետ կնքված էլեկտրական էներգիայի գնման առեւտրային պայմանագրի պատճենը,
    - գնորդի հետ կնքված էլեկտրական էներգիայի արտահանման առեւտրային պայմանագրի պատճենը:
- **վճարել պետական տուրքը.**
  - 24 հազար դրամ,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
- **Կրկնօրինակը.**
  - լիցենզիան կորցնելու դեպքում լիցենզավորված անձն այդ մասին հայտարարություն է տալիս հանրապետական մամուլում, այնուհետեւ դիմում հանձնաժողով,
  - վճարում է 24 հազար դրամ պետական տուրք,
  - 15-օրյա ժամկետում ստանում լիցենզիայի կրկնօրինակը:
- **Պայմանագրերը.**
  - բնական գազի ներկրումը, բնական գազի արտահանումը, էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրումը, էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանումն իրականացվում են համապատասխան պայմանագրերի հիման վրա, որտեղ պարտադիր ընդգրկվում են.
- **էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման պայմանագրի դեպքում՝**
  - ներկրման ժամանակահատվածը եւ ներկրվող էլեկտրական էներգիայի քանակությունը,
  - ներկրվող հզորությունը եւ թույլատրելի շեղումները,
  - ներկրվող հզորության օրական ժամանակացույցը ներկրման ամբողջ ժամանակահատվածի համար,
  - ներկրվող հզորության առավելագույն մեծությունը եւ թույլատրելի ժամանակահատվածը,
  - համակարգի (կայանի) կայունության ցուցանիշները,

- օտարերկրյա առաքողի էլեկտրաէներգիայի համակարգի կարճ միացման հոսանքի առավելագույն եւ նվազագույն արժեքները,
- ներկրվող էլեկտրական էներգիայի (հզորության) գինը (գնի բանաձեւը),
- ներկրումն իրականացնելու համար անհրաժեշտ էլեկտրահաղորդման գծերին, կապի միջոցներին, առեւտրային հաշվառքի սարքերին, ռելեային պաշտպանությանը եւ ավտոմատիկային առաջադրվող պահանջները,
- հաճախականության շեղման թույլատրելի սահմանները,
- լարման թույլատրելի շեղումներն՝ ըստ բեռի եւ ըստ տեւողության,
- ներկրվող էլեկտրական էներգիայի (հզորության) դիմաց վճարումների կատարման կարգը,
- պայմանագրի պայմանների խախտման համար կիրառվող տույժերը եւ տուգանքները,
- վեճերի քննարկման եւ լուծման կարգը,
- պայմանագրային կողմերի հաղորդակցության լեզուն:

- **էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման պայմանագրի դեպքում՝**
  - արտահանման ժամանակահատվածը եւ արտահանվող էլեկտրական էներգիայի քանակությունը,
  - արտահանվող հզորությունը եւ թույլատրելի շեղումները,
  - արտահանվող հզորության օրական ժամանակացույցը արտահանման ամբողջ ժամանակահատվածի համար,
  - արտահանվող հզորության առավելագույն մեծությունը եւ ժամանակահատվածը,
  - արտահանողի էլեկտրաէներգետիկայի համակարգի կարճ միացման հոսանքի առավելագույն եւ նվազագույն արժեքները,
  - հաճախականության շեղման թույլատրելի սահմանները,
  - արտահանվող էլեկտրական էներգիայի (հզորության) գինը (գնի բանաձեւը),
  - արտահանումն իրականացնելու համար անհրաժեշտ հաղորդագծերին, կապի միջոցներին, առեւտրային հաշվառքի սարքերին, ռելեային պաշտպանությանը եւ ավտոմատիկային առաջադրվող պահանջները,
  - արտահանվող էլեկտրական էներգիայի (հզորության) դիմաց վճարումների կարգը,
  - պայմանագրի խախտման համար կիրառվող տույժերը եւ տուգանքները,
  - վեճերի քննարկման եւ լուծման կարգը,
  - պայմանագրային կողմերի հաղորդակցության լեզուն:

- **Բնական գազի ներկրման պայմանագրի դեպքում՝**
  - ներկրման ժամանակահատվածը, ներկրվող գազի քանակությունը, այդ թվում՝ ըստ ամիսների (եռամսյակների),
  - ներկրվող գազի միջին օրական քանակությունը, օրական առավելագույն եւ նվազագույն քանակությունները,
  - ՀՀ պետական սահմանում գազի միջին, առավելագույն եւ նվազագույն թույլատրելի ճնշումները,
  - ներկրվող գազի որակական ցուցանիշները,
    - բաղադրությունը,
    - խոնավության, ծծմբական, մեխանիկական (պինդ) նյութերի եւ թթվածնի թույլատրելի պարունակությունը գազում,
    - միջին, առավելագույն եւ նվազագույն ջերմարարությունը,
  - ներկրվող գազի գինը (գնի բանաձեւը),
  - ներկրումն իրականացնելու համար անհրաժեշտ կապի միջոցներին եւ առեւտրային հաշվառքի սարքերին առաջադրվող պահանջները,
  - գազի որակական հատկանիշների ստուգման համար կիրառվող ստանդարտները,
  - ներկրվող գազի դիմաց վճարումների կատարման կարգը,
  - պայմանագրի պայմանների խախտման համար կիրառվող տույժերը եւ տուգանքները,
  - վեճերի քննարկման եւ լուծման կարգը,
  - պայմանագրային կողմերի հաղորդակցության լեզուն:

- **Բնական գազի արտահանման պայմանագրի դեպքում՝**
  - արտահանման ժամանակահատվածը, արտահանվող գազի քանակությունը, այդ թվում՝ ըստ ամիսների (եռամսյակների),

- արտահանվող գազի միջին օրական քանակությունը, օրական առավելագույն եւ նվազագույն քանակությունները,
- ՀՀ պետական սահմանում գազի միջին, առավելագույն եւ նվազագույն թույլատրելի ճնշումները,
- արտահանվող գազի որակական ցուցանիշները,
- արտահանվող գազի գինը (գնի բանաձեւը),
- արտահանումն իրականացնելու համար անհրաժեշտ կապի միջոցներին եւ առեւտրային հաշվառքի սարքերին առաջադրվող պահանջները,
- գազի որակական հատկանիշների ստուգման համար կիրառվող ստանդարտները,
- արտահանվող գազի դիմաց վճարումների կատարման կարգը,
- պայմանագրի պայմանների խախտման համար կիրառվող տույժերը եւ տուգանքները,
- վեճերի քննարկման եւ լուծման կարգը,
- պայմանագրային կողմերի հաղորդակցության լեզուն:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը մուտքագրում է լիցենզիա ստանալու դիմումը կից փաստաթղթերով՝ ստուգելով դրանց ձեւակերպման ճշտությունն ու համապատասխանությունը պահանջվող ցանկին,
  - փաստաթղթերի ստուգման արդյունքների մասին դիմողին ծանուցագիր է ուղարկվում դիմումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում,
  - փաստաթղթերի ստուգման դրական արդյունքի դեպքում ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը սկսում է դիմումի քննարկման գործընթացը եւ համապատասխան որոշում կայացնում դիմումի գրանցումից հետո 90-օրյա ժամկետում:
- **Փորձաքննությունը.**
  - եթե դիմումի քննարկման ընթացքում հարկ է ստանալ լրացուցիչ տեղեկություններ եւ փաստաթղթեր, որոնց բացակայությունը հանձնաժողովին հնարավորություն չի տալիս որոշում ընդունել կամ անհրաժեշտություն է առաջանում կատարել լրացուցիչ փորձաքննություն, այդ թվում նաեւ անկախ փորձագետների ներգրավմամբ, ապա այդ նպատակով ծախսված ժամանակը՝ 30 օրից ոչ ավելի, չի ներառվում որոշման ընդունման համար սահմանված դիմումի քննարկման ժամկետում,
  - նշված դեպքերի մասին հանձնաժողովը գրավոր տեղեկացնում է դիմողին:
- **Որոշման ընդունումը.**
  - ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը հաշվի առնելով առեւտրային պայմանագրերում ամրագրված էլեկտրական էներգիայի (հզորության) քանակությունները եւ առաքումների ժամանակահատվածները, կայացնում է որոշում՝
    - էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության քվոտայի սահմանման մասին,
    - էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման քվոտայի սահմանման մասին,
  - լիցենզիա տալու վերաբերյալ դրական որոշում ընդունելուց հետո 10-օրյա ժամկետում դիմողի կողմից պետական տուրքի վճարման պայմանով լիցենզիան գրանցվում է ՀՀ էներգետիկայի հանձնաժողովում եւ հանձնվում դիմողին կամ նրա կողմից լիազորված անձին,
  - բացասական որոշման դեպքում՝ 10-օրյա ժամկետում դիմողին է ուղարկում մերժման վերաբերյալ հանձնաժողովի որոշման պատճենը, որում նշվում են մերժման պատճառները,
  - լիցենզիան տրվում է դիմողին կամ, լիազորագրի առկայության դեպքում՝ նրա ներկայացուցչին՝ մեկ օրինակից,
  - դիմողի կամ լիազորված անձի ստորագրությամբ լիցենզիայի ստացման կտրոնը մնում է ՀՀ էներգետիկայի հանձնաժողովում,
  - լիցենզիան ուժի մեջ է մտնում հանձնաժողովում գրանցման պահից:
- **Մերժումը՝**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - ներկայացված փաստաթղթերում բերված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը,
    - դիմողի կողմից ներկայացված հիմնադիր փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին,
    - ֆինանսական երաշխիքները (նման պահանջի դեպքում) չեն համապատասխանում հանձնաժողովի կողմից հաստատված պահանջներին,

- արտահանման կամ ներկրման լիցենզավորվող գործունեության իրականացումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել էլեկտրաէներգետիկայի համակարգի հուսալիության եւ անվտանգության խաթարմանը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության սպառողներին վաճառվող բնական գազի, էլեկտրական կամ ջերմային էներգիայի սակագների բարձրացմանը կամ վնաս հասցնել լիցենզավորված որեւէ իրավաբանական անձի,
- ներկրման լիցենզիա տալու դեպքում սահմանափակվում են ներկրման լիցենզիա ունեցող մեկ այլ իրավաբանական անձի իրավունքները,

– լիցենզավորող մարմինն իրավունք չունի հայտը մերժել աննպատակահարմարության շարժառիթով,

– լիցենզիայի հայտի մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները և իրավական հիմքերը,

– լիցենզիայի հայտի մերժման մասին որոշումը հայտատուն իրավունք ունի գանգատարկել դատական կարգով,

– լիցենզիա տալը մերժելու մասին էներգետիկ հանձնաժողովի որոշումը չի կարող ազդեցություն ունենալ լիցենզիա ստանալու վերաբերյալ դիմողի հաջորդ դիմումների քննարկման վրա,

– լիցենզիայից զրկված իրավաբանական անձը լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ պայմանները բավարարելու դեպքում իրավունք ունի ընդհանուր հիմունքներով դիմել հանձնաժողով՝ նոր լիցենզիա ստանալու համար:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ դադարեցումը

- **լիցենզիայի պայմանները խախտելու դեպքում ՀՀ էներգետիկայի հանձնաժողովն իրավասու է կիրառել հետեւյալ տույժերը.**

  – նախազգուշացում եւ խախտումները վերացնելու հանձնարարականներ,

  – լիցենզիայի կասեցում,

  – լիցենզիայից զրկում:

- **Լիցենզիայի կասեցումը.**

  – հրապարակային մրցույթում հաղթած իրավաբանական անձի լիցենզավորման գործընթացը կարող է կասեցվել, եթե ներկրման հիմնական պայմանագրի դրույթները էականորեն տարբերվում են հրապարակային մրցույթին ներկայացված նախնական պայմանագրի դրույթներից կամ չեն համապատասխանում անցկացված հրապարակային մրցույթի պայմաններին:

- **Լիցենզիայի ուժը կորցնելը.**

  – լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա,

  – մինչեւ լիցենզիայի կասեցման կամ նրանից զրկման մասին ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի համապատասխան որոշում կայացնելը լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել իրականացնել գործունեությունը,

  – լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում հետևյալ դեպքերում՝

    - իրավաբանական անձի լուծարման դեպքում,
    - լիցենզիայի գործողության սահմանված ժամկետը լրանալու դեպքում,
    - իրավաբանական անձի դիմումի համաձայն,
    - լիցենզավորող մարմնի սահմանած ժամկետում լիցենզիայի գործողության կասեցումից բխող խախտումների չվերացման դեպքում:

  – Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձի նկատմամբ մասնագիտական որակավորման լիցենզիայի գործողության կասեցման կամ այն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ լիցենզավորող մարմնի ընդունած որոշման պատճենը որոշման ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում ուղարկվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովին,

  – իրավաբանական անձինք լիցենզիա ստանալու մերժում ստանալու կամ նրանց տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքերում իրավունք ունեն նոր լիցենզիա ստանալու համար նորից դիմել լիցենզավորող մարմին՝ մերժում ստանալու կամ լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պահից վեց ամիս հետո,

  – լիցենզիայի գործողության կասեցման կամ լիցենզիայից զրկման դեպքերում լիցենզիան պարտադիր վերադարձվում է հանձնաժողով՝ համապատասխան որոշումն ընդունելուց հետո 5 օրվա ընթացքում,

  – լիցենզիայի գործողության կասեցման կամ լիցենզիայից զրկման դեպքում հանձնաժողովն այդ մասին տեղյակ է պահում լիցենզավորված անձին եւ հրապարակում մամուլում:

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարության 1998 թվականի հուլիսի 2-ի թիվ 414 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- Իրավաբանական եւ ֆիզիկական անձանց տվյալ մասնագիտական որակավորման լիցենզավորումն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում որոշակի աշխատանքներ իրականացնելու համար:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում մասնագիտական որակավորման լիցենզիա պահանջող աշխատանքների ու մասնագիտությունների ցանկին համապատասխան յուրաքանչյուր մասնագիտական աշխատանքի համար տրվում է առանձին լիցենզիա,
- լիցենզիան տրվում է մինչեւ 3 տարի ժամկետով,
- լիցենզիա ստացող մարմինը կիսամյակային հաշվետվություններ է ներկայացնում լիցենզավորող մարմնին,
- լիցենզիայի օտարումը կամ փոխանցումն արգելվում է:

Լիցենզավորող մարմինը

- Լիցենզավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարությունը՝ իր ստեղծած կենտրոնական եւ ըստ գործունեության ոլորտների մասնագիտացված հանձնաժողովների միջոցով:
- Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարություն.
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 2,
    - Հեռախոս՝ 52 19 64:

Լիցենզիա ստացողը

- Լիցենզիա կարող են ստանալ ՀՀ-ում գործող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝
  - իրավաբանական անձինք՝
    - դիմում, որում նշվում են ձեռնարկության լրիվ ֆիրմային անվանումը, կազմակերպա-իրավական տեսակը, գտնվելու վայրը, էներգետիկայի բնագավառում իրականացվող կամ իրականացվելիք գործունեության ոլորտը եւ մասնագիտական աշխատանքները,
    - հիմնադիր փաստաթղթերի պատճենները,
    - պետական գրանցման վկայականի պատճենը,
    - տվյալներ իրավաբանական անձի հետեւյալ պաշտոնատար անձանց մասին (ազգանունը, անունը, կրթությունը, պաշտոնը, մասնագիտությունը եւ աշխատանքային ստաժն ըստ մասնագիտության)՝
      - գործադիր տնօրեն,
      - գլխավոր ճարտարագետ,
      - անվտանգության տեխնիկայի գծով ավագ տեսուչ,
      - շահագործման գծով ավագ տեսուչ,
      - կարգավարական ծառայության պետ (անհրաժեշտության դեպքում) կամ համապատասխան պաշտոնատար անձինք:
    - տեղեկություններ անձնակազմի հետ աշխատանքի կազմակերպման համակարգի վերաբերյալ,
  - ֆիզիկական անձինք՝
    - դիմում, որում նշվում են ազգանունը, անունը, անձնագրի տվյալները, էներգետիկայի բնագավառում իրականացվող կամ իրականացվելիք գործունեության ոլորտը եւ մասնագիտական աշխատանքները,
    - անհատ ձեռներեցի վկայականի պատճենը,
    - տեղեկություններ կրթության, մասնագիտության եւ ըստ մասնագիտության աշխատանքային ստաժի վերաբերյալ:
  - հանձնել մասնագիտական հանձնաժողովի քննությունը,

- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12 հազար դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24 հազար դրամ,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները՝ լիցենզավորող մարմինը լիցենզիա տալու կամ մերժելու մասին որոշումն ընդունում է դիմումը եւ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրվանից 30-օրյա ժամկետում:
- Լիցենզիան կամ այն տալը մերժելու մասին որոշումը դիմողին է տրվում համապատասխան որոշման ընդունման օրվանից հետո 3-օրյա ժամկետում:

- **Որոշման ընդունումը.**
  - լիցենզավորող մարմինն իր որոշումներն ընդունում է մասնագիտացված հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա: Հանձնաժողովների մասնագիտացման ոլորտը, կազմը եւ աշխատակարգը սահմանում է լիցենզավորող մարմինը,
  - հանձնաժողովների կազմում պարտադիր կարգով ներգրավվում են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում տեխնիկական վերահսկողություն իրականացնող իրավասու մարմինների ներկայացուցիչները,
  - լիցենզիան պետք է պարունակի հետեւյալ տվյալները՝
    - լիցենզավորող մարմնի անվանումը,
    - լիցենզիա ստացած իրավաբանական անձի լրիվ ֆիրմային անվանումը կամ ֆիզիկական անձի անունը,
    - գործունեության ոլորտը եւ մասնագիտական աշխատանքի անվանումը,
    - լիցենզիան տալու ամսաթիվը եւ գործողության ժամկետը,
    - լիցենզիայի գործողության պայմանները՝
      - իրավաբանական անձանց համար՝ անձնակազմի հետ աշխատանքի կազմակերպման համակարգի ձեւավորման եւ կատարելագործման վերաբերյալ,
      - ֆիզիկական անձանց համար՝ մասնագիտական ատեստավորման վերաբերյալ:

- **Քննությունը**
  - Իրավաբանական եւ ֆիզիկական անձինք իրենց փաստաթղթերը լիցենզավորող մարմնի կողմից ընդունվելուց հետո վերջինիս նշանակած ժամկետներում ներկայանում են համապատասխան մասնագիտացված հանձնաժողովին՝ հետեւյալ կազմով՝
    - գործադիր տնօրենը,
    - գլխավոր ճարտարագետը,
    - անվտանգության տեխնիկայի գծով ավագ տեսուչը,
    - շահագործման գծով ավագ տեսուչը,
    - կարգավարական ծառայության պետը (անհրաժեշտության դեպքում) կամ համապատասխան պաշտոնատար անձինք,
  - իրավաբանական անձի մասնագիտական որակավորումը նախատեսում է վերը նշված պաշտոնատար անձանց գիտելիքների քննում՝ կատարվելիք մասնագիտական աշխատանքների իմացության եւ անձնակազմի մասնագիտական որակավորման կազմակերպման գործում,
  - լիցենզիան տվյալ անձին է տրվում նշված քննումի դրական արդյունքի դեպքում,
  - գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք մասնագիտացված հանձնաժողովին են ներկայացնում տեղեկություններ հետեւյալ հարցերի վերաբերյալ՝
    - անձնակազմի ուսուցման եւ մասնագիտական որակավորման համակարգի,
    - գործունեության ոլորտը ղեկավարող եւ կանոնակարգող փաստաթղթերի,
    - նորմատիվ ակտերի առկայության,
    - անձնակազմի համար այդ փաստաթղթերի հասանելիության հնարավորության,
    - անձնակազմի հետ աշխատանքի կազմակերպման, այդ թվում՝
      - մասնագետների պատրաստման եւ վերապատրաստման համակարգի,

  - անվտանգության տեխնիկայի վերաբերյալ գիտելիքների եւ այլ հրահանգների իմացության ստուգման,
  - մասնագիտական ուսուցում անցած եւ ատեստավորված կադրերով աշխատատեղերի համալրման,
  - աշխատանքի անվտանգության կազմակերպման նորմերին եւ կանոններին անձնակազմի գիտելիքների համապատասխանության, ուսումնաարտադրական բազայի հագեցվածության (առկայության դեպքում),
- նոր ձեւավորվող իրավաբանական անձանց տրվող լիցենզիաների պայմաններում, մասնավորապես, նշվում են անձնակազմի հետ աշխատանքի կազմակերպման համակարգի ներդրման պայմանները եւ ժամկետները:

- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - դիմողի ներկայացրած փաստաթղթերում առկա են թերի, ոչ հավաստի կամ խեղաթյուրված տեղեկություններ,
    - մասնագիտացված հանձնաժողովի եզրակացությունը դիմողի նշած մասնագիտական աշխատանքների իրականացմանն անհրաժեշտ նրա պատրաստվածության աստիճանի վերաբերյալ բացասական է,
  - լիցենզավորող մարմինն իրավունք չունի հայտը մերժել աննպատակահարմարության շարժառիթով,
  - լիցենզիայի հայտի մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները և իրավական հիմքերը,
  - լիցենզիայի հայտի մերժման մասին որոշումը հայտատուն իրավունք ունի ընթացքում գանգատարկել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության կասեցումը, դադարեցումը եւ ուժը կորցրած ճանաչելը

- **Լիցենզիայի կասեցումը.**
  - լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել որոշակի ժամկետով, բայց եռամսյա ժամկետից ոչ ավելի,
  - լիցենզիայի գործողության կասեցման պատճառներն են.
    - լիցենզիայում նշված պայմանների չկատարումը,
    - լիցենզիա ստացած իրավաբանական անձի կողմից տվյալ գործունեությունը վեց ամսից ավելի չիրականացնելը,
  - իրավաբանական կամ ֆիզիկական անձի ստացած լիցենզիայի գործողությունը վերականգնվում է լիցենզավորող մարմնի որոշմամբ, այն կասեցնելու հիմք ծառայած պատճառների վերացումից հետո:
- **Լիցենզիայի ուժը կորցնելը.**
  - լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում հետույալ դեպքերում՝
    - իրավաբանական անձի լուծարման դեպքում,
    - լիցենզիայի գործողության սահմանված ժամկետը լրանալու դեպքում,
    - իրավաբանական կամ ֆիզիկական անձի դիմումի համաձայն,
    - լիցենզավորող մարմնի սահմանած ժամկետում լիցենզիայի գործողության կասեցումից բխող խախտումների չվերացման դեպքում:
  - Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձի նկատմամբ մասնագիտական որակավորման լիցենզիայի գործողության կասեցման կամ այն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ լիցենզավորող մարմնի ընդունած որոշման պատճենը որոշման ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում ուղարկվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովին:
  - Իրավաբանական եւ ֆիզիկական անձինք լիցենզիա տալու մերժում ստանալու կամ տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքերում իրավունք ունեն նոր լիցենզիա ստանալու համար նորից դիմելու լիցենզավորող մարմին մերժում ստանալու կամ լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պահից վեց ամիս հետո:

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԴԻՈՅԻ ԵՎ ՀԵՌՈՒՏԱՏԵՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 19-ի թիվ 171 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ մրցույթին մասնակցելը և հեռարձակման լիցենզիա ստանալն անհրաժեշտ է ռադիո և հեռուստատեսային հաղորդումների հեռարձակումը կազմակերպելու նպատակով նախատեսված ռադիոհաճախականությունները ձեռքբերելու համար:**

Առանձնահատկությունները

- **Ռադիոհաճախականությունները տրամադրվում են անցկացվող մրցույթի արդյունքում,**
- **ռադիոհաճախականությունները կարող են տրամադրվել առանց մրցույթի միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ,**
- **մրցութային հանձնաժողովը մրցույթն սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ մամուլում եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով հրապարակում է մրցույթի եւ դրա անցկացման պայմանների մասին տեղեկատվություն, որում նշվում են՝**
  - առաջարկվող ռադիոհաճախության տիրույթի անվանումը եւ օգտագործման նպատակը, ռադիոհաճախության օգտագործման տարածքը (վայրը) եւ ժամկետները,
  - մրցույթի անցկացման պայմանները եւ մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները,
  - մրցույթի նախավճարի չափը,
  - վճարման ձեւը եւ պայմանները,
  - մրցույթին մասնակցելու մասին հայտը ներկայացնելու վերջին ժամկետը եւ մրցույթի մասնակցի հասցեն,
  - մրցույթի անցկացման վայրը, օրը եւ ժամը,
  - հեռախոսահամարը (հեռախոսահամարները), որով (որոնցով) կարելի է լրացուցիչ տեղեկություններ ստանալ:

Լիազոր մարմինը

- **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Նալբանդյան- 28,
    - Հեռախոս՝ 52 88 10:
  - Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից ստեղծվում է մրցութային հանձնաժողով, որը սահմանում է մրցույթի անցկացման ժամկետները:

Մրցույթի մասնակիցները

- **Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական անձինք:**

Մրցույթին մասնակցելու պայմանները

- **Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն այն իրավաբանական անձինք, որոնք ժամանակին ներկայացրել են հայտ, սահմանված կարգով մուծել մրցույթի նախավճարը եւ ներկայացրել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - հայտը,
  - մրցույթի նախավճար կատարելու մասին փաստաթուղթը,
  - մրցույթի մասնակցի հիմնադիր փաստաթղթի պատճենը,
  - հատկացվող ռադիոհաճախության օգտագործման վերաբերյալ մրցույթի մասնակցի գրավոր առաջարկությունները (փակ ծրարով), որոնք կներառեն համապատասխան տեխնիկական տվյալներ, գործարար ծրագիրը եւ պարտավորություններ հեռուստառադիոծրագրերն ամբողջությամբ կամ դրանց մի մասը հայերենով հեռարձակելու վերաբերյալ,

- Հայաստանի Հանրապետության պետական հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ցանցի զարգացման համար մրցույթի մասնակցի միանվագ վճարման պարտավորության երաշխիքը (բանկային, այլ վարկային հաստատության կամ ապահովագրական կազմակերպության), որը պետք է գերազանցի մրցույթի նախավճարը:

- **Հայտ ներկայացնողը չի կարող ճանաչվել մրցույթի մասնակից, եթե պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել սահմանված կարգով եւ ժամկետներում:**

Մրցույթի անցկացումը

- **Փաստաթղթերի ընդունումը.**
  - հայտի ստացման ժամկետ է համարվում դրա գրանցման օրը,
  - մրցույթի մասնակիցը կարող է մինչեւ մրցույթի կայացման օրը հետ վերցնել իր հայտը՝ դրա մասին գրավոր դիմելով մրցութային հանձնաժողովին: Այդ դեպքում նրա մուծած մրցույթի նախավճարը վերադարձվում է 5 օրվա ընթացքում:
- **Որոշման ընդունումը.**
  - մրցութային հանձնաժողովը քննարկում է մրցույթի մասնակիցների ներկայացրած առաջարկությունները՝ հիմք ընդունելով մրցույթի անցկացման պայմաններն ու մրցույթի հաղթողի ճանաչման չափանիշները,
  - մրցույթի մասնակիցների ներկայացրած առաջարկությունների ծրարները բացվում են մրցույթի նշանակված օրը եւ ժամին՝ մրցութային հանձնաժողովի նիստում,
  - մրցույթի մասնակիցները կամ նրանց սահմանված կարգով լիազորված ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել ծրարների բացմանը եւ առաջարկությունների հրապարակմանը,
  - մրցույթի հաղթող է ճանաչվում մրցույթի այն մասնակիցը, որը՝
    - ներկայացրել է լավագույն գործարար ծրագիրը եւ առաջարկում է լավագույն պայմանները,
    - հավասար պայմանների դեպքում ազգային մասնակիցներին (Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձանց) տրվում է նախապատվություն:
  - մրցութային հանձնաժողովը որոշումն ընդունելուց հետո արձանագրության պատճեններն ուղարկում է մրցույթի բոլոր մասնակիցներին,
  - մրցույթի մասնակիցները մրցույթի արդյունքները կարող են բողոքարկել մրցութային հանձնաժողովին կամ դատարան,
  - մրցույթի ավարտից հետո մրցույթի մասնակիցների (բացի մրցույթի հաղթողից) մուծած մրցույթի նախավճարները վերադարձվում են 5-օրյա ժամկետում:
- **Մրցույթի հաղթողին ռադիոհաճախության տիրույթի շահագործման իրավունքի տրամադրումը.**
  - մրցույթի հաղթողին մրցույթի արդյունքների մասին արձանագրության պատճենն ուղարկվելուց հետո մեկ ամսվա ընթացքում տրվում է հեռարձակման լիցենզիա եւ նրա հետ ռադիոհաճախության տիրույթի շահագործման պայմանագիր է կնքվում 6 ամսվա ընթացքում,
  - մրցույթի հաղթողի հետ ռադիոհաճախության տիրույթի շահագործման պայմանագիր կնքում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը՝ ռադիոէլեկտրոնային ու այլ անհրաժեշտ սարքավորումների՝ սահմանված կարգով համապատասխան պետական մարմնում գրանցումից հետո,
  - այն դեպքում, երբ մրցույթի հաղթողը 6 ամսվա ընթացքում չի կնքում նշված պայմանագիրը, մրցույթի նախավճարը չի վերադարձվում նրան եւ մրցույթի արդյունքները համարվում են անվավեր,
  - մրցույթի մասնակիցը պարտավոր է իրեն հաղթող ճանաչելու մասին մրցութային հանձնաժողովի ամփոփ արձանագրության պատճենը ստանալու օրվանից հետո 10 օրվա ընթացքում գործարար ծրագրում նշված գումարը փոխանցել "Հայաստանի հեռուստատեսային ցանց" պետական փակ բաժնետիրական ընկերության՝ այդ նպատակով բացված հաշվի համարին: Եթե մրցույթի հաղթողն այդ գումարը նշված ժամկետում չի փոխանցում, ապա զրկվում է ռադիոհաճախության տիրույթի օգտագործման իրավունքից, իսկ մրցույթի նախավճարը նրան չի վերադարձվում:

Մրցույթի չկայացած համարելը

- **Մրցույթը համարվում է չկայացած, եթե՝**
  - մրցութային հանձնաժողովը սահմանված ժամկետում ոչ մի առաջարկություն չի ստացել.
  - ստացված առաջարկությունները չեն բավարարում մրցույթի պայմանները:
- **Մրցույթը չկայացած համարվելու դեպքում մրցութային հանձնաժողովը մեկ ամսվա ընթացքում մշակում է մրցույթի անցկացման նոր տարբերակը:**
- **Միայն մեկ առաջարկության առկայությունը հիմք չի հանդիսանում մրցույթը չկայացած համարելու համար:**

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ փոստի և հեռահաղորդակցության նախարարի 1998 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 65 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հեռահաղորդակցության բնագավառում գործունեության (ծառայությունների) հետեւյալ տեսակներով զբաղվելու համար.**
  - հեռախոսային ծառայություններ,
  - հեռագրային կապի ծառայություններ,
  - տվյալների փոխանցման ծառայություններ,
  - տելեմատիկ ծառայություններ,
  - շարժական կապի ծառայություններ,
  - ռադիոհեռուստատեսային ծրագրերի հեռարձակման ծառայություններ,
  - տեխնիկական ապահովման ծառայություններ,
  - վարձակալված գծերի ծառայություններ:
- **Լիցենզիա չի պահանջվում պետական կառավարման, ազգային անվտանգության, գերատեսչական եւ ներարտադրական կարիքների բավարարման համար օգտագործվող գերատեսչական եւ ներարտադրական ցանցերով կազմակերպվող գործունեության նկատմամբ, որոնցով հանրությանը, անհատ ձեռնարկատերերին եւ առեւտրային կազմակերպություններին չեն կարող մատուցվել հեռահաղորդակցության ծառայություններ:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Վերը նշված յուրաքանչյուր տեսակի գործունեության եւ ծառայության մատուցման համար տրվում է առանձին լիցենզիա,**
- **վերոհիշյալ յուրաքանչյուր տեսակի գործունեության եւ ծառայության մատուցման համար տրվող լիցենզիայի գործողության ժամկետը սահմանվում է 5 տարի եւ լիցենզիայի ուժի մեջ մտնելու պահից հետո գործունեության ծավալման սկիզբը սահմանվում է ոչ ավել, քան 6 (վեց) ամիս, որը մտնում է գործողության ժամկետի մեջ,**
- **բացառիկ դեպքերում լիցենզիոն հանձնաժողովը իրավասու է լիցենզիայի գործողության կամ գործունեության սկզբի ժամկետը ավելացնել, ելնելով հանրային կարիքների բավարարման, մատուցվող ծառայությունների կարեւորությունից, ինչպես նաեւ գործունեության կազմակերպման համար կատարվող անհրաժեշտ աշխատանքների ծավալից,**
- **յուրաքանչյուր անհատ ձեռնարկատերեր եւ առեւտրային կազմակերպություն կարող է միաժամանակ ունենալ հեռահաղորդակցության բնագավառում տարբեր տեսակների գործունեության մի քանի լիցենզիաներ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,**
- **լիցենզիայում հատուկ պայմանով կարող է սահմանափակվել լիցենզիայի գործողության տարածքը,**
- **առանց լիցենզիոն հանձնաժողովի թույլտվության լիցենզիան արգելվում է օտարել, փոխանցել կամ զիջել այլ անձանց (բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը, փոխանցումը կամ զիջումը իրականացվում է լիցենզիայի պայմանների համաձայն):**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
  - Երեւան 375010, Նալբանդյան- 28,
  - Հեռախոս՝ 52 88 10:
- **Հեռահաղորդակցության բնագավառում գործունեության լիցենզավորումն ու լիցենզիաների հատկացումն իրականացվում է նախարարության կողմից ստեղծված լիցենզիոն հանձնաժողովի միջոցով եւ նրա կողմից ընդունված որոշումների հիման վրա:**

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիան տրվում է անհատ ձեռնարկատերերին եւ առեւտրային կազմակերպություններին:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Տրանսպորտի և կապի նախարարություն ներկայացնել դիմում եւ դիմումին կից անհրաժեշտ փաստաթղթերը համաձայն ներկայացված ձևերի:**
  - հեռախոսային ծառայություններ, շարժական կապի ծառայություններ և վարձակալված գծերի ծառայություններ գործունեության տեսակների լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է նաեւ ստանալ ,,Արմենիա Տելեֆոն Կոմպանի,, ՀՁ ՓԲԸ գրավոր համաձայնությունը:
- **վճարել պետական տուրքը,**
  - 24 հազար դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը.**
  - նախարարությունը մուտքագրում է դիմումը՝ կից փաստաթղթերով, ստուգելով դրանց ձեւակերպման ճշտությունը ու համապատասխանությունը վերը նշված ձևին: Փաստաթղթերի ստուգման արդյունքների մասին դիմողին ծանուցագիր է ուղարկվում դիմումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում:
- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - փաստաթղթերի ստուգման դրական արդյունքի դեպքում նախարարությունը սկսում է լիցենզավորման գործընթացը եւ համապատասխան որոշում կայացնում դիմումն ընդունելուց հետո 60-օրյա ժամկետում:
- **Որոշման ընդունումը.**
  - նախարարության կողմից դիմումը համարվում է ընդունված՝
    - լիցենզիայի տրման համար պահանջվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի առկայության դեպքում,
    - հատուկ գրանցամատյանում գրառում կատարելու պահից,
  - նախարարության կողմից դիմումը քննարկվում է եւ լիցենզիա տալու կամ մերժելու մասին որոշում է կայացվում ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում դիմումը ընդունելուց հետո,
  - լիցենզիա տալու մասին որոշման ընդունումից հետո հնգօրյա ժամկետում դիմողին տրվում է լիցենզիա, իսկ մերժման դեպքում, նույն ժամկետում, մերժման մասին որոշման կրկնօրինակը: Այդ ժամկետում որոշում չընդունելու դեպքում լիցենզիան համարվում է տրված, եթե այն չի հակասում ,,Հեռահաղորդակցության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին,
  - անհրաժեշտության դեպքում դիմողը կարող է հրավիրվել լիցենզիոն հանձնաժողովի նիստին,
  - լիցենզիա հատկացնելու դեպքում նախարարությունն այդ մասին տեղյակ է պահում «Հեռահաղորդակցության Հանրապետական Կենտրոն» Պետական Փակ Բաժնետիրական Ընկերությանը եւ հրապարակում է մամուլում,
  - լիցենզիան ուժի մեջ է մտնում նախարարությունում գրանցման պահից:
- **Վերագրանցումը.**
  - լիցենզիայի գործողության ժամկետը երկարացնելու նպատակով լիցենզավորված անձը դիմում է նախարարություն ոչ ուշ քան 30 օր առաջ, մինչեւ լիցենզիայի գործողության ժամկետը լրանալը՝ դիմումին կից ներկայացնելով ,,ՀՀԿ,, ՊՓԲԸ-ի կողմից տրված լիցենզավորված գործունեության ստուգման ակտը,
  - լիցենզավորված անձի հիմնադիր փաստաթղթում փոփոխությունների (անվանման, իրավաբանական հասցեն, բանկային տվյալների) դեպքում, այդ փոփոխությունները կատարելուց հետո 30 օրվա ընթացքում, նա պարտավոր է այդ մասին տեղյակ պահել նախարարությանը,
  - լիցենզավորված անձի կազմակերպական-իրավական ձեւի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը այդ մասին պետք է տեղյակ պահի նախարարությանը:
- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել հետևյալ հիմքերով՝
    - ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունը «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից սահմանած պահանջներին,
    - թերի կամ ակնհայտ սխալ տեղեկություններ ներկայացնելը,
    - դիմողի կողմից առաջարկվող հեռահաղորդակցության գործունեության անհամապատասխանությունը ՀՀ գործող ստանդարտներին եւ նորմերին,

- դիմողի կողմից առաջարկվող հեռահաղորդակցության գործունեության տեսակի իրականացման տեխնիկական հնարավորության բացակայությունը,
- գործող լիցենզիաների պայմաններին հակասելը,
- օրենքով նախատեսված այլ դեպքերում:

– աննպատակահարմարության շարժառիթներով լիցենզիա չտալը արգելվում է,

– լիցենզիա տալու վերաբերյալ լիցենզիոն հանձնաժողովի առարկությունները հաշվի առնելուց հետո դիմողը, լիցենզիա ստանալու համար, վերը նշված կարգով կրկին կարող է դիմել նախարարություն,

– լիցենզիա տալը մերժելու մասին լիցենզիոն հանձնաժողովի որոշումը չի կարող ազդեցություն ունենալ դիմողի՝ լիցենզիա ստանալու հաջորդ դիմումների քննարկման վրա:

Նախազգուշացումը, լիցենզիայի կասեցումը եւ դադարեցումը

- **Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում լիցենզիոն հանձնաժողովը, ելնելով բացահայտված խախտումների բնույթից, կարող է ընդունել հետեւյալ որոշումները՝**
  – նախազգուշացման մասին,
  – լիցենզիայի կասեցման մասին,
  – լիցենզիայի դադարեցման մասին:
- **Նախազգուշացումը.**
  – նախազգուշացման մասին որոշումը ընդունելուց լիցենզավորված անձը գրավոր նախազգուշացվում է տեղ գտած խախտումների բնույթի եւ նրանց վերացման ժամկետների մասին,
  – նախազգուշացման հանձնարարականների կատարման համար տրվում է մինչև 30 օր ժամկետ:
- **Կասեցումը.**
  – լիցենզիայի գործողության կասեցման մասին որոշումը կարող է ընդունվել՝
    - լիցենզավորված անձի կողմից սպառողին մատուցվող ծառայությունների որակի մասին նախարարությանը ոչ հավաստի տեղեկատվություններ ներկայացնելու դեպքում,
    - համապատասխան տեսակի գործունեության գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պահանջի մերժման դեպքում,
    - եթե նախազգուշացմամբ տրված հանձնարարականները չեն կատարվել սահմանված ժամկետներում,
  – եթե լիցենզիայի կասեցումն առաջացնող խախտումները վերացվել են սահմանված ժամկետում, լիցենզիայի գործողությունը վերականգնվում է լրիվ ծավալով, ընդ որում կասեցման ժամկետը չի բերում լիցենզիայի գործողության ժամկետի փոփոխմանը,
  – լիցենզիան կարող է կասեցվել մինչև 6 ամիս ժամկետով:
- **Լիցենզիայի դադարեցումը.**
  – լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝
    - լիցենզիայի գործողության կասեցման ժամկետում չեն վերացվել կասեցումն առաջացնող պատճառները,
    - հեռահաղորդակցության օպերատորի դիմումի համաձայն,
    - հեռահաղորդակցության օպերատորի լուծարման դեպքում:
  – լիցենզիայի վերաձեւակերպման, գործողության երկարացման եւ կասեցման դեպքերում լիցենզիան պարտադիր վերադարձվում է նախարարություն համապատասխան որոշումն ընդունելուց հետո 10 օրվա ընթացքում:
  – լիցենզավորող մարմնի որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՅԻՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ,,Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին,, ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 671 որոշմամբ

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ արտոնագիրն անհրաժեշտ է Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի ոչ պետական սեփականություն հանդիսացող փաստաթղթերի պահպանությունն իրականացնող, տնտեսական գործունեությամբ զբաղվող ոչ պետական արխիվներ ստեղծելու համար:**

Առանձնահատկությունները

- **Արտոնագրի գործողության ժամկետը 5 տարի է,**
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **պարբերական հաշվետվությունների պահանջ չկա,**
- **արտոնագրում պարտադիր կարգով նշվում են արտոնագրի հերթական համարը, ոչ պետական արխիվի լրիվ ֆիրմային անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գործունեության ոլորտը, արտոնագիր տալու ամսաթիվը և գործողության ժամկետը,**
- **արտոնագիրը չի կարող փոխանցվել կամ օտարվել,**
- **արտոնագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում ոչ պետական արխիվը սահմանված ընդհանուր հիմունքներով կարող է դիմել նոր արտոնագիր ստանալու համար:**

Արտոնագրող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն- 1,
    - Հեռախոս՝ 52 34 72:

Արտոնագիր ստացողը

- **Արտոնագիր կարող են ստանալ ՀՀ-ում գործող կազմակերպությունները:**

Արտոնագիր ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչություն ներկայացնել՝**
  - հայտ, որին կցվում են՝
    - ոչ պետական արխիվի հիմնադիր փաստաթղթերի պատճենները,
    - տեղեկանք ոչ պետական արխիվում պահվող արխիվային ֆոնդերի ու գործերի, փաստաթղթերի պահպանության պայմանների (տարածք, ջերմախոնավային ռեժիմ, հակահրդեհային սարքավորումներ, սանիտարահիգիենիկ պայմաններ) մասին,
    - արտոնագիր տալու համար վճարված պետական տուրքի անդորրագրի պատճենը,
- **վճարել պետական տուրքը,**
  - 24000 դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում արտոնագիր ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Արտոնագրի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**

- փաստաթղթերը ներկայացնելու պահից 145-օրյա ժամկետում վարչությունը պարտավոր է ընդունել որոշում արտոնագիր տալու կամ այն մերժելու վերաբերյալ: Որոշման պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում տրվում է հայտ ներկայացնողին:

- **Մերժումը.**
  - վարչությունը կարող է մերժել արտոնագիր տալը, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և վերոհիշյալ պահանջներին,
  - արտոնագիր տալը մերժելու մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառներն ու իրավական հիմքերը,
  - արտոնագիր տալը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:
- **Կրկնօրինակի տրամադրումը.**
  - արտոնագիրը կորցնելու դեպքում ոչ պետական արխիվը դրա մասին գրավոր հայտնում է վարչությանը: Վերջինս, ոչ պետական արխիվի գրավոր դիմումի հիման վրա, 15-օրյա ժամկետում տալիս է նոր արտոնագիր՝ դրա վրա կատարելով "Կրկնօրինակ" նշագրումը,
  - կրկնօրինակը ստանալու համար վճարվում է 24000 դրամ պետական տուրք:

Արտոնագրի կասեցումը եւ ուժը կորցրած ճանաչելը

- **Կասեցումը.**
  - վարչությունն իրավունք ունի կասեցնել ոչ պետական արխիվին տրված արտոնագրի գործողությունը՝ սահմանելով խախտումների վերացման ժամկետ:
  - վարչությունը սահմանում է արտոնագրի գործողության կասեցման ժամկետը, որը չպետք է գերազանցի 45 օրը,
  - արտոնագրի գործողությունը կասեցվում է, եթե ոչ պետական արխիվը՝
    - չի ապահովել փաստաթղթերի պահպանության պայմանները,
    - հիմնադիր փաստաթղթերում (վկայականում) կատարված փոփոխությունների կամ լրացումների մասին սահմանված ժամկետում չի ծանուցել վարչությունը:
  - ոչ պետական արխիվը պարտավոր է սահմանված ժամկետում վերացնել խախտումները և դրա մասին տեղեկացնել վարչությանը,
  - սահմանված ժամկետում խախտումները չվերացվելու դեպքում վարչության որոշմամբ արտոնագիրն ուժը կորցրած է ճանաչվում,
- **Ուժը կորցրած ճանաչելը.**
  - ոչ պետական արխիվին տրված արտոնագիրը վարչության կողմից ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝
    - արտոնագրման համար վարչություն ներկայացրած փաստաթղթերում առկա են կեղծ տեղեկություններ,
    - խախտվել են "Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան պահանջները,
    - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարել է ոչ պետական արխիվի գործունեությունը,
    - օրացուցային մեկ տարվա ընթացքում կրկնակի կասեցվել է արտոնագրի գործողության ժամկետը,
  - արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին վարչության որոշման ընդունման պահից ոչ պետական արխիվը զրկվում է տնտեսական գործունեություն իրականացնելու իրավունքից,
  - արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին վարչության որոշման պատճենը եռօրյա ժամկետում տրվում է ոչ պետական արխիվին,
  - արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին վարչության որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով,
  - արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու դեպքում ոչ պետական արխիվը նոր արտոնագիր ստանալու համար կարող է ընդհանուր հիմունքներով դիմել արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու պահից մեկ տարի հետո:

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԵՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ զենքի մասին օրենքով, ՀՀ կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 673 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է զենքի արտադրություն իրականացնելու համար, այդ թվում.**
  - զենքի եւ դրա փամփուշտների արտադրություն,
  - զենքի եւ դրա փամփուշտների նոր տեսակների ու նմուշների ստեղծման հետ կապված հետազոտություններ,
  - փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքների իրականացման ընթացքում զենքի կամ դրա փամփուշտների նոր տեսակների ու նմուշների փորձնական օրինակների, ինչպես նաեւ զենքի կամ դրա փամփուշտների արտադրության գիտատեխնիկական փաստաթղթերի մշակում եւ փորձաքննություն,
  - զենքի եւ դրա փամփուշտների փորձարկում՝ դրանց տեխնիկական հատկությունների որոշման, ինչպես նաեւ զենքի ծառայության եւ անվտանգ օգտագործման սահմանային ժամկետները որոշելու համար,
  - զենքի փամփուշտների, դրանց բաղկացուցիչ մասերի (պարկուճներ, հրապատիճներ, վառոդ, գնդակներ, մանրագնդակներ եւ խոշոր կոտորակներ) պատրաստում, հավաքում, այդ թվում՝ փամփուշտների լիցքավորում,
  - զենքի տեխնիկական եւ քրեագիտական բնութագրերի պահպանմամբ գեղարվեստական ձեւավորում, առանց դրա հիմնական մասերի կառուցվածքային փոփոխությունների: Զենքի գեղարվեստական ձեւավորման ժամանակ կարող են օգտագործվել թանկարժեք մետաղներ, թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, ինչպես նաեւ որոշակի տեսակի զենք պատրաստելու համար անհրաժեշտություն չներկայացնող նյութեր ու տեխնոլոգիաներ,
  - զենքի վերանորոգում, այդ թվում՝ չաշխատող մասերի նորոգելու կամ փոխելու միջոցով զենքն աշխատունակ դարձնելը, ինչպես նաեւ արտաքին տեքստի եւ գեղարվեստական տարրերի վերականգնում:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրամադրվում է 3 տարի ժամկետով, համապատասխան դիմումի դեպքում՝ 5 տարի երկարաձգման իրավունքով,**
- **պատրաստված զենքի յուրաքանչյուր միավոր պետք է ունենա իր անհատական համարը, բացառությամբ մեխանիկական փոշեցրիչների, արցունքաբեր եւ գրգռիչ նյութերով լիցքավորված աերոզոլային ու այլ սարքերի եւ, ելնելով շահագործման անվտանգության պահանջներից, ենթարկվի պարտադիր փորձարկման՝ հետագայում դրոշմելով կամ ՀՀ ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչության սահմանած կարգով դրա վրա համապատասխան նշում կատարելով,**
- **մարտական զենքը, բացառությամբ փորձնական նմուշների, պատրաստվում է միայն պետական ռազմականացված կազմակերպություններին մատակարարելու կամ օտարերկրյա պետություններ առաքելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով,**
- **որսորդական ողորկափող հրազենի փամփուշտների լիցքավորումն անձնական օգտագործման նպատակով կարող է կատարել զենքը տնօրինողը՝ որսորդական ողորկափող հրազեն պահելու եւ կրելու թույլտվության առկայության դեպքում:**

Լիցենզավորող մարմինը

- **Զենքի արտադրության լիցենզիան տրամադրում է ՀՀ կառավարությունը՝ ՀՀ ներքին գործերի նախարարության միջնորդությամբ:**
- **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375025, Նալբանդյան-130,
    - Հեռախոս՝ 528363:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ ՀՀ-ում գործող իրավաբանական անձինք:**
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է՝**
  - իրականացնել միայն լիցենզիայով նախատեսված զենքի տեսակների եւ դրանց փամփուշտների արտադրություն,
  - ապահովել արտադրության կազմակերպման լիակատար անվտանգությունը, զենքի հաշվառման, զենքի պահպանության կանոնները:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - դիմում իրավաբանական անձի ղեկավարի անունից, որի մեջ նշվում է տեղեկություններ հետեւյալ միջոցառումների մասին՝
    - արտադրության կազմակերպման լիակատար անվտանգություն,
    - զենքի հաշվառում,
    - զենքի պահպանություն,
  - վճարված պետական տուրքի անդորրագիրը,
  - կանոնադրության պատճենը,
  - պետական գրանցման վկայականի պատճենը,
  - ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարության եզրակացությունը:
- **Լիցենզիայի ժամկետի երկարաձքումը.**
  - լիցենզիայի ժամկետի երկարաձգման համար անհրաժեշտ է լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ ներկայացնել դիմում:
- **Փորձաքննությունը.**
  - զենքի եւ դրա փամփուշտների արտադրության ու պահման վայրերը, ինչպես նաեւ ներկայացվող փաստաթղթերն ստուգվում եւ ուսումնասիրվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչության կողմից:
- **Վճարել պետական տուրքը,**
  - 24 հազար դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - լիցենզիա ստանալու մասին դիմումը քննարկվում է դիմում տալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում նշված ժամկետը կարող է երկարաձգվել:
- **Որոշման ընդունումը.**
  - լիցենզիայի տրամադրման, ինչպես նաեւ լիցենզիայի ժամկետի երկարացման որոշումը կայացնում է ՀՀ կառավարությունը՝ ՀՀ ներքին գործերի նախարարության միջնորդությամբ: Որոշման ընդունման ժամանակ հաշվի են առնվում փորձաքննության արդյունքները,
  - լիցենզիայի հայտի մերժման դեպքում մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները և իրավական հիմքերը, հայտատուն գրավոր տեղեկացվում է մերժման մասին,
  - լիցենզիայի հայտի մերժման մասին որոշումը հայտատուն իրավունք ունի գանգատարկել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը

- **Լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, եթե,**
  - իրավաբանական անձը կամովին հրաժարվել լիցենզիայից,
  - իրավաբանական անձը լուծարվել է,
  - իրավաբանական անձը բազմիցս (մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ) խախտել է կամ չի կատարել զենքի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերի պահանջները,
    - նման խախտումների առկայության դեպքում լիցենզավորող մարմինը նախապես գրավոր նախազգուշացնում է զենք արտադրողին վերջինիս կողմից թույլ տրված խախտումների մասին,
  - առաջացել են օրենքով նախատեսված՝ լիցենզիաներ կամ թույլտվություններ ստանալու հնարավորությունը բացառող հանգամանքներ,

- իրավաբանական անձը կատարել է իր տնօրինության տակ գտնվող քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրանց փամփուշտների այնպիսի կառուցվածքային փոփոխություններ, որոնց հետեւանքով փոխվել են դրանց ձգաբանական կամ մյուս տեխնիկական բնութագրերը,

- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով:**
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում, այդպիսին կրկին ստանալու խնդրանքով իրավաբանական անձինք կարող են դիմել լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու օրվանից հաշվված երեք տարին լրանալուց հետո:**
- **Լիցենզիայից կամովին հրաժարվելու դեպքում այդպիսին կրկին ստանալու համար ժամկետներ չեն սահմանվում:**

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԵՆՔԻ ԱՌԵՎՏՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ զենքի մասին օրենքով, ՀՀ կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 673 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է ՀՀ տարածքում քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրանց փամփուշտների առեւտուր իրականացնելու համար:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Լիցենզիան տրամադրվում է 3 տարի ժամկետով, համապատասխան դիմումի դեպքում՝ 5 տարի երկարաձգման իրավունքով:**
- **Վաճառքի ենթակա չեն սերտիֆիկատ, անհատական համար եւ դրոշմ չունեցող քաղաքացիական եւ ծառայողական զենքերը, ինչպես նաեւ պետական ստանդարտին համապատասխանելու մասին համապատասխան նշան չունեցող փամփուշտները:**
- **Քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրանց փամփուշտների առեւտրով զբաղվելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց դուստր ձեռնարկությունները պարտավոր են նմանօրինակ գործունեությամբ զբաղվելու համար սահմանված կարգով ձեռք բերել առանձին լիցենզիա:**
- **Զենքի եւ դրա փամփուշտների առեւտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք կոմիսիոն վաճառքի են ընդունում ներքին գործերի մարմինների կողմից ներկայացված, սահմանված կարգով պետական սեփականության վերացված, ինչպես նաեւ օրինական հիմքով եւ սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին պատկանող զենքն ու դրա փամփուշտները:**
- **Պետական ռազմականացված կազմակերպություններն իրավունք ունեն իրենց պատկանող քաղաքացիական եւ ծառայողական զենքը, դրա փամփուշտները վաճառելու զենքի առեւտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց միջոցով:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375025, Նալբանդյան-130,
    - Հեռախոս՝ 528363:

Լիցենզիա ստացողը

- **ՀՀ տարածքում քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրանց փամփուշտների առեւտուր իրականացնելու իրավունք ունեն նշված զենքի եւ ռազմամթերքի արտադրության կամ առեւտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք:**
- **ՀՀ տարածքում զենք եւ զինամթերք կարող են վաճառել՝**
  - Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը,
  - Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը,
  - Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարությունը,
  - Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության քաղպաշտպանության զինված ստորաբաժանումները,
  - Հայաստանի Հանրապետության պետական սուրհանդակային ծառայությունը,
  - այն կազմակերպությունները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են ծառայողական զենք օգտագործելու կամ գործադրելու հետ,
  - առեւտրային կազմակերպությունները,
  - զենքի հավաքչարարություն ու ցուցադրություն իրականացնող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք,
  - մարզական եւ որսորդական տնտեսություն վարող կազմակերպությունները, ուսումնական հիմնարկները,
  - Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

- **Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն օրինական հիմքով, սեփականության իրավունքով իրենց պատկանող զենքը կարող են վաճառել՝**
  - զենքի առեւտրի, հավաքչարարության ու ցուցադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ պետական ռազմականացված կազմակերպություններին՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով իրենց զենք պահելու, պահելու եւ կրելու թույլտվություն տված ներքին գործերի մարմնին.
  - զենքի ձեռքբերման, հավաքչարարության կամ ցուցադրության լիցենզիա ունեցող քաղաքացիներին՝ զենքը հաշվառած ներքին գործերի մարմնում վերագրանցելուց հետո:
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է.**
  - ունենալ հիմնադրման եւ գրանցման համապատասխան փաստաթղթեր, ինչպես նաեւ քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրանց փամփուշտների արտադրությամբ կամ դրանց առեւտրով զբաղվելու լիցենզիա,
  - ունենալ վաճառվող քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրանց փամփուշտների սերտիֆիկատ, ինչպես նաեւ նշված զենքը պահելու թույլտվություն՝ տրված ներքին գործերի հանրապետական մարմնի կողմից,
  - պահանջել գնորդից ներկայացնելու տվյալ զենքի տեսակի ձեռքբերման լիցենզիա, բացառությամբ այն զենքերի, որոնց ձեռքբերման համար լիցենզիա չի պահանջվում, ապահովել ձեռք բերվող եւ վաճառվող զենքի հաշվառումը, ինչպես նաեւ հաշվառման փաստաթղթերի պահպանությունը տասը տարի ժամանակով,
  - ամենամսյա տեղեկություններ ներկայացնել ներքին գործերի մարմիններ վաճառված քաղաքացիական, ծառայողական զենքերի, դրանց փամփուշտների եւ դրանք ձեռք բերող անձանց մասին՝ ներքին գործերի հանրապետական մարմնի սահմանած ձեւով եւ կարգով,
  - գնորդի լիցենզիայում գրանցել վաճառվող գազային ատրճանակները (այդ թվում՝ թմբուկավոր ռեւոլվեր), անփող հրազենը, ազդանշանային զենքը, իսկ որսորդների հասարակական կազմակերպության անդամ-քաղաքացու վկայականում՝ շեղբավոր որսորդական սառը զենքը,
  - ապահովել զենքի պատշաճ պահպանությունը եւ այն պահելու անվտանգությունը,
  - կենտրոնացված հաշվառում տանելու նպատակով հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան ներկայացնել ակոսափող քաղաքացիական եւ ծառայողական զենքից կրակված գնդակներն ու պարկուճները՝ ներքին գործերի հանրապետական մարմնի սահմանած կարգով,
  - ապահովել առեւտրի կազմակերպման լիակատար անվտանգությունը, զենքի հաշվառման, զենքի պահպանության կանոնները,
  - զենքի փամփուշտների վաճառքը պետք է ձեւակերպի սահմանված նմուշի փաստաթղթերով, որոնց ցանկը, ձեւը եւ վարման կարգը որոշում են համապատասխան ռազմականացված կազմակերպությունները՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հետ:
- **Արգելվում է վաճառել.**
  - որոշակի տեսակի զենք ձեռք բերելու լիցենզիա չունեցող իրավաբանական եւ ֆիզիկական անձանց,
  - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չսերտիֆիկացված, առանց համարի եւ դրոշմի զենք ու դրա փամփուշտները, ինչպես նաեւ առաջնային փաթեթավորման վրա նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխանության նշանի բացակայությամբ փամփուշտներ,
  - փամփուշտներ, որոշակի տեսակի զենք բերելու լիցենզիա կամ համապատասխան զենք պահելու, կամ պահելու եւ կրելու թույլտվություն չունեցող իրավաբանական ու ֆիզիկական անձանց,
  - փամփուշտներ, այն ֆիզիկական անձանց, որոնք ունեն ժամանակավոր օգտագործման համար ստացված զենքը պահելու եւ կրելու թույլտվություն,
  - ակոսափող հրազեն, որից ստուգման նպատակով չի կրակվել եւ կրակված պարկուճներն ու գնդակները Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից սահմանված կարգով չեն ներկայացվել հաշվառման՝ պետական գնդակապարկուճային քարտադարան,
  - անաղմուկ հրաձգության կամ գիշերային նշանառության հարմարանքներ,բացառությամբ որսորդության համար նախատեսված նշանառության սարքերի,
  - միայն պատվիրող երկրների պահանջներին եւ տեխնիկական պայմաններին համապատասխան արտահանման համար արտադրված զենքն ու դրա փամփուշտները, ինչպես նաեւ ՀՀ տարածքում շրջանառությունն արգելված զենքի տեսակներ,
  - զենքն ու դրա փամփուշտներն այլ ապրանքների հետ համատեղ, միեւնույն վաճառասրահում, բացառությամբ սպորտային, որսորդական կամ ձկնորսական պատկանելության հարմարանքների եւ զենքի պահեստամասերի,
  - համապատասխանության սերտիֆիկատ չունեցող, կառուցվածքով զենքի նմանվող իրեր եւ առարկաներ,
  - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մեջ ընդգրկված զենքեր:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.**
  - դիմում իրավաբանական անձի ղեկավարի անունից, որի մեջ նշավում է տեղեկություններ հետեւյալ միջոցառումների մասին՝
    - առեւտրի կազմակերպման լիակատար անվտանգություն,
    - զենքի հաշվառում,
    - զենքի պահպանություն,
  - վճարված պետական տուրքի անդորրագիրը,
  - կանոնադրության պատճենը,
  - պետական գրանցման վկայականի պատճենը,
- **Լիցենզիայի ժամկետի երկարաձքումը.**
  - լիցենզիայի ժամկետի երկարաձգման համար անհրաժեշտ է լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ ներկայացնել դիմում:
- **Վճարել պետական տուրքը,**
  - 24 հազար դրամ,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - լիցենզիա ստանալու մասին դիմումը քննարկվում է դիմում տալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում նշված ժամկետը կարող է երկարաձգվել:
- **Որոշման ընդունումը.**
  - լիցենզիայի տրամադրման, ինչպես նաեւ լիցենզիայի ժամկետի երկարացման որոշումը կայացվում է ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից,
  - լիցենզիայի հայտի մերժման դեպքում մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները և իրավական հիմքերը, հայտատուն գրավոր տեղեկացվում է մերժման մասին,
  - լիցենզիայի հայտի մերժման մասին որոշումը հայտատուն իրավունք ունի գանգատարկել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը

- **Լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, եթե.**
  - իրավաբանական անձը կամովին հրաժարվել լիցենզիայից,
  - իրավաբանական անձը լուծարվել է,
  - իրավաբանական անձը բազմիցս (մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ) խախտել է կամ չի կատարել զենքի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերի պահանջները,
    - նման խախտումների առկայության դեպքում լիցենզավորող մարմինը նախապես գրավոր նախազգուշացնում է իրավաբանական անձին՝ վերջինիս կողմից թույլ տրված խախտումների մասին,
  - առաջացել են օրենքով նախատեսված լիցենզիաներ կամ թույլտվություններ ստանալու հնարավորությունը բացառող հանգամանքներ,
  - իրավաբանական անձը կատարել է իր տնօրինության տակ գտնվող քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրանց փամփուշտների այնպիսի կառուցվածքային փոփոխություններ, որոնց հետեւանքով փոխվել են դրանց ձգաբանական կամ մյուս տեխնիկական բնութագրերը:
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով:**
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում այդպիսին կրկին ստանալու խնդրանքով իրավաբանական անձինք կարող են դիմել լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու օրվանից հաշված երեք տարի հետո:**
- **Լիցենզիայից կամովին հրաժարվելու դեպքում այդպիսին կրկին ստանալու համար ժամկետներ չեն սահմանվում:**

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԵՆՔԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ զենքի մասին օրենքով, ՀՀ կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 673 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության տարածքում իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից իրենց պատկանող հավաքածուների, ինչպես նաեւ այլ սեփականատերերին պատկանող զենքի եւ դրա փամփուշտների հատուցվող ցուցադրման համար:
- Ցուցադրում չի համարվում առեւտրային կազմակերպություններին պատկանող զենքի եւ դրա փամփուշտների ցուցադրումն իրենց արտադրական տարածքներում ու առեւտրի սրահում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից նման միջոցառման անցկացումը:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- լիցենզիան տրամադրվում է 3 տարի ժամկետով, համապատասխան դիմումի դեպքում՝ 5 տարի երկարաձգման իրավունքով:
- Մի քանի իրավաբանական կան ֆիզիկական անձանց կողմից զենքի եւ դրա փամփուշտների ցուցահանդեսի կամ աճուրդի կազմակերպման դեպքում նշված միջոցառման անցկացման ապահովման պարտականությունը կատարում է մասնակիցներից մեկը:
- Ցուցահանդես-վաճառքների, աճուրդների անցկացման ընթացքում առեւտրային կազմակերպությունն ու իրավաբանական անձինք իրավունք ունեն իրականացնելու զենքի եւ դրա փամփուշտների առք ու վաճառք:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիները նշված միջոցառումների ընթացքում իրավունք ունեն վաճառելու օրինական հիմքով եւ սեփականության իրավունքով իրենց պատկանող զենքը:

Լիցենզավորող մարմինը

- Զենքի արտադրության լիցենզիան տրամադրում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը՝ համաձայնեցնելով ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության հետ:
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն.
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375025, Նալբանդյան-130,
    - Հեռախոս՝ 528363:
- Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարություն.
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375001, Թումանյան - 5,
    - Հեռախոս՝ 52 93 49:

Լիցենզիա ստացողը

- Լիցենզիա կարող են ստանալ ՀՀ-ում գործող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք:
- Լիցենզիա ստացողը պարտավոր է՝
  - տարածքի սեփականատիրոջ հետ կնքել վարձակալության պայմանագիր զենքի եւ դրա փամփուշտների ցուցադրման, դրանց պահպանման վերաբերյալ,
  - օտարերկրյա մասնակիցների համար Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունից ստանալ թույլտվություն՝Հայաստանի Հանրապետության տարածք զենք ներկրելու կամ Հայաստանի Հանրապետությունից այն արտահանելու համար,
  - թույլ չտալ կողմնակի անձանց մուտքը զենքի եւ դրա փամփուշտների տեղաբաշխման ու պահման զետեղարաններ,
  - զենքը եւ դրա փամփուշտները բաց ցուցափեղկում կամ ստենդում տեղադրելու դեպքում ամեն օր ցուցահանդեսի կամ աճուրդի ավարտից հետո զենքն ու դրա փամփուշտները հանձնել դրանց պահպանումը եւ անձեռնմխելիությունն ապահովող հատուկ զետեղարաններ:
- Արգելվում է.
  - ցուցադրել ներքին գործերի մարմիններում չգրանցված զենքը,

- ցուցահանդեսում զենք եւ դրա փամփուշտները ցուցադրել այլ առարկաների հետ համատեղ, բացառությամբ զենքի արտադրության սարքերի եւ գործիքների, սպորտային, որսորդական ու ձկնորսական հարմարանքների, զենքի տեխնիկական սպասարկման եւ նորոգման պահեստամասերի, ինչպես նաեւ սահմանված կարգով կազմակերպված ցուցահանդեսում՝ պատմամշակութային ցուցանմուշների,
- զենք ու դրա փամփուշտները պահել զենքի եւ դրա փամփուշտների պահպանման պայմաններին չհամապատասխանող զետեղարաններում,
- ցուցահանդեսների (բացառությամբ ցուցահանդես-վաճառքների) ընթացքում իրականացնել զենքի եւ դրա փամփուշտների մեծածախ կամ մանրածախ վաճառք:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.**
  - դիմում իրավաբանական անձի ղեկավարի անունից, որի մեջ նշավում է տեղեկություններ հետեւյալ միջոցառումների մասին՝
    - ցուցադրման կազմակերպման լիակատար անվտանգություն,
    - զենքի հաշվառում,
    - զենքի պահպանություն,
  - վճարված պետական տուրքի անդորրագիրը,
  - կանոնադրության պատճենը,
  - պետական գրանցման վկայականի պատճենը,
- **Լիցենզիայի ժամկետի երկարաձգումը.**
  - լիցենզիայի ժամկետի երկարաձգման համար անհրաժեշտ է լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ ներկայացնել դիմում:
- **Վճարել պետական տուրքը,**
  - 24 հազար դրամ,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները՝**
  - լիցենզիա ստանալու մասին դիմումը քննարկվում է՝ դիմում տալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում նշված ժամկետը կարող է երկարաձգվել:
- **Որոշման ընդունումը.**
  - լիցենզիայի տրամադրման, ինչպես նաեւ լիցենզիայի ժամկետի երկարացման որոշումը կայացվում է ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից,
  - լիցենզիայի հայտի մերժման դեպքում մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները և իրավական հիմքերը, հայտատուն գրավոր տեղեկացվում է մերժման մասին,
  - լիցենզիայի հայտի մերժման մասին որոշումը հայտատուն իրավունք ունի գանգատարկել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը

- **Լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, եթե.**
  - իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամովին հրաժարվել լիցենզիայից,
  - իրավաբանական անձը լուծարվել է,
  - իրավաբանական կամ ֆիզիկական անձը բազմիցս (մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ) խախտել է կամ չի կատարել զենքի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերի պահանջները,
    - նման խախտումների առկայության դեպքում լիցենզավորող մարմինը նախապես գրավոր նախազգուշացնում է իրավաբանական կամ ֆիզիկական անձին վերջինիս կողմից թույլ տրված խախտումների մասին,
  - առաջացել են օրենքով նախատեսված լիցենզիաներ կամ թույլտվություններ ստանալու հնարավորությունը բացառող հանգամանքներ,

– իրավաբանական կամ ֆիզիկական անձը կատարել է իր տնօրինության տակ գտնվող քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրանց փամփուշտների այնպիսի կառուցվածքային փոփոխություններ, որոնց հետեւանքով փոխվել են դրանց ձգաբանական կամ մյուս տեխնիկական բնութագրերը:

- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով:**
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում, այդպիսին կրկին ստանալու խնդրանքով իրավաբանական անձինք կարող են դիմել լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու օրվանից հաշված երեք տարի հետո:**
- **Լիցենզիայից կամովին հրաժարվելու դեպքում այդպիսին կրկին ստանալու համար ժամկետներ չեն սահմանվում:**

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԵՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ զենքի մասին օրենքով, ՀՀ կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 673 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է ՀՀ տարածքում զենքի ձեռք բերման համար:**
- **Լիցենզավորման ենթակա չէ զենքի հետեւյալ տեսակների ձեռքբերումը.**
  - մեխանիկական փոշեցրիչները,
  - աերոզոլային եւ այլ սարքերը, որոնք լիցքավորված են արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով,
  - ոչ ավելի, քան 3 ջոուլ փողային էներգիայով օդաճնշիչ հրացանները, ատրճանակները (այդ թվում՝ թմբուկավոր ռեւոլվեր),
  - ոչ ավելի, քան 6 մմ տրամաչափի ազդանշանային ատրճանակները (այդ թվում՝ թմբուկավոր ռեւոլվեր) եւ դրանց փամփուշտները,
  - էլեկտրահարող սարքերը, կայծային պարպիչները, ոչ ավելի, քան 7,5 ջոուլ փողային էներգիայով,
  - մինչեւ 4,5 մմ տրամաչափով օդաճնշիչ զենքերը:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Քաղաքացիներին զենք ձեռք բերելու լիցենզիան տրվում է մինչեւ 5 տարի ժամանակով ու միաժամանակ համարվում է զենք պահելու եւ կրելու թույլտվություն, համապատասխան դիմումի դեպքում՝ 5 տարի երկարաձգման իրավունքով:**
  - Ողորկ երկարափող հրացանը լիցենզիայի հիման վրա ձեռք է բերվում առանց կրելու իրավունքի:
- **Այլ զենքերի ձեռք բերման լիցենզիան տրվում է 6 ամսով՝ եւս 6 ամիս երկարաձգելու հնարավորությամբ:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375025, Նալբանդյան-130,
    - Հեռախոս՝ 528363:
- **Զենքի ձեռքբերման լիցենզիա կարող են տալ ՀՀ ներքին գործերի նախաարության տարածքային մարմինները՝,բացառությամբ հետեւյալ տիպի զենքերի.**
  - ակոսափող հրազեն,
  - անփող հրազեն,
  - գազային ատրճանակներ,
  - թմբուկավոր ռեւոլվեր:

Լիցենզիա ստացողը

- **ՀՀ տարածքում քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրանց փամփուշտների ձեռք բերման իրավունք ունեն հետեւյալ սուբյեկտները.**
  - պետական ռազմականացված կազմակերպությունները,
  - հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք,
    - հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների կողմից օգտագործվող քաղաքացիական եւ ծառայողական զենքի տեսակը, ձեւը, մոդելը եւ քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,
  - զենքի արտադրությամբ կամ առեւտրով զբաղվող իրավաբանական անձինք,
  - զենքի հավաքածուներ կազմելով կամ դրանք ցուցադրելով զբաղվող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք,
  - մարզական կազմակերպությունները,
  - որսորդական տնտեսություն վարող կազմակերպությունները,

- ակոսափող որսորդական հրազեն իրավունք ունեն ձեռք բերել՝
- ուսումնական հիմնարկները,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,
  - ՀՀ քաղաքացիներն իրավունք ունեն ձեռք բերել զենքի հետեւյալ տեսակները (ոչ ավելի քան 5 միավոր քանակությամբ)՝
  - անփող հրազեն,
  - գազային ատրճանակներ (այդ թվում՝ թմբուկավոր ռեւոլվեր),
  - ազդանշանային զենք,
- օտարերկրյա քաղաքացիները.
  - օտարերկրյա քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են քաղաքացիական զենք ձեռք բերել լիցենզավորող մարմնի տված լիցենզիաներով՝ օտարերկրյա պետությունների դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչությունների միջնորդության հիման վրա, պայմանով, որ զենքը ձեռք բերելու օրվանից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում այն դուրս տարվի հանրապետությունից,
  - օտարերկրյա քաղաքացիները կարող են որսորդական կամ սպորտային զենք ներկրել միայն որսորդությամբ զբաղվելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձի հրավերի եւ նրա հետ կնքված որսորդության կոնտրակտի, ինչպես նաեւ սպորտային միջոցառումներին մասնակցելու հրավերի եւ ներքին գործերի հանրապետական մարմնի թույլտվության առկայության դեպքում: Այդ զենքը հանրապետության տարածքից պետք է դուրս տարվի կոնտրակտի կամ հրավերում նշված ժամկետում,
  - օտարերկրյա քաղաքացիներին արգելվում է զենքի բոլոր տեսակների, ձեւերի եւ մոդելների ներկրումը անձնական անվտանգության ապահովման, այլ անձանց կյանքի, առողջության եւ սեփականության պաշտպանության, բեռների ուղեկցման կամ սույն հոդվածի երրորդ մասում չնշված այլ նպատակներով, եթե դրանք նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:
- Քաղաքացիական զենք ձեռք բերելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացին:
- Սպորտային եւ որսորդական ողորկ-երկարափող հրազեն ու որսորդական օդաճնշիչ զենք ձեռք բերելու իրավունք ունի որսորդների հասարակական կազմակերպության անդամ-քաղաքացին:
- Ակոսափող որսորդական հրազեն կարող է ձեռք բերել որսորդության հետ կապված մասնագիտական գործունեությամբ զբաղվող, ռազմականացված կազմակերպության աշխատակից համարվող կամ ոչ պակաս հինգ տարի սեփականության իրավունքով ողորկ-երկարափող որսորդական հրազեն ունեցող եւ այդ ընթացքում որսորդության, զենքի արտադրության, առեւտրի, վաճառքի, ձեռք բերելու, փոխանցելու, հավաքածուներ կազմելու կամ դրանք ցուցադրելու, հաշվառելու, պահպանելու, կրելու, փոխադրելու, տեղափոխելու եւ օգտագործելու կանոնների հետ կապված իրավախախտումներ թույլ չտված քաղաքացին, որին սահմանված կարգով տրված է որսորդությամբ զբաղվելու իրավունք:
- Քաղաքացուն թույլատրվում է ձեռք բերել ոչ ավելի, քան երեք միավոր որսորդական ակոսափող հրազեն եւ հինգ միավոր որսորդական ողորկ-երկարափող հրազեն, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված զենքի տեսակները հավաքածուներ կազմելու օբյեկտ են:
- Որսորդական շեղբավոր սառը զենք ձեռք բերելու իրավունք ունի որսորդական հրազեն պահելու եւ կրելու թույլտվություն ստացած քաղաքացին: Ձեռք բերված որսորդական շեղբավոր սառը զենքը վաճառող կազմակերպությունն անմիջապես գրանցում է քաղաքացու որսորդությամբ զբաղվելու իրավունքը հաստատող փաստաթղթում:
- Զենքի հետազոտմամբ, մշակմամբ, փորձարկմամբ, պատրաստմամբ, նորոգմամբ, զենքի եւ դրա փամփուշտների գեղարվեստական ձեւավորմամբ, ինչպես նաեւ արտադրանքի գնդակադիմացկունության փորձարկմամբ զբաղվող իրավաբանական անձինք իրենց կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով իրավունք ունեն ձեռք բերել զենքի արտադրության լիցենզիայով եւ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով նախատեսված զենքի տեսակներ, ձեւեր եւ մոդելներ, իսկ զենքի առեւտրով զբաղվող իրավաբանական անձինք՝ քաղաքացիական եւ ծառայողական զենք, սպորտային կազմակերպությունները եւ ուսումնական հաստատությունները՝ սպորտային եւ որսորդական զենք, որսորդական տնտեսություն վարող ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները՝ որսորդական զենք:

- **Ստուգումները.**
  - Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողներին զենքը տրվում է իրավաբանական անձի ղեկավարի գրավոր հրամանով, եթե այդ աշխատողներն անցել են հատուկ պատրաստություն եւ ներքին գործերի մարմիններից ստացել զենք պահելու ու կրելու թույլտվություն,
    - այդ աշխատողները պարտավոր են պարբերաբար անցնել հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու իրենց պիտանիությունը որոշող ստուգումներ: Նշված աշխատողների հատուկ պատրաստությունն իրականացնում են ներքին գործերի մարմինները՝ պայմանագրային հիմունքներով:

- Ինքնապաշտպանական ողորկ-երկարափող եւ անփող հրազեն, գազային ատրճանակներ (այդ թվում՝ թմբուկավոր ռեւոլվեր) եւ ազդանշանային զենք առաջին անգամ ձեռք բերող անձինք, բացի զենք պահելու կամ պահելու եւ կրելու թույլտվություն ունեցող անձանցից, պարտավոր են բնակության վայրի ներքին գործերի մարմիններում անցնել ստուգում զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների իմացության շուրջ՝ ներքին գործերի հանրապետական մարմնի սահմանած ծրագրով:
- Սպորտային ողորկափող հրազեն եւ որսորդական զենք առաջին անգամ ձեռք բերող քաղաքացիները, որսորդությամբ զբաղվելու իրավունք վերապահող փաստաթուղթ ստանալիս պարտավոր են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած կազմակերպություններում, ներքին գործերի հանրապետական մարմնի հետ համաձայնեցված ծրագրով, ստուգում անցնել զենքի հետ վարվելու կանոնների իմացության շուրջ:

- **Լիցենզիա չի տրվում.**
  - 18 տարեկանը չլրացած քաղաքացուն,
  - զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների բացակայության մասին բժշկական եզրակացություն չներկայացնողներին,
  - դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց, որոնց դատվածությունն օրենքով սահմանված կարգով չի մարվել,
  - հանցագործություն կատարելու համար պատիժ կրողներին,
  - մեկ տարվա ընթացքում կրկնակի հասարակական կամ կառավարման սահմանված կարգի դեմ ուղղված վարչական իրավախախտումներ կատարողներին,
  - մշտական բնակության վայր չունեցողներին,
  - զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների իմացության շուրջ ստուգում անցնելու փաստը հաստատող, ինչպես նաեւ սույն օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնողներին:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.**
  - դիմում,
  - բժշկական եզրակացություն զենքի տիրապետմանը խոչընդոտող այնպիսի հիվանդությունների բացակայության մասին, որոնք կապված են տեսողության խախտման, հոգեկան հիվանդության, ալկոհոլամոլության կամ թմրամոլության հետ,
  - վճարված պետական տուրքի անդորրագիրը,
- **Զենքի գրանցումը.**
  - իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է զենքի ձեռք բերման օրվանից սկսած երկու շաբաթվա ընթացքում գրանցել զենքը ՀՀ ներքին գործերի նախարարությունում կամ նրա տարածքային մարմիններում:
- **Լիցենզիայի ժամկետի երկարաձգումը.**
  - լիցենզիայի ժամկետի երկարաձգման համար անհրաժեշտ է լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ ներկայացնել դիմում:
- **Վճարել պետական տուրքը.**
  - Զենքի յուրաքանչյուր միավորի ձեռքբերման, պահպանման թույլտվություն տալու համար՝
    - ֆիզիկական անձինք՝
      - 4 հազար դրամ,
    - իրավաբանական անձինք՝
      - 8 հազար դրամ,
  - որսորդական և գազային զենքի յուրաքանչյուր միավորը գրանցելու (վերագրանցելու) համար՝
    - ֆիզիկական անձինք՝
      - 20 հազար դրամ,
    - իրավաբանական անձինք՝
      - 8 հազար դրամ,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 4, 8 եւ 20 -ապատիկ համապատասխանաբար: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**

- լիցենզիա ստանալու մասին դիմումը քննարկվում է դիմում տալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում նշված ժամկետը կարող է երկարաձգվել:

- **Որոշման ընդունումը.**
  - լիցենզիայի տրամադրման, ինչպես նաեւ լիցենզիայի ժամկետի երկարացման որոշումը կայացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը,
  - լիցենզիայի հայտի մերժման դեպքում մերժման մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառները և իրավական հիմքերը, հայտատուն գրավոր տեղեկացվում է մերժման մասին,
  - լիցենզիայի հայտի մերժման մասին որոշումը հայտատուն իրավունք ունի գանգատարկել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը

- **Լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, եթե.**
  - իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամովին հրաժարվել լիցենզիայից,
  - իրավաբանական անձը լուծարվել է,
  - իրավաբանական կամ ֆիզիկական անձը բազմիցս (մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ) խախտել է կամ չի կատարել զենքի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերի պահանջները,
    - նման խախտումների առկայության դեպքում լիցենզավորող մարմինը նախապես գրավոր նախազգուշացնում է իրավաբանական կամ ֆիզիկական անձին վերջինիս կողմից թույլ տրված խախտումների մասին,
  - առաջացել են օրենքով նախատեսված լիցենզիաներ կամ թույլտվություններ ստանալու հնարավորությունը բացառող հանգամանքներ,
  - իրավաբանական կամ ֆիզիկական անձը կատարել է իր տնօրինության տակ գտնվող քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրանց փամփուշտների այնպիսի կառուցվածքային փոփոխություններ, որոնց հետեւանքով փոխվել են դրանց ձգաբանական կամ մյուս տեխնիկական բնութագրերը:
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով:**
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում, այդպիսին կրկին ստանալու խնդրանքով իրավաբանական անձինք կարող են դիմել լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու օրվանից հաշվված երեք տարին հետո:**
- **Լիցենզիայից կամովին հրաժարվելու դեպքում այդպիսին կրկին ստանալու համար ժամկետներ չեն սահմանվում:**

35. ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2000 թ. հուլիսի 29-ի թիվ 426 որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000թ. հուլիսի 27-ի թիվ 172 հրամանով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետևյալ ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - վիճակախաղերի՝ հրապարակային միջոցառումների կազմակերպում, որի ընթացքում կազմակերպիչը մասնակիցների միջև անցկացնում է վիճակախաղի շահման ֆոնդի խաղարկություն, ընդ որում շահումները կախված չեն նրա գործողություններից և կամքից, այլ բացառապես արդյունք են պատահականության.
    - խաղարկությունով վիճակախաղ՝ տոմսի շահող լինելու հանգամանքը պարզվում է այն ձեռք բերելուց և շահումների ֆոնդի խաղարկության անցկացումից հետո,
    - ոչ խաղարկությունով վիճակախաղ՝ տոմսի շահող լինելու հանգամանքը հնարավոր է պարզել անմիջապես այն ձեռք բերելուց հետո,
  - տոտալիզատոր՝ խաղ, որի մասնակիցը կանխագուշակում է խաղային, սպորտային, սոցիալապես նշանակալից իրավիճակի հնարավոր տարբերակը, ընդ որում, շահումը պայմանավորված է կանխագուշակման մասնակի կամ լրիվ համընկնումից տեղի ունեցած փաստով,
- **Լիցենզիա հարկավոր չի ետևյալ տնտեսական գործունեություն իրականացնելու համար.**
  - Մեկենասային վիճակախաղ՝ կազմակերպվում է ապրանքներ կամ ծառայություններ գովազդելու նպատակով, ընդ որում շահման ֆոնդն ամբողջությամբ ձևավորվում է մեկենասի (հովանավորի) կողմից:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **օտարերկրյա պետություններում կազմակերպված վիճակախաղերի տոմսերի իրացումը Հայաստանի Հանրապետությունում արգելվում է,**
- **լիցենզիան տրվում է անժամկետ,**
- **մեկ լիցենզիայի հիման վրա կարող է կազմակերպվել միայն մեկ վիճակախաղ,**
- **վիճակախաղերի կազմակերպման և անցկացման գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է տեղում ստուգումների կամ փաստաթղթային վերահսկողության միջոցով,**
- **փաստաթղթային վերահսկողություն իրականացնելու նպատակով ներկայացվում են տեղեկություններ (հաշվետվություններ),**
- **լիցենզիան չի կարող գրավադրվել կամ օտարվել,**
- **լիցնզիան այլ անձի կարող է փոխանցվել միայն անձի առանձնացման կամ բաժանման ձևով վերակազմակերպման դեպքերում: Իրավաբանական անձի առանձնացման դեպքում լիցենզիան պահպանում է լիցենզիա ստացած անձը, իսկ անձի բաժանման դեպքում ստեղծված անձինք կարող են դիմել նոր լիցենզիա ստանալու համար:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,
    - Հեռախոս՝ 59 53 04:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությունները,**
- **բացառությամբ կազմակերպչի միջնորդության հիման վրա լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու դեպքից, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելուց հետո մեկ տարվա ընթացքում լիցենզիա ստանալու համար իրավունք չունեն դիմել՝**
  - կազմակերպությունը, որի լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել,
  - լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հիմքերի արձանագրման պահին այդ կազմակերպության կանոնադրական կապիտալում մեկ երրորդից ավելի մասնակցություն ունեցող կազմակերպությունը,

- կազմակերպությունը, որի կանոնադրական կապիտալում մեկ երրորդից ավելի մասնակցությամբ որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունեցել է մեկ երրորդից ավելի մասնակցություն լիցենզիան ուժը կորցրած կազմակերպության կանոնադրական կապիտալում՝ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հիմքերի արձանագրման պահին:

- **Լիցենզիա ստացողը պարտավոր է՝**
  - չզբաղվել գործունեության այլ տեսակով,
  - նախքան վիճակախաղի գովազդի հրապարակումը դրա բովանդակությունը համաձայնեցնել լիցենզավորող մարմնի հետ, ընդ որում վերջինս չի տալիս իր համաձայնությունը, եթե գովազդում պարունակվում են թյուր կամ ապակողմնորոշող տեղեկություններ,
  - իրային շահումների խաղարկման դեպքում հայտարարել դրանց համարժեք դրամական շահումը և շահողի ցանկությամբ տրամադրել այն,
  - խաղարկությունով վիճակախաղի պայմաններով սահմանված ժամկետներում չպահանջված (չստացված) շահումների չափով ավելացնել հաջորդ խաղարկության շահման ֆոնդը,
  - վիճակախաղի պայմաններով այլ բան նախատեսված չլինելու դեպքում շահողի ցանկությամբ պահպանել նրա շահման փաստի և արժեքի գաղտնիությունը,
  - ՀՀ կառավարության 2000 թ. հուլիսի 29-ի թիվ 426 որոշմամբ հաստատված «վիճակախաղերի չիրացված տոմսերի հաշվառման և ոչնչացման» կարգով հաշվառել և ոչնչացնել չիրացված վիճակախաղերի տոմսերը,
  - բացառությամբ տոտալիզատորների կազմակերպման դեպքերի, ապահովել խաղարկությանը մասնակցող տոմսերի ընդհանուր արժեքի առնվազն կեսի չափով շահումների ֆոնդի (առանց դրանում ներառվող վիճակախաղի տոմսերի արժեքի) ձևավորումն ու մասնակիցների միջև բաշխումը,
  - վիճակախաղերը կազմակերպել և անցկացնել կազմակերպչի սահմանած և լիցենզիա տրամադրողի հետ համաձայնեցված կանոնակարգին համապատասխան,
  - լիցենզիայի գործողության ընթացքում վիճակախաղի անցկացման կանոնակարգի փոփոխման դեպքում փոփոխված կանոնակարգը համաձայնեցնել լիցենզիա տրամադրողի հետ՝ նախքան դրա կիրառումը,
  - ապահովել վիճակախաղի տոմսերի (տեղեկատվության կրիչ, որն անհրաժեշտ է շահող կամ չշահող համարվելու փաստը որոշելու համար) վավերապայմանները, որոնք են.
    - վիճակախաղի կազմակերպչի ֆիրմային անվանումը,
    - վիճակախաղի անվանումը,
    - վիճակախաղի տոմսի գինը,
    - վիճակախաղի տոմսի հերթական համարը և սերիան,
    - շահումը որոշելու կարգը,
    - շահումների վճարման վայրը, կարգը և ժամկետը,
    - թողարկման կամ խաղարկության հերթական համարը,
    - խաղարկությունով վիճակախաղերի դեպքում խաղարկության անցկացման վայրը,
  - վիճակախաղի տոմսերի իրացումն սկսելուց 10 օր առաջ լիցենզիա տրամադրողին ներկայացնել վիճակախաղի տոմսի վերջնական նմուշը,
  - կանոնադրության մեջ փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում մեկամսյա ժամկետում դրա մասին ծանուցել լիցենզիա տրամադրողին՝ ներկայացնելով փոփոխությունները,
  - լիցենզիա ստանալուց հետո յուրաքանչյուր հաջորդ տարվա համար վճարել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան տուրքի գումարը՝ նախքան այդ ժամկետի սկիզբը,
    - վիճակախաղեր կազմակերպելու համար տարեկան տուրքը կազմում է 25 մլն դրամ:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել համապատասխան հայտ,**
- **կցել հետևյալ փաստաթղթերը.**
  - դիմողի կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները,
  - դիմողի իրավասու մարմնի որոշումը տվյալ վիճակախաղի կազմակերպման և անցկացման մասին,
  - իրային շահումների դեպքում մատակարարի հետ պայմանագիրը կամ իրային շահումների առկայության մասին տեղեկանքը՝ նշելով թիվը, տեսակը և արժեքը,

- վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ երկու օրինակից, հաստատված դիմողի կառավարման բարձրագույն մարմնի կողմից,որտեղ պետք է արտացոլվեն.
  - դիմողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և գտնվելու վայրը,
  - վիճակախաղի անվանումը,
  - վիճակախաղի տեսակը,
  - վիճակախաղի կազմակերպման և անցկացման նկարագիրը,
  - վիճակախաղի խաղարկության անցկացման հրապարակման կարգը,
  - վիճակախաղի տոմսի գինը,
  - վիճակախաղի տոմսերի ընդհանուր թիվը կամ կանխատեսվող թիվը,
  - վիճակախաղի շահումների ընդհանուր գումարը,
  - շահումների բաշխումը՝ ըստ շահումների տեսակների և քանակի,
  - վիճակախաղի խաղարկությունների անցկացման հաճախականությունը,
  - տոտալիզատորի համար՝ կանխագուշակվող տարբերակները և տեսակները,
  - վիճակախաղի խաղարկությունների անցկացման վայրը,
  - վիճակախաղի տոմսի նկարագիրը,
  - շահումները տալու վայրն ու ժամկետը,
  - վիճակախաղի կազմակերպչի իրավունքներն ու պարտականությունները,
  - վիճակախաղի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները,
- վիճակախաղի տոմսի նմուշի աշխատանքային օրինակը,
- վիճակախաղի կազմակերպման համար դիմողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի օրենքով սահմանված հաշվապահական հաշվետվությունները,

- **վճարել պետական տուրքը,**
  - 25 մլն դրամ,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 25000-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - Դիմումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը նշանակում է դիմումի քննարկում՝ առնվազն 3 օր առաջ դիմողին գրավոր կամ բանավոր տեղեկացնելով քննարկման վայրի (հասցեի), օրվա ու ժամի մասին,
  - դիմումի մերժման կամ բավարարման դեպքում լիազոր մարմին ներկայացված փաստաթղթերը չեն վերադարձվում:
- **Որոշման ընդունումը.**
  - Լիազոր մարմինը քննարկումն իրականացնում է անկախ դիմողի ներկայացուցչի ներկայությունից:
- **Հայտի բավարարումը.**
  - Մերժման հիմքերի բացակայության դեպքում լիցենզիա տրամադրողը որոշում է ընդունում բավարարել լիցենզիա ստանալու դիմումը և այդ որոշումը եռօրյա ժամկետում տրամադրում կամ փոստով ուղարկում է դիմողին,
  - դիմումում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների՝ վրիպումների, ոչ իրավաբանական բնույթի անճշտությունների, նման այլ բացթողումների առկայության դեպքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը որոշում է ընդունում բավարարել լիցենզիա ստանալու դիմումը վերապահումով, որ դիմողը մեկամսյա ժամկետում կվերացնի նկատված թերությունները: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը լիցենզիա ստանալու դիմումը վերապահումով բավարարելու մասին որոշումը եռօրյա ժամկետում տրամադրում կամ փոստով ուղարկում է դիմողին,
  - դիմումը վերապահումով բավարարելու դեպքում դիմողը պարտավոր է այդ որոշման պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում լիցենզիա տրամադրողին ներկայացնել ուղղված փաստաթղթերը,

- լիցենզիա ստանալու դիմումը բավարարելու որոշում ընդունելու դեպքում լիցենզիան դիմողին է տրամադրվում օրենքով սահմանված պետական տուրքի առաջին տարեկան վճարումը կատարելուց և ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում, վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելուց հետո,
- եթե դիմումը վերապահումով բավարարելու դեպքում թերությունները վերացնելու մասին տեղեկությունները կամ լիցենզիա ստանալու համար պետական տուրքի առաջին տարեկան վճարման անդորրագիրը լիցենզիա տրամադրողին են ներկայացվում սահմանված ժամկետներից ուշ, ապա, որպես լիցենզիան հանձնելու պայման, դիմողից հայտարարագիր է պահանջվում այն մասին, որ անցած ժամանակահատվածում լիցենզիա ստանալու դիմումին կից փաստաթղթերը չեն կորցրել իրենց իրավական ուժը:

- **Մերժումը.**
  - Լիցենզիա ստանալու դիմումը մերժվում է, եթե՝
    - դիմումը և կից փաստաթղթերը չեն համապատասխանում վերոնշյալ պահանջներին, դրանցում ներկայացված են կեղծ տեղեկություններ,
    - լիցենզիայի հայցորդն ունի հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորություններ,
    - վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգի դրույթները չեն համապատասխանում վերոնշյալ պահանջներին,
    - կազմակերպությունը վերը նշված պայմաններից ելնելով իրավունք չունի ստանալ լիցենզիա,
  - լիցենզիա ստանալու դիմումը մերժելու մասին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության որոշումը դրա կայացման հիմքերի հետ եռօրյա ժամկետում տրամադրվում կամ փոստով ուղարկվում է դիմողին:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ ուժը կորցրած ճանաչելը, տուգանքները եւ նախազգուշացումները

- **Նախազգուշացում և խախտումները վերացնելու մասին հանձնարարականներ՝**
  - Նախազգուշացումը որպես պատասխանատվության միջոց կիրառվում է, եթե խախտվել է սահմանված տեղեկությունների (հաշվետվությունների) ներկայացման ու հրապարակման կարգը,
  - տեղում ստուգումների կամ փաստաթղթային վերահսկողության միջոցով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը արձանագրում է թույլ տրված խախտումը և նախազգուշացնում է կազմակերպչին,
  - նախազգուշացումը նախատեսում է նաև թույլ տրված խախտումը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության սահմանած ժամկետում վերացնելու կամ ապագայում նման խախտումը կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական, որի կատարումը պարտադիր է:

- **Տուգանքը**
  - Տուգանքը գանձվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության որոշմամբ, իսկ եթե կազմակերպիչը համաձայն չէ տուգանքի նշանակման վերաբերյալ որոշման հետ, ապա նախարարությունը տուգանքը գանձելու հայցով դիմում է դատարան,
  - տուգանքը որպես պատասխանատվության միջոց կիրառվում է, եթե կազմակերպիչը՝
    - չի ապահովել սահմանված շահումների ֆոնդի մեծության նվազագույն չափը՝ դրա չհամալրված (չբաշխված) մասի կրկնակի չափով,
    - խախտել է գովազդի կամ իրային շահումների նկատմամբ սահմանված պահանջը՝ հիսուն հազար դրամի չափով,
    - չի ավելացրել չպահանջված (չստացված) շահումների չափով հաջորդ խաղարկության շահման ֆոնդը՝ չտեղափոխված մասի կրկնակի չափով,
    - չի պահպանել շահողի գաղտնիության սահամանված պահանջը՝ երկու հարյուր հազար դրամի չափով,
    - նախազգուշացում կիրառելուց հետո 2 տարվա ընթացքում կրկնել է նույն խախտումը՝ հարյուր հազար դրամի չափով,
  - տուգանքի կիրառումից հետո երկու տարվա ընթացքում տուգանքի կիրառման համար հիմք հանդիսացող խախտումը շարունակելու կամ նման նոր խախտում (բացառությամբ սահմանված շահումների ֆոնդի մեծության նվազագույն չափի խախտման) թույլ տալու դեպքում տուգանքի չափն ավելացվում է մեկ միլիոն դրամով,
  - տեղեկությունները (հաշվետվությունները) ուշ ներկայացնելու կամ դրանցում ոչ արժանահավատ տվյալներ արտացոլելու համար ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կարող է կազմակերպչի ղեկավարների նկատմամբ տուգանք նշանակելու հայցով դիմել դատարան՝ հարյուր հազար դրամը չգերազանցող չափով:

- **Լիցենզիայի գործողության կասեցումը.**
  - ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կասեցնում է լիցենզիայի գործողությունը, եթե կազմակերպիչը՝
    - սահմանված կարգով չի հաշվառել և ոչնչացրել չիրացված վիճակախաղերի տոմսերը,

- զբաղվում է գործունեության այլ տեսակով,
- չի վճարել տարեկան տուրքի գումարը,
- խախտել է վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգը,
- ունի հարկերի և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորություններ,

– լիցենզիայի գործողության կասեցման սահմանված ժամկետը չի կարող գերազանցել 45 օրը,

– լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում կազմակերպիչը չի կարող իրականացնել վիճակախաղերի կազմակերպման և անցկացման գործունեություն, բացառությամբ շահումների տրման գործողությունների,

– լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում կազմակերպչի կողմից նման գործունեություն իրականացնելը դիտարկվում է որպես առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվել և առաջացնում է պատասխանատվություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

– լիցենզիայի գործողության կասեցմանը նախարարությունը անդրադառնում է կասեցման համար հիմք հանդիսացած խախտումների վերացման վերաբերյալ կազմակերպչի կողմից տեղեկացնելուց հետո՝15 օրվա ընթացքում, իսկ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում նման տեղեկություններ չներկայացնելու դեպքում՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետից հետո 15 օրվա ընթացքում,

– եթե նախարարությունը լիցենզիայի գործողության կասեցմանն անդրադառնում է 45 օրից հետո, ապա անկախ այդ ժամկետից, լիցենզիայի գործողությունը կասեցված է մնում մինչև լիազոր մարմնի կողմից դրան անդրադառնալը, բայց ոչ ուշ 15 օրից: Այդ ժամկետում լիցենզիայի գործողության կասեցմանը նախարարության կողմից չանդրադառնալու դեպքում կասեցումը համարվում է դադարեցված, իսկ լիցենզիայի գործողությունը՝ վերականգնված:

- **Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը.**

– ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը լիցենզիան ուժը կորցրած է ճանաչում, եթե կազմակերպիչը՝

- սահմանված տեղեկությունների (հաշվետվությունների) փաստաթղթերում ներկայացրել է կեղծ տվյալներ,
- լիցենզիա ստանալու համար դիմումը ներկայացնելիս կամ դրանից հետո մինչև լիցենզիան ստանալու պահը խեղաթյուրել է պահանջվող տեղեկությունները կամ ներկայացրել է ոչ լիարժեք տեղեկություններ, եթե դրանց ճիշտ կամ լիարժեք ներկայացումը կհանգեցներ լիցենզիա ստանալու դիմումի մերժման,
- տուգանք կիրառելուց հետո երկու տարվա ընթացքում երրորդ անգամ թույլ է տվել տուգանքի կիրառման համար հիմք հանդիսացող խախտում,
- լիցենզիայի գործողության կասեցման համար հիմք հանդիսացող խախտում թույլ տալուց հետո երկու տարվա ընթացքում թույլ է տվել խախտում, որը հիմք է լիցենզիայի գործողությունը կրկին կասեցնելու համար,

– լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում կազմակերպչի պատշաճ ծանուցմամբ իրականացվող քննարկման արդյունքներով, եթե առկա է վերոնշյալ հիմքերից որևէ մեկը,

– ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մտադրության մասին կազմակերպչին տեղեկացնում է քննարկումից առնվազն 15 օր առաջ, գրության մեջ նշելով.

- լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու իրավական հիմքերն ու հետևանքները,
- այն փաստերն ու փաստաթղթերը, որոնք հիմք են ծառայում լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար (կցելով դրանց պատճենները),
- քննարկման վայրը, ամսաթիվը և ժամը,
- լիազոր մարմնի այն պաշտոնատար անձի անունն ու պաշտոնը, որին կարող են դիմումներ և միջնորդություններ ներկայացվել,

– լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը քննարկվում է անկախ կազմակերպչի ներկայացուցչի ներկայությունից:

- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հետևանքները.**

– Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը նախարարությունը հնգօրյա ժամկետում հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով և դրա կայացման հիմքերի հետ եռօրյա ժամկետում տրամադրում կամ փոստով ուղարկում է կազմակերպչին,

– որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, եթե դրանով այլ ժամկետ չի սահմանված,

– լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել նաև կազմակերպչի միջնորդության հիման վրա, եթե նախարարության հիմնավոր կարծիքով նա ի վիճակի է կատարել շահումներից բխող իր բոլոր պարտավորութունները,

– լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից կազմակերպիչը.

- դադարեցնում է վիճակախաղի կազմակերպման և անցկացման գործունեությունը,

- հնգօրյա ժամկետում լիցենզիա տրամադրողին է վերադարձնում լիցենզիայի բնօրինակը,
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության սահմանած ժամկետում ապահովում է շահումների տրամադրումը,
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության սահմանած ժամկետում ապահովում է իրացված խաղարկության չմասնակցած (չխաղարկված) տոմսերի հետգնումը,

36. ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կարգավորվում է «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 1998 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 657 որոշմամբ հաստատված կանոնակարգով և ՀՀ կառավարության 2000 թ. հուլիսի 29-ի թիվ 428 որոշմամբ

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է շահումով խաղեր և խաղատներ կազմակերպելու համար.**
  - շահումով խաղի կազմակերպում է համարվում խաղի իրականացման միջոցով եկամուտ (շահույթ) կամ օգտակար այլ արդյունք ստանալու նպատակով շահումով խաղի սարքավորումների տեղադրումն ու շահագործումը կամ շահումով խաղին խաղացողների մասնակցության համար այլ կերպ հնարավորության ստեղծումը:
  - շահումով խաղ է համարվում ծրագրավորված կամ մեխանիկական խաղային ավտոմատի կամ նման այլ սարքավորման միջոցով իրականացվող խաղը, որին մասնակցում է միայն խաղացողը: Ընդ որում, այս դեպքում շահումով խաղերի թվին չեն դասվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վիճակախաղ համարվող խաղերն ու խաղարկությունները:
    - Կենդանի խաղ է համարվում ցանկացած խաղ, որին բացի խաղացողից մասնակցում է նաեւ խաղարկողը, կամ որին միաժամանակ մասնակցելու հնարավորություն է ընձեռված մի քանի խաղացողների՝ առանց խաղարկողի մասնակցության (բացառությամբ մեքենայացված խաղերի):
    - Մեքենայացված խաղ է համարվում ծրագրավորված մեքենայի, համակարգչի, խաղային ավտոմատի կամ նման այլ սարքավորման միջոցով իրականացվող խաղը, որին մասնակցում է (են) միայն խաղացողը (խաղացողները):
    - Սեղանի խաղ է համարվում հարմարեցված սեղանի (խաղասեղանի) վրա իրականացվող կենդանի կամ ոչ կենդանի խաղը: Եթե խաղի տվյալ տեսակը սեղանի հատուկ հարմարեցում չի պահանջում, ապա տվյալ խաղի համար փաստացի օգտագործվող սեղանը համարվում է հարմարեցված:
    - Ըստ նախատեսվող շահումների ձեւերի՝ շահումով խաղերը դասակարգվում են իրայինի, դրամականի եւ դրամաիրայինի:
  - Խաղատուն կազմակերպել է համարվում խաղասրահում շահումով խաղերի անցկացումը:
  - Խաղատուն է համարվում այն խաղասրահը՝
    - որի ներքին կամ արտաքին կողմից ցուցադրվում է «խաղատուն» բառը, դրա ածանցյալը կամ թարգմանությունը, կամ՝
    - որտեղ անց է կացվում կենդանի խաղ (խաղեր) եւ (կամ) շահագործվում է քսանից ավելի մեքենայացված խաղ:
  - Խաղասեղանը կամ խաղային ավտոմատը համարվում է շահագործվող, եթե այն տեղադրված է խաղասրահում, շահագործման համար պատրաստի վիճակում անկախ դրա փաստացի շահագործման հանգամանքից:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Լիցենզիան տրվում է անժամկետ:**
- **Լիցենզիան անձին իրավունք է տալիս շահումով խաղեր կամ խաղատուն կազմակերպել միայն մեկ՝ լիցենզիայում նշված հասցեում (վայրում): Ընդ որում՝**
  - շահումով խաղեր կազմակերպելու լիցենզիան իրավունք չի տալիս խաղատուն կազմակերպել,
  - խաղատան լիցենզիան իրավունք է տալիս նույն խաղասրահում ներկայացվող պահանջների պահպանմամբ կազմակերպել շահումով ցանկացած խաղ:
- **Մի քանի հասցեներում խաղասրահներ շահագործելու համար միեւնույն անձը պարտավոր է սահմանված կարգով դիմել եւ ստանալ մեկից ավելի լիցենզիա:**
- **Լիցենզիան չի կարող գրավադրվել կամ օտարվել: Իրավաբանական անձի առանձնացման դեպքում լիցենզիան պահպանում է լիցենզիա ստացած անձը, իսկ անձի բաժանման դեպքում ստեղծված անձինք կարող են սահմանված կարգով դիմել նոր լիցենզիա ստանալու համար:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,

- Հեռախոս՝ 59 53 04:

Լիցենզիա ստացողը

- **Շահումով խաղեր կամ խաղատներ կազմակերպելու իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրայի կազմակերպությունները:**
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է.**
  - ապահովել խաղասրահի արտաքին պատուհաններից դեպի ներս անտեսանելիությունը,
  - ապահովել խաղասրահի անվտանգությունը եւ հակահրդեհային ազդարարման համակարգերով դրա տարածքի պաշտպանությունը,
  - պատահականությամբ չպայմանավորված շահումներով խաղեր կազմակերպելիս նախօրոք տեղեկացնել եւ դրա մասին բացատրել խաղացողներին,
  - խաղացողի առաջին իսկ պահանջի դեպքում տրամադրել շահումը,
  - ապահովել խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն կանխիկ հայկական դրամով կամ բանկային քարտով,
  - խաղասրահում կազմակերպվող խաղերի կանոնները փակցնել խաղասրահում, տեսանելի տեղում (բացառությամբ այն խաղային ավտոմատների, որոնք իրենց վրա պարունակում են այդ կանոնների նկարագրությունը),
  - խաղատուն կամ շահումով խաղ կարող է կազմակերպվել Երեւան քաղաքի վարչական սահմաններից ուղիղ գծով առնվազն 50 կմ եւ մարզկենտրոնների վարչական սահմաններից ուղիղ գծով առնվազն 10 կմ հեռավորության վրա,
  - կազմակերպիչը խաղասրահի տարածքը պաշտպանելու նպատակով պարտավոր է ունենալ կամ վարձել անվտանգության ծառայություն: Անվտանգության ծառայության աշխատողները պետք է ակնհայտորեն տարբերվեն իրենց միասնական նմուշի համազգեստով,
  - խաղասրահներում կարող են տեղադրվել եւ շահագործվել միայն այն սարքավորումները եւ խաղասեղանները (բացառությամբ հարմարեցում չպահանջող սեղանների), որոնք ունեն արտադրողի, արտադրողի երկրի (վայրի) առեւտրաարդյունաբերական պալատի կամ իրավասու այլ կազմակերպության կողմից տրված ծագման սերտիֆիկատ եւ տեխնիկական անձնագիր, ինչպես նաեւ միայն այն խաղային ավտոմատները, որոնց շահագործումից ստացված հասույթի մեջ շահումների ծրագրավորված համախառն մեծությունը կազմում է այդ հասույթի ընդհանուր գումարի առնվազն 86 տոկոսը,
  - կազմակերպիչը պարտավոր է խաղացողներին տրամադրել կամ մատչելի դարձնել խաղի կանոններն ու պայմանները, ինչպես նաեւ ապահովել խաղի հրապարակայնությունը: Խաղասրահում տեսանելի տեղում պետք է փակցված լինեն համապատասխան լիցենզիայի եւ դրա հավելվածի պատճենները,
  - խաղատուն կազմակերպողպարտավոր է խաղացողների համար խաղասրահում ապահովել բրոշյուրի կամ գրավոր այլ ձեւով տրված նախազգուշացում խաղատուն հաճախելու բացասական հետեւանքների մասին (ընտանեկան անախորժություններ, ընտանեկան բյուջեի նվազում, պարտքերի առաջացում եւ այլն)՝ նախարարության կողմից սահմանված տեքստին համապատասխան,
  - խաղերը պետք է կազմակերպվեն նախարարությունում գրանցված շահումով խաղի կազմակերպման կանոններին համապատասխան,
  - կազմակերպվող յուրաքանչյուր առանձին տեսակի խաղի համար կազմակերպիչը պետք է սահմանված կարգով ընդունի եւ գրանցի տվյալ տեսակի շահումով խաղի կազմակերպման կանոնները: Նախարարությունը պետք է ապահովի, որպեսզի միանուն խաղերի համար Հայաստանի Հանրապետությունում գործեն նույն կանոնները, ընդ որում, կազմակերպիչն ազատ է քայլերի մեծության եւ շահումների չափի ընտրության հարցերում,
  - խաղատան մուտքը պետք է հսկվի պահպանության ծառայության կողմից,
  - խաղատան կազմակերպիչը պարտավոր է միջոցներ ձեռնարկել բացառելու քսանմեկ տարին չլրացած ֆիզիկական անձանց մուտքը խաղատուն, ինչպես նաեւ վերջիններիս մասնակցությունը որեւէ խաղի,
  - լիցենզիան ստանալու պահին խաղատան կազմակերպչի կանոնադրական հիմնադրամի փաստացի համալրված մասը պետք է կազմի առնվազն 10 մլն հայկական դրամ, իսկ շահումով խաղի կազմակերպչինը՝ առնվազն 1 մլն հայկական դրամ,
  - շահումով խաղ կամ խաղատուն կազմակերպողը լիցենզիա ստանալուց հետո յուրաքանչյուր հաջորդ մեկ տարվա համար վճարում է տարեկան պետական տուրքի գումարը՝ նախքան այդ ժամկետի սկիզբը:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել.**
  - դիմում՝ երկու օրինակից, որում նշվում են՝
    - դիմողի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը եւ գտնվելու վայրը,

    - պետական գրանցման վկայականի տվյալները,
    - խաղասրահի հասցեն,
    - խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով),
    - իրականացվող խաղերի տեսակները (մեքենայացված, սեղանի եւ (կամ) կենդանի),
    - նախատեսված շահումների ձեւերը (դրամական, իրային, դրամաիրային),
    - խաղային սարքավորումների եւ խաղասեղանների թիվը, տեսակները, սերիան, դրանց ծագման սերտիֆիկատի ու տեխնիկական անձնագրի համարները,
    - հայցվող լիցենզիայի տեսակը (խաղատան կամ շահումով խաղի),
    - հայտարարություն սեփական պահպանության ծառայություն ունենալու կամ այն վարձելու մասին,
    - դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,
  - դիմողի հիմնադիր փաստաթղթերի պատճենները (պատճենը),
  - խաղասրահի տարածքի սեփականության կամ վարձակալության (օգտագործման) իրավունքի վկայականի պատճենը,
  - շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների, խաղասեղանների ծագման սերտիֆիկատների եւ տեխնիկական անձնագրերի պատճենները,
  - իրային շահումների դեպքում՝ մատակարարի հետ կնքված պայմանագիրը կամ իրային շահումների առկայության վերաբերյալ տեղեկանքը՝ ըստ քանակի, տեսակի եւ արժեքի,
  - պահպանության ծառայություն վարձելու դեպքում՝ համապատասխան պայմանագրի բնօրինակը,
  - պահպանիչ եւ հակահրդեհային ազդարարման համակարգի տեխնիկական անձնագիրը եւ այն տեղադրելու համար պատասխանատու անձի տեղեկանքը խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,
  - հայտարարություն կանոնադրական հիմնադրամի փաստացի համալրված մեծության վերաբերյալ,
  - շահումով խաղի կազմակերպման կանոնները՝ հաստատված դիմողի կառավարման բարձրագույն մարմնի կողմից, որը պետք է բովանդակի՝
    - շահումով խաղի 1 տոմսի (ժետոնի) գինը,
    - խաղի անցկացման կարգը,
    - շահումները տալու վայրը եւ ժամկետը,
    - շահումների տեսակները,
    - խաղացողի իրավունքներն ու պարտականությունները,
    - վեճերի լուծման կարգը:
- **Լիցենզիա ստանալու համար նոր ստեղծվող ձեռնարկությունը լիազոր մարմին է ներկայացնում՝**
  - դիմում՝ երկու օրինակից, որում նշվում են՝
    - դիմողի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը եւ գտնվելու վայրը (նախատեսվող իրավաբանական հասցեն),
    - հայցվող լիցենզիայի տեսակը (խաղատան կամ շահումով խաղի),
    - խաղասրահի հասցեն,
    - խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով),
    - իրականացվող խաղերի տեսակները (մեքենայացված, սեղանի եւ (կամ) կենդանի),
    - նախատեսված շահումների ձեւերը (դրամական, իրային, դրամաիրային),
    - խաղային սարքավորումների, խաղասեղանների նախատեսվող թիվը, տեսակները,
    - հայտարարություն սեփական պահպանության ծառայություն ստեղծելու կամ այն վարձելու մտադրության մասին,
    - դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,
  - հիմնադիրների կողմից հաստատված հիմնադիր փաստաթղթերի պատճենները,
  - տարածքի սեփականատիրոջ կամ վարձակալի համաձայնությունը տվյալ տարածքը վարձակալությամբ կամ ենթավարձակալությամբ դիմողին տալու վերաբերյալ՝ կցելով տվյալ տարածքի նկատմամբ իր իրավունքը հաստատող համապատասխան վկայականը,

- շահումով խաղի կազմակերպման կանոնները՝ հաստատված դիմողի կառավարման բարձրագույն մարմնի կողմից, որը պետք է բովանդակի՝
  - շահումով խաղի 1 տոմսի (ժետոնի) գինը,
  - խաղի անցկացման կարգը,
  - շահումները տալու վայրը եւ ժամկետը,
  - շահումների տեսակները,
  - խաղացողի իրավունքներն ու պարտականությունները,
  - վեճերի լուծման կարգը,
- եթե դիմողը սահմանված կարգով ստացել է լիցենզիա եւ դիմում է նոր հասցեով խաղասրահում շահումով խաղ կամ խաղատուն կազմակերպելու լիցենզիա ստանալու համար, կամ ունի շահումով խաղի կազմակերպման լիցենզիա եւ դիմել է խաղատուն կազմակերպելու լիցենզիա ստանալու համար, ապա դիմումին կցվում են միայն այն փաստաթղթերը, որոնք բացակայել են գործող լիցենզիայի ստացման համար ներկայացված փաստաթղթերի թվում: Այս դեպքում դիմողը ներկայացնում է գրավոր հայտարարություն, որ նախկինում ներկայացված փաստաթղթերում որեւէ փոփոխության անհրաժեշտություն չկա՝ հղում կատարելով նախկինում ներկայացված համապատասխան փաստաթղթերին,

- **վճարել տարեկան պետական տուրքը,**
  - 25 մլն դրամ՝ խաղատների գործունեություն կազմակերպելու դեպքում,
  - 5 մլն դրամ՝ շահումով խաղեր կազմակերպելու դեպքում:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 25000-ապատիկ և 5000-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը.**
  - դիմումն ու կից փաստաթղթերն առձեռն ստանալիս նախարարությունը դիմումը ներկայացնող անձի ներկայությամբ ստուգում է փաստաթղթերի առկայությունը (ըստ դիմումին կից ցանկի), դիմումի երկու օրինակի վրա համապատասխան նշումներ կատարում եւ ընդունում այն: Ընդունված դիմումի մեկ օրինակը վերադարձվում է (փոստով առաքվում է) դիմողին:
- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - դիմումն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում նախարարությունը պարտավոր է նշանակել քննարկում առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով դիմողին քննարկման վայրի (հասցեն), ամսաթվի ու ժամի մասին եւ վերջինիս հնարավորություն ընձեռել մասնակցելու քննարկմանը,
  - քննարկման մասին դիմողը կարող է տեղեկացվել գրավոր կամ հեռախոսով:
- **Որոշման ընդունումը.**
  - նախարարությունը հարցը քննում է դիմողին տեղեկացված օրն ու ժամին՝ անկախ դիմողի ներկայացուցչի ներկայությունից: Նախարարությունը պարտավոր չէ ստուգել դիմողի անունից քննարկմանը ներկայացած անձի լիազորությունները:
- **Հայտի բավարարումը.**
  - մերժման հիմքերի բացակայության դեպքում լիազոր մարմինը բավարարում է դիմումը՝ այդ մասին կայացնելով համապատասխան որոշում,
  - դիմումում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպումներ, ոչ իրավաբանական անճշտություններ եւ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում դիմումը նախարարության որոշմամբ կարող է բավարարվել վերապահումով, որ լիցենզիան դիմողին կտրվի տվյալ թերությունների վերացման դեպքում,
  - լիցենզիա տալու որոշման պատճենը 3 օրվա ընթացքում առաքվում է դիմողին կամ առձեռն տրվում վերջինիս ներկայացուցչին,
  - նոր ստեղծվող ձեռնարկության համար նախարարության որոշումը համարվում է 120 օր ժամկետով տրված նախնական լիցենզիա Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցվելու համար, առանց տվյալ գործունեությամբ զբաղվելու իրավունքի,
  - դիմումը տալու պահին Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցված դիմողը պարտավոր է որոշման պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պետական տուրքի վճարման անդորրագիրը, որից հետո նախարարությունը 3-օրյա ժամկետում պարտավոր է դիմողին տրամադրել համապատասխան լիցենզիա (շահումով խաղի կամ խաղատան կազմակերպում): Եթե նախարարությունը կայացրել է դիմումը վերապահումով բավարարելու որոշում, ապա դիմողը պարտավոր է այդ

որոշման պատճենը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում նախարարություն ներկայացնել համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը եւ ուղղված փաստաթղթերը, որից հետո վերջինս 3-օրյա ժամկետում պարտավոր է դիմողին տրամադրել համապատասխան լիցենզիա (շահումով խաղի կամ խաղատան կազմակերպում),

– նոր ստեղծվող ձեռնարկությունը լիցենզիա ստանալու հայտի բավարարման դրական որոշումն ստանալուց հետո 120 օրվա ընթացքում պարտավոր է նախարարություն ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

  - շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների, խաղասեղանների ծագման սերտիֆիկատների եւ տեխնիկական անձնագրերի պատճենները,
  - իրային շահումների դեպքում՝ մատակարարի հետ կնքված պայմանագիրը կամ իրային շահումների առկայության վերաբերյալ տեղեկանքը՝ ըստ քանակի, տեսակի եւ արժեքի,
  - պահպանության ծառայություն վարձելու դեպքում՝ համապատասխան պայմանագրի բնօրինակը,
  - պահպանիչ եւ հակահրդեհային ազդարարման համակարգի տեխնիկական անձնագիրը եւ այն տեղադրելու համար պատասխանատու անձի տեղեկանքը խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,
  - հայտարարություն կանոնադրական հիմնադրամի փաստացի համալրված մեծության վերաբերյալ,

– լիազոր մարմինը պարտավոր է փաստաթղթերն ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում սահմանված կարգով քննարկել փաստաթղթերը եւ կայացնել որոշում: Լիցենզավորման հետագա ընթացակարգն իրականացվում է դիմումը տալու պահին պետռեգիստրում գրանցված ձեռնարկությունների դեպքում:

- **Մերժումը.**

– քննարկման արդյունքում նախարարությունը պատշաճ հիմնավորմամբ մերժում է դիմումը, եթե՝

  - դիմումում կամ կից փաստաթղթերում ներկայացված տեղեկությունները լիարժեք չեն՝ նշելով բացակայող կամ ոչ լիարժեք տեղեկությունները,
  - դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը,
  - Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն դիմողն իրավունք չունի իրականացնել շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի գործունեություն,
  - լիցենզիայի հայցորդն ունի հարկային եւ օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորություններ,

– մերժումը ձեւակերպվում է համապատասխան որոշմամբ, որի պատճենը 3 օրվա ընթացքում առաքվում է դիմողին կամ առձեռն տրամադրվում վերջինիս ներկայացուցչին:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ ուժը կորցրած ճանաչելը

- **Կասեցումը.**

– նախարարությունը կասեցնում է լիցենզիայի գործողությունը, եթե.

  - կազմակերպիչը սահմանված ժամկետներում չի վճարել պետական տուրքի տարեկան գումարը,
  - շահումով խաղերը կազմակերպվել եւ անցկացվել են կազմակերպչի սահմանած եւ լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին ոչ համապատասխան,
  - խախտվել է միայն լիցենզիայում նշված հասցեում խաղատան կամ շահումով խաղի կազմակերպման պահանջը,
  - կազմակերպիչն ունի հարկային եւ օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորություններ,

– լիցենզիայի գործողության կասեցման լիազոր մարմնի սահմանած ժամկետը չի կարող գերազանցել 45 օրը,

– կազմակերպիչը լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում չի կարող իրականացնել շահումով խաղերի կամ խաղատների կազմակերպման գործունեություն: Լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում կազմակերպչի կողմից նման գործունեություն իրականացնելը դիտարկվում է որպես առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվել եւ առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

– նախարարությունը լիցենզիայի գործողության կասեցմանն անդրադառնում է կասեցման համար հիմք հանդիսացած խախտումների վերացման վերաբերյալ կազմակերպչի կողմից նախարարությանը տեղեկացնելուց հետո 15 օրվա ընթացքում, իսկ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում նման տեղեկություններ չներկայացնելու դեպքում՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետից հետո 15 օրվա ընթացքում,

– եթե նախարարությունը լիցենզիայի գործողության կասեցմանն անդրադառնում է կասեցման՝ 45 օրը չգերազանցող սահմանված ժամկետի ավարտից հետո, ապա, անկախ այդ ժամկետից, լիցենզիայի գործողությունը կասեցված է մնում մինչեւ լիազոր մարմնի կողմից դրան անդրադառնալը, բայց 15 օրվա ժամկետից ոչ ուշ,

- նախատեսված ժամկետում լիցենզիայի գործողության կասեցմանը նախարարության կողմից չանդրադառնալու դեպքում կասեցումը համարվում է դադարեցված, իսկ լիցենզիայի գործողությունը՝ վերականգնված:

- **Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը.**
  - Լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝
    - կազմակերպիչը գործել է շահումով խաղի կազմակերպման կանոնների պահանջների խախտմամբ եւ նախարարության նախազգուշացմամբ տրված կամ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետում չի վերացրել դրանք, կամ կասեցման համար հիմք հանդիսացող խախտում թույլ տալուց հետո երկու տարվա ընթացքում թույլ է տվել խախտում, որը հիմք է հանդիսանում լիցենզիայի գործողությունը կասեցնելու համար, կամ
    - կազմակերպիչը լիցենզիայի գործողության կասեցման համար հիմք հանդիսացող խախտում թույլ տալուց հետո՝ երկու տարվա ընթացքում թույլ է տվել խախտում, որը հիմք է լիցենզիայի գործողությունը կրկին կասեցնելու համար, կամ
    - լիցենզիա ստանալու համար դիմումը ներկայացնելիս կամ դրանից հետո մինչեւ լիցենզիան ստանալու պահը կազմակերպիչը խեղաթյուրել է պահանջվող տեղեկությունները կամ ներկայացրել ոչ լիարժեք տեղեկություններ, եթե դրանց ճիշտ կամ լիարժեք ներկայացման դեպքում դիմողը լիցենզիան չէր ստանա, կամ
    - կազմակերպիչը դիմել է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջնորդությամբ,
  - ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու իր մտադրության մասին կազմակերպչին գրավոր տեղեկացնում է քննարկումից առնվազն 20 օր առաջ, գրության մեջ նշելով՝
    - լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու իրավական հիմքերն ու հետեւանքները,
    - նախարարությանը հայտնի այն փաստերն ու փաստաթղթերը, որոնք հիմք են ծառայում լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար (կցելով այդ փաստաթղթերի պատճենները),
    - քննարկման վայրը (հասցեն), սենյակի համարը, ամսաթիվը եւ ժամը,
    - այն պաշտոնատար անձի անունն ու պաշտոնը, որին կարող են դիմումներ եւ միջնորդություններ ներկայացվել:
  - գրության մեջ նշված օրը, ժամին եւ վայրում նախարարությունը քննարկում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը՝ անկախ տվյալ կազմակերպչի ներկայությունից,
  - քննարկման ընթացքում կազմակերպչի ներկայացուցիչն իրավունք ունի առարկություններ եւ ապացույցներ ներկայացնել,
  - նախարարությունը, հիմնավորված անհրաժեշտության դեպքում, իր կամ կազմակերպչի ներկայացուցչի միջնորդությամբ կարող է մինչեւ մեկ ամիս ժամկետով հետաձգել կամ ընդհատել հարցի քննարկումը՝ այդ մասին տեղեկացնելով կազմակերպչին,
  - նախարարությունը քննարկմանը մասնակցող անձի փաստարկները լսելուց եւ ներկայացված փաստաթղթերն ու այլ ապացույցներ ուսումնասիրելուց հետո ընդունում է մանրամասն հիմնավորված որոշում՝ հիմք ընդունելով հաստատված փաստերն ու վերը նշված դրույթները,
  - եթե նախարարությունը քննարկման արդյունքում որոշում է տվյալ կազմակերպչի լիցենզիան ուժը կորցրած ճանաչել, ապա պարտավոր է հանձնարարել կազմակերպչին անմիջապես դադարեցնել տվյալ գործունեությունը: Տվյալ որոշումը պարտադիր է կատարման համար եւ անմիջապես ուղարկվում է տվյալ կազմակերպչին, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն, Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստր եւ հրապարակվում է առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլում կամ հեռուստատեսությամբ,
  - կազմակերպիչը պարտավոր է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշումն ստանալուց հետո անմիջապես՝
    - դադարեցնել լիցենզավորված գործունեությունը,
    - միջոցներ ձեռնարկել նախարարության հետ համաձայնեցված ժամկետներում իր անվանումից հանելու «խաղատուն» կամ «կազինո» բառերը եւ իր տարածքից հեռացնելու տվյալ բառերը պարունակող բոլոր ցուցանակներն ու նշանները,
    - 5-օրյա ժամկետում նախարարություն վերադարձնել լիցենզիայի բնօրինակը,
  - լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով: Բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը, քանի դեռ տվյալ որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ չկա օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռ:

37. ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 1999 թվականի մարտի 8-ի թիվ 92 որոշմամբ հաստատված կարգով և 2000թ. հուլիսի 27-ի թիվ 173 հրամանով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է գրավատնային գործունեություն, այսինքն քաղաքացիների անձնական օգտագործման շարժական գույքի գրավով ապահովված կարճաժամկետ վարկեր տրամադրելու գործունեություն, բացառությամբ բանկային գործունեության, իրականացնելու համար:**

Առանձնահատկությունները

- **Գրավատունը լիցենզիա ստանալուց հետո յուրաքանչյուր հաջորդ մեկ տարվա համար վճարում է ,,Պետական տուրքի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան տուրքի գումարը՝ նախքան այդ ժամկետի սկիզբը:**
- **Տրված լիցենզիան ուժի մեջ է մինչեւ գրավատների մասին համապատասխան օրենքը ուժի մեջ մտնելը կամ նշված օրենքով սահմանված ժամկետը:**
- **Լիցենզիան վերապահում է միայն որոշակի տարածքում (գրավատան տարածքի հասցեով) գրավատնային գործունեություն իրականացնելու եւ որպես գրավատուն հանդես գալու իրավունքը, եւ միայն այն անձին, որի անվանումը նշված է լիցենզիայում:**
- **Լիցենզիան տրվում է ոչ մրցութային կարգով:**
- **Լիցենզիան չի կարող փոխանցվել այլ անձի, գրավադրվել կամ օտարվել:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,
    - Հեռախոս՝ 59 53 04:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք եւ օտարերկրյա իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաճյուղերը:**
- **Գրավատնային գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ է պահպանել հետեւյալ պահանջները.**
  - գրավատունն իրավունք ունի գրավատնային գործունեություն իրականացնել միայն լիցենզիայում նշված գրավատան տարածքում (հասցեում): Յուրաքանչյուր մասնաճյուղի համար գրավատունը պարտավոր է դիմել լիցենզիայում լրացում կատարելու համար,
  - գրավատունը դրամական միջոցների անվտանգ տեղափոխումն ապահովելու նպատակով պարտավոր է ինկասացիոն ծառայությունների մասին պայմանագիր կնքել նման ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող անձի հետ,
  - նյութական արժեքների անվտանգ պահպանության նպատակով գրավատան տարածքը պետք է պաշտպանված լինի պահպանիչ եւ հակահրդեհային ազդարարման համակարգերով: Գրավատունն իր տարածքը պաշտպանելու նպատակով պարտավոր է նաեւ պահպանության ծառայությունն ունենալ կամ վարձել պայմանագրի հիման վրա,
  - գրավատունը պարտավոր է հօգուտ գրավատուների, իր հաշվին ապահովագրել գրավ ընդունած գույքը դրա արժեքի լրիվ գումարով:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել դիմում (2 օրինակից), որում նշվում են.**
  - դիմողի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, իրավաբանական հասցեն (գտնվելու վայրը), հեռախոսի համարը,
  - պետական գրանցման վկայականի համարը, ամսաթիվը, ամիսը, տարին,
  - գրավատան տարածքի հասցեն, հեռախոսի համարը,
  - դիմողի ներկայացուցչի անձնագրային տվյալները,

- հայտարարություն սեփական պահպանության ծառայություն ունենալու կամ այն վարձելու մասին,
- այն փաստաթղթերի ցանկը, որոնք ներկայացնելն անհրաժեշտ է լիզենզավորման գործընթացի պահանջների բավարարումը հիմնավորելու համար:

- **Դիմումին կից ներկայացվում են.**
  - պետական ռեգիստրում գրանցված հիմնադիր փաստաթղթերի պատճենները,
  - մասնակիցների ընդհանուր ժողովի կամ ընկերության խորհրդի կողմից հաստատված վարկավորման ընդհանուր պայմանները,
  - ինկասացիոն ծառայությունների մասին պայմանագիրը,
  - եթե գրավատունը պահպանության ծառայություն է վարձում, ապա համապատասխան պայմանագրի պատճենը, իսկ սեփական պահպանության ծառայության դեպքում՝ պահպանության ծառայության անձնակազմի (աշխատակիցների) ցուցակը,
  - պահպանիչ եւ հակահրդեհային ազդարարման համակարգը տեղադրելու համար պատասխանատու անձի տեղեկանքը գրավատան տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,
  - գրավատան տարածքի նկատմամբ դիմողի իրավունքի (սեփականություն, վարձակալություն, ենթավարձակալություն, անհատույց օգտագործում եւ այլն) համապատասխան վկայականի պատճենը,
  - նյութական արժեքների պահառության պայմանագիրը՝ կնքված բանկի հետ, եթե գրավատունը չունի սեփական դրամապահոց,
  - ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերության հետ կնքված գրավ ընդունած գույքի ապահովագրության գլխավոր պոլիսը (պոլիսները), որի պայմանները հաստատված են ապահովագրական գործունեությունը կանոնակարգող լիազորված պետական կառավարման մարմնի կողմից:
- եթե դիմողը ստացել է լիցենզիա եւ դիմում է նոր հասցեով գրավատան տարածքի համար լիցենզիայում լրացում կատարելու համար, ապա դիմումին կցվում են միայն տվյալ գրավատան տարածքին վերաբերող փաստաթղթերը:

- **Վճարել պետական տուրքը,**
  - 100 հազար դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 100-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - դիմումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում նախարարությունը պարտավոր է քննարկել այն՝ առնվազն հինգ օր առաջ տեղեկացնելով դիմողին քննարկման վայրի (հասցե, սենյակ), ամսաթվի ու ժամի մասին եւ վերջինիս հնարավորություն ընձեռնել մասնակցելու քննարկմանը,
  - դիմողը կարող է տեղեկացվել գրությամբ կամ հեռախոսով:
- **Դիմումի բավարարումը.**
  - նախարարությունը գործը քննարկում է անկախ դիմողի ներկայացուցչի ներկայության: Նախարարությունը պարտավոր չէ ստուգել դիմողի անունից քննարկմանը ներկայացրած անձի լիազորությունները,
  - մերժման հիմքերի բացակայության դեպքում, նախարարությունը պարտավոր է բավարարել դիմումը՝ այդ մասին կայացնելով համապատասխան որոշում (եզրակացություն),
  - դիմումում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (սխալների, վրիպումների, եւ նման այլ բացթողումների) առկայության դեպքում դիմումը նախարարության կողմից կարող է բավարարվել վերապահումով, առ այն, որ լիցենզիան դիմողին կտրվի տվյալ թերությունների վերացման դեպքում,
  - որոշման պատճեն երեք օրվա ընթացքում ուղարկվում կամ տրամադրվում է դիմողին կամ վերջինիս ներկայացուցչին,
  - դիմողն իրավունք ունի հայտի բավարարման վերաբերյալ որոշման պատճենը ստանալուց հետո նախարարությունից ստանալ լիցենզիան ներկայացնելով՝
    - լիցենզիայի տրամադրման համար "Պետական տուրքի մասին" օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,
    - ուղղված փաստաթղթերը, եթե դիմումը բավարարվել է վերապահումով:
  - նախարարությունը պարտավոր է այդ փաստաթղթերը ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում դիմողին կամ վերջինիս ներկայացուցչին ուղարկել կամ հանձնել լիցենզիայի բնօրինակը, եթե՝

- վճարվել է պետական տուրքի օրենքով սահմանված գումարը.
- ներկայացված փաստաթղթերը հիմնավորում են կատարված վերապահման մեջ նշված թերությունների վերացումը,

– եթե չի բավարարվում այս պահանջը նախարարությունը մերժում է դիմումը:

▪ **Մերժումը.**

– Քննարկման արդյունքներով նախարարությունը պատշաճ հիմնավորմամբ մերժում է դիմումը, եթե՝
  - դիմումում կամ կից փաստաթղթերում ներկայացված տեղեկությունները լիարժեք չեն, նշելով բացակայող կամ անլիարժեք տեղեկությունները, կամ
  - դիմումում կամ կից փաստաթղթերում ներկայացված տեղեկությունները վկայում են այն մասին, որ դիմողը չի բավարարում կամ գրավատունը չի բավարարի սահմանված պահանջները, մանրամասն նշելով այն պահանջները, որոնք բավարարված չեն,

– մերժումը ձեւակերպվում է համապատասխան որոշմամբ (եզրակացությամբ), որի պատճեն երկու օրվա ընթացքում ուղարկվում կամ տրամադրում է դիմողին կամ վերջինիս ներկայացուցչին: Դիմումի մերժումը կարող է բողոքարկել դատական կարգով: Դիմումի մերժման դեպքում նախարարությանը ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ ուժը կորցրած ճանաչելը

▪ **Լիցենզիայի գործողության կասեցումը.**

– նախարարությունը կասեցնում է լիցենզիայի գործողությունը, եթե գրավատունը սահմանված ժամկետում չի վճարել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան տուրքի գումարը,

– լիցենզիայի գործողության կասեցման նախարարության սահմանած ժամկետը չի կարող գերազանցել 45 օրը,

– լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում գրավատունը չի կարող իրականացնել գրավատնային գործունեություն: Լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում գրավատան կողմից նման գործունեություն իրականացնելը դիտարկվում է որպես առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվել եւ առաջացնում է պատասխանատվություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

– լիցենզիայի գործողության կասեցմանը նախարարությունն անդրադառնում է կասեցման համար հիմք հանդիսացած խախտումների վերացման վերաբերյալ գրավատան կողմից նախարարությանը տեղեկացնելուց հետո 15 օրվա ընթացքում, իսկ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում նման տեղեկություններ չներկայացնելու դեպքում՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետից հետո 15 օրվա ընթացքում,

– վերը նշված ժամկետներում լիցենզիայի գործողության կասեցմանը նախարարության կողմից չանդրադառնալու դեպքում կասեցումը համարվում է դադարեցված, իսկ լիցենզիայի գործողությունը՝ վերականգնված,

▪ **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը.**

– լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝
  - լիցենզիայի տրամադրման օրվան հաջորդող ժամանակահատվածում արձանագրվել է սահմանված հաշվետվության ներկայացումը ուշացնելու կամ այն չներկայացնելու 3 դեպք, կամ
  - գրավատունը նախարարության կողմից տրված նախազգուշացմամբ սահմանված ժամկետներում չի վերացրել օրենքների կամ իրավական այլ ակտերի պահանջների արձանագրված խախտումները, կամ
  - նախազգուշացումից հետո 3 ամսվա ընթացքում գրավատունը թույլ է տվել օրենքների կամ իրավական այլ ակտերի պահանջների խախտում, որով վտանգել է վարկառուների օրինական շահերը, կամ
  - լիցենզիա ստանալու համար դիմումը ներկայացնելիս կամ դրանից հետո մինչեւ լիցենզիան ստանալու պահը դիմողը խեղաթյուրել է պահանջվող տեղեկությունները կամ ներկայացրել է անլիարժեք տեղեկություններ, եթե դրանց ճիշտ կամ լիարժեք ներկայացման դեպքում դիմողը լիցենզիա չէր ստանա, կամ
  - գրավատունը դիմել է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջնորդությամբ, կամ
  - լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ընթացքում գրավատունը չի վերացրել կասեցման համար հիմք հանդիսացող խախտումը, կամ կասեցման համար հիմք հանդիսացող խախտում թույլ տալուց հետո երկու տարվա ընթացքում թույլ է տվել լիցենզիայի գործողությունը կասեցնելու համար հիմք հանդիսացող խախտում,

– լիցենզիան նախարարության կողմից ուժը կորցրած է ճանաչվում գրավատան նախնական տեղեկացմամբ իրականացվող քննարկման արդյունքներով, եթե առկա է վերը նշված հիմքերից թեկուզ մեկը,

– նախարարությունը լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու իր մտադրության մասին գրավոր տեղեկացնում է տվյալ անձին քննարկումից առնվազն քսան օր առաջ, գրության մեջ նշելով՝
  - լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու իրավական հիմքերն ու հետեւանքները,
  - նախարարությանը հայտնի այն փաստերն ու փաստաթղթերը, որոնք հիմք են ծառայում լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար (կցելով այդ փաստաթղթերի պատճենները),

- քննարկման վայրը (հասցեն եւ սենյակը), ամսաթիվը եւ ժամը,

– գրության մեջ նշված օրը, ժամին եւ վայրում նախարարությունը քննում է հարցը անկախ տվյալ գրավատան ներկայացուցչի ներկայությունից,

– քննարկման ընթացքում մասնակցող անձը իրավունք ունի առարկություններ եւ ապացույցներ ներկայացնել, միջնորդություններ հարուցել, ինչպես նաեւ հարցեր տալ,

– նախարարությունը հիմնավորված անհրաժեշտության դեպքում, իր կամ քննարկմանը մասնակցող անձի միջնորդությամբ կարող է որոշակի ժամկետով հետաձգել կամ ընդհատել քննարկումը՝ այդ մասին տեղեկացնելով քննարկմանը մասնակցող անձին,

– քննարկմանը մասնակցող անձի փաստարկները լսելուց եւ ներկայացված փաստաթղթերն ու այլ ապացույցները ուսումնասիրելուց հետո նախարարությունը հիմնավորված որոշում է ընդունում՝ հիմք ընդունելով հաստատված փաստերն ու վերոհիշյալ դրույթները,

– եթե նախարարությունը քննարկման արդյունքում որոշում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչել, ապա պարտավոր է հրամանով հանձնարարել տվյալ գրավատանը անմիջապես դադարեցնել իր գործունեությունը: Տվյալ հրամանը պարտադիր է կատարման համար եւ անմիջապես ուղարկվում է տվյալ գրավատանը, պետական եկամուտների նախարարությանը, պետական ռեգիստրի մարմիններին եւ հրապարակվում է մամուլում: Ընդ որում՝ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելուց հետո նախկինում ծագած գրավատան պարտավորությունները եւ պահանջները չեն դադարում եւ կարգավորվում են օրենսդրությանը համաձայն,

– գրավատունը լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանը ստանալուց հետո անմիջապես պարտավոր է՝

  - դադարեցնել գրավատնային գործունեությունը եւ միջոցներ ձեռնարկել նախարարության հետ համաձայնեցված ժամկետում իրացնելու շարժական գույքի գրավով ապահովված վարկերը,

  - միջոցներ ձեռնարկել նախարարության հետ համաձայնեցված ժամկետներում իր անվանումից հանելու "գրավատուն" կամ "լոմբարդ" բառերը եւ իր տարածքից հեռացնելու տվյալ բառերը պարունակող բոլոր ցուցանակներն ու նշանները,

  - հինգօրյա ժամկետում նախարարությանը վերադարձնել լիցենզիան (բնօրինակը),

– լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանը կարող է բողոքարկվել դատարանում: Բողոքարկումը չի կասեցնում հրամանի պարտադիր ուժը, քանի դեռ այն ուժը չի կորցրել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով:

38. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 1998 թվականի հունվարի 7-ի թիվ 3 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման համար:**
- **Տվյալ ընթացակարգով լիցենզավորման ենթակա են գործունեությունների հետեւյալ տեսակները՝**
  - արժեթղթերի առուծախ իր անունից այլ անձանց հաշվին կամ այլ անձանց անունից եւ վերջիններիս հաշվին (բրոքերային գործունեություն՝ կոմիսիայի կամ հանձնարարության պայմանագրի հիման վրա),
  - արժեթղթերի առուծախ իր անունից եւ իր հաշվին՝ արժեթղթերի գնման կամ վաճառքի գների հրապարակային հայտարարման միջոցով, այդ արժեթղթերը պարտադիր գնելու կամ վաճառելու պարտավորությամբ (դիլերային գործունեություն),
  - իր անունից պարգեւավճարով իր տիրապետմանը հանձնված այլ անձի պատկանող եւ նրա օգտին կամ վերջինիս կողմից նշված երրորդ անձի օգտին արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված միջոցների հավատարմագրային կառավարում (արժեթղթերի հավատարմագրային կառավարման (տրաստային) գործունեություն),
  - ներդրողներին եւ այլ անձանց արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման եւ շրջանառության վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցում (արժեթղթերի շուկայում խորհրդատվական գործունեություն),
  - թողարկողի արժեթղթերի իրացման նպաստող գործունեություն՝ նախօրոք նշված ժամկետում վերավաճառելու նպատակով թողարկողի արժեթղթերը գնելու, նախօրոք նշված ժամկետում թողարկողի չիրացված արժեթղթերը գնելու պարտավորություն ստանձնելու միջոցով կամ առանց այդպիսի պարտավորության թողարկման, տեղաբաշխման գործունեություն (անդերռայթինգ),
  - անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման համակարգը կազմող տվյալների հավաքում, ֆիքսում, մշակում, պահպանում եւ տրամադրում (անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման գործունեություն),
  - սահմանված տեղում եւ ժամկետներում, իր կողմից հաստատված կանոններով արժեթղթերի հրապարակային սակարկությունների կազմակերպում եւ արժեթղթերի գնանշում (բորսայական գործունեություն):

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիայի գործողության ժամկետը չի սահմանափակվում,**
- **արժեթղթերի շուկայում իրականացվող գործունեության յուրաքանչյուր տեսակի համար տրվում է առանձին լիցենզիա,**
- **արժեթղթերի շուկայում գործունեություն իրականացնող ձեռնարկությունները (այդ թվում՝ բաժնետիրական ընկերությունները) եւ անհատ ձեռներեցները (այսուհետեւ՝ լիցենզավորված անձինք) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված մարմին են ներկայացնում իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվություններ,**
- **լիցենզավորող մարմինն արժեթղթերի շուկայում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց համար կարող է սահմանել կանոնադրական հիմնադրամի եւ սեփական կապիտալի նվազագույն չափեր,**
- **լիցենզիան չի կարող փոխանցվել կամ օտարվել:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողով.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Հանրապետության 5,
    - Հեռախոս՝ 54 56 79:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ.**
  - ինվեստիցիոն բրոքերային գրասենյակը՝
    - արժեթղթերի առուծախ իր անունից այլ անձանց հաշվին կամ այլ անձանց անունից եւ վերջիններիս հաշվին (բրոքերային գործունեություն՝ կոմիսիայի կամ հանձնարարության պայմանագրի հիման վրա),

- ինվեստիցիոն ընկերությունը՝
  - արժեթղթերի առուծախ իր անունից եւ իր հաշվին արժեթղթերի գնման կամ վաճառքի գների հրապարակային հայտարարման միջոցով, այդ արժեթղթերը պարտադիր գնելու կամ վաճառելու պարտավորությամբ (դիլերային գործունեություն),
  - թողարկողի արժեթղթերի իրացման նպաստող գործունեություն՝ նախօրոք նշված ժամկետում վերավաճառելու նպատակով թողարկողի արժեթղթերը գնելու, նախօրոք նշված ժամկետում թողարկողի չիրացված արժեթղթերը գնելու պարտավորություն ստանձնելու միջոցով կամ առանց այդպիսի պարտավորության թողարկման, տեղաբաշխման գործունեություն (անդերռայթինգ),
- անկախ ինվեստիցիոն բրոքերը՝
  - արժեթղթերի առուծախ իր անունից այլ անձանց հաշվին կամ այլ անձանց անունից եւ վերջիններիս հաշվին (բրոքերային գործունեություն՝ կոմիսիայի կամ հանձնարարության պայմանագրի հիման վրա),
- անկախ ինվեստիցիոն դիլերը՝
  - արժեթղթերի առուծախ իր անունից եւ իր հաշվին արժեթղթերի գնման կամ վաճառքի գների հրապարակային հայտարարման միջոցով, այդ արժեթղթերը պարտադիր գնելու կամ վաճառելու պարտավորությամբ (դիլերային գործունեություն),
- հավատարմագրային կառավարման (տրաստային) ընկերությունը՝
  - իր անունից պարգեւավճարով իր տիրապետմանը հանձնված այլ անձի պատկանող եւ նրա օգտին կամ վերջինիս կողմից նշված երրորդ անձի օգտին արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված միջոցների հավատարմագրային կառավարում (արժեթղթերի հավատարմագրային կառավարման (տրաստային) գործունեություն),
- ինվեստիցիոն խորհրդատվական գրասենյակը՝
  - ներդրողներին եւ այլ անձանց արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման եւ շրջանառության վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցում (արժեթղթերի շուկայում խորհրդատվական գործունեություն).
- թողարկող կազմակերպությունը՝
  - ներդրողներին եւ այլ անձանց արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման եւ շրջանառության վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցում (արժեթղթերի շուկայում խորհրդատվական գործունեություն),
- անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող (իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող) անձը՝
  - անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման համակարգը կազմող տվյալների հավաքում, ֆիքսում, մշակում, պահպանում եւ տրամադրում (անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման գործունեություն).
- ֆոնդային բորսան (ֆոնդային ստորաբաժանում ունեցող այլ բորսա)՝
  - սահմանված տեղում եւ ժամկետներում, իր կողմից հաստատված կանոններով արժեթղթերի հրապարակային սակարկությունների կազմակերպում եւ արժեթղթերի գնանշում (բորսայական գործունեություն):

- **Համատեղումը.**
  - ինվեստիցիոն բրոքերային գրասենյակ, ինվեստիցիոն ընկերություն, տրաստային (հավատարմագրային) ընկերություն, ինվեստիցիոն խորհրդատվական գրասենյակ եւ թողարկման կազմակերպություն հանդիսացող լիցենզավորված անձինք արժեթղթերի շուկայում կարող են համատեղել ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԻ առաջին հինգ ենթակետերում նշված գործունեության տեսակները,
  - բրոքերային գործունեությունը համատեղվում է դիլերային գործունեության հետ, եթե այն իրականացվում է ֆոնդային բորսայում,
  - անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող եւ ֆոնդային բորսա (ֆոնդային ստորաբաժանում ունեցող այլ բորսա) հանդիսացող լիցենզավորված անձինք չեն կարող համատեղել վերը նշված գործունեությունների տարբեր տեսակներ,
  - գործունեության տվյալ տեսակներն իրականացնող լիցենզավորված անձինք միաժամանակ չեն կարող համատեղել իրենց գործունեությունն առեւտրաարտադրական գործունեության որեւէ տեսակի եւ սպասարկման ոլորտի որեւէ ծառայության հետ,
  - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԻ առաջին հինգ ենթակետերում նշված գործունեության տեսակներն իրականացնող լիցենզավորված անձինք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան լիցենզիա ստանալուց հետո կարող են իրականացնել նաեւ արտարժույթի առուծախի գործառնությունները:

- **Որակավորումը.**
  - արժեթղթերի շուկայում գործունեություն իրականացնելու համար ձեռնարկության (այդ թվում՝ բաժնետիրական ընկերության) գործադիր տնօրենը, նրա տեղակալները, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները

(բացառությամբ տեխնիկական սպասարկմամբ զբաղված կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների ու գլխավոր հաշվապահի) եւ այն աշխատողները, որոնք իրականացնելու են գործառնություններ արժեթղթերի հետ ու մատուցելու են խորհրդատվական ծառայություններ, ինչպես նաեւ անկախ ինվեստիցիոն բրոքերներն ու դիլերները, պետք է արժեթղթերի շուկայի տեսչության կողմից որակավորված լինեն որպես արժեթղթերի շուկայի մասնագետ՝ ստանալով համապատասխան որակավորման հավաստագիր,

– վերոհիշյալ պահանջները տարածվում են նաեւ լիազորված բանկերի վրա՝ արժեթղթերի շուկայում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց աշխատողներին (կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ եւ աշխատողներ, որոնք իրականացնում են գործառնություններ արժեթղթերի հետ) ներկայացվող որակավորման պահանջների մասով,

– վերոհիշյալ պահանջները տարածվում են նաեւ ինվեստիցիոն հիմնադրամների կառավարիչների վրա:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - լիցենզիա ստանալու համար ձեռնարկությունները (այդ թվում՝ բաժնետիրական ընկերությունները (նոր ստեղծվողների համար՝ հիմնադիրները) եւ անհատ ձեռներեցները (այսուհետեւ՝ հայտատու) լիացենզավորող մարմին են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝
    - դիմում,
    - տեղեկություններ դիմորդի ղեկավարների մասին,
    - տեղեկություններ դիմորդի բաժնային արժեթղթերի սեփականատերերի և խորհրդատուների մասին,
    - տեղեկություններ դիմորդի մասնակցության մասին,
    - տեղեկություններ դիմորդի կազմում կամ նրա անունից մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ,
    - տեղեկություններ դիմորդի կապիտալի և ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ՝
      - գործող ձեռնարկությունների համար,
      - նոր ստեղծվող ձեռնարկությունների համար,
    - տեղեկություններ դիմորդի աշխատանքային տարածքի վերաբերյալ,
      - համապատասխան որակավորման հավաստագրերի պատճենները,
- **վճարել պետական տուրքը,**
  - ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  - իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:
  - Տվյալ ընթացակարգով լիցենզավորման ենթակա յուրաքանչյուր գործունեության տեսակի համար անհրաժեշտ է վճարել առանձին:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12 եւ 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - Արժեթղթերի հանձնաժողովը վերը նշված փաստաթղթերը ներկայացնելու պահից 30-օրյա ժամկետում պարտավոր է տալ լիցենզիա կամ ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ դիտողություններ ու առարկություններ՝ նշելով դիտողությունների եւ առարկությունների պատճառները եւ իրավական հիմքերը,
  - ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ դիտողություններ եւ առարկություններ տրվում են, եթե՝
    - չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին,
    - ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն եւ լրացումների կարիք ունեն,
  - հայտատուն գրավոր դիտողությունները եւ առարկություններն ստանալուց հետո լիազորված մարմին է ներկայացնում համապատասխան փաստաթղթերը՝ անհրաժեշտ փոփոխություններով եւ լրացումներով,
  - նշված փաստաթղթերը 90 օրվա ընթացքում չներկայացվելու դեպքում հայտը համարվում է մերժված:
- **Որոշման ընդունումը.**
  - լիացենզավորող մարմինը հայտատուին լիցենզիա է տալիս համապատասխան փաստաթղթերը (անհրաժեշտ փոփոխություններով եւ լրացումներով) ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում, եթե փաստաթղթերում կատարված փոփոխությունները եւ լրացումները համապատասխանում են Հայաստանի

Հանրապետության օրենսդրության պահանջներին, հակառակ դեպքում լիազորված մարմինը մերժում է հայտը՝ նշելով մերժման պատճառները եւ իրավական հիմքերը,

– լիցենզավորված անձը լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին պարտավոր է 15-օրյա ժամկետում տեղեկացնել լիազորված մարմնին,

- **Մերժումը.**
  - հայտատուն լիցենզիա ստանալու համար կարող է նոր հայտ ներկայացնել միայն լիազորված մարմնի կողմից լիցենզիայի հայտը գրավոր մերժվելու օրվանից 3 ամիս հետո,
  - աննպատակահարմարության շարժառիթներով լիցենզիա չտալն արգելվում է,
  - լիցենզիայի հայտի գրավոր մերժումը կարող է գանգատարկվել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ ուժը կորցնելը

- **Կասեցումը.**
  - լիցենզավորված անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտման դեպքում լիցենզավորող մարմինը կարող է կասեցնել լիցենզիայի գործողությունը,
  - լիցենզիայի գործողության կասեցման ժամկետը սահմանվում է 30 օր,
  - լիցենզիայի գործողության կասեցման դեպքում լիցենզավորող մարմինը դրա մասին գրությամբ տեղեկացնում է լիցենզավորված անձին,
    - կասեցման ժամկետի սկիզբ է համարվում լիցենզավորված անձի կողմից գրության ստացման օրը,
  - լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե՝
    - լիցենզիայի գործողության ընթացքում լիազորված մարմին ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,
    - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արժեթղթերի շուկայում իրականացվող գործունեության ստուգման արդյունքներով հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտումներ,
    - լիցենզավորման համար ներկայացվող փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին 15 օրվա ընթացքում տեղյակ չի պահվել լիազորված մարմնին,
    - խախտվել են լիցենզավորված անձանց համար սահմանված կանոնադրական հիմնադրամի եւ սեփական կապիտալի նվազագույն չափերը,
  - լիցենզավորված անձը պարտավոր է սահմանված ժամկետում վերացնել խախտումները եւ դրա մասին տեղեկացնել լիացենզավորող մարմնին,
  - լիցենզիայի գործողության կասեցումը դադարեցվում է լիցենզավորված անձի խախտումները վերացնելու մասին գրության (համապատասխան փաստաթղթերով) լիցենզավորող մարմնի կողմից ստացման օրվանից,
- **Ուժը կորցնելը.**
  - արժեթղթերի շուկայում իրականացվող գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝
    - լիցենզավորված անձը սահմանված ժամկետում չի վերացրել լիցենզիայի գործողության կասեցման հիմք հանդիսացող խախտումները.
    - լիցենզավորված անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել կամ լուծարվել է,
    - լրացել է լիցենզավորված անձի հիմնադիր փաստաթղթերում նշված գործունեության ժամկետը կամ ուժի մեջ են մտել այդ փաստաթղթերում նշված գործունեության դադարեցման այլ պայմաններ,
    - դատարանի որոշմամբ անվավեր է ճանաչվել ձեռնարկության (այդ թվում՝ բաժնետիրական ընկերության) պետական գրանցումը,
    - լիցենզավորված անձը լիցենզիայի ստացման պահից մեկ տարվա ընթացքում գործունեություն չի իրականացրել,
    - լիցենզավորված անձը խախտել է լիցենզիայում նշված հատուկ պահանջները,
    - մեկ տարվա ընթացքում կրկնակի կասեցվել է լիցենզիայի գործողությունը:
  - լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է լիցենզավորված անձին եւ հրապարակվում մամուլում,
  - լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով,

- լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում արժեթղթերի շուկայում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի տնօրենին եւ նրա տեղակալներին տրված որակավորման հավաստագրերն ուժը կորցրած են ճանաչվում,
- ուժը կորցրած ճանաչված լիցենզիան եւ որակավորման հավաստագիրը (հավաստագրերը) ենթակա են վերադարձման լիցենզավորող մարմին՝ 10-օրյա ժամկետում,
- լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում ձեռնարկությունը (այդ թվում՝ բաժնետիրական ընկերությունը) կամ անհատ ձեռներեցը կարող է ընդհանուր հիմունքներով դիմել նոր լիցենզիա ստանալու համար, լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պահից մեկ տարի հետո,
- լիցենզիան կորցնելու դեպքում լիցենզավորված անձը դրա մասին գրավոր հայտնում է Արժեթղթերի հանձնաժողով: Վերջինս 15-օրյա ժամկետում տալիս է նոր լիցենզիա՝ դրա վրա կատարելով "Կրկնօրինակ" նշագրումը:

39. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի 2000 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 9 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ որակավորումն անհրաժեշտ է ստանալ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնելու համար:**

Առանձնահատկությունները

- **Որակավորման վկայականը տրվում է որակավորման քննության արդյունքների հիման վրա:**
- **Աուդիտորի որակավորման վկայականը տրվում է՝**
  - որակավորում ստացած անձանց՝ երեք տարի ժամկետով,
  - ՀՀ արժեթղթերի հանձնաժողովում առնվազն մեկ տարվա անընդհատ մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող անձանց՝ անժամկետ:
- **Արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձի գործադիր տնօրենը (ղեկավարը) եւ նրա տեղակալները, ինչպես նաեւ անկախ ինվեստիցիոն բրոքերները եւ դիլերները պարտադիր պետք է որակավորված լինեն որպես առաջին կարգի մասնագետ:**
- **Որակավորման հավաստագիրը փոխանցման կամ օտարման ենթակա չէ:**

Որակավորում տվող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության Արժեթղթերի հանձնաժողով.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Հանրապետության 5,
    - Հեռախոս՝ 54 56 79:

Որակավորում ստացողը

- **Արժեթղթերի շուկայի մասնագետի որակավորման քննությանը մասնակցելու իրավունք ունի ցանկացած գործունակ ֆիզիկական անձ, որը քննության հայտ ներկայացնելու պահի դրությամբ չունի չմարված դատվածություն:**

Որակավորում ստանալու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ Արժեթղթերի հանձանժողով ներկայացնել՝**
  - հայտ,
- **վճարել պետական տուրքը՝**
  - 12 հազար դրամ,
    - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Որակավորման տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկումը.**
  - ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ առարկություններ չլինելու դեպքում դիմորդին թույլատրվում է մասնակցել որակավորման առաջիկա քննությանը,
  - ՀՀ արժեթղթերի հանձնաժողովը կազմում է քննության մասնակիցների ցուցակը եւ որակավորման քննության օրը եւ քննությունից առաջ ներկայացնում քննական հանձնաժողովին,
  - քննության մասնակիցների ցուցակում ընդգրկվում են քննության անցկացման օրվանից առնվազն երկու օր առաջ հայտ ներկայացրած դիմորդները,
  - որակավորման քննությանը նախապատրաստվելու համար դիմորդին տրամադրվում է անհրաժեշտ գրականության ցանկը,

- որակավորման հավաստագրի ձեւակերպումը եւ դրա հանձնումը մասնագետին իրականացվում է քննությունից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

- **Որակավորման քննությունները.**
  - քննություններն անց են կացվում յուրաքանչյուր ամսվա առաջին չորեքշաբթի օրը: Քննության սկիզբը ժամը 11.00 է,
  - քննություններն անց են կացվում տեստային եղանակով՝ համակարգչի միջոցով,
  - դիմորդը քննության է ներկայանում անձնագրով,
    - տվյալ քննությանը չներկայացած դիմորդն ընդգրկվում է հաջորդ քննության մասնակիցների ցուցակում: Կրկնակի անգամ քննությանը չներկայացած դիմորդը հանվում է քննության մասնակիցների ցուցակից եւ հետագայում կարող է մասնակցել քննությանը ընդհանուր հիմունքներով,
  - քննական տեստը բաղկացած է 30 հարցերից, որոնք ընտրվում են համակարգչային ծրագրի միջոցով: Դրանց պատասխանելու համար դիմորդին տրվում է 45 րոպե ժամանակ,
  - մինչեւ քննության սկիզբը դիմորդը ծանոթացվում է համակարգչի միջոցով որակավորման քննության անցկացման կանոններին,
  - քննության ավարտից հետո օպերատորը դիմորդի ներկայությամբ տպող սարքի միջոցով տպում է քննության արդյունքները երկու օրինակից, որոնց հիման վրա կազմվում է հանձնաժողովի նիստի արձանագրությունը: Արդյունքների մեկ օրինակը դիմորդի ստորագրությամբ հանձնվում է հանձնաժողովին, իսկ մյուսը տրվում է դիմորդին: Քննական արդյունքները հաստատվում են եւ հայտարարվում հանձնաժողովի կողմից,
  - դիմորդն իրավունք ունի քննության արդյունքը հայտարարելուց անմիջապես հետո բողոքարկել հանձնաժողովին: Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելուց հետո կրկնակի բողոքարկումը չի քննարկվում,
  - քննության արդյունքներով անբավարար գնահատված դիմորդը կարող է ընդհանուր հիմունքներով մասնակցել հաջորդ քննությանը:

- **Որակավորում շնորհելը.**
  - դիմորդը քննության արդյունքում համարվում է բավարար գնահատված, եթե ճիշտ է պատասխանել հարցերի քանակի առնվազն 90%-ին (27-30 հարց),

- **Կրկնօրինակի տրամադրումը.**
  - որակավորման վկայականը կորցնելու դեպքում, աուդիտորը պարտավոր է 10-օրյա ժամկետում այդ մասին գրավոր հայտնել հանձնաժողովին: Կորցրած վկայականը հանձնաժողովի որոշմամբ համարվում է անվավեր, իսկ դրա փոխարեն սահմանված կարգով տրվում է նոր վկայական «Կրկնօրինակ» նշագրումով:

- **Մերժումը.**
  - հայտատուի կողմից հանձնաժողովին ոչ ամբողջական կամ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացվելու դեպքում հայտատուին չի թույլատրվում մասնակցել քննությանը:

Որակավորման վկայականի ուժը կորցնելը

- **Արժեթղթերի հանձնաժողովը իրավունք ունի նախնական ծանուցմամբ մասնագետին տրված որակավորման հավաստագիրը ուժը կորցրած ճանաչել, եթե.**
  - մասնագետը տվյալ որակավորումը ստանալուց հետո դատապարտվել է ծանր հանցագործության կամ անզգուշությամբ կատարված տնտեսական հանցագործության համար,
  - մասնագետի կողմից խախտվել է արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ օրենքների եւ այլ իրավական ակտերի պահանջները:

- **Արժեթղթերի հանձնաժողովը ուժը կորցրած է ճանաչում նաեւ այն իրավաբանական անձանց գործադիր տնօրենների եւ նրանց տեղակալների որակավորման հավաստագրերը, որոնց արժեթղթերի շուկայում իրականացվող գործունեության լիցենզիան սահմանված կարգով ուժը կորցրած է ճանաչվել:**

40. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ԱՐԺՈՒԹՅԻՆ ԴԻԼԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ԱՐԺՈՒԹՅԻՆ ԴԻԼԵՐԻ ԿԱՄ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «ՀՀ տարածքում արժութային կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 8-ով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ մասնագիտական համապատասխանության ստուգման գործընթացն անհրաժեշտ է ֆիզիկական անձ արժութային դիլերներին, իրավաբանական անձ արժութային դիլերների եւ փոխանակման կետերի լիազորված անձանց՝ համապատասխան ոլորտներում գործունեության լիցենզիա ստանալու հնարավորություն ձեռք բերելու համար:**

Առանձնահատկությունները

- **Մասնագիտական համապատասխանության ստուգման ենթակա անձինք պետք է բավարարեն հետեւյալ մասնագիտական չափանիշներին՝**
  - ՀՀ արժութային օրենսդրության իմացություն,
  - ՀՀ կենտրոնական բանկի կողմից արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին ընդունված որոշումների իմացություն,
  - իրականացվող արժութային գործառնությունների իմացություն:

Մասնագիտական համապատասխանությունը ստուգող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գրանցման եւ լիցենզավորման հանձնաժողով.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Նալբանդյան 6,
    - Հեռախոս՝ 58 38 41:

Որակավորում ստացողը

- **Մասնագիտական համապատասխանության ստուգման ենթակա են ֆիզիկական անձինք, որոնք ցանկանում են դառնալ ֆիզիկական անձ արժութային դիլեր (արտարժույթի փոխանակման կետ), կամ լիազորված են իրավաբանական անձ արժութային դիլերի (արտարժույթի փոխանակման կետի) կողմից:**

Որակավորում ստանալու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել վերջինիս կողմից պահանջվող փաստաթղթերը:**
- **Փաստաթղթերը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում ներկայանալ ՀՀ կենտրոնական բանկ, քննություն հանձնելու նպատակով, իրենց մոտ ունենալով անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:**

Որակավորման տրամադրման գործընթացը

- **Որակավորման քննությունները.**
  - թեկնածուների մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է գրավոր (տեստային) քննության միջոցով,
  - տեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար թեկնածուին հատկացվում է միջին հաշվով 1.5 րոպե,
  - տեստերը և դրանցում պարունակվող հարցերի թիվը տարբերակվում են ըստ քննություն հանձնող թեկնածուների (ելնելով նրանց ներկայացվող չափանիշներից) հետևյալ խմբերի՝
    - արժութային դիլեր՝ 30 հարց,
    - արտարժույթի փոխանակման կետ՝ 30 հարց,
  - տեստերի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի պատասխան, որոնցից մեկն է ճիշտ,
  - տեստի հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր,
  - արժութային դիլերի (արտարժույթի փոխանակման կետի) լիցենզիայում նշվող անձանց գրավոր (տեստային) քննությունն անցկացվում է ՀՀ կենտրոնական բանկի գրանցման և լիցենզավորման հանձնաժողովի առնվազն 3 անդամների ներկայությամբ,

- գրավոր (տեստային) քննության ժամանակ թեկնածուին արգելվում է՝
  - օգտվել օրենսդրական, ենթաօրենսդրական ակտերից և այլ նյութերից, մասնագիտական գրականությունից, տեղեկատուներից,
  - երկխոսության մեջ մտնել մյուս թեկնածուների հետ,
- գրավոր քննությանը հատկացված ժամանակի ավարտից հետո թեկնածուն պարտավոր է տեստը պատասխաններով հանձնել հանձնաժողովի պատասխանատու անձին,
- նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից, և նրա վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

- **Որոշման ընդունումը.**
  - տեստերի հարցերի պատասխանների արդյունքները քննություն անցկացնող հանձնաժողովի անդամներն ամփոփում են մինչև հանձնաժողովի նիստը և ներկայացնում հանձնաժողովին,
  - տեստերի պատասխանների գնահատումն ու ամփոփումը կատարվում է հետևյալ կերպ. եթե թեկնածուն հավաքել է միավորների առավելագույն թվի՝
    - մինչև 70 տոկոսը, ապա հանձնաժողովն արձանագրում է, որ թեկնածուն իր որակավորմամբ և մասնագիտական առումով չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին,
    - 70 և ավելի տոկոսը, ապա հանձնաժողովն արձանագրում է, որ թեկնածուն իր որակավորմամբ և մասնագիտական առումով համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին,
  - եթե թեկնածուն որակավորման և մասնագիտական առումով չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին, ապա նա կարող է կրկին դիմել որակավորման և մասնագիտական քննում անցնելու համար:

41. ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի 2000 թվականի հունիսի 12-ի թիվ 110 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ ընթացակարգով իրականացվում է ՀՀ տարածքում հաշվապահների որակավորման գործընթացը:**
  - Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որակավորումն իրականացվում է քննությունների միջոցով, որը հաշվապահի որակավորում ստանալու համար դիմում ներկայացրած անձանց գիտելիքների ստուգման ընթացակարգ է:

Առանձնահատկությունները

- **Հաշվապահի որակավորման վկայականը տրվում է հետեւյալ ժամկետներով՝**
  - մինչեւ 2000թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ քննություն հանձնելու դեպքում՝ մինչեւ 2002թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամկետով,
  - 2000թ. դեկտեմբերի 31-ից հետո քննություն հանձնելու դեպքում՝ երկու տարի վեց ամիս:

Մասնագիտական համապատասխանությունը ստուգող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որկավորման հանձնաժողով.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,
    - Հեռախոս՝ 59 53 04:

Որակավորում ստացողը

- **Քննությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող այն անձինք, որոնք ունեն.**
  - հաշվապահի կամ աուդիտորի մասնագիտացմամբ բարձրագույն կրթություն (ներառյալ լիցենզավորված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ստացած կրթությունը) եւ որակավորման վկայական ստանալու համար դիմում ներկայացնելու օրվան նախորդող վերջին երեք տարվա ընթացքում առնվազն մեկ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ,
  - հաշվապահի կամ աուդիտորի մասնագիտացմամբ միջնակարգ մասնագիտական կրթություն (տեխնիկում, քոլեջ եւ այլն) եւ որակավորման վկայական ստանալու համար դիմում ներկայացնելու օրվան նախորդող վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձ,
  - բարձրագույն կրթություն (ներառյալ լիցենզավորված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ստացած կրթությունը) եւ որակավորման վկայական ստանալու համար դիմում ներկայացնելու օրվան նախորդող վերջին յոթ տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ,
  - միջնակարգ կրթություն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն (տեխնիկում, քոլեջ եւ այլն) եւ որակավորման վկայական ստանալու համար դիմում ներկայացնելու օրվան նախորդող վերջին տասը տարվա ընթացքում առնվազն յոթ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ,
- **քննությանը մասնակցել չի թույլատրվում ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից դատավճռով զրկված անձանց:**

Որակավորում ստանալու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ հաշվապահների որակավորման հանձնաժողով ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - դիմում,
  - կրթության մասին դիպլոմի պատճենը,
  - աշխատանքային գրքույկից կատարված քաղվածքը կամ դրա պատճենը եւ (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրի պատճենը եւ պայմանագրի կատարումը հաստատող տեղեկանքը,
  - երկու լուսանկար՝ 3x4 չափսի:

Որակավորման տրամադրման գործընթացը

- **Փաստաթղթերի քննարկումը.**
  - դիմումները ուսումնասիրվում են Հանձնաժողովի կողմից՝ անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում: Ներկայացվող պահանջներին չհամապատասխանելու դեպքում, փաստաթղթերը վերադարձվում են դիմորդին՝ համապատասխան հիմնավորումներով,
  - քննություններն անցկացվում են պարբերաբար՝ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան ամսական մեկ անգամ՝ եթե ստացվել է առնվազն 10 դիմում,
  - քննության անցկացման օրվա, ժամի եւ տեղի մասին դիմորդին տեղեկացվում է ոչ ուշ, քան քննությունից 7 օր առաջ,
  - դիմորդին թույլատրվում է մասնակցել քննությանը՝ միայն անձնագրի կամ նրա անձը հաստատող այլ փաստաթղթի առկայության դեպքում: Իր անձը հաստատող որեւէ փաստաթուղթ չունեցող, ինչպես նաեւ քննությանն ուշացումով ներկայացած դիմորդը համարվում է չներկայացած եւ նրան արգելվում է մասնակցել տվյալ օրվա քննությանը:
- **Որակավորման քննությունները.**
  - քննությունն անց է կացվում մեկ փուլով՝ հայերեն լեզվով, գրավոր: Քննության հարցաթերթիկները կազմվում են հետեւյալ 3 բաժիններից՝
    - I բաժին - տեսական հարցեր,
      - I բաժնում ներառվում են համապատասխանաբար՝ հաշվապահական հաշվառմանը եւ հարկային օրենսդրությանը վերաբերող 1-ական հարցեր (ընդամենը 2 հարց),
    - II բաժին - տեստեր,
      - II բաժնում՝ հաշվապահական հաշվառմանը, հարկային օրենսդրությանը, աուդիտորական գործունեությանը եւ տնտեսական իրավունքին վերաբերող 23 հարցեր (տեստեր),
    - III բաժին - խնդիրներ,
      - III բաժնում՝ հարկային օրենսդրության, ֆինանսական վերլուծության եւ (կամ) հաշվապահական հաշվառման վերաբերյալ ընդհանուր թվով 3 խնդիրներ՝ հանձնաժողովի սահմանած համամասնությամբ,
  - հարցաթերթիկի հարցերին պատասխանելու համար դիմորդին տրվում է երեք ժամ,
  - քննության ընթացքում դիմորդին չի թույլատրվում՝ օգտվել օրենքներից, այլ նորմատիվ իրավական ակտերից, մասնագիտական գրականությունից, տեղեկատուներից, երկխոսության մեջ մտնել մյուս դիմորդների հետ: Հարցաթերթիկի հարցերին պատասխանելու համար հատկացված ժամանակը լրանալուն պես, դիմորդը պարտավոր է հարցաթերթիկը եւ իր գրած պատասխանները հանձնել Հանձնաժողովին: Նշված պահանջներից որեւէ մեկի խախտման դեպքում դիմորդը հեռացվում է քննությունից,
  - երկրորդ անգամ քննությանը դիմորդը կարող է մասնակցել ընդհանուր հիմունքներով,
- **Որոշման ընդունումը.**
  - քննության պատասխաններն ամփոփվում են Հանձնաժողովի որոշմամբ հաստատված ձեւով, որը ստորագրում են Հանձնաժողովի նախագահը եւ բոլոր անդամները (ներկա գտնվող),
  - որակավորման քննություններն անց են կացվում մեկ փուլով՝ գրավոր, որի ընդհանուր արդյունքները գնահատվում են 42 միավորի սահմաններում: Ընդ որում, տեսական հարցերի բաժնում ներառված 2 հարցերի պատասխանները գնահատվում են առավելագույնը՝ 10 միավոր (յուրաքանչյուրը՝ 0-5 միավորի սահմաններում), 23 տեստերինը՝ 23 միավոր (յուրաքանչյուրը՝ 0 կամ 1 միավոր), իսկ 3 խնդիրներինը՝ 9 միավոր (յուրաքանչյուրը՝ 0-3 միավոր):
  - քննության արդյունքում որակավորված են համարվում 21 միավոր (անցողիկ միավոր) հավաքած այն դիմորդները, որոնք ապահովում են նաեւ հարցաթերթիկի առանձին երեք բաժինների գծով առավելագույն միավորների առնվազն 30 տոկոսը,
  - Հանձնաժողովը պարտավոր է վերանայել քննության արդյունքում անցողիկ միավորը մինչեւ 2 միավորով (ներառյալ) չբավարարող, ինչպես նաեւ անցողիկ միավորը բավարարող, սակայն հարցաթերթիկի առանձին երեք բաժիններից որեւէ մեկի գծով սույն կետով սահմանված չափանիշը (30 տոկոսը) մինչեւ 2 միավորով (ներառյալ) չբավարարող աշխատանքները,
  - Հանձնաժողովը, դիմորդի հավաքած միավորների հանրագումարի հիման վրա, քննության օրը կամ առնվազն այդ օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում նրան հաշվապահի որակավորում շնորհելու վերաբերյալ,
  - Հանձնաժողովի որոշման հիման վրա որակավորված դիմորդին տրվում է հաշվապահի որակավորման վկայական, որի ձեւը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը: Հաշվապահի որակավորման վկայականը լրացվում եւ տրվում է Հանձնաժողովի կողմից՝ քննությունը հանձնելու օրվանից 10-օրյա ժամկետում: Հաշվապահի կողմից չստացված որակավորման վկայականը Հանձնաժողովի կողմից պահպանվում է վեց ամիս ժամկետով, որից հետո այն ճանաչվում է անվավեր:

Որակավորման ուժը կորցնելը

- Դիմորդի կողմից Հանձնաժողովին ոչ հավաստի տեղեկություններ ներկայացվելու դեպքում, դիմորդին չի թույլատրվում մասնակցել քննությանը, իսկ եթե այդպիսի փաստերը հայտնաբերվում են որակավորման վկայականը տալուց հետո, ապա այն ուժը կորցրած է ճանաչվում,
- դիմորդի կողմից քննության արդյունքները կարող են բողոքարկվել Հանձնաժողովին՝ քննության արդյունքները հայտնելու (հրապարակելու) օրվանից 15 օրվա ընթացքում, ինչպես նաեւ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը կամ՝ դատական կարգով,
- որակավորման վկայականը կորցնելու դեպքում, հաշվապահը պարտավոր է 10-օրյա ժամկետում այդ մասին գրավոր հայտնել Հանձնաժողովին: Կորցրած վկայականը Հանձնաժողովի որոշմամբ համարվում է անվավեր, իսկ դրա փոխարեն սահմանված կարգով տրվում է նոր վկայական՝ «Կրկնօրինակ» նշագրումով:

42. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐՆԵՐԻ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով,ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «ՀՀ տարածքում արժութային կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 8-ով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ ընթացակարգով լիցենզավորումն անհրաժեշտ է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից իր անունից և իր հաշվին, այլ անձանց անունից և այլ անձանց հաշվին ու հանձնարարությամբ, իր անունից և այլ անձանց հաշվին ու հանձնարարությամբ, այլ անձանց անունից և իր հաշվին հետևյալ գործունեության իրականացման համար.**
  - արտարժույթի և դրանով արտահայտված արժեթղթերի, մուրհակների և նման վճարային այլ գործիքների առուծախը անմիջապես կամ տարաժամկետ վճարելու պայմանով, որոշակի ժամկետից հետո որոշակի գնով հետ գնելու կամ այլ արտարժույթով փոխանակելու իրավունքով, կամ պարտականությամբ, կամ որևէ այլ պայմանով, ինչպես նաև հանդես գալ նման գործարքներ իրականացնելու առաջարկությամբ կամ որպես արժութային դիլեր, պայմանով, որ դրանք կրում են պարբերական բնույթ՝ հանդիսանալով տվյալ գործարքներն իրականացնող անձի եկամտի կամ շահույթի նշանակալից աղբյուր և հիմնական գործունեություն:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **արտարժութային գործառնություններ իրականացնելու լիցենզիան անժամկետ է,**
- **լիցենզիան չի կարող փոխանցվել կամ այլ կերպ օտարվել,**
- **արժութային դիլերների կողմից իրականացված բոլոր գործառնությունները պարտադիր հաշվառվում են նրանց գրանցումների մատյաններում, որոնցում արտացոլված տվյալների հիման վրա լրացվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից պահանջվող հաշվետվությունները՝ իրականացվող գործառնություններից յուրաքանչյուրի գծով,**
- **գրանցումների մատյանների էջերը կարվում և համարակալվում են արժութային դիլերի և հաստատվում՝ Կենտրոնական բանկի կողմից: Գրանցումների մատյաններն արժութային դիլերի կողմից ամբողջովին լրացվելուց հետո պահպանվում են առնվազն երեք տարի,**
- **գործառնական օրվա ցանկացած պահին արժութային դիլերի դրամարկղում, ցպահանջ և ժամկետային հաշիվներում, ինչպես նաև արժեթղթերում ներդրված միջոցների ընդհանուր գումարը չի կարող պակաս լինել՝**
  - ֆիզիկական անձանց համար՝ 1.0 մլն դրամից և (կամ) դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից,
  - իրավաբանական անձանց համար՝ 2.0 մլն դրամից և (կամ) դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից,
- **իրավաբանական անձ արժութային դիլերի կողմից մասնաճյուղ հիմնվելիս դրամարկղի, ցպահանջ և ժամկետային հաշիվների, ինչպես նաև արժեթղթերում ներդրված միջոցների ընդհանուր գումարը յուրաքանչյուր մասնաճյուղի համար ավելացվում է վերը նշված կետում նախատեսված գումարի չափով,**
- **վերը նշված կետերում նշված գումարների նկատմամբ, կախված արժութային դիլերների տարածքային տեղաբաշխվածությունից, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից կարող են սահմանվել գործակիցներ: Գործակիցների սահմանման համար հիմք է ծառայում տարածքների գոտիականությունը:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երևան 375010, Նալբանդյան 6,
    - Հեռախոս՝ 58 38 41:

Լիցենզիա ստացողը

- **Արժութայի դիլեր են համարվում.**
  - ՀՀ տարածքում գործող բանկերը,
  - արժեթղթերի շուկայում գործունեություն իրականացնելու լիցենզիա և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիա ստացած ֆիզիկական և իրավաբանական անձինք,
  - ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիա ստացած ֆիզիկական և իրավաբանական անձինք:
- **Լիցենզիա ստացողը պարտավոր է.**

- բավարարել հետեւյալ պահանջները
  - պետք է ունենան սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալությամբ վերցված տարածք, որը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.
    - տարածքի վարձակալության պայմանագիրը պետք է գրանցված լինի պետական լիազորված մարմնի կողմից և կնքված լինի ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն մեկ տարի ժամկետով,
    - առանձնացված լինի հարակից տարածքներից,
    - օգտագործվի միայն լիցենզիայով նախատեսված գործունեություն իրականացնելու համար: Գործունեության տարածքում չի կարող իրականացվել արտադրական, առևտրային կամ սպասարկման այլ գործունեություն,
    - ունենա անմիջական մուտք դրսից,
    - ունենա դրամով և այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց, որի մեջ մտնում են տարածքի հետևյալ մասերը՝
      - կանխիկ դրամի և այլ արժեքների պահպանության դրամապահոց՝ իր նախադրամապահոցով, կամ չհրկիզվող պահարանների սենյակ, ընդ որում՝ սույն ենթատարածքի առկայությունը պարտադիր չէ, եթե դրամի և այլ արժեքների ամենօրյա տեղափոխման, հանձնման և պահպանման վերաբերյալ ինկասացիոն ծառայության և որևէ բանկի հետ կնքված է համապատասխան պայմանագիր,
      - ենթատարածք, որտեղ տեղադրված է գործառնական դրամարկղ,
      - ենթատարածք, որտեղ հնարավոր է իրականացնել հաճախորդներից ստացված դրամի վերահաշվարկ,
      - պահպանիչ-հակահրդեհային ազդարարման գործող համակարգ, որի, ինչպես նաև դրամարկղային հանգույցի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը պետք է լինի պահեստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում դրամարկղային հանգույցը կարող է ունենալ տեղային (լոկալ) էլեկտրասնուցում:
    - դրամարկղային հանգույցը պետք է սարքավորված լինի անվտանգության ահազանգման համակարգով, ընդ որում, պահպանիչ ահազանգի ցանցի, հեռախոսային և տագնապի ուղիղ կապի վահանակները պետք է տեղակայված լինեն անվտանգության ծառայության դիտակետում,
    - դրամարկղային հանգույցի նկատմամբ ներկայացվող տարածքային պահանջներն են՝
      - դրամարկղային հանգույցը տեղակայվում է այլ սենյակներից և միջանցքներից առանձնացված, որպես կանոն, շենքի առաջին հարկում՝ մեկ հարթության վրա,
      - դրամապահոցը կառուցվում է առանց պատուհանների և պետք է ունենա մեկ զրահապատ չհրկիզվող դուռ,
      - դրամապահոցը չպետք է ունենա ընդհանուր պատ շենքի արտաքին և նույն շենքում տեղակայված այլ հաստատությունների պատերի հետ: Դրամապահոցը շենքի արտաքին կամ այլ հաստատությունների պատերին կից կառուցելու դեպքում դրանց միջև պետք է լինի դիտողական միջանցք, որը հնարավորություն կտա դիտել դրամապահոցի պատերի ամբողջականությունը (հսկել անվտանգությունը),
      - դրամապահոցների տակ նկուղային հարկերի առկայությունն անթույլատրելի է: Եթե դրամապահոցը գտնվում է շենքի վերջին հարկում, կամ դրամապահոցի վերևում տեղակայված է այլ կազմակերպություն, ապա դրամապահոցի առաստաղը վերևի հարկի հատակից (կամ տանիքից) պետք է բաժանված լինի դիտողական միջանցքով, որը հնարավորություն կտա դիտել և հսկել առաստաղի ամբողջականությունը,
    - գործառնական դրամարկղը պետք է ընդհանուր սրահից առանձնացված լինի ապակուց, փայտից կամ այլ շինանյութից կառուցված պատով: Գործունեության տարածքի պատուհանը (ցանկալի է՝ զրահապատ ապակուց) պետք է հնարավորություն տա հաճախորդին դիտել դրամն ընդունելու և հաշվելու աշխատանքները: Միևնույն ժամանակ դրամի ընդունման մասում հակառակ կողմից պետք է հաճախորդին հնարավորություն ապահովվի դրամը վերահաշվարկելու համար,
    - գործառնական դրամարկղերի պատուհանները պետք է տեղակայված լինեն այնպես, որ բացառեն հաճախորդի և գանձապահի անմիջական շփումը և սարքավորված լինեն կանխիկ դրամի ու այլ արժեքների փոխանցման համար նախատեսված փոխանցող (շարժական) արկղով: Նախընտրելի է, որ արկղի տեղափոխումը կառավարվի աշխատակցի կողմից,
    - գործառնական դրամարկղը սպասարկման դահլիճից բաժանող պատուհանը տեղակայվում է այնպես, որ ապահովվի կանխիկ դրամի հաշվարկման գործընթացի դիտողական հսկողությունը թե մեկ և թե մյուս կողմից (հաճախորդի հսկողությունը գանձապահի նկատմամբ և գանձապահի հսկողությունը հաճախորդի նկատմամբ),
  - աշխատանքի ընթացքում արժութային դիլերի լիցենզիայում նշված անձինք պարտավոր են ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և կրել լուսանկարով այցեքարտ, որտեղ պետք է նշված լինեն արժութային դիլերի անվանումը, աշխատողի անունը, ազգանունը:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - լիցենզիա ստանալու համար՝
    - դիմում,
    - տեղեկանք արժութային դիլերի աշխատակցի (աշխատակիցների) մասին,
    - կանոնադրություն (իրավաբանական անձանց համար),
    - տեղեկանք բանկից (բանկերից) ֆիզիկական և իրավաբանական անձանց հայկական դրամով և (կամ) առաջին խմբի (ԱՄՆ դոլար, գերմանական մարկ ֆրանսիական ֆրանկ, անգլիական ֆունտ ստեռլինգ, հոլանդական գուլդեն, իտալական լիրա, բելգիական ֆրանկ, դանիական կրոն, իռլանդական ֆունտ, իսպանական պեսետա, ավստրիական շիլինգ, պորտուգալական էսկուդո, հունական դրահմա, լյուքսեմբուրգյան ֆրանկ և ֆիննական մարկ) մեջ մտնող արտարժույթով ցպահանջ կամ ժամկետային հաշիվներում համապատասխան գումարի (ֆիզիկական անձանց համար՝ 1.0 մլն դրամ, իրավաբանական անձանց համար՝ 2.0 մլն դրամ) առկայության մասին,

- տարածքի սեփականության իրավունքի վկայականի պատճեն կամ փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն 1 տարի ժամկետով կնքված վարձակալության պայմանագիր, գրանցված Հայաստանի Հանրապետության կառավարությանը առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
- հայտարարագիր տեխնիկական բավարար պայմանների (այդ թվում՝ չհրկիզվող պահարանի, դրամանիշի իսկությունն ստուգող սարքի, հեռախոսի, էլեկտրոնային վահանակի, ցուցանակի, որտեղ նշվում են արժութային դիլերի անունը, ազգանունը (անվանումը), արտարժույթի առք ու վաճառքի փոխարժեքները, աշխատանքային ժամերը) առկայության մասին,
- տեղեկանք աշխատանքային ռեժիմի վերաբերյալ՝ նշելով շաբաթվա աշխատանքային օրերը և ժամերը,
- Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր գրանցման վկայականի պատճենը,
- տեղեկանք ՀՀ պետական եկամուտների նախարարությունից հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) ստացման մասին,
- տեղեկանք տարածքի համապատասխանության վերաբերյալ,
- դրամապահոցի կամ չհրկիզվող պահարանների սենյակի բացակայության դեպքում՝ ինկասացիոն պայմանագրի պատճենը (շենքերում գործող արժութային դիլերների համար),

– արժութային դիլերի մասնաճյուղ բացելու համար.
  - դիմում,
  - տեղեկանք արժութային դիլերի մասնաճյուղի աշխատակցի (աշխատակիցների) մասին,
  - մասնաճյուղի տարածքի սեփականության իրավունքի վկայականի պատճեն կամ փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն 1 տարի ժամկետով կնքված վարձակալության պայմանագիր,
  - հայտարարագիր տեխնիկական բավարար պայմանների (այդ թվում՝ չհրկիզվող պահարանի, դրամանիշի իսկությունն ստուգող սարքի, հեռախոսի, ցուցանակի, որտեղ նշվում են արժութային դիլերի անունը, ազգանունը (անվանումը), արտարժույթի առք ու վաճառքի փոխարժեքները) առկայության մասին,
  - տեղեկանք բանկից (բանկերից) իրավաբանական անձի հայկական դրամով և (կամ) առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով ցպահանջ կամ ժամկետային ներքոհիշյալ գումարների առկայության մասին՝
    - ֆիզիկական անձանց համար՝ 1 մլն դրամից (կամ դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից) ոչ պակաս,
    - իրավաբանական անձանց համար՝ 2 մլն դրամից (կամ դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից) ոչ պակաս,
  - իրավաբանական անձի կանոնադրությունը, որտեղ պետք է ներառված լինի տվյալ մասնաճյուղը,

▪ **վճարել պետական տուրքը,**

– ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,

– իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:

– Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12 եւ 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

▪ **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**

– լիցենզիայի տրամադրման համար՝
  - ՀՀ կենտրոնական բանկը վերը նշված փաստաթղթերը ներկայացնելու պահից 30-օրյա ժամկետում պարտավոր է տալ լիցենզիա կամ ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ դիտողություններ ու առարկություններ՝ նշելով դիտողությունների եւ առարկությունների պատճառները եւ իրավական հիմքերը,

– մասնաճյուղի բացման թույլտվություն տալու համար՝
  - ՀՀ կենտրոնական բանկը վերոհիշյալ փաստաթղթերն ստանալուց հետո, 20-օրյա ժամկետում, որոշում է կայացնում թույլտվություն տալու կամ դիմումը մերժելու մասին:

▪ **Մասնագիտական համապատասխանության ստուգումը.**

– նախքան լիցենզիա տրամադրելու մասին որաշման ընդունումը ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է հայտատուի մասնագիտական համապատասխանության ստուգում:

▪ **Որոշման ընդունումը.**

- լիցենզիա ստանալու դիմումին համաձայնություն տալու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը որոշում կայացնելու պահից 1-օրյա ժամկետում արժութային դիլերին տալիս է լիցենզիա,
- իրավաբանական և ֆիզիկական անձ արժութային դիլերի լիցենզիային կից, հատուկ գրությամբ, տրվում է այն անձի (անձանց) անունը և ազգանունը, ով նշված անձի անունից իրավունք ունի սահմանված կարգով իրականացնել լիցենզիայով նախատեսված գործառնություններ:
- մասնաճյուղ բացելու թույլտվություն տալու դեպքում ՀՀ կենտրոնական բանկն արժութային դիլերին տալիս է լիցենզիային կից գրություն:

▪ **Մերժումը.**

- ՀՀ կենտրոնական բանկը մերժում է դիմումը, եթե՝
  - ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում բացահայտվել են անարժանահավատ տվյալներ,
  - ֆիզիկական անձ արժութային դիլերը կամ իրավաբանական անձի կողմից լիազորված անձինք չեն համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին,
  - գործունեության տարածքը չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,
  - ներկայացված փաստաթղթերն ամբողջական կամ բավարար չեն:

43. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով,ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «ՀՀ տարածքում արժութային կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 8-ով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ ընթացակարգով լիցենզավորումն անհրաժեշտ է ֆիզիկական անձանց հետ հայկական դրամով արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացման համար:**
- **Արտարժույթի փոխանակման կետերն ըստ գործունեության տարածքի բաժանվում են հետևյալ խմբերի՝**
  - շենքերում գործող (I խումբ),
  - կրպակ-դրամարկղային խցերում գործող (II խումբ),
  - հյուրանոցներում գործող (III խումբ):

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան անժամկետ է,**
- **լիցենզիան չի կարող փոխանցվել կամ այլ կերպ օտարվել,**
- **արտարժութի փոխանակման կետերի կողմից իրականացված բոլոր գործառնությունները պարտադիր հաշվառվում են նրանց գրանցումների մատյաններում, որոնցում արտացոլված տվյալների հիման վրա լրացվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից պահանջվող հաշվետվությունները՝ իրականացվող գործառնություններից յուրաքանչյուրի գծով,**
- **գրանցումների մատյանների էջերը կարվում և համարակալվում են արտարժույթի փոխանակման կետի և հաստատվում՝ Կենտրոնական բանկի կողմից: Գրանցումների մատյաններն արտարժույթի փոխանակման կետի կողմից ամբողջովին լրացվելուց հետո պահպանվում են առնվազն երեք տարի,**
- **գործառնական օրվա ցանկացած պահին արտարժույթի փոխանակման կետի դրամարկղում, ցպահանջ և ժամկետային հաշիվներում առկա միջոցները (հայկական դրամ կամ արտարժույթ) չեն կարող պակաս լինել՝**
  - ֆիզիկական անձանց համար՝ 1.0 մլն դրամից և (կամ) դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից,
  - իրավաբանական անձանց համար՝ 2.0 մլն դրամից և (կամ) դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից,
- **վերը նշված կետերում նշված գումարների նկատմամբ, կախված արտարժույթի փոխանակման կետերի տարածքային տեղաբաշխվածությունից, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից կարող են սահմանվել գործակիցներ: Գործակիցների սահմանման համար հիմք է ծառայում տարածքների գոտիականությունը:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երևան 375010, Նալբանդյան 6,
    - Հեռախոս՝ 58 38 41:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա ստացողը պարտավոր է.**
  - I խմբին պատկանող արտարժույթի փոխանակման կետի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին՝
    - պետք է ունենան սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալությամբ վերցված տարածք, որը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.
      - տարածքի վարձակալության պայմանագիրը պետք է գրանցված լինի պետական լիազորված մարմնի կողմից և կնքված լինի ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն մեկ տարի ժամկետով,
      - առանձնացված լինի հարակից տարածքներից,
      - օգտագործվի միայն լիցենզիայով նախատեսված գործունեություն իրականացնելու համար: Գործունեության տարածքում չի կարող իրականացվել արտադրական, առևտրային կամ սպասարկման այլ գործունեություն,
      - ունենա անմիջական մուտք դրսից,
      - ունենա դրամով և այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց, որի մեջ մտնում են տարածքի հետևյալ մասերը՝
        - կանխիկ դրամի և այլ արժեքների պահպանության դրամապահոց՝ իր նախադրամապահոցով, կամ չհրկիզվող պահարանների սենյակ, ընդ որում՝ սույն ենթատարածքի առկայությունը պարտադիր չէ, եթե դրամի և այլ արժեքների

ամենօրյա տեղափոխման, հանձնման և պահպանման վերաբերյալ ինկասացիոն ծառայության և որևէ բանկի հետ կնքված է համապատասխան պայմանագիր,
- ենթատարածք, որտեղ տեղադրված է գործառնական դրամարկղ,
- ենթատարածք, որտեղ հնարավոր է իրականացնել հաճախորդներից ստացված դրամի վերահաշվարկ,
- պահպանիչ-հակահրդեհային ազդարարման գործող համակարգ, որի, ինչպես նաև դրամարկղային հանգույցի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը պետք է լինի պահեստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում դրամարկղային հանգույցը կարող է ունենալ տեղային (լոկալ) էլեկտրասնուցում,

○ դրամարկղային հանգույցը պետք է սարքավորված լինի անվտանգության ահազանգման համակարգով, ընդ որում, պահպանիչ ահազանգի ցանցի, հեռախոսային և տագնապի ուղիղ կապի վահանակները պետք է տեղակայված լինեն անվտանգության ծառայության դիտակետում,

○ դրամարկղային հանգույցի նկատմամբ ներկայացվող տարածքային պահանջներն են՝
- դրամարկղային հանգույցը տեղակայվում է այլ սենյակներից և միջանցքներից առանձնացված, որպես կանոն, շենքի առաջին հարկում՝ մեկ հարթության վրա,
- դրամապահոցը կառուցվում է առանց պատուհանների և պետք է ունենա մեկ զրահապատ չհրկիզվող դուռ,
- դրամապահոցը չպետք է ունենա ընդհանուր պատ շենքի արտաքին և նույն շենքում տեղակայված այլ հաստատությունների պատերի հետ: Դրամապահոցը շենքի արտաքին կամ այլ հաստատությունների պատերին կից կառուցելու դեպքում դրանց միջև պետք է լինի դիտողական միջանցք, որը հնարավորություն կտա դիտել դրամապահոցի պատերի ամբողջականությունը (հսկել անվտանգությունը),
- դրամապահոցների տակ նկուղային հարկերի առկայությունն անթույլատրելի է: Եթե դրամապահոցը գտնվում է շենքի վերջին հարկում, կամ դրամապահոցի վերևում տեղակայված է այլ կազմակերպություն, ապա դրամապահոցի առաստաղը վերևի հարկի հատակից (կամ տանիքից) պետք է բաժանված լինի դիտողական միջանցքով, որը հնարավորություն կտա դիտել և հսկել առաստաղի ամբողջականությունը,

○ գործառնական դրամարկղը պետք է ընդհանուր սրահից առանձնացված լինի ապակուց, փայտից կամ այլ շինանյութից կառուցված պատով: Գործունեության տարածքի պատուհանը (ցանկալի է՝ զրահապատ ապակուց) պետք է հնարավորություն տա հաճախորդին դիտել դրամն ընդունելու և հաշվելու աշխատանքները: Միևնույն ժամանակ դրամի ընդունման մասում հակառակ կողմից պետք է հաճախորդին հնարավորություն ապահովվի դրամը վերահաշվարկելու համար,

○ գործառնական դրամարկղերի պատուհանները պետք է տեղակայված լինեն այնպես, որ բացառեն հաճախորդի և գանձապահի անմիջական շփումը և սարքավորված լինեն կանխիկ դրամի ու այլ արժեքների փոխանցման համար նախատեսված փոխանցող (շարժական) արկղով. նախընտրելի է, որ արկղի տեղափոխումը կառավարվի աշխատակցի կողմից,

○ գործառնական դրամարկղը սպասարկման դահլիճից բաժանող պատուհանը տեղակայվում է այնպես, որ ապահովվի կանխիկ դրամի հաշվարկման գործընթացի դիտողական հսկողությունը թե մեկ և թե մյուս կողմից (հաճախորդի հսկողությունը գանձապահի նկատմամբ և գանձապահի հսկողությունը հաճախորդի նկատմամբ),

– II խմբի արտարժույթի փոխանակման կետերի կրպակ-դրամարկղային խցերը պետք է տեղակայված լինեն միայն օդանավակայաններում, երկաթուղային կայարաններում և ավտոկայաններում, մաքսային սահմաններում կամ բնակչության սպասարկում իրականացնող օբյեկտներում»,

- կրպակ-դրամարկղային խցերին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջներն են՝
  - կրպակի լայնությունը՝ 2 մ, երկարությունը՝ 2 մ, բարձրությունը՝ 2.5 մ: Կրպակն ունի առանձին մուտք՝ կողպվող դռնով, պայմանով, որ տվյալ տարածք հնարավոր է մուտք գործել միայն հիշյալ դռնով: Դրամարկղային խցի դիմակայուն շինանյութից պատրաստված պատերն ունեն մինչև 1.05 մ բարձրություն, որից հետո սկսվում է ապակին: Հանդիպակաց պատի դիմակայուն շինանյութի և ապակու միացման մասում ներսից տեղադրված է հատուկ շարժական արկղ: Արկղը կառավարվում է աշխատակցի կողմից: Հանդիպակաց պատի դիմակայուն շինանյութի և ապակու միացման մասում, դրսի կողմից, տեղադրված է սեղան՝ գումարի վերահաշվարկման համար,

– III խմբի արտարժույթի փոխանակման կետերին թույլատրվում է կազմակերպել արտարժույթի առք ու վաճառք հյուրանոցների ընդունարաններում կամ հյուրանոցների առաջին հարկերում վարձակալված կամ սեփական տարածքում,

– աշխատանքի ընթացքում արտարժույթի փոխանակման կետի լիցենզիայում նշված անձինք պարտավոր են ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և կրել լուսանկարով այցեքարտ, որտեղ պետք է նշված լինեն արտարժույթի փոխանակման կետի աշխատակցի անվանումը, աշխատողի անունը, ազգանունը:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**

– լիցենզիա ստանալու համար՝

- դիմում.
- տեղեկանք արտարժույթի փոխանակման կետի աշխատակցի (աշխատակիցների) մասին,
- կանոնադրություն (իրավաբանական անձանց համար),
- տեղեկանք բանկից (բանկերից) ֆիզիկական և իրավաբանական անձանց հայկական դրամով և (կամ) առաջին խմբի (ԱՄՆ դոլար, գերմանական մարկ ֆրանսիական ֆրանկ, անգլիական ֆունտ ստեռլինգ, հոլանդական գուլդեն, իտալական լիրա, բելգիական ֆրանկ, դանիական կրոն, իռլանդական ֆունտ, իսպանական պեսետա, ավստրիական շիլինգ, պորտուգալական էսկուդո, հունական դրահմա, լյուքսեմբուրգյան ֆրանկ և ֆիննական մարկ) մեջ մտնող արտարժույթով ցպահանջ կամ ժամկետային հաշիվներում համապատասխան գումարի (ֆիզիկական անձանց համար՝ 1.0 մլն դրամ, իրավաբանական անձանց համար՝ 2.0 մլն դրամ) առկայության մասին,

- տարածքի սեփականության իրավունքի վկայականի պատճենը կամ փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն 1 տարի ժամկետով կնքված վարձակալության պայմանագիրը, գրանցված Հայաստանի Հանրապետության կառավարությանը առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
- հայտարարագիր տեխնիկական բավարար պայմանների (այդ թվում՝ չհրկիզվող պահարանի, դրամանիշի իսկությունն ստուգող սարքի, հեռախոսի, էլեկտրոնային վահանակի, ցուցանակի, որտեղ նշվում են արտարժույթի փոխանակման կետի աշխատակցի անունը, ազգանունը (անվանումը), արտարժույթի առք ու վաճառքի փոխարժեքները, աշխատանքային ժամերը) առկայության մասին,
- տեղեկանք աշխատանքային ռեժիմի վերաբերյալ՝ նշելով շաբաթվա աշխատանքային օրերը և ժամերը,
- Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր գրանցման վկայականի պատճենը,
- տեղեկանք ՀՀ պետական եկամուտների նախարարությունից հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) ստացման մասին,
- տեղեկանք տարածքի համապատասխանության վերաբերյալ,
- դրամապահոցի կամ չհրկիզվող պահարանների սենյակի բացակայության դեպքում՝ ինկասացիոն պայմանագրի պատճենը (շենքերում գործող փոխանակման կետերի համար):

– փոխանակման կետի մասնաճյուղ բացելու համար.
  - դիմում,
  - տեղեկանք արտարժույթի փոխանակման կետի աշխատակցի (աշխատակիցների) մասին,
  - մասնաճյուղի տարածքի սեփականության իրավունքի վկայականի պատճեն կամ փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն 1 տարի ժամկետով կնքված վարձակալության պայմանագիր,
  - հայտարարագիր տեխնիկական բավարար պայմանների (այդ թվում՝ չհրկիզվող պահարանի, դրամանիշի իսկությունն ստուգող սարքի, հեռախոսի, ցուցանակի, որտեղ նշվում են արտարժույթի փոխանակման կետի աշխատակցի անունը, ազգանունը (անվանումը), արտարժույթի առք ու վաճառքի փոխարժեքները) առկայության մասին,
  - տեղեկանք բանկից (բանկերից) իրավաբանական անձի հայկական դրամով և (կամ) առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով ցպահանջ կամ ժամկետային ներքոհիշյալ գումարների առկայության մասին՝
    - ֆիզիկական անձանց համար՝ 1 մլն դրամից (կամ դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից) ոչ պակաս,
    - իրավաբանական անձանց համար՝ 2 մլն դրամից (կամ դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից) ոչ պակաս,

– իրավաբանական անձի կանոնադրությունը, որտեղ պետք է ներառված լինի տվյալ մասնաճյուղը,

- **վճարել պետական տուրքը,**
  – ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,
  – իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:
  – Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12 եւ 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  – լիցենզիայի տրամադրման համար՝
    - ՀՀ կենտրոնական բանկը վերը նշված փաստաթղթերը ներկայացնելու պահից 30-օրյա ժամկետում պարտավոր է տալ լիցենզիա կամ ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ դիտողություններ ու առարկություններ՝ նշելով դիտողությունների եւ առարկությունների պատճառները եւ իրավական հիմքերը,
  – մասնաճյուղի բացման թույլտվություն տալու համար՝
    - ՀՀ կենտրոնական բանկը վերոհիշյալ փաստաթղթերն ստանալուց հետո, 20-օրյա ժամկետում, որոշում է կայացնում թույլտվություն տալու կամ դիմումը մերժելու մասին:
- **Մասնագիտական համապատասխանության ստուգումը.**
  – նախքան լիցենզիա տրամադրելու մասին որոշման ընդունումը ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է հայտատուի մասնագիտական համապատասխանության ստուգում:
- **Որոշման ընդունումը.**

- լիցենզիա ստանալու դիմումին համաձայնություն տալու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը որոշում կայացնելու պահից 1-օրյա ժամկետում աարտարժույթի փոխանակման կետին տալիս է լիցենզիա,
- իրավաբանական և ֆիզիկական անձ արտարժույթի փոխանակման կետի լիցենզիային կից, հատուկ գրությամբ, տրվում է այն անձի (անձանց) անունը և ազգանունը, ով նշված անձի անունից իրավունք ունի սահմանված կարգով իրականացնելու լիցենզիայով նախատեսված գործառնություններ,
- մասնաճյուղ բացելու թույլտվություն տալու դեպքում ՀՀ կենտրոնական բանկն արտարժույթի փոխանակման կետին տալիս է լիցենզիային կից գրություն:

▪ **Մերժումը.**

- ՀՀ կենտրոնական բանկը մերժում է դիմումը, եթե՝
  - ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում բացահայտվել են անարժանահավատ տվյալներ,
  - ֆիզիկական անձ արտարժույթի փոխանակման կետը կամ իրավաբանական անձի կողմից լիազորված անձինք չեն համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին,
  - գործունեության տարածքը չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,
  - ներկայացված փաստաթղթերն ամբողջական կամ բավարար չեն:

44. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋՆՈՐԴԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԻՆԿԱՍԱՏՈՐՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 1998 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 228 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ միջնորդագիրն անհրաժեշտ է ՀՀ ներքին գործերի նախարարությունից ինկասացիոն գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու համար:**
- **Տվյալ ատեստացիան անհրաժեշտ է անցնել ինկասատոր աշխատելու իրավունքի ձեռք բերման համար:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Նալբանդյան- 6,
    - Հեռախոս՝ 58 38 41:
  - Ինկասատորների թեկնածուների ատեստավորումը եւ ինկասացիոն ծառայություններին միջնորդագրի տրամադրումը ՀՀ կենտրոնական բանկում կազմակերպում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի հրամանով ստեղծված մշտական գործող հանձնաժողովը:

Միջնորդագիր եւ ինկասատորի վկայական ստացողները

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջնորդագիր կարող են ստանալ այն նոր կազմավորվող ինկասացիոն ծառայությունները, որոնք օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնում գրանցվել են որպես իրավաբանական անձ :**
- **Ինկասատորի վկայական կարող են ստանալ ՀՀ քաղաքացիները (ֆիզիկական անձինք):**

Միջնորդագիր ստանալու համար անհրաժեշտ է...

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացնել դիմում:**
- **Դիմումին կից ինկասացիոն ծառայությունները պետք է ներկայացնեն՝**
  - հիմնադիր եւ պետական գրանցման փաստաթղթերի պատճենները,
  - առնվազն չորս անձից բաղկացած ինկասատորների թեկնածուների ցուցակը,
  - ինկասատորների թեկնածուների աշխատանքային գրքույկներից քաղվածք,
  - ինկասատորների թեկնածուների զինվորական գրքույկները եւ անձնագրերը,
  - ինկասացիոն գործունեության նպատակով օգտագործվող շենքերի եւ շինությունների սեփականությունը կամ առնվազն երեք տարով վարձակալությունը հաստատող փաստաթղթերի պատճենները (սեփականության վկայականի կամ վարձակալության պայմանագրի պատճենը): Ընդ որում, ինկասացիոն գործունեության նպատակով օգտագործվող տարածքը պետք է լինի շենքի կամ շինության առաջին հարկում,
  - բիզնես ծրագիր, որը պարտադիր պետք է պարունակի շուկայի վերլուծությունը, ֆինանսական հոսքերը, ինչպես նաեւ ապահովագրական համակարգի միջոցով ռիսկերի նվազեցման հարցերը,
  - նվազագույն կանոնադրական կապիտալի առկայությունը հավաստող կանոնադրական կապիտալի կուտակման հաշվի մասին բանկից տրված տեղեկանք:

Միջնորդագրի տրամադրման եւ ինկասատորների ատեստավորման գործընթացը

- **Փաստաթղթերի ընդունումը.**
  - Կենտրոնական բանկի միջնորդագիրն ստանալու նպատակով ինկասացիոն ծառայության դիմումի ստացման օրվանից սկսած մինչեւ 10 օրվա ընթացքում լիցենզավորող հանձնաժողովն ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում ինկասացիոն ծառայությունից պահանջում լրացնել կիսատ կամ թերի փաստաթղթերը եւ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջներին դրանց համապատասխանության դեպքում ինկասացիոն ծառայության ինկասատորներին թույլ տալիս մասնակցել ատեստավորման:
- **Ինկասատորների ատեստավորումը.**

- հանձնաժողովը ինկասացիոն ծառայության ինկասատորների թեկնածուների ատեստավորումը կազմակերպում է 10-օրյա ժամկետում,
- ինկասատորների թեկնածուների ատեստավորման համար ՀՀ կենտրոնական բանկի հանձնաժողովը հիմք է ընդունում «Բանկերում դրամատոմսերի եւ մետաղադրամների տեսակավորման, ձեւավորման ու փաթեթավորման», ինչպես նաեւ «ՀՀ տարածքում գործող բանկերում կանխիկ դրամի եւ այլ արժեքների ինկասացիայի մասին» կարգերի իմացությունը,
- ինկասատորների թեկնածուների ատեստավորումն իրականացվում է հարցաթերթիկների միջոցով: Ինկասատորների թեկնածուները համարվում են ատեստավորված, եթե ճիշտ են պատասխանել հարցաթերթիկում նշված 5 հարցից 4-ին: 5 հարցից 3-ին ճիշտ պատասխանելու դեպքում հանձնաժողովը ինկասատորի թեկնածուի ատեստավորման համար կարող է լրացուցիչ հարցեր տալ,
- ԿԲ հանձնաժողովի կողմից չատեստավորված ինկասատորների թեկնածուները կրկին ատեստավորվելու համար ԿԲ կարող են ներկայանալ ոչ շուտ, քան մեկ ամիս հետո,
- ԿԲ-ում նախկինում ատեստավորված ինկասատորների թեկնածուները, որոնց վերաատեստավորման ժամկետը դեռեւս չի լրացել, համարվում են ատեստավորված:

- **Որոշման ընդունումը.**
  - ինկասատորների թեկնածուների ատեստավորումից հետո հանձնաժողովը 5-օրյա ժամկետում ՀՀ ԿԲ նախագահին է ներկայացնում եզրակացություն՝ ինկասացիոն ծառայությանը ՀՀ ԿԲ միջնորդագրի տրամադրման մասին,
  - ինկասացիոն ծառայությանը միջնորդագրի տրամադրման կամ մերժման մասին որոշումն ընդունվում է ՀՀ ԿԲ նախագահի կողմից՝ մշտական գործող հանձնաժողովի ներկայացրած եզրակացության հիման վրա:
- **Մերժումը.**
  - ՀՀ ԿԲ-ն ինկասացիոն ծառայությանը միջնորդագիր չի տրամադրում (մերժում է), եթե առկա են հետեւյալ հիմքերը.
    - ԿԲ-ում ատեստավորված ինկասատորների թիվը չի կազմում առնվազն 4 հոգի,
    - բիզնես ծրագիրը չի համապատասխանում սույն կարգի 2-րդ կետում նշված պահանջներին,
    - ծառայությունը չունի անհրաժեշտ աշխատանքային տարածքներ,
    - ինկասատորների թեկնածուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունները հավաստի չեն:

45. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐԻ ԵՎ ԲՈՐՍԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 1994 թվականի մարտի 13-ի թիվ115 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքային բորսաների եւ բորսային միջնորդների կողմից գործունեություն իրականացնելու համար:**
- **Նկարագրված ընթացակարգը չի վերաբերվում աշխատանքի, արժութային, ֆոնդային բորսաների, ապրանքային բորսաների ֆոնդային, արժութային բաժիններին:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **տրամադրվում է 3 տարի ժամկետով,**
- **լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան որակավորում,**
- **ձեռնարկությունների վերակազմավորման դեպքում լիցենզիան վերածեւակերպվում է,**
- **լիցենզիան կորցնելու դեպքում բորսան եւ բորսային միջնորդները պարտավոր են այդ մասին հայտարարություն տալ մամուլում, որից հետո ստանում են լիցենզիայի կրկնօրինակը՝ մուծելով վճար նվազագույն աշխատավարձի չափով,**
- **լիցենզիայի սահմանված ժամկետը լրանալուց հետո բորսայի կամ բորսային միջնորդների դիմումի հիման վրա լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է,**
- **լիցենզիայի փոխանցումը եւ օտարումն արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,
    - Հեռախոս՝ 59 53 04:
  - Բորսաներին եւ բորսային միջնորդներին գործունեության լիցենզիաներ տալու նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունում ստեղծվում է հանձնաժողով:

Լիցենզիա ստացողը

- **Ապրանքային բորսաների գործունեության լիցենզիա տրվում է՝**
  - բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ձեւով ստեղծված բորսաներին,
- **Բորսային միջնորդային գործունեության լիցենզիա տրվում է՝**
  - բրոքերային ձեռնարկություններին,
  - բրոքերային գրասենյակներին,
  - անկախ բրոքերներին:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ունենալ համապատասխան որակավորում բրոքերային միջնորդության լիցենզիա ստանալու համար.**
  - բրոքերային ձեռնարկությանը կամ գրասենյակին տրվում է լիցենզիա նրա տնօրենին (ղեկավարին) սահմանված կարգով որակավորելուց հետո, որն իրականացվում է լիցենզավորող հանձնաժողովի կողմից բրոքերային ձեռնարկությունների կամ գրասենյակների տնօրենների եւ անկախ բրոքերների տեստավորման միջոցով,
    - լիցենզավորող հանձնաժողովը մշակում եւ հաստատում է որակավորման տեստերը, սահմանում է ճիշտ պատասխանների այն քանակը, որը հնարավորություն է տալիս որակավորել դիմողին,
    - որակավորման տեստերի օգնությամբ ստուգվում են՝
      - ապրանքային բորսաների մասին գործող օրենսդրության իմացությունը,
      - բորսային առեւտրի կանոնների իմացությունը,
      - բորսային միջնորդների եւ նրանց պատվիրատուների փոխհարաբերությունների իմացությունը,
  - որակավորման քննություններն անց են կացվում գրավոր ձեւով,

- քննության արդյունքների մասին կազմվում է արձանագրություն եւ տեստավորման օրվանից 3 օր հետո հայտարարվում են դրա արդյունքները,
- լիցենզավորվող հանձնաժողովի կայացրած որոշման արդյունքները հայտարարվելուց հետո տեստավորման մասնակիցներն իրավունք ունեն եռօրյա ժամկետում գանգատարկել ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն,
- որակավորում չստացած դիմողներն իրավունք ունեն երկրորդ անգամ մասնակցելու որակավորման տեստավորմանը ընդհանուր հիմունքներով,
  - երկրորդ անգամ որակավորման տեստավորում չանցած դիմողներն առաջիկա 6 ամսվա ընթացքում իրավունք չունեն մասնակցելու որակավորման տեստավորմանը:

- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - Բորսային գործունեության լիցենզիա ստանալու համար բորսայի հիմնադիրները պետք է ներկայացնեն՝
    - դիմում,
    - հիմնադիր պայմանագիրը (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դեպքում),
    - բորսային կանոնադրությունը,
    - բորսային առեւտրի կանոնները,
  - Բորսային միջնորդության գործունեության լիցենզիա ստանալու համար՝
    - բրոքերային ձեռնարկությունը կամ գրասենյակը պետք է ներկայացնեն՝
      - դիմում,
      - հիմնադիր փաստաթղթերը,
    - անկախ բորքերները պետք է ներկայացնեն՝
      - դիմում,
- **վճարել համապատասխան վճար,**
  - նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - լիցենզավորվող հանձնաժողովը տալիս է լիցենզիա կամ գրավոր մերժում այն՝ փաստաթղթերի ստացման օրվանից 30 օրվա ընթացքում,
- **Որոշման ընդունումը.**
  - բորսաներին եւ բորսային միջնորդներին գործունեության լիցենզիաներ տալու նպատակով ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունում ստեղծվում է հանձնաժողով,
  - լիցենզավորվող հանձնաժողովն իր նիստերն անց է կացնում ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ,
  - լիցենզավորվող հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են նրա անդամների առնվազն 2/3-ը,
  - հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել են նիստին մասնակցած անդամների կեսից ավելին: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է,
  - լիցենզավորվող հանձնաժողովի նիստերը ձեւակերպվում են արձանագրությամբ, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը եւ քարտուղարը:
- **Մերժումը.**
  - լիցենզիա տալը կարող է մերժվել, եթե՝
    - բորսային հիմնադիր փաստաթղթերը հակասում են «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ օրենսդրության այլ ակտերի պահանջներին:

Լիցենզիայի գործողության ուժը կորցնելը

- **լիցենզիան կարող է ուժը կորցնել, եթե՝**
  - «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում,
  - եթե չեն կատարվում լիցենզիայում նախատեսված հատուկ պայմանները,
  - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկության լուծարման դեպքում:

- լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է բորսային կամ բորսայի միջնորդին, Հայաստանի Հանրապետության հարկային պետական տեսչությանը, ձեռնարկությունը գրանցող լիազորված պետական մարմնին եւ սպասարկող բանկին,
- լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում բորսային կամ բորսային միջնորդներին լիցենզիա տրվում է 1 տարի հետո,
- լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը ստանալուց հետո բորսան կամ բորսային միջնորդը իրավունք ունի 30-օրյա ժամկետում այն գանգատարկել դատական կարգով:

46. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲՈՐՍԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2000 թվականի փետրվարի 28-ի թիվ 46 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության տարածքում արժութային սակարկություններ իրականացնելու համար, այդ թվում՝**
  - արտարժույթի առք ու վաճառքի սակարկություններ,
  - արտարժույթով վարկային ռեսուրսների առք ու վաճառքի սակարկություններ,
  - արտարժույթով արժեթղթերի (ՀՀ դրամով կամ արտարժույթով արտահայտված) առք ու վաճառքի սակարկություններ:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **տրամադրվում է անժամկետ,**
- **լիցենզիաների ձեւերը համարվում են խիստ հաշվառման փաստաթղթեր, որոնց հաշվառումն ու պահպանումն իրականացվում է կենտրոնական բանկի բանկային վերահսկողության դեպարտամենտի կողմից,**
- **արտարժութային սակարկությունների կազմակերպման լիցենզիա ստացած բորսաները պարտավոր են արտարժույթի առք ու վաճառքի սակարկությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել կենտրոնական բանկ՝ վերջինիս կողմից սահմանված կարգով եւ ժամկետներում,**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Նալբանդյան 6,
    - Հեռախոս՝ 58 38 41:

Լիցենզիա ստացողը

- **լիցենզիան տրամադրվում է ֆոնդային բորսաներին եւ ֆոնդային ստորաբաժանում ունեցող այլ (ապրանքային) բորսաներին:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - Բորսային գործունեության լիցենզիա ստանալու համար բորսայի հիմնադիրները պետք է ներկայացնեն՝
    - դիմում,
    - բորսայի կանոնադրությունը, իսկ այն դեպքում, երբ լիցենզիան տրամադրվում է ապրանքային բորսային՝ բորսայի, ինչպես նաեւ ֆոնդային ստորաբաժանման կանոնադրությունները (կանոնակարգը),
    - բորսայի կողմից հաստատված արտարժութային սակարկությունների կազմակերպման ներքին կանոնակարգը,
    - բորսայական գործունեության լիցենզիայի պատճենը,
    - բորսայի հիմնադիրների ժողովի կամ իրավասու այլ մարմնի որոշումը, կամ քաղվածք՝ արտարժութային սակարկությունների անցկացման արձանագրությունից,
- **վճարել պետական տուրք,**
    - 24000 դրամ:
    - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - փաստաթղթերի ներկայացումից հետո, 30-օրյա ժամկետում, կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում լիցենզիա տալու կամ դիմումը մերժելու մասին,
  - կենտրոնական բանկի խորհրդի կողմից արտարժութային սակարկությունների կազմակերպման լիցենզիա տրամադրելու մասին որոշում կայացնելու պահից 1-օրյա ժամկետում կենտրոնական բանկի բանկային վերահսկողության դեպարտամենտի լիցենզավորման եւ բանկային ռեգիստրի բաժինը բորսային տրամադրում է արտարժութային սակարկությունների կազմակերպման լիցենզիա:
- **Որոշման ընդունումը.**
  - փաստաթղթերն ուսումնասիրվում են կենտրոնական բանկի բանկային վերահսկողության դեպարտամենտի լիցենզավորման եւ բանկային ռեգիստրի բաժնի, ֆինանսական գործառնությունների դեպարտամենտի եւ իրավաբանական վարչության կողմից, որից հետո ներկայացվում են կենտրոնական բանկի գրանցման եւ լիցենզավորման հանձնաժողովի քննարկմանը,
  - կենտրոնական բանկի գրանցման եւ լիցենզավորման հանձնաժողովում քննարկվելուց հետո կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով ներկայացվում են կենտրոնական բանկի խորհուրդ,
  - վերը նշված ժամկետում բորսայի դիմումը չքննարկվելու դեպքում լիցենզիա տրամադրելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված:
- **Մերժումը.**
  - լիցենզիա տալը կարող է մերժվել, եթե՝
    - ներկայացվել են պահանջվող ոչ բոլոր փաստաթղթերը,
    - ներկայացվել են բոլոր պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանցում հայտնաբերվել են կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին չհամապատասխանող դրույթներ,
  - բորսայի դիմումը մերժելու դեպքում կենտրոնական բանկի գրանցման եւ լիցենզավորման հանձնաժողովը գրավոր հայտնում է դիմող բորսային՝ նշելով մերժման պատճառները:

Լիցենզիայի գործողության ուժը կորցնելը

- **Լիցենզիան ուժը կորցնում է, եթե**
  - լիցենզիա ստանալու համար կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում բացահայտվել են անարժանահավատ տվյալներ,
  - արտարժութային սակարկություններում չնախատեսված արտարժութային գործառնություններ են իրականացվել,
  - ֆոնդային բորսան կամ ապրանքային բորսայի ֆոնդային ստորաբաժանումը լուծարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
  - բորսայի բորսայական գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել,
  - բորսան արտարժութային սակարկությունների կազմակերպման լիցենզիան ստանալուց հետո 6 ամիս արտարժութային սակարկություններ չի կազմակերպել,
  - ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:
- **Արտարժութային սակարկությունների կազմակերպման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում զանգվածային լրատվության միջոցներում հրապարակվելու օրվանից:**
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշումն ուժի մեջ մտնելու պահից բորսան զրկվում է արտարժութային սակարկություններ կազմակերպելու իրավունքից եւ պարտավոր է լիցենզիան եռօրյա ժամկետում հետ վերադարձնել կենտրոնական բանկ:**
- **Արտարժութային սակարկությունների կազմակերպման լիցենզիա ստանալու համար ներկայացված դիմումի մերժման կամ լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու դեպքում բորսան լիցենզավորման համար կարող է կրկին դիմել կենտրոնական բանկ ոչ շուտ, քան վերջին դիմումի ներկայացման կամ լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու օրվանից 3 ամիս անց:**

47. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի 1998 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 782 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ինքնուրույն գործող աուդիտորների եւ աուդիտորական ձեռնարկությունների կողմից աուդիտորական գործունեություն իրականացնելու համար:**
- **Ըստ աուդիտի առանձին տեսակների տրվում են հետեւյալ լիցենզիաները.**
  - ընդհանուր աուդիտ,
  - բանկերի աուդիտ,
  - բյուջետային հիմնարկների եւ համայնքների բյուջեների աուդիտ:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **տրամադրվում է 5 տարի ժամկետով,**
- **մասնագիտացման յուրաքանչյուր ուղղության համար աուդիտ իրականացնող անձին տրվում է առանձին լիցենզիա,**
- **եթե աուդիտին հարակից գործունեության առանձին տեսակներ իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվում է լիցենզավորում, ապա, բացի լիցենզիայից (անկախ տեսակից), աուդիտ իրականացնող անձը գործունեության նշված տեսակներով զբաղվելու համար պարտավոր է սահմանված կարգով ստանալ համապատասխան գործունեության լիցենզիա,**
- **լիցենզիայի փոխանցումը եւ օտարումն արգելվում է:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,
    - Հեռախոս՝ 59 53 04:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ**
  - աուդիտորի որակավորման վկայական ստացած անհատ ձեռներեցները,
  - ինչպես նաեւ կազմակերպությունները՝անկախ դրանց կազմակերպական-իրավական ձեւից (բացառությամբ բաց բաժնետիրական ընկերությունների), եթե՝
    - սահմանված կարգով որակավորվել է կազմակերպության հիմնադիրների (մասնակիցների) առնվազն 1/2-ը,
    - կազմակերպության հիմնական աշխատողներից առնվազն մեկն ունի լիցենզիա ստանալու հայտում նշված աուդիտորական գործունեության լիցենզիայի տեսակին համապատասխան մասնագիտացում,
    - կազմակերպության կանոնադրական կապիտալի առնվազն 1/2-ը պատկանում է աուդիտորի որակավորում ստացած հիմնադիրներին (փայատերեր, բաժնետերեր (մասնակիցներ), անդամներ):

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - կազմակերպությունները (նոր ստեղծվողների համար՝ հիմնադիրները) եւ անհատ ձեռներեցները լիցենզիա ստանալու համար լիազորված մարմին են ներկայացնում հայտ, որին կցվում են՝
    - հիմնադիր փաստաթղթերը, ինչպես նաեւ դրանց պատճենները (նոր ստեղծվողների համար),
    - պետական գրանցման վկայականի պատճենը (կազմակերպությունների համար),
    - համապատասխան անձանց տրված աուդիտորի որակավորման վկայականների պատճենները, իսկ բանկերի աուդիտի գծով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված աուդիտորի որակավորման վկայականների պատճենները.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության որոշումը կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման մասին (նոր ստեղծվողների համար),

– լիցենզավորված անձը պարտավոր է լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին փոփոխությունը կատարելու պահից 15-օրյա ժամկետում տեղեկացնել լիազորված մարմնին:

- **վճարել պետական տուրքը,**

– ֆիզիկական անձինք՝ 12000 դրամ,

– իրավաբանական անձինք՝ 24000 դրամ:

– Տվյալ ընթացակարգով լիցենզավորման ենթակա յուրաքանչյուր գործունեության տեսակի համար անհրաժեշտ է վճարել առանձին:

– Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 12 եւ 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**

– փաստաթղթերը լիազորված մարմնում մուտքագրվելու պահից 10-օրյա ժամկետում ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ չունենալու դեպքում լիազորված մարմինը պարտավոր է տալ լիցենզիա:

- **Որոշման ընդունումը.**

– լիցենզավորման կամ մերժման վերաբերյալ որոշումն ընդունվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության խորհրդի կողմից:

- **Մերժումը.**

– հայտը կարող է մերժվել, եթե.

- ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության եւ վերը նշված պահանջներին,

– 10-օրյա ժամկետում հայտատուն գրավոր տեղեկացվում է հայտի մերժման պատճառների եւ իրավական հիմքերի մասին,

– աննպատակահարմարության շարժառիթներով լիցենզիա չտալն արգելվում է,

– լիցենզիա ստանալու հայտի գրավոր մերժումը կարող է գանգատարկվել դատական կարգով:

Լիցենզիայի գործողության կասեցումը եւ ուժը կորցնելը

- **Կասեցումը.**

– Լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել, եթե՝

- լիցենզավորման համար, ինչպես նաեւ լիցենզիայի գործողության ընթացքում նախարարություն ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,

- ստուգումների արդյունքում հայտնաբերվել են աուդիտորական ձեռնարկությունների եւ անհատ աուդիտորների կողմից աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջների այնպիսի էական խախտումներ, որոնք կարող են վերացվել 30 օրվա ընթացքում,

- լիցենզավորման համար ներկայացվող փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին 15 օրվա ընթացքում չի տեղեկացվել նախարարությանը,

- խախտվել են որակավորման նկատմամբ ներկայացված պահանջները,

– լիցենզիայի գործողության կասեցման ժամկետը սահմանվում է մինչեւ 30 օր,

– լիցենզիայի գործողության կասեցման դեպքում լիազորված մարմինը դրա մասին գրավոր տեղեկացնում է աուդիտ իրականացնող անձին եւ հրապարակում մամուլում,

– լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի սկիզբ է համարվում մամուլում հրապարակման օրվան հաջորդող օրը,

– աուդիտ իրականացնող անձը պարտավոր է սահմանված ժամկետում վերացնել խախտումները եւ դրա մասին տեղեկացնել նախարարությանը,

- լիցենզիայի գործողության կասեցումը դադարեցվում է սահմանված ժամկետում խախտումները վերացնելու մասին աուդիտ իրականացնող անձի գրությունը (համապատասխան փաստաթղթերի հետ միասին) նախարարություն ներկայացնելու դեպքում,

- **Ուժը կորցնելը.**
  - Լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝
    - 30 օրվա ընթացքում աուդիտ իրականացնող անձը չի վերացրել լիցենզիայի գործողության կասեցման համար հիմք հանդիսացող խախտումները,
    - աուդիտ իրականացնող անձը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է սնանկ կամ լուծարվել է,
    - լրացել է աուդիտ իրականացնող անձի հիմնադիր փաստաթղթերում նշված գործունեության ժամկետը կամ ուժի մեջ են մտել այդ փաստաթղթերում նշված գործունեության դադարեցման այլ պայմաններ,
    - դատարանի որոշմամբ անվավեր է ճանաչվել աուդիտորական ձեռնարկության պետական գրանցումը,
    - աուդիտ իրականացնող անձը լիցենզիայի ստացման պահից մեկ տարվա ընթացքում չի իրականացրել գործունեություն,
    - մեկ տարվա ընթացքում կրկնակի կասեցվել է լիցենզիայի գործողությունը,
    - ուժը կորցրած է ճանաչվել լիցենզիա տալու համար անհրաժեշտ աուդիտորի որակավորման վկայականը,
    - աուդիտ իրականացնող անձը տվել է միտումնավոր կեղծ աուդիտորական եզրակացություն,
    - աուդիտ իրականացնող անձն աուդիտորական գործունեության ընթացքում ստացված եւ (կամ) իր կազմած փաստաթղթերը կամ դրանց պատճենները տրամադրել է երրորդ անձին, կամ, առանց իրավաբանական եւ ֆիզիկական անձանց գրավոր համաձայնության, հրապարակել է դրանք կամ դրանցում առկա տեղեկությունները:
  - լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը նախարարության կողմից 5-օրյա ժամկետում ուղարկվում է աուդիտ իրականացնող անձին եւ հրապարակվում մամուլում,
  - ուժը կորցրած ճանաչված լիցենզիան ենթակա է 10-օրյա ժամկետում վերադարձման ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն,
  - լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում՝ աուդիտ իրականացնող անձը կարող է ընդհանուր հիմունքներով դիմել նոր լիցենզիա ստանալու համար,
  - լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով:

48. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՈՒԴԻՏԻ ԳԾՈՎ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի 1999 թվականի հուլիսի 29-ի թիվ 287 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ որակավորումն անհրաժեշտ է ստանալ ընդհանուր աուդիտի ոլորտում գործունեություն իրականացնելու համար:**

Որակավորման առանձնահատկությունները

- **Որակավորման վկայականը տրվում է որակավորման քննության արդյունքների հիման վրա:**
- **Աուդիտորի որակավորման վկայականը տրվում է երկու տարի վեց ամիս ժամկետով:**
- **Հանձնաժողովը կարող է հաշվի առնել աուդիտորների հաշվետվությունների քննարկման արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կենտրոնական ապարատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկությունները եւ աուդիտորի որակավորման վկայականի գործողության ժամկետը երկարաձգել եւս մեկ տարով:**

Որակավորում տվող մարմինը

- **Որակավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր աուդիտի գծով աուդիտորների որակավորման հանձնաժողովի կողմից, որի նախագահն է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալը:**
- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,
    - Հեռախոս՝ 52 82 63:

Որակավորում ստացողը

- **Որակավորման քննություններին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող այն անձինք, որոնք ունեն.**
  - բարձրագույն կրթություն (ներառյալ լիցենզավորված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ստացած կրթությունը) կամ աուդիտորի մասնագիտացմամբ միջնակարգ կրթություն,
  - աուդիտորի որակավորման վկայական ստանալու համար հայտ ներկայացնելու օրվան նախորդող հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական (տնտեսագետի, ֆինանսիստի, հաշվապահի, վերստուգիչի, հարկային տեսուչի, աուդիտորի կամ աուդիտորական կազմակերպությունում՝ որպես մասնագետի, այդպիսի կազմակերպության ղեկավարի (տնօրեն, նախագահ կամ նրանց տեղակալ), տնտեսագիտական մասնագիտությամբ գիտական աշխատողի կամ դասախոսի) աշխատանքի փորձ:
- **Աուդիտորների որակավորման քննություններին մասնակցել չի թույլատրվում ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից դատավճռով զրկված անձանց:**

Որակավորում ստանալու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել հայտ, որին կցվում են.**
  - բարձրագույն (միջնակարգ-մասնագիտական) կրթության դիպլոմի պատճենը,
  - աշխատանքային գրքույկից կատարված քաղվածքը կամ դրա պատճենը եւ (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրի պատճենը եւ պայմանագրի կատարումը հաստատող տեղեկանքը,
  - երկու լուսանկար՝ 3 x 4 չափսի,
  - դատավճռի պատճենը (դատավճռով դատապարտված անձինք):
  - ՀՀ-ում կամ օտարերկրյա պետություններում սահմանված կարգով աուդիտորի որակավորում ստացած եւ վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական (աուդիտորի կամ աուդիտորական կազմակերպությունում՝ որպես մասնագետի, այդպիսի կազմակերպության ղեկավարի (տնօրեն, նախագահ կամ նրանց տեղակալ) աշխատանքի փորձ ունեցող հայտատուն (անկախ քաղաքացիությունից) վերոհիշյալ փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաեւ որակավորման վկայականի (հավաստագրի) նոտարական կարգով հաստատված պատճենը եւ իր վերջին աշխատավայրի ղեկավարի կողմից

տրված համապատասխան երաշխավորագիրը, որում նշվում է նաեւ հայտատուի կողմից կատարված աշխատանքների հիմնական ոլորտը եւ աուդիտի տեսակը:

- **վճարել պետական տուրքը.**
  - 3 հազար դրամ,
    - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի եռապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
  - պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի բնօրինակն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կենտրոնական ապարատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը, որն իր հերթին, մինչեւ քննության սկսվելը հանձնաժողովին է ներկայացնում վերջինիս կողմից սահմանված ձեւի տեղեկանք պետական տուրքի վճարումների մասին:

Որակավորման տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - հայտերը քննարկվում են հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պահից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում,
  - ներկայացվող պահանջներին չհամապատասխանելու դեպքում, փաստաթղթերը համապատասխան հիմնավորումներով վերադարձվում են հայտատուին՝այդ մասին տեղյակ պահելով հանձնաժողովին:
- **Որակավորման քննությունները.**
  - աուդիտորների որակավորման քննություններն անցկացվում են պարբերաբար՝ հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան ամսական մեկ անգամ,
  - որակավորման քննության անցկացման օրվա, ժամի եւ տեղի մասին հայտատուին տեղեկացվում է որակավորման քննությունից 15 օր առաջ,
  - հայտատուին թույլատրվում է մասնակցել քննությանը՝ միայն անձնագրի կամ նրա անձը հաստատող այլ փաստաթղթի առկայության դեպքում,
  - որակավորման քննություններն անց են կացվում հայերեն լեզվով՝ գրավոր,
  - քննության հարցաթերթիկները կազմվում են հետեւյալ 3. բաժիններից՝
    - I բաժին - տեսական հարցեր,
      - բաժնում ներառվում են 3 հարցեր, որոնցից յուրաքանչյուրը պետք է ընտրվի հաշվապահական հաշվառմանը, հարկային օրենսդրությանը եւ աուդիտորական գործունեությանը վերաբերող բաժիններից,
    - II բաժին - տեստեր,
      - բաժնում ներառվում են 30 հարցեր (տեստեր) հանձնաժողովի կողմից սահմանված համամասնությամբ,
    - III բաժին - խնդիրներ,
      - բաժնում ներառված խնդիրներից 3-ը ֆինանսական վերլուծության վերաբերյալ են, 3-ը՝ հարկային օրենսդրության: Վերջիններիս ընտրությունը կատարվում է, հաշվի առնելով դրանց բարդության աստիճանը, այսինքն՝ ընտրվում է համապատասխանաբար 2, 3 եւ 4 առավելագույն միավորով գնահատվող 1 - ական խնդիր,
  - հարցաթերթիկի հարցերին պատասխանելու համար հայտատուին տրվում է չորս ժամ,
  - որակավորման քննություններն անց են կացվում մեկ փուլով՝ գրավոր, որի ընդհանուր արդյունքները գնահատվում են 60 միավորի սահմաններում: Ընդ որում, տեսական հարցերի բաժնում ներառված 3 հարցերի պատասխանները գնահատվում են առավելագույնը՝ 15 միավոր (յուրաքանչյուրը՝ 0-5 միավորի սահմաններում), 30 տեստերինը՝ 30 միավոր (յուրաքանչյուրը՝ 0 կամ 1 միավոր), 6 խնդիրները՝ 15 միավոր, այդ թվում՝ վերլուծությանը վերաբերող 3 խնդիրներինը՝ 6 միավոր (յուրաքանչյուրը 0-2 միավոր), հարկային օրենսդրությանը վերաբերող 3 խնդիրներինը՝ 9 միավոր (յուրաքանչյուրը՝ 0-2, 0-3 եւ 0-4 միավոր),
  - քննության պատասխաններն ամփոփվում են հանձնաժողովի որոշմամբ հաստատված ձեւով, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը եւ բոլոր անդամները (ներկա գտնվող): Քննության արդյունքում 46 եւ ավելի միավոր հավաքած հայտատուները համարվում են որակավորված,
  - երկրորդ անգամ որակավորման քննություններին դիմորդը կարող է մասնակցել ընդհանուր հիմունքներով:
- **Հարցազրույցը.**
  - օտարերկրյա պետություններում սահմանված կարգով աուդիտորի որակավորում ստացած եւ վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական (աուդիտորի կամ աուդիտորական կազմակերպությունում՝ որպես մասնագետի՝ այդպիսի կազմակերպության ղեկավարի (տնօրեն, նախագահ կամ նրանց տեղակալ) աշխատանքի փորձ ունեցող հայտատուն կարող է որակավորման քննությունը հանձնել հարցազրույցի միջոցով, որն անց է կացվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված աուդիտորների որակավորման քննությունների ծրագրի շրջանակներում,

- հարցազրույցի ընթացքում հարցեր կարող են տրվել նաեւ հայտատուի կողմից կատարված մասնագիտական աշխատանքների բնույթի եւ բովանդակության վերաբերյալ,
- հայտատուի որակավորման ժամանակ հաշվի են առնվում նրա մասնագիտական կարողությունների գնահատման չափանիշները, այդ թվում՝
  - կրթությունը,
  - օտարերկրյա պետությունում որակավորում ստանալու ժամանակ որակավորմանը ներկայացված պահանջները, մասնավորապես՝ որակավորման ծրագրում հաշվապահական հաշվառման եւ աուդիտի միջազգային ստանդարտների կամ հաշվապահական հաշվառման միջազգային ճանաչում ունեցող այլ համակարգերի ներառված լինելու հանգամանքը,
  - մասնագիտական փորձառությունը եւ Հայաստանի Հանրապետության կամ ԱՊՀ երկրների հաշվապահական հաշվառման, հարկային եւ տնտեսական օրենսդրությանը տիրապետելու աստիճանը,
- հարցազրույցի ընդհանուր տեւողությունը սահմանվում է մինչեւ մեկ ժամ,
- հայտատուի պատասխանները գնահատելիս հանձնաժողովի անդամների կողմից օգտագործվում են «դրական» կամ «բացասական» բառերը, որի մասին նրանք կատարում են գրառում՝ հանձնաժողովի որոշմամբ հաստատված ձեւում:

- **Որակավորում շնորհելը.**
  - Հանձնաժողովը հայտատուի հավաքած միավորների հանրագումարի հիման վրա որոշում է ընդունում նրան աուդիտորի որակավորում շնորհելու վերաբերյալ,
    - օտարերկրյա պետություններում սահմանված կարգով աուդիտորի որակավորում ստացած եւ վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական (աուդիտորի կամ աուդիտորական կազմակերպությունում՝ որպես մասնագետի՝ այդպիսի կազմակերպության ղեկավարի (տնօրեն, նախագահ կամ նրանց տեղակալ) աշխատանքի փորձ ունեցող հայտատուն համարվում է որակավորված, եթե հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի անդամների կողմից նշանակված «դրական» գնահատականների թիվը գերազանցում է «բացասական» գնահատականների թվին, իսկ դրանց հավասար լինելու դեպքում վճռորոշ է համարվում հանձնաժողովի նախագահի (նիստը նախագահողի) կողմից նշանակված գնահատականը,
  - հանձնաժողովի որոշման հիման վրա որակավորված հայտատուին տրվում է աուդիտորի որակավորման վկայական,
  - աուդիտորի որակավորման վկայականը լրացվում եւ տրվում է հանձնաժողովի կողմից որոշման ընդունման օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում,
  - աուդիտորի կողմից չստացված որակավորման վկայականը հանձնաժողովի կողմից պահպանվում է մինչեւ վկայականի գործողության ժամկետի լրանալը:

- **Կրկնօրինակի տրամադրումը.**
  - որակավորման վկայականը կորցնելու դեպքում, աուդիտորը պարտավոր է 10-օրյա ժամկետում այդ մասին գրավոր հայտնել հանձնաժողովին: Կորցրած վկայականը հանձնաժողովի որոշմամբ համարվում է անվավեր, իսկ դրա փոխարեն սահմանված կարգով տրվում է նոր վկայական "Կրկնօրինակ" նշագրումով:

- **Մերժումը.**
  - հայտատուի կողմից հանձնաժողովին ոչ հավաստի տեղեկություններ ներկայացվելու դեպքում հայտատուին չի թույլատրվում մասնակցել քննությանը:
  - Հայտատուի կողմից որակավորման քննության արդյունքները կարող են գանգատարկվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ քննության արդյունքները հայտնելու (հրապարակելու) օրվանից 15 օրվա ընթացքում, ինչպես նաեւ՝ դատական կարգով:

- **Որակավորման վկայականի ուժը կորցնելը.**
  - Որակավորումը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե որակավորման վկայականը տալուց հետո հայտնաբերվում է, որ հայտատուն հանձնաժողովին ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ:

49. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 1996 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 368 որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 1999թ. մարտի 30-ի թիվ 123 և 2000թ. հունիսի 23-ի թիվ 123 հրամաններով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է հետևյալ տեսակների ապահովագրական գործունեության իրականացման համար.**
  - կյանքի ապահովագրություն,
  - ոչ կյանքի ապահովագրություն.
    - դժբախտ դեպքերի և հիվանդությունների ապահովագրություն,
    - բժշկական ապահովագրություն,
    - տրանսպորտային միջոցների ապահովագրություն,
    - բեռների փոխադրման ապահովագրություն,
    - գույքային ապահովագրության այլ տեսակներ,
    - ֆինանսական ռիսկերի ապահովագրություն,
    - վարկերի չմարման համար վարկառուների պատասխանատվության ապահովագրություն,
    - ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի պատասխանատվության ապահովագրություն,
    - պատասխանատվության այլ տեսակների ապահովագրություն,
  - վերաապահովագրություն:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Ապահովագրական գործունեության լիցենզիան անժամկետ է:**
- **Ապահովագրողների անմիջական գործունեության առարկա չեն կարող լինել արտադրական, առևտրամիջնորդային, բանկային գործունեությունները:**
- **Ապահովագրական բառը կամ դրա ածանցյալներն իրենց անվանման մեջ կարող են օգտագործել միայն լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք:**
- **Լիցենզիայում նախատեսված իրավունքները չեն կարող փոխանցվել կամ այլ կերպ օտարվել:**
- **Տրվում է ոչ մրցութային կարգով:**
- **Ապահովագրական գործունեության լիցենզիայում նշվում են լիցենզիայի գրանցման համարը, ապահովագրողի լրիվ ֆիրմային անվանումը, ապահովագրողի կազմակերպական-իրավական տեսակը, լիցենզիան տալու ամսաթիվը եւ թույլատրված գործունեության տեսակները:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,
    - Հեռախոս՝ 59 53 04:

Լիցենզիա ստացողը

- **Ապահովագրությունը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, սահմանված կարգով լիցենզավորված և գրանցված ապահովագրական ընկերությունների կողմից, որոնք իրենց կազմակերպական-իրավական տեսակով կարող են լինել՝**
  - բաժնետիրական ընկերություններ,
  - սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ:
- **Ապահովագրողի ղեկավար չեն կարող լինել՝**
  - դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք,
  - դատավճռով որոշակի պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք,

- սնանկ ճանաչված և չմարած (չներված) պարտավորություններ ունեցող անձինք,
- այն անձինք, որոնց ապօրինի գործողությունները նախկինում հանգեցրել են ապահովագրողների կամ այլ իրավաբանական անձանց սնանկացմանը:

- **Ապահովագրողի տնօրենն ու գլխավոր հաշվապահը պետք է ունենան մասնագիտական որակավորում: Որակավորման կարգն ու չափանիշները սահմանում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել դիմում, որին կցվում են հետեւյալ փաստաթղթերը.**
  - ապահովագրողի հիմնադիր փաստաթղթերը (կանոնադրություն եւ (կամ) հիմնադիր պայմանագիր),
  - ապահովագրողի գործունեության բիզնես-նախագիծը, որը պետք է ներառի ապահովագրական գործունեության տեսակները, եւ ըստ յուրաքանչյուր տեսակի՝
    - կնքվելիք պայմանագրերի թիվը,
    - ապահովագրական գումարի չափը,
    - ապահովագրական սակագները,
    - ապահովագրավճարի չափը,
    - կոմիսիոն վարձատրության եւ տանտյեմների չափը,
    - գործավարման ծախսերի մեծությունը,
    - հատկացումները ապահովագրական պահուստներին,
    - վերաապահովագրության ծավալները,
    - վճարվելիք հատուցումների ծավալը,
    - շահույթը (վնասը),
    - հայտարարված կանոնադրական հիմնադրամի գումարի 30 տոկոսի վճարման անդորրագրի պատճենը,
    - ապահովագրական գործունեության լիցենզիա տալու համար վճարված պետական տուրքի անդորրագրի պատճենը,
    - վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվեկշիռը (գործող ապահովագրողի համար),
    - ապահովագրողի կողմից հաստատված ապահովագրության յուրաքանչյուր տեսակի պայմանները, որոնք ընդգրկում են՝
      - ապահովագրության օբյեկտը,
      - ապահովագրական պատահարների սահմանումը,
      - ապահովագրության ժամկետները,
      - ապահովագրավճարի (պրեմիայի) վճարման կարգը եւ ժամկետները,
      - կողմերի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները եւ ապահովագրական հատկացումների հնարավոր մերժման դեպքերը,
      - վեճերի լուծման կարգը եւ պայմանների հստակությունը ըստ ապահովագրության պայմանագրերի,
      - բժշկական ապահովագրության դեպքում պայմանագիր՝ կնքված բուժհիմնարկների հետ,
  - ապահովագրողի տնօրենի եւ գլխավոր հաշվապահի մասնագիտական որակավորման վկայականների պատճենները:
- Ապահովագրության պայմաններին կցվում են պոլիսների (ապահովագրական վկայագրերի) օրինակները: Պոլիսները ենթակա են գրանցման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից: Այդ գրանցումը հաստատվում է պոլիսի ձեւաթղթի բնօրինակի առաջին էջի հակառակ կողմի վերին աջ անկյունում դրված դրոշմակով:
- Օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ հիմնադրվող ապահովագրողները լիցենզիա ստանալու համար վերը նշված փաստաթղթերից բացի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն լրացուցիչ ներկայացնում են նախորդ երեք տարվա հաշվապահական հաշվեկշիռները եւ աուդիտորական եզրակացությունը,

- **համալրել կանոնադրական հիմնադրամի 30 տոկոսը,**
  - կանոնադրական հիմնադրամի նվազագույն մեծությունը սահմանված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հետևյալ ժամանակացույցով,
    - 1999 թվականի հուլիսի 1-ից 30 մլն դրամ,
    - 2001 թվականի հունվարի 1-ից 50 մլն դրամ,
- **վճարել պետական տուրքը,**
  - 600 հազար դրամ:
  - Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 600-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - Սահմանված կարգով փաստաթղթերը ներկայացնելու օրվանից մեկամսյա ժամկետում նախարարությունը պարտավոր է որոշում կայացնել ներկայացված դիմումի վերաբերյալ: Լիցենզիա տալու կամ մերժելու մասին որոշումը եռօրյա ժամկետում հանձնվում է դիմողին:
- **Մերժումը.**

- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կարող է մերժել դիմումը, եթե առկա է հետեւյալ պայմաններից որեւէ մեկը՝
  - ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում վերը նշված պահանջներին եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը.
  - ապահովագրողի ղեկավարի եւ գլխավոր հաշվապահի մասնագիտական որակավորումը չի համապատասխանում նախարարության կողմից ներկայացվող պահանջներին,
- մերժման դեպքում դիմողը լիցենզիայի մերժումը կարող է գանգատարկել դատական կարգով:

▪ **Փոփոխությունների գրանցումը.**

- Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրողները պարտավոր են մեկամսյա ժամկետում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը ծանուցել հետեւյալ փոփոխությունների մասին՝
  - ապահովագրողի կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները,
  - կանոնադրական հիմնադրամի չափի փոփոխությունը,
  - ապահովագրողի լուծարման վերաբերյալ տեղեկությունները,
- նախարարությունը գրանցում է փոփոխությունները, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենքներին եւ իրավական այլ ակտերին:

Լիցենզիայի անվավեր ճանաչումը, ուժը կորցրած ճանաչելը, կասեցումը եւ չեղյալ համարելը

▪ **Լիցենզիայի անվավեր ճանաչումը.**

- լիցենզիան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հայցով անվավեր է ճանաչվում դատական կարգով,
- լիցենզիան անվավեր ճանաչելու որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ապահովագրողը զրկվում է ապահովագրական գործունեություն իրականացնելու իրավունքից, բացառությամբ այն գործարքների, որոնք ուղղված են ապահովադիրների նկատմամբ նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը,

▪ **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը.**

- լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե՝
  - խախտվել են վերը նշված պահանջները,
  - ապահովագրողը լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում ապահովագրական գործունեություն չի իրականացրել,
  - ապահովագրողը նախարարության կողմից սահմանված ժամկետում չի կատարել խախտումները վերացնելու վերաբերյալ վերջինիս հանձնարարականները,
  - դադարել է ապահովագրողի գործունեությունը, կամ ուժի մեջ են մտել նրա հիմնադիր փաստաթղթերում նշված գործունեության դադարման այլ պայմաններ,
- լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության որոշումն անմիջապես հրապարակվում է,
- լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշման ուժի մեջ մտնելու պահից ապահովագրողը զրկվում է ապահովագրական գործունեություն իրականացնելու իրավունքից, բացառությամբ այն գործարքների, որոնք ուղղված են ապահովադիրների նկատմամբ նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը,
- լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ նախարարության որոշման պատճենը որոշման ընդունման հիմքերի հետ միասին եռօրյա ժամկետում տրամադրվում է ապահովագրողին,

▪ **Լիցենզիայի գործողությունը կասեցնելը և չեղյալ համարելը.**

- լիցենզավորված ապահովագրողի կողմից Հայաստանի Հանրապետության օրենքների եւ իրավական այլ ակտերի դրույթների խախտման դեպքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կարող է կասեցնել տրված լիցենզիայի գործողությունը: Լիցենզիայի գործողության կասեցման ժամկետը սահմանվում է նախարարության կողմից եւ չի կարող գերազանցել 45 օրը,
- լիցենզիայի գործողության կասեցման հիմքերի ի հայտ գալու դեպքում նախարարությունն այդ մասին տեղեկացնում է լիցենզավորված ապահովագրողին եւ նրան հնարավորություն տալիս վերացնելու թույլ տրված խախտումները,
- լիցենզիայի գործողության կասեցման համար կարող է հիմք հանդիսանալ հետեւյալ պատճառներից որեւէ մեկը՝
  - նախարարությանը ներկայացված փաստաթղթերը պարունակում են ոչ ճիշտ տեղեկություններ,
  - ապահովագրողի գործունեության ստուգման արդյունքներով հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետության օրենքների եւ իրավական այլ ակտերի պահանջների խախտումներ,

- անվավեր է ճանաչվել ապահովագրողի մասնագիտական որակավորման վկայականը,
- հիմնադիր փաստաթղթերում տեղ գտած փոփոխությունների մասին տեղյակ չի պահվել նախարարությանը,
- ապահովագրողն իրականացրել է ապահովագրական գործունեության տեսակներ, որոնք նախատեսված չեն լիցենզիայում,
- ապահովագրական պահուստների ձեւավորման եւ օգտագործման հետ կապված խախտումներ:

– ապահովագրողը պարտավոր է սահմանված ժամկետում վերացնել վերոհիշյալ խախտումները եւ այդ մասին տեղեկացնել նախարարությանը,

– սահմանված ժամկետում վերոհիշյալ խախտումները չվերացնելու դեպքում լիցենզիան նախարարության որոշմամբ չեղյալ է համարվում,

– մեկ տարվա ընթացքում լիցենզիայի գործողության երկրորդ անգամ կասեցումը հանգեցնում է լիցենզիայի չեղյալ համարման,

– լիցենզիան չեղյալ համարելու վերաբերյալ որոշման պատճենը 5-օրյա ժամկետում ուղարկվում է ապահովագրողին,

– լիցենզիան չեղյալ համարելու վերաբերյալ որոշման պատճենը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում այն կարող է գանգատարկվել դատական կարգով:

50. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ (ԲՐՈՔԵՐԱՅԻՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 1996 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 368 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է ապահովագրական (վերաապահովագրական) շուկայում ապահովադրի եւ ապահովագրողի միջեւապահովագրական միջնորդային գործունեություն, ինչպես նաեւ ապահովագրողի եւ վերաապահովագրողի միջեւ ապահովագրական ռիսկերի տեղաբաշխում եւ լիազորագրային կառավարում իրականացնելու համար:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Լիցենզիան տրվում է երեք տարի ժամկետով,**
- **տրվում է ոչ մրցութային կարգով,**
- **լիցենզիայում նախատեսված իրավունքները չեն կարող փոխանցվել կամ այլ կերպ օտարվել:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,
    - Հեռախոս՝ 59 53 04:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ ՀՀ ձեռնարկությունները և անհատ ձեռներեցները:**
- **Ապահովագրական միջնորդային գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ է պահպանել հետեւյալ պահանջները.**
  - ապահովագրական միջնորդային գործունեությունն իրականացնել ապահովագրական բրոքերների եւ պատվիրատուների (ապահովադիրների, ապահովագրողների եւ վերաապահովագրողների) միջեւ կնքված ապահովագրական միջնորդային պայմանագրերի հիման վրա,
  - ապահովագրական բրոքերները պարտավոր են ապահովադիրներին շահավետ պայմաններով ապահովագրել հուսալի ապահովագրողների մոտ, իսկ ապահովագրողների ապահովագրական ռիսկերը տեղաբաշխել հուսալի վերաապահովագրողների մոտ,
  - ձեռնարկության տնօրենն ու անհատ ձեռներեցը պետք է ունենան ապահովագրական բրոքերի որակավորում: Որակավորման կարգն ու չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել դիմում, որին կցվում են.**
  - սահմանված կարգով վավերացված հիմնադիր փաստաթղթերը (2 օրինակից),
  - տնօրենի մասնագիտական որակավորման վկայականի պատճենը,
  - ապահովագրական միջնորդային գործունեության լիցենզիա տալու համար գանձվող պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,
  - վերջին հաշվետու ժամանակաշրջանի տարեկան հաշվապահական հաշվետվությունները (գործող ձեռնարկությունների համար):
- **Անհատ ձեռներեցները դիմումին կից ներկայացնում են.**
  - ապահովագրական բրոքերների որակավորման վկայականի պատճենը,
  - ապահովագրական միջնորդային գործունեության լիցենզիա տալու համար գանձվող պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը:
- **Վճարել պետական տուրքը,**
  - 600 հազար դրամ:

- Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 600-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը պարտավոր է 15-օրյա ժամկետում որոշում կայացնել ներկայացված դիմումի վերաբերյալ: Լիցենզիան տալու կամ մերժելու վերաբերյալ որոշումը դիմողին հանձնվում է որոշումը կայացնելուց հետո երեք օրվա ընթացքում:
- **Մերժումը.**
  - ապահովագրական միջնորդային գործունեության լիցենզիա ստանալու համար տրված դիմումը կարող է մերժվել, եթե առկա է հետեւյալ պայմաններից որեւէ մեկը՝
    - ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի պահանջներին եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը,
    - համապատասխան մասնագիտական որակավորման բացակայության դեպքում,
  - մերժման դեպքում դիմողը կարող է լիցենզիայի մերժումը 30 օրվա ընթացքում գանգատարկել դատական կարգով:
- **Փոփոխությունների գրանցումը.**
  - փաստաթղթերում տեղ գտած փոփոխությունների մասին լիցենզավորված անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը:
- **Լիցենզիայի վերականգնումը.**
  - լիցենզիայի կորստի դեպքում ապահովագրական բրոքերը պետք է հայտարարություն տա մամուլում եւ եռօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնի նախարարությանը:
  - ապահովագրական միջնորդային գործունեության լիցենզիան վերականգնվում է 10-օրյա ժամկետում:

Լիցենզիան չեղյալ համարելը եւ անվավեր ճանաչելը

- **Լիցենզիան չեղյալ համարելը.**
  - լիցենզիան չեղյալ համարելու հիմք կարող են հանդիսանալ հետեւյալ պատճառները՝
    - նախարարությանը ներկայացված փաստաթղթերը պարունակում են ոչ ճիշտ տեղեկություններ,
    - ապահովագրական բրոքերի գործունեության ստուգման արդյունքներով հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետության օրենքների եւ իրավական ակտերի պահանջների խախտումներ,
    - անվավեր է ճանաչվել ապահովագրական բրոքերի որակավորման վկայականը,
    - չեն պահպանվել սույն կարգի մյուս պահանջները,
  - լիցենզիան չեղյալ համարելու համար հիմքերի ի հայտ գալու դեպքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը սահմանում է 45 - օրյա ժամկետ թույլ տրված խախտումները վերացնելու համար,
  - թույլ տրված խախտումները սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում նախարարությունը կարող է լիցենզիան չեղյալ համարել,
  - լիցենզիան չեղյալ համարելու որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է հասցեատիրոջը,
  - լիցենզիան չեղյալ համարելու վերաբերյալ որոշման պատճենն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում այն կարող է գանգատարկվել դատական կարգով,
- **Լիցենզիան անվավեր ճանաչելը.**
  - լիցենզիան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հայցով անվավեր է ճանաչվում դատական կարգով:

51. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 1999 թվականի ապրիլի 15-ի թիվ 152 հրամանով հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ որակավորումն անհրաժեշտ է ստանալ ապահովագրական ընկերությունների ղեկավար (տնօրեն, կառավարիչ), գլխավոր հաշվապահ, ինչպես նաեւ ապահովագրական բրոքեր աշխատելու համար:**

Որակավորման առանձնահատկությունները

- **Որակավորման վկայականը տրվում է որակավորման քննության արդյունքների հիման վրա,**
  - որակավորման քննությունը որակավորում ստանալու համար հայտ ներկայացրած, ինչպես նաեւ այդպիսի որակավորում ունեցող անձանց գիտելիքների ստուգման ընթացակարգ է,
  - որակավորման քննությունների ծրագիրը մշակվում եւ հաստատվում է Հայաստանի Հանրապետության օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի շրջանակներում, որը պարբերաբար վերանայվում է՝ Հայաստանի Հանրապետության օրենքներում եւ այլ նորմատիվ իրավական ակտերում կատարված փոփոխություններին եւ լրացումներին համապատասխան:
- **Որակավորման վկայականը ուժի մեջ է երկու տարի:**

Որակավորում տվող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,
    - Հեռախոս՝ 59 53 04:

Որակավորում ստացողը

- **Որակավորման քննություններին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող այն անձինք, որոնք ունեն բարձրագույն կամ մասնագիտական միջնակարգ կրթություն:**
- **Որակավորման քննություններին մասնակցել չի թույլատրվում տնտեսական հանցագործություն կատարելու համար ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված, ինչպես նաեւ որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման ոլորտներում որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից դատավճռով զրկված անձանց:**

Որակավորում ստանալու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել հայտ, որին կցվում են.**
  - որակավորման հանձնաժողովի նախագահին ուղղված դիմում,
  - բարձրագույն (միջնակարգ-մասնագիտական) կրթության դիպլոմի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատճենը,
  - հայտատուի մասին տվյալները ըստ հավելված 1-ում բերված ձեւի,
  - երկու լուսանկար՝ «3x4» չափսի:
- **Հայտերն ընդունվում են հետեւյալ սահմանված ուղղություններով՝**
  - ապահովագրական ընկերության ղեկավար,
  - ապահովագրական ընկերության գլխավոր հաշվապահ,
  - ապահովագրական բրոքեր:
- **Մասնագիտացման յուրաքանչյուր ուղղության համար քննություններն անց են կացվում առանձին՝ ապահովագրական ընկերությունների ղեկավարների, գլխավոր հաշվապահների եւ ապահովագրական բրոքերների համար:**

Որակավորման տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - Հայտերը քննարկվում են որակավորման հանձնաժողովի կողմից, անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պահից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում: Ներկայացվող պահանջներին չհամապատասխանելու դեպքում փաստաթղթերը վերադարձվում են հայտատուին՝ համապատասխան հիմնավորումներով:
- **Որակավորման քննությունները.**
  - որակավորման քննություններն անց են կացվում պարբերաբար՝ հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան երկու ամիսը մեկ անգամ: Որակավորման քննության անցկացման օրվա, ժամի եւ տեղի մասին հայտատուին տեղեկացվում է որակավորման քննությունից 15 օր առաջ,
  - հայտատուին հնարավորություն է տրվում ծանոթանալ քննության հարցերի թեմատիկ ցանկին եւ համակարգչի օգտագործմամբ որակավորման քննությունների անցկացման կանոններին,
  - հայտատուին թույլատրվում է մասնակցել քննությանը միայն անձնագրի կամ նրա անձը հաստատող այլ փաստաթղթի առկայության դեպքում: Իր անձը հաստատող որեւէ փաստաթուղթ չունեցող, ինչպես նաեւ քննությանն ուշացումով ներկայացած հայտատուն համարվում է չներկայացած եւ նա կարող է մասնակցել հաջորդ քննությանը,
  - որակավորման քննություններն անց են կացվում հայերեն լեզվով՝ գրավոր տեստերի ու խնդիրների եւ բանավոր քննությունների միջոցով: Գրավոր տեստերին եւ խնդրին պատասխանելու համար տրվում է երկու ժամ: Տեստերում ներառված հարցերի ցանկը կազմվում է սույն կարգի 3-րդ կետով սահմանված կարգով հաստատված ծրագրի հիման վրա եւ հաստատվում հանձնաժողովի որոշմամբ, իսկ այդ հարցերից բաղկացած առանձին տեստերը կազմվում են յուրաքանչյուր քննությունից երկու օր առաջ եւ պահվում հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի մոտ՝ փակ, հանձնաժողովի նախագահի եւ պատասխանատու քարտուղարի ստորագրություններով վավերացված ծրարում: Վերջինս բացվում է քննության ժամանակ՝հանձնաժողովի անդամների եւ հայտատուների ներկայությամբ: Յուրաքանչյուր քննության համար կազմվում են առանձին տեստեր եւ խնդիրներ, ինչպես նաեւ բանավոր քննությունների հարցաթերթիկներ, երեք հարցով՝ նշված ծրագրի շրջանակներում,
  - քննության ընթացքում հայտատուին չի թույլատրվում օգտվել օրենքներից, այլ նորմատիվ իրավական ակտերից, մասնագիտական գրականությունից, տեղեկատուներից, երկխոսության մեջ մտնել ուրիշ հայտատուների հետ: Կողմնակի անձանց արգելվում է ներկա գտնվել որակավորման քննությանը,
  - քննություններն անց են կացվում երկու փուլով՝ տեստավորում գրավոր տեստերով կամ համակարգչի օգտագործմամբ եւ բանավոր, որոնց ընդհանուր արդյունքները գնահատվում են 31 միավորի սահմաններում: Գրավոր քննությունների հարցաթերթիկներում ընդգրկվում են 40-ական հարցերից բաղկացած տեստեր եւ 1 խնդիր: Տեստի յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 0,5 միավոր, իսկ խնդրի պատասխանը կարող է գնահատվել 0, 0,5 կամ 1 միավոր: Գրավոր քննության պատասխաններն ամփոփվում են հանձնաժողովի որոշմամբ հաստատված ձեւով, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը եւ բոլոր անդամները (ներկա գտնվող), որից հետո նույն օրը, անց է կացվում բանավոր քննություն: Բանավոր քննությանը թույլատրվում է մասնակցել գրավոր քննության արդյունքում 18 միավոր հավաքած հայտատուներին,
  - բանավոր քննության արդյունքները գնահատվում են 10 միավորի սահմաններում: Քննության հարցաթերթիկները կազմվում են 2-ական հարցերից: Յուրաքանչյուր հարցի պատասխանը հանձնաժողովի առանձին անդամների կողմից գնահատվում է 0, 1, 2, 3, 4 կամ 5 միավոր, որի մասին կատարվում են գրառումներ՝ հանձնաժողովի կողմից հաստատված ձեւերում: Բանավոր քննությունների արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն՝ հանձնաժողովի նախագահի եւ անդամների ստորագրությամբ,
  - քննության արդյունքներով 24 եւ ավելին միավոր հավաքած հայտատուները համարվում են որակավորված:
- **Որակավորում շնորհելը.**
  - որակավորման հանձնաժողովը հայտատուի հավաքած միավորների հանրագումարի հիման վրա որոշում է ընդունում նրան որակավորում շնորհելու վերաբերյալ, հաշվի առնելով վերը նշված պահանջները,
  - քննության արդյունքները հայտարարվում են որակավորման հանձնաժողովի նիստի կողմից նույն օրը,
  - հայտատուի կողմից որակավորման քննության արդյունքները կարող են գանգատարկվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
  - հանձնաժողովի որոշման հիման վրա տրվում է համապատասխան որակավորման վկայական, որի ձեւը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը,
  - որակավորման վկայականը լրացվում եւ տրվում է հանձնաժողովի կողմից որոշման ընդունման օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:
- **Կրկնօրինակի տրամադրումը.**
  - որակավորման վկայականը կորցնելու դեպքում տրվում է նույն համարով նոր որակավորման վկայական՝ «Կրկնօրինակ» նշագրով:
- **Մերժումը.**

- որակավորման հանձնաժողովն իրավունք ունի մերժել հայտատուի հայտը կամ պահանջել լրացուցիչ տեղեկություններ՝ եթե նրա ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ նորմատիվ իրավական ակտերին, այդ թվում՝ որակավորման կարգի պահանջներին:

Որակավորման վկայականի չեղյալ համարելը

- **Որակավորման հանձնաժողովը ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանման առաջարկությամբ իրավունք ունի անվավեր ճանաչել նախկինում տրված որակավորման վկայականը եւ պարտադրել նրա տիրոջը նորից որակավորման քննություն հանձնել, եթե.**
  - մեկ տարվա ընթացքում որակավորում ունեցող անձը պրակտիկ մասնագիտական գործունեություն չի ծավալել,
  - եթե այն կազմակերպությունը, որի կազմում աշխատել է տվյալ մասնագետը ճանաչվել է սնանկ,
  - եթե որակավորում ունեցող անձը աշխատել է չլիցենզավորված կամ լիցենզիան անվավեր ճանաչված ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային գործունեություն ծավալող կազմակերպությունում:

52. ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարության 1994 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 469 որոշմամբ

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է ինվեստիցիոն հիմնադրամի գործունեության համար:**

Առանձնահատկությունները

- **Ինվեստիցիոն հիմնադրամի նախնական լիցենզիան անհրաժեշտ է ձեռնարկությունների պետական ռեգիստրում ինվեստիցիոն հիմնադրամի գրանցման հնարավորության համար:**
- **Ինվեստիցիոն հիմնադրամի հիմնական լիցենզիան անհրաժեշտ է արժեթղթերի թողարկման, գնման կամ վաճառքի, ներդրումների (բացի հիմնադիրների ներդրումներից) հայցման կամ ընդունման իրավունք ձեռք բերելու համար:**
- **Ինվեստիցիոն հիմնադրամի նախնական լիցենզիա չունեցող որեւէ անձի ինվեստիցիոն հիմնադրամի հիմնական լիցենզիա չի կարող տրվել:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մելիք-Ադամյան 1,
    - Հեռախոս՝ 59 53 04

Լիցենզիա ստացողը

- **Նախնական լիցենզիա ստացողը պարտավոր է՝**
  - հաստատել ինվեստիցիոն հիմնադրամի կանոնադրությունը, որն իր ձեւով եւ բովանդակությամբ պետք է համապատասխանի ինվեստիցիոն հիմնադրամների օրինակելի կանոնադրությանը,
  - պատրաստել ինվեստիցիոն հիմնադրամի կառավարման պայմանագրի նախագիծ, որն իր ձեւով եւ բովանդակությամբ պետք է համապատասխանի ինվեստիցիոն հիմնադրամների կառավարման օրինակելի պայմանագրին, ինչպես նաեւ ձեռք բերել որեւէ լիցենզավորված կառավարչի գրավոր համաձայնությունը հիմնադրամի հետ այդպիսի պայմանագիր կնքելու վերաբերյալ,
  - պատրաստել ինվեստիցիոն հիմնադրամի պահառության պայմանագրի նախագիծ, որն իր ձեւով եւ բովանդակությամբ պետք է համապատասխանի ինվեստիցիոն հիմնադրամների պահառության օրինակելի պայմանագրին, ինչպես նաեւ ձեռք բերել որեւէ լիցենզավորված պահառուի գրավոր համաձայնությունը հիմնադրամի հետ այդպիսի պայմանագիր կնքելու վերաբերյալ,
  - հիմնադրամի պահառուի կողմից բացված բաժանորդագրական հաշվին մուծել առնվազն 20 000 ԱՄՆ-ի դոլարի դրամով արտահայտված համարժեքը (մուծումը կարող է կատարվել նաեւ օտարերկրյա արժույթով): Այդ ավանդը համարվում է հիմնադիրների կապիտալ ներդրում եւ մուծվում է որպես ինվեստիցիոն հիմնադրամի սկզբնական կանոնադրական դրամագլուխ:
- **Հիմնական լիցենզիա ստացողը պարտավոր է՝**
  - ձեռնարկությունների պետական ռեգիստրում ինվեստիցիոն հիմնադրամը գրանցել որպես բաց բաժնետիրական ընկերություն,
  - կնքել կառավարման եւ պահառության պայմանագրեր ինվեստիցիոն հիմնադրամի եւ լիցենզավորված կառավարչի ու լիցենզավորված պահառուի միջեւ, որոնք ձեւով եւ բովանդակությամբ պետք է համապատասխանեն ինվեստիցիոն հիմնադրամների կառավարման եւ պահառության օրինակելի պայմանագրերին,
  - պատրաստել ազդագիր ինվեստիցիոն հիմնադրամի բաժնետոմսերի բաց տեղաբաշխման համար եւ այն ներկայացնել գրանցման:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Նախնական լիցենզիա ստանալու համար ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - նախնական լիցենզիա տալու մասին դիմում՝ ստորագրված ինվեստիցիոն հիմնադրամի բոլոր հիմնադիրների կողմից,

- ինվեստիցիոն հիմնադրամի կանոնադրությունը՝ ստորագրված ինվեստիցիոն ֆոնդի բոլոր հիմնադիրների կողմից, որը ձեւով եւ բովանդակությամբ պետք է համապատասխանի ինվեստիցիոն հիմնադրամների օրինակելի կանոնադրությանը,
- ինվեստիցիոն հիմնադրամի կառավարման պայմանագրի նախագիծը, որն իր ձեւով եւ բովանդակությամբ պետք է համապատասխանի ինվեստիցիոն հիմնադրամների կառավարման օրինակելի պայմանագրին, ինչպես նաեւ որեւէ լիցենզավորված կառավարչի գրավոր համաձայնությունը՝ հանդես գալ որպես հիմնադրամի կառավարիչ,
- ինվեստիցիոն հիմնադրամի պահառության պայմանագրի նախագիծը, որն իր ձեւով եւ բովանդակությամբ պետք է համապատասխանի ինվեստիցիոն հիմնադրամների պահառության օրինակելի պայմանագրին, ինչպես նաեւ որեւէ լիցենզավորված պահառուի գրավոր համաձայնությունը՝ հանդես գալ որպես հիմնադրամի պահառու,
- հիմնադրամի պահառուի կողմից բացված բաժանորդագրական հաշվին առնվազն 20000 ԱՄՆ դոլարի՝ դրամով արտահայտված համարժեքի մուծումը հաստատող փաստաթուղթ,
- ինվեստիցիոն հիմնադրամի հիմնադիրներից, գործադիր պաշտոնյաներից եւ վարչության անդամներից յուրաքանչյուրի կրթության եւ գործնական փորձառության նկարագրությունը,
- լիցենզավորման սահմանված կարգով պահանջվող ցանկացած այլ տեղեկություն:

- **Հիմնական լիցենզիա ստանալու համար ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - հիմնական լիցենզիա տալու մասին դիմում՝ ստորագրված ինվեստիցիոն հիմնադրամի բոլոր հիմնադիրների կողմից,
  - ձեռնարկությունների պետական ռեգիստրում որպես բաց բաժնետիրական ընկերություն ինվեստիցիոն հիմնադրամի գրանցումը հաստատող փաստաթուղթ,
  - ինվեստիցիոն հիմնադրամի գրանցված կանոնադրությունը, որը պետք է համապատասխանի ինվեստիցիոն հիմնադրամների օրինակելի կանոնադրությանը,
  - ինվեստիցիոն հիմնադրամի ազդագիրը, որը պետք է համապատասխանի օրինակելի ազդագրին, ինչպես նաեւ փաստաթուղթ, որ ազդագիրը ներկայացված է գրանցման,
  - ինվեստիցիոն հիմնադրամի եւ լիցենզավորված կառավարչի ու լիցենզավորված պահառուի միջեւ կնքված կառավարման եւ պահառության պայմանագրերը, որոնք ձեւով եւ բովանդակությամբ պետք է համապատասխանեն ինվեստիցիոն հիմնադրամների կառավարման եւ պահառության օրինակելի պայմանագրերին,
  - ինվեստիցիոն հիմնադրամի հիմնադիրներից, գործադիր պաշտոնյաներից եւ վարչության անդամներից յուրաքանչյուրի կրթության եւ գործնական փորձառության նկարագրությունը,
  - լիցենզավորման սահմանված կարգով պահանջվող ցանկացած այլ տեղեկություն:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Ներկայացված փաստաթղթերի քննարկման ժամկետները.**
  - նախնական լիցենզիա տրամադրելու կամ հայտը մերժելու մասին որոշումը լիցենզավորող մարմինը կայացնում է համապատասխան փաստաթղթերի ստացման պահից 15 օրվա ընթացքում,
  - հիմնական լիցենզիա տրամադրելու կամ հայտը մերժելու մասին որոշումը լիցենզավորող մարմինը կայացնում է համապատասխան փաստաթղթերի ստացման պահից 45 օրվա ընթացքում:
- **Մերժումը.**
  - Լիցենզիայի հայտը կարող է մերժվել, եթե.
    - հայտատուն չի ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները,
    - ներկայացված տեղեկությունները պարունակում են փաստացի էական աղավաղումներ կամ դրանցում առկա են էական թերություններ ու բացթողումներ,
    - ինվեստիցիոն հիմնադրամը կամ հիմնադրամի հիմնադիրները չեն պահպանել տվյալ ընթացակարգով սահմանված բոլոր պահանջները,
  - ինվեստիցիոն հիմնադրամը հիմնական լիցենզիա չի ստանում այնքան ժամանակ, քանի դեռ հիմնադրամի բաժնետոմսերի առաջին բաց տեղաբաշխման համար պատրաստված ազդագիրը գրանցված չէ:

53. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի 1998 թվականի հուլիսի 15-ի թիվ 315 որոշմամբ հաստատված կանոնակարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է բանկ, օտարերկրյա բանկի մասնաճյուղ հիմնադրելու և բանկային գործունեություն իրականացնելու համար, այդ թվում՝**
  - ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից ու ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով:
- **Բանկերը հիմնադրվում են որպես.**
  - բաժնետիրական ընկերություն,
    - բանկերի վրա տարածվում են բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ օրենքները և այլ իրավական ակտերը,
  - սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,
    - բանկերի վրա տարածվում են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ օրենքները և այլ իրավական ակտերը,
  - կոոպերատիվ բանկ,
    - կոոպերատիվ բանկի մասնակիցներն, անկախ բանկի կանոնադրական հիմնադրամում իրենց մասնակցության չափից, ունեն մեկ ձայնի իրավունք,
    - կոոպերատիվ բանկն ունի առնվազն երեք մասնակից,
    - եթե կոոպերատիվ բանկի մասնակիցների թիվը նվազում է երեքից, ապա այդ բանկը ենթակա է լուծարման կամ պետք է վեց ամսվա ընթացքում լրացնի իր մասնակիցների թիվը,
    - կոոպերատիվ բանկի շահաբաժիններ վճարելու, նոր մասնակիցներ ընդունելու, բանկում մասնակցությունը դադարելու, ինչպես նաև բանկի լուծարման դեպքում բանկի կապիտալը մասնակիցների միջև բաշխելու կարգը սահմանվում է կոոպերատիվ բանկի կանոնադրությամբ:
- **Օտարերկրյա բանկի մասնաճյուղը հիմնադրվում է օտարերկրյա բանկի կողմից:**

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **Լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **տրամադրվում է անժամկետ,**
- **տրամադրվում է երեք փուլով՝**
  - լիցենզիա ստանալու նախնական հավանություն,
  - բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցում,
  - լիցենզիա տալը,
- **լիցենզիայում նախատեսված իրավունքները չեն կարող փոխանցվել կամ այլ կերպ օտարվել,**
- **լիցենզիայում նշվում են լիցենզիայի համարը, տալու ամսաթիվը, լիցենզավորված բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի լրիվ ֆիրմային անվանումը և գրանցման համարը,**
- **բանկային գործունեության լիցենզիայի միասնական ձևը սահմանվում է Կենտրոնական բանկի կողմից:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երևան 375010, Վ. Սարգսյանի 6,
    - Հեռախոս՝ 583841, 561554:

Լիցենզիա ստացողը

- **Բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը՝**

- իրավունք չունեն իրենց անվանման մեջ ապակողմնորոշող այնպիսի բառեր օգտագործել, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ տվյալ բանկի ֆինանսական վիճակի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ,
  - բանկն ունի իր ֆիրմային անվանումը հայերեն լեզվով, որը պետք է բովանդակի բանկի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, ձեւը, գտնվելու վայրը, ինչպես նաեւ այլ տվյալներ, որոնք հիմնադիրները համարում են անհրաժեշտ,
  - բանկը կարող է ունենալ իր լրիվ ֆիրմային անվանումը կամ դրա կրճատ տարբերակը, որը պետք է բովանդակի բանկի անվանումը, "բանկ" բառը, կազմակերպական-իրավական տեսակը եւ ձեւը (հապավումներով),
  - բանկը կարող է ունենալ իր լրիվ ֆիրմային անվանումը կամ դրա հապավումը նաեւ այլ լեզուներով,
- բանկերը չեն կարող որպես մասնակից (հիմնադիր, փայատեր, բաժնետեր, անդամ) ունենալ կուսակցություններ և արհեստակցական միություններ,
- բանկի հիմնադիր փաստաթուղթը բանկի կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են բանկի հիմնադիրների, մասնակիցների և կառավարման մարմինների համար,
  - բանկի կանոնադրությունը սահմանում է՝
    - բանկի լրիվ և կրճատ ֆիրմային անվանումը,
    - բանկի գտնվելու վայրը,
    - բանկի կազմակերպական-իրավական տեսակը,
    - բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամի չափը,
    - բանկի կառավարման մարմինների կառուցվածքը, իրավասությունը և նրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը,
    - բանկի հիմնադիրների և մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը՝ ներառյալ այն հարցերի ցանկը, որոնց վերաբերյալ որոշումները պետք է ընդունեն ընկերության կառավարման մարմինները՝ պարզ մեծամասնությամբ կամ միաձայն,
    - բանկի կողմից մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործառնական գրասենյակների (կետերի) ստեղծման և լուծարման կարգը,
    - օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ դրույթներ,
    - բանկի կանոնադրությամբ կարող են սահմանվել բանկի կանոնադրական հիմադրամում մեկ հիմնադրի կամ մասնակցի մասնակցության (բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերում՝ բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի) առավելագույն չափը,
  - բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերի կանոնադրությունը ներառում է նաև՝
    - տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեսակները (սովորական և արտոնյալ), քանակը, անվանական արժեքը, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի ձևերը, յուրաքանչյուր տեսակի և ձևի բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները,
    - "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքով նախատեսված դրույթները,
  - ցանկացած անձի պահանջով բանկը պարտավոր է նրան հնգօրյա ժամկետում ընձեռել կանոնադրության, կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն: Բանկը պարտավոր է այդ անձի պահանջով նրան տրամադրել բանկի գործող կանոնադրության պատճենը: Վճարը, որը գանձվում է բանկի կողմից կանոնադրության պատճենը տրամադրելու համար, չի կարող այդ պատճենը պատրաստելու ծախսերից մեծ լինել:
  - բանկի կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարվում են, ինչպես նաև բանկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովում՝ ձայների 3/4-ով ընդունված որոշմամբ,
- օտարերկրյա բանկի մասնաճյուղերը գործում են կանոնակարգի հիման վրա, որը պետք է պարունակի մասնաճյուղի.
  - հիմնադիր բանկի անվանումը,
  - լրիվ եւ կրճատ անվանումը,
  - գտնվելու վայրը,
  - կառավարման մարմինների կառուցվածքը, իրավասությունը եւ նրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը,
  - նկատմամբ հիմնադիր բանկի կողմից հսկողություն իրականացնելու կարգը,
  - լիազորությունները՝ տրված հիմնադիր բանկի կողմից,
  - կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների ցանկը,
  - լուծարման կարգը,
  - օրենքներով եւ այլ իրավական ակտերով չնախատեսված եւ դրանց չհակասող այլ դրույթներ:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **Ստանալ լիցենզիայի նախնական հավանությունը**,
- **գրանցել բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը**,
- **բավարարել հետևյալ պայմաններին,**
  - կանոնադրական հիմնադրամը համալրված է նվազագույն 5 մլն ԱՄՆ դոլարի չափով,

- բանկային գործունեության տարածքը և նրա տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում է սահմանված պահանջներին, համաձայն որի բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը պետք է ունենա՝
- սեփականության իրավունքով իրեն (կամ հիմնադիր բանկին) պատկանող կամ վարձակալությամբ վերցված տարածք,
  - տարածքի վարձակալության պայմանագիրը օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է կնքված լինի գրանցման համար փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն 5 տարի ժամկետով,
- կանխիկ դրամով եւ այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց, որի մեջ մտնում են հետեւյալ տարածքները՝
  - կանխիկ դրամի եւ այլ արժեքների, գրավադրված եւ ի պահ ընդունված արժեքների պահպանության հիմնական դրամապահոց՝ իր նախադրամապահոցով կամ ինկասացիոն ծառայությամբ, եւ որեւէ բանկի հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման եւ պահպանման վերաբերյալ (բացառությամբ այն գործող բանկերի, որոնց գլխամասային գրասենյակները հաճախորդների հաշվարկադրամարկղային գործառնություններ չեն իրականացնում),
    - դրամապահոցը կառուցվում է առանց պատուհանների եւ
      - պետք է ունենա մեկ զրահապատ, չհրկիզվող դուռ,
      - չպետք է ունենա ընդհանուր պատ շենքի արտաքին եւ նույն շենքում տեղակայված այլ հաստատությունների պատերի հետ,
      - շենքի արտաքին կամ այլ հաստատությունների պատերին կից կառուցելու դեպքում դրանց միջեւ պետք է լինի դիտողական միջանցք, որը հնարավորություն կտա դիտելու դրամապահոցի պատերի ամբողջականությունը (հսկելու անվտանգությունը):
    - դրամապահոցների տակ նկուղային հարկերի առկայությունն անթույլատրելի է: Եթե դրամապահոցը գտնվում է շենքի վերջին հարկում, կամ դրամապահոցի վերեւում տեղակայված է այլ կազմակերպություն, ապա դրամապահոցի առաստաղը պետք է բաժանված լինի վերեւի հարկի հատակից (կամ տանիքից) դիտողական միջանցքով, որը հնարավորություն կտա դիտելու եւ հսկելու առաստաղի ամբողջականությունը:
  - գործառնական դրամարկղեր,
  - հաճախորդներից ստացված դրամի եւ այլ արժեքների վերահաշվարկման, ինկասատորներից կանխիկ դրամի ընդունման եւ նրանց կանխիկ դրամի հանձնման, բանկի աշխատակցի հսկողության ներքո հաճախորդի կողմից ստացված գումարի վերահաշվարկման պայմաններ,
  - հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում դրամարկղային հանգույցը պետք է ունենա տեղային (լոկալ) էլեկտրասնուցում,
  - դրամարկղային հանգույցը պետք է՝
    - սարքավորված լինի անվտանգության ահազանգման համակարգի անխափան գործունեության ապահովման ցանցով,
    - առանձնացված լինի բանկի կառուցվածքային մյուս ստորաբաժանումներից,
  - պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը պետք է լինի պահեստային,
- ստեղծվել են բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին կազմակերպական կառուցվածքը և գործառնական համակարգը,
- բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների, բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների որակավորումը, մասնագիտական համապատասխանությունը բավարարում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին: Կենտրոնական բանկը կարող է քննել բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարներին՝ նրանց մասնագիտական համապատասխանությունը պարզելու նպատակով,
- օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար նաև.
  - օտարերկրյա բանկի գրանցման կամ հիմնական գործունեության վայրի երկրում բանկային վերահսկողության պետական մարմնի համաձայնությունը Հայաստանի Հանրապետությունում բանկային գործունեություն իրականացնելու համար:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Լիցենզիայի տրամադրման ժամկետը.**
  - Վերոնշյալ պահանջների բավարարման դեպքում դիմումը ստանալուց մեկամսյա ժամկետում կենտրոնական բանկը լիցենզիա է տրամադրում:

Լիցենզիայի անվավեր ճանաչելը, օրենսդրության խախտումները

- **Լիցենզիայի անվավեր ճանաչելը.**
  - լիցենզիան Կենտրոնական բանկի հայցով անվավեր է ճանաչվում դատական կարգով, եթե.

- բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը լիցենզիա է ստացել լիցենզավորման ընթացակարգում ներկայացրած կեղծ փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա,

– լիցենզիան անվավեր ճանաչելու մասին դատարանի որոշումն անմիջապես հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներում,

– լիցենզիան անվավեր ճանաչելու որոշման ուժի մեջ մտնելու օրվանից բանկը զրկվում է բանկային գործունեություն իրականացնելու իրավունքից, բացառությամբ այն գործարքների, որոնք ուղղված են նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանը և դրանց վերջնական բաշխմանը,

– լիցենզիան անվավեր ճանաչելու մասին դատարանի որոշումը դրա կայացման հիմքերի հետ միասին պետք է անմիջապես գրավոր հաղորդվի շահագրգիռ բանկին կամ մասնաճյուղին:

▪ **Օրենսդրության խախտումները.**

– Կենտրոնական բանկի կողմից բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կարող են կիրառվել, եթե՝

- բանկի կանոնադրական հիմնադրամը կամ ընդհանուր կապիտալի այլ տարրերը համալրվել են օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով,
- բանկը բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ է իրականացրել օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով,
- բանկի կանոնադրությունը, մասնաճյուղի կանոնակարգը փոփոխվել և լրացվել են օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով,
- խախտվել են բանկի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները,
- խախտվել են հաշվապահական հաշվառում վարելու կանոնները, ինչպես նաև հաշվեկշռի, ֆինանսական հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգն ու պայմանները և (կամ) այդ փաստաթղթերում ներկայացվել են կեղծ տվյալներ,

– Կենտրոնական բանկը օրենսդրության խախտումների դեպքում կարող է կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

- նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական.
  - նախազգուշացմամբ արձանագրվում է թույլ տված խախտումը և մեղավոր բանկը տեղեկացվում է խախտման անթույլատրելիության մասին,
  - նախազգուշացումը նախատեսում է նաև թույլ տված խախտումը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում վերացնելու կամ ապագայում նման խախտումը կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական, որի կատարումը պարտադիր է նախազգուշացում ստացած բանկի համար,
  - նախազգուշացումը որպես պատժամիջոց կարող է կիրառվել նախատեսված հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում,
- տուգանք.
  - տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով, դատարանի որոշմամբ այն դեպքում, երբ բանկը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Գումարը գանձվում է բանկի թղթակցային հաշվից՝ հօգուտ պետական բյուջեի,
  - տուգանքը որպես պատժամիջոց կարող է կիրառվել նախատեսված հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում,
  - յուրաքանչյուր խախտման համար բանկից գանձվող տուգանքի չափը սահմանում է Կենտրոնական բանկը, ընդ որում՝
    - տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններն ուշացնելու համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի հինգ տոկոսը՝ բացառությամբ պարտադիր պահուստավորման նորմատիվի խախտման դեպքում,
    - բանկային օրենսդրության յուրաքանչյուր այլ խախտման համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մեկ տոկոսը,
  - տուգանքի գումարի չափը չպետք է հանգեցնի տուգանվող բանկի ծանր ֆինանսական կացությանը,
  - Կենտրոնական բանկը բանկի կողմից չհիմնավորված ռիսկային գործունեություն վարելու, հաշվետվություններն ուշ ներկայացնելու կամ դրանցում անարժանահավատ տեղեկություններ արտացոլելու համար կարող է բանկի ղեկավարների, բացառությամբ ստորաբաժանումների ղեկավարների և խորհրդի անդամների, նկատմամբ տուգանք նշանակելու հայցով դիմել դատարան՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը չգերազանցող գումարի չափով: Նշված անձանց վրա դրված տուգանքները դատարանի որոշմամբ բռնագանձվում են նրանց անձնական միջոցներից,
- բանկի ղեկավարներին զբաղեցրած պաշտոններից հեռացում.
  - բանկի ղեկավարները հեռացվում են զբաղեցրած պաշտոններից բանկի խորհրդի որոշմամբ՝ Կենտրոնական բանկի խորհրդի առաջարկությամբ, եթե՝
    - բանկի ղեկավարը կամ ղեկավարները միտումնավոր կերպով խախտել են օրենքները և այլ իրավական ակտերը,
    - պաշտոնավարման ընթացքում վարում են անհիմն և վտանգավոր գործունեություն,
    - ղեկավարի կամ ղեկավարների գործողությունների հետևանքով բանկը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս,
    - գործունեության ընթացքում կատարում են անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ, որոնք հակասում են բանկի կամ բանկի հաճախորդների շահերին,
    - անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք են դրսևորել իրենց ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ բանկի և բանկի հաճախորդների նկատմամբ ստանձնած հավատարմագրային պարտականությունների նկատմամբ,
- լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում.
  - լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե՝
    - խախտվել են բանկային գործունեությունը կարգավորող օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները,

        - բանկը լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում բանկային գործունեություն չի իրականացրել,
        - բանկը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում չի կատարել խախտումները վերացնելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականը,
        - դադարել է բանկի գործունեությունը,
    - օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում նաև այն դեպքում, երբ օտարերկրյա բանկն իր գրանցման կամ հիմնական գործունեության վայրի երկրում զրկվել է բանկային գործունեություն իրականացնելու իրավունքից,
    - բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի որոշումն անմիջապես հրապարակվում է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, եթե որոշմամբ այլ ժամկետ չի սահմանված,
    - բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշման ուժի մեջ մտնելու պահից բանկը զրկվում է բանկային գործունեություն իրականացնելու իրավունքից՝ բացառությամբ այն գործարքների, որոնք ուղղված են նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանը և դրանց վերջնական բաշխմանը,
    - բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի որոշման պատճենը դրա կայացման հիմքերի հետ միասին եռօրյա ժամկետում տրամադրվում է բանկին կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղին,

– վերոնշյալ պատժամիջոցների կիրառումը բանկերին չի ազատում օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված պատասխանատվությունից:

54. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված 1998 թվականի հուլիսի 15-ի թիվ 315 որոշմամբ հաստատված կանոնակարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ հավանությունն անհրաժեշտ է ստանալ բանկ, օտարերկրյա բանկի մասնաճյուղ գրանցելու և լիցենզիա ստանալու համար:**

Առանձնահատկությունները

- **Նախնական հավանություն ստանալուց հետո բանկ, օտարերկրյա բանկի մասնաճյուղ գրանցելու և լիցենզիա ստանալու համար տրամադրվում է 1 տարի ժամանակ:**

Հավանությունը տվող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Վ. Սարգսյանի 6,
    - Հեռախոս՝ 583841, 561554:

Հավանություն ստացողը

- **Բանկ գրանցելու և լիցենզիա ստանալու համար.**
  - կարող է դիմել ցանկացած անձ,
- **օտարերկրյա բանկի մասնաճյուղ գրանցելու և լիցենզիա ստանալու համար.**
  - պետք է դիմի օտարերկրյա բանկ,
- **նախաձեռնող անձինք կամ մասնաճյուղ հիմնող օտարերկրյա բանկը կարող են ունենալ իրենց լիազոր ներկայացուցիչը լիցենզիա ստանալու նախնական հավանության համար սահմանված փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու համար:**

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.**
  - բանկի համար՝
    - նախաձեռնող անձանց միջնորդագիրը,
    - ստեղծվող բանկի կանոնադրության նախագիծը,
  - օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար՝
    - օտարերկրյա բանկի միջնորդագիրը,
    - օտարերկրյա բանկի կանոնադրությունը,
    - օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնակարգի նախագիծը,
  - ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը, որը բաղկացած է հետևյալ բաժիններից.
    - ընդհանուր դրույթներ՝
      - բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի անվանումը եւ գտնվելու վայրը,
      - նախաձեռնող անձանց կողմից նոր բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ստեղծման նախադրյալները,
      - տեղեկություններ բանկի հիմնադիրների, առաջարկվելիք ղեկավարների, ինչպես նաեւ այն մասնակիցների մասին, որոնք ունենալու են բանկի (բացառությամբ բաց բաժնետիրական բանկի) կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն,
    - ֆինանսական այն շուկաների նկարագիրը, որոնցում բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը պատրաստվում է ծավալել իր գործունեությունը, մասնավորապես՝
      - շուկաների տնտեսական բնորոշումն ու ուղղությունները,
      - փոխատվական կապիտալի շուկայում մրցակցության գործոնների գնահատումն ու բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի մրցունակության հիմնավորումը,

- ֆինանսական շուկայի տարբեր հատվածներում (փոխատվական կապիտալի, ինվեստիցիոն, արժեթղթերի) բանկի գործարար ակտիվության ծավալման ուղղությունների կանխատեսումն ու որակական եւ քանակական գնահատումը, ռազմավարության հիմնական սկզբունքների բնորոշումը,
- բանկային գործունեության ռիսկերի (վարկային, ինվեստիցիոն, տոկոսային, արժութային եւ այլն), դրանց փոփոխությունների միտումների կանխատեսումը եւ բանկի գործունեության արդյունքների վրա դրանց հեռանկարային ազդեցության գնահատումը,

- ներքին կազմակերպական կառուցվածք՝
  - ներքին կազմակերպական կառուցվածքի բնութագիրը, կառուցվածքային ստորաբաժանումների ու ծառայությունների անվանումներն ու նրանց հիմնական ֆունկցիաները, դրանց միջեւ փոխհարաբերությունների բնութագիրը,
  - տեխնիկական վերազինման, բանկային տեխնոլոգիաների ներդրման միջոցառումների ծրագիրը,
  - կառավարման համակարգը, կառավարման մարմինների իրավասությունները,
  - կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերլուծությունը, ներքին աուդիտը եւ վերահսկողությունը,
  - աշխատանքի կազմակերպման հիմնական սկզբունքները,

- ֆինանսական գործառնությունները եւ գործունեության հիմնական ուղղություններ՝
  - գործունեության հիմնական ուղղությունները, նախատեսվող ֆինանսական գործառնությունների ցանկը եւ դրանց համառոտ նկարագիրը,
  - ֆինանսական շուկայում նոր տիպի ծառայությունների ներդրումը,
  - հաճախորդների խմբի բնութագիրը եւ ենթադրվող քանակը,

- ակտիվների ու պասիվների մոտավոր կազմը եւ կառուցվածքը՝
  - ակտիվների ու պասիվների կազմը եւ կառուցվածքը առաջիկա 2 ֆինանսական տարվա կտրվածքով, հիմնական միջոցների (անշարժ ակտիվներ) ներդրումը, եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը,
  - կապիտալիզացիայի ռազմավարությունը (ներառյալ ընդհանուր կապիտալի նախատեսվող մեծության ապահովումը արտաքին եւ ներքին աղբյուրների հաշվին, շահաբաժինների վճարման քաղաքականությունը, կապիտալի համարժեքության ապահովմանն ուղղվող հիմնական միջոցառումները) առաջիկա երկու ֆինանսական տարվա համար,
  - ներգրավվող միջոցների տեսակների (ավանդների, դեպոզիտների եւ այլն) բնութագիրը (հնարավորության դեպքում՝ ըստ միջին մեծության եւ միջին ժամկետայնության), միջոցների ներգրավման պայմանները (տոկոսադրույքները եւ այլն),
  - վարկային պորտֆելի մոտավոր նկարագիրը (ճյուղային եւ ժամկետային կառուցվածքը), վարկային հնարավոր ռիսկերի գնահատումը եւ դրանց սահմանափակմանն ուղղված մեխանիզմների կիրառումը,
  - ներդրումային (ինվեստիցիոն) քաղաքականության հիմնական ուղղությունները (պետական եւ ոչ պետական արժեթղթերում, պարտատոմսերում եւ այլն), ներդրումային ռիսկերի գնահատումը եւ դրանց սահմանափակման մեխանիզմները,
  - արտարժութային գործառնությունները, արտարժութային ռիսկերի գնահատումն ու կառավարումը, այլ ակտիվային գործառնությունների բնութագիրը,
  - ակտիվների ու պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարման սխեման՝ ըստ ներգրավված եւ տեղաբաշխված միջոցների ժամկետների (GAP), այդ թվում՝ բանկի իրացվելիության ռազմավարությունը, ակտիվների եւ պարտավորությունների տոկոսադրույքների կառավարումը,

- եկամուտների եւ ծախսերի պլանային հաշվարկն առաջին երկու ֆինանսական տարում՝
  - եկամուտների եւ ծախսերի կանխատեսումներն առաջին երկու տարվա համար՝ հիմնված շուկայի վերլուծության արդյունքների վրա,
  - եկամուտների կազմը եւ կառուցվածքը,

- ծախսերի կազմը եւ կառուցվածքը,
  - տնտեսական ծրագիրը կարող է բովանդակել նաեւ այնպիսի տեղեկություններ, որոնք նախաձեռնող անձինք համարում են նպատակահարմար,

– տնտեսական ծրագրին կցվում են հաշվեկշռի հաշվարկային նախագծերը գործունեության առաջին երկու ֆինանսական տարիների համար,

– բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների (բացառությամբ խորհրդի եւ վերստուգիչ հանձնաժողովի անդամների) առաջարկվող թեկնածուի համար պետք է ներկայացվի հետևյալ տեղեկատվությունը,

- բանկի ղեկավարների եւ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից բանկերից վերցված վարկերի, այդ թվում՝ ժամկետանց վարկերի վերաբերյալ,

- թեկնածուի վերաբերյալ առնվազն երկու բնութագիր-երաշխավորագիր,

– այլ տեղեկություններ, որոնց վերաբերյալ սահմանված չեն պահանջվող ձեւեր, կարող են ներկայացվել ազատ ոճով,

- **վճարել պետական տուրքը.**

  – 3 մլն դրամի չափով:

  – Տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 3 000-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

- **բոլոր փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր եւ հայերեն լեզվով՝ պատվիրված նամակով:**

Հավանության տրամադրման գործընթացը

- **Միջնորդագրի քննարկման ժամկետները.**

  – ՀՀ կենտրոնական բանկի գրանցման եւ լիցենզավորման հանձնաժողովի եզրակացությունը ՀՀ ԿԲ խորհուրդի քննարկմանն է ներկայացնում ոչ ուշ, քան միջնորդագրի ստացման 25-րդ օրը,

- հանձնաժողովի նիստում քննարկվում է տնտեսական ծրագիրը, ինչպես նաեւ բանկային վերահսկողության դեպարտամենտի եւ իրավաբանական վարչության եզրակացությունները,
- նախաձեռնող անձինք կամ օտարերկրյա բանկի ներկայացուցիչները նիստին մասնակցելու համար հրավիրվում են գրավոր ձեւով,

– նախնական հավանություն տալու կամ միջնորդագիրը մերժելու մասին որոշում ընդունում է ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը, ոչ ուշ, քան միջնորդագիրը ներկայացնելու 30-րդ օրը,

– եթե Կենտրոնական բանկը նախնական հավանություն տալու միջնորդագիրը մեկամսյա ժամկետում պաշտոնապես չի մերժում, միջնորդագիրը ներկայացնող անձանց տեղեկացնելով մերժման հիմքերի մասին, ապա նախնական հավանությունը համարվում է տրված, ընդ որում՝ միջնորդագիր ներկայացնող անձի առաջին իսկ պահանջով Կենտրոնական բանկը պարտավոր է մեկօրյա ժամկետում դիմողին տրամադրել նախնական հավանության մասին իր որոշումը:

- **Մերժումը.**

– հավանություն ստանալու միջնորդագիրը կարող է մերժվել, եթե՝

- ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեությունը կհակասի օրենքներին և այլ իրավական ակտերի,
- տնտեսական ծրագիրը չի համապատասխանում սահմանված ձևին,
- օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝
  - օտարերկրյա բանկն իրավասու չէ բանկային գործունեություն իրականացնել իր գրանցման և հիմնական գործունեության վայրի երկրում կամ Կենտրոնական բանկը գտնում է, որ օտարերկրյա բանկի գրանցման կամ հիմնական գործունեության վայրի երկրում բանկային վերահսկողության պետական մարմինները տվյալ բանկի և նրա մասնաճյուղերի՝ որպես միասնական համակարգի, գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողություն չեն իրականացնում:

Հավանության գործողության ուժը կորցրած ճանաչելը

- **Հավանության գործողությունը ուժի մեջ է ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում**
- **Հավանության գործողության ժամկետում անհրաժեշտ է՝**

– գրանցել բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը,

– ստանալ բանկային գործունեության լիցենզիա:

55. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված 1998 թվականի հուլիսի 15-ի թիվ 315 որոշմամբ հաստատված կանոնակարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ գրանցումն անհրաժեշտ է բանկ, օտարերկրյա բանկի մասնաճյուղի լիցենզիա ստանալու և բանկային գործունեություն իրականացնելու համար:**

Առանձնահատկությունները

- **Գրանցվելու պահից բանկը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ,**
- **կանոնադրական հիմնադրամի համալրման համար Կենտրոնական բանկը բացում է գրանցված բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի թղթակցային հաշիվ,**
- **գրանցվելուց հետո լիցենզիա ստանալու համար տրամադրվում է նախնական հավանություն ստանալու օրվանից հաշված 1 տարի ժամանակ:**

Գրանցումն իրականացնող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Վ. Սարգսյանի 6,
    - Հեռախոս՝ 583841, 561554:

Գրանցվողը

- **Պետք է ունենան բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի լիցենզիա ստանալու նախնական հավանություն:**

Գրանցվելու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.**
  - բանկի համար՝
    - գրանցման դիմում,
    - բանկի կանոնադրություն,
    - բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց համար՝ հետեւյալ հիմքերի բացակայության մասին հայտարարություն,՝
      - անձը դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունի,
      - անձը դատավճռով զրկվել է որոշակի պաշտոններ վարելու իրավունքից,
      - անձը սնանկ է ճանաչվել և չմարված (չներված) պարտավորություններ ունի,
      - անձի գործողությունները նախկինում հանգեցրել են բանկի կամ այլ անձի սնանկացմանը,
      - անձի միջոցները ձեռք բերված չեն հանցավոր ճանապարհով,
  - օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար՝
    - գրանցման դիմում,
    - օտարերկրյա բանկի կողմից հաստատված օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնակարգը,
  - բանկի կամ օտարերկրյա բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կամ կառավարման իրավասու այլ մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ բանկի կանոնադրությունը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնակարգը հաստատելու եւ բանկի ղեկավարներ ընտրելու (նշանակելու) վերաբերյալ,
  - ղեկավարների աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկանք,
  - ղեկավարների ցուցակը,
  - գործադիր տնօրենի (վարչության նախագահի) եւ գլխավոր հաշվապահի վավերացված ստորագրությունների նմուշները:

Գրանցելու գործընթացը

- **Գրանցման ժամկետները.**

- ամբողջական եւ բավարար փաստաթղթերը ստանալու պահից մեկամսյա ժամկետում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ գրանցվում է բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը,
- ՀՀ կենտրոնական բանկը բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցման մասին որոշում ընդունելուց հետո եռօրյա ժամկետում հիմնադիրներին տալիս է գրանցման վկայական:

Գրանցման գործողության ուժը կորցրած ճանաչելը

- **Գրանցվելուց հետո նախնական հավանություն ստանալու օրվանից հաշվված մեկ տարվա ընթացքում անհրաժեշտ է ստանալ բանկային գործունեության լիցենզիա, այլապես գրանցումը ուժը կորցրած է ճանաչվում:**

56. ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված 1998 թվականի հուլիսի 15-ի թիվ 315 որոշմամբ հաստատված կանոնակարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ որակավորումն անհրաժեշտ է ստանալ բանկի ղեկավար աշխատելու համար,**
- **բանկի ղեկավարներ են.**
  - բանկի խորհրդի նախագահը և անդամները,
  - բանկի գործադիր տնօրենը (վարչության նախագահ),
  - բանկի վերստուգիչ հանձնաժողովի նախագահը,
  - օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչը,
  - բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահը,
  - բանկի վարչության անդամը, մասնաճյուղի կառավարիչը,
  - բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահը,
  - բանկի վերստուգիչ հանձնաժողովի անդամը:

Որակավորման առանձնահատկությունները

- **Որակավորման վկայականը տրվում է 3 տարի ժամկետով,**
- **բանկի խորհրդի նախագահի որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստում՝ հարցազրույցի ձեւով,**
- **բանկի խորհրդի անդամների (բացառությամբ ՀՀ տարածքից մշտապես դուրս բնակվողների) որակավորման եւ մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է ՀՀ կենտրոնական բանկի գրանցման եւ լիցենզավորման հանձնաժողովի նիստում՝ հարցազրույցի ձեւով,**
- **բանկի ղեկավար պաշտոնում աշխատելու համար (բացառությամբ բանկի խորհրդի նախագահը և անդամները) դիմած հավակնորդների որակավորման եւ մասնագիտական համապատասխանության ստուգումն իրականացվում է 2 փուլով.**
  - գրավոր (տեստային) քննություն, ընդ որում, տեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար ղեկավարի թեկնածուին (հավակնորդին) հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե,
  - բանավոր (հարցազրույցի ձեւով) քննություն, որն անցկացվում է հանձնաժողովի նիստում,
- **բանկի գործադիր տնօրենի վկայական ստացած անձը կարող է աշխատել բանկի վարչության անդամ, մասնաճյուղի կառավարիչ,**
- **բանկի վերստուգիչ հանձնաժողովի նախագահի վկայական ստացած անձը կարող է աշխատել բանկի վերստուգիչ հանձնաժողովի անդամ,**
- **բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի վկայական ստացած անձը կարող է աշխատել բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ:**

Որակավորում տվող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Վ. Սարգսյանի 6,
    - Հեռախոս՝ 583841, 561554:

Որակավորում ստացողը

- **Բանկի ղեկավար չեն կարող լինել՝**
  - դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք,
  - դատավճռով որոշակի պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք,
  - սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք,
  - այն անձինք, որոնց ապօրինի գործողությունները նախկինում հանգեցրել են բանկի կամ այլ անձի սնանկացմանը,

- օրենքով սահմանված դեպքերում՝ այլ անձինք:

Որակավորում ստանալու համար անհրաժեշտ է...

- **Բավարարել հետևյալ չափանիշներին.**
  - Բանկի խորհրդի նախագահը և անդամները՝
    - բանկային օրենսդրության իմացություն,
    - բանկի հիմնահարցերին և զարգացման հեռանկարային ուղղություններին իրազեկություն,
- **բանկի գործադիր տնօրենը, վարչության նախագահը՝**
  - ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության,
  - բանկային եւ հարկային օրենսդրության հիմունքների,
  - միջազգային պրակտիկայում ընդունված բանկային գործառնությունների իրականացման կանոնների իմացություն,
- **բանկի վարչության անդամները, մասնաճյուղի կառավարիչը և ներկայացուցչության ղեկավարը՝**
  - ՀՀ բանկային օրենքների և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի,
  - միջազգային պրակտիկայում ընդունված բանկային գործառնությունների իրականացման կանոնների իմացություն,
- **բանկի վերստուգիչ հանձնաժողովի նախագահը և անդամները՝**
  - բանկային և հարկային օրենսդրության,
  - բանկերի հաշվապահական հաշվառման կանոնների իմացություն,
- **բանկի և բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահը՝**
  - բանկերի հաշվապահական հաշվառման կանոնների,
  - հարկային օրենսդրության,
  - ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի իմացություն,
- **օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչը՝**
  - ՀՀ բանկային օրենքների,
  - ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի,
  - միջազգային պրակտիկայում ընդունված բանկային գործառնությունների իրականացման կանոնների իմացություն,
- **օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահը՝**
  - հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշների,
  - բանկերի հաշվապահական հաշվառման տեսության,
  - ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի,
  - ՀՀ հարկային օրենսդրության իմացություն,
- **գործառնական գրասենյակի (կետի) ղեկավարները՝**
  - գործառնական գրասենյակի (կետի) գործառնությունների իրականացման կանոնների իմացություն,
- **ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.**
  - բանկի միջնորդագիրը (թեկնածուի վերաբերյալ) կամ դիմում (հավակնորդի համար)՝ սահմանված ձեւով,
  - բարձրագույն (միջնակարգ մասնագիտական) կրթության դիպլոմի (վկայականի), գիտական աստիճանը հաստատող փաստաթղթի պատճենները (առկայության դեպքում),
  - կենսագրական տվյալներ՝ սահմանված ձեւով,
  - աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկանք (տեղեկանքի ձևը),
  - որակավորման բարձրացման դասընթացներին մասնակցելու վկայականի (վկայականների) պատճենը (պատճեններ)՝ առկայության դեպքում,
  - երկու լուսանկար՝ 3x4 չափսի,
- **Բանկի խորհրդի նախագահը եւ անդամները ներկայացնում են հետեւյալ փաստաթղթերը՝**
  - բանկի միջնորդագիրը (թեկնածուի վերաբերյալ),
  - կենսագրական տվյալներ՝ սահմանված ձեւով,

- աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկանք (տեղեկանքի ձևը),

- **Օտարերկրյա բանկի դուստր բանկի խորհրդի նախագահը եւ անդամները, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը եւ անդամները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.**
  - բանկի միջնորդագիրը (թեկնածուի վերաբերյալ),
  - աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկանք (տեղեկանքի ձևը),
  - կենսագրական տվյալներ՝ սահմանված ձեւով,
  - դիպլոմի պատճենը (առկայության դեպքում),
- **Ընդ որում, հավակնորդը կարող է դիմել ՀՀ կենտրոնական բանկ՝ նաեւ մեկից ավելի ղեկավարների համար նախատեսված քննությունների մասնակցելու եւ համապատասխան վկայականներ ստանալու համար:**

Որակավորման տրամադրման գործընթացը

- **Որակավորման քննությունները.**
  - Հանձնաժողովը քննություններն անցկացնում է փաստաթղթերի փաթեթը ներկայացնելու պահից 15 օրվա ընթացքում,
  - Տեստերը եւ դրանցում պարունակվող հարցերի թիվը տարբերակվում են ըստ քննություն հանձնող ղեկավարների թեկնածուների եւ հավակնորդների (ելնելով նրանց ներկայացվող չափանիշներից) հետեւյալ խմբերի՝
    - բանկի գործադիր տնօրեն, վարչության նախագահ (100 հարց),
    - վերստուգիչ հանձնաժողովի նախագահ (80 հարց),
    - օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչ (100 հարց),
    - բանկի գլխավոր հաշվապահ, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ (100 հարց),
    - բանկի մասնաճյուղի կառավարիչ, վարչության անդամներ (80 հարց),
    - բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ (80 հարց),
    - վերստուգիչ հանձնաժողովի անդամներ (80 հարց),
  - տեստերի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի պատասխան, որոնցից մեկն է ճիշտ: Տեստի հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, իսկ սխալ պատասխանը, ինչպես նաեւ հարցին չպատասխանելը՝ զրո միավոր,
  - թեկնածուներին (հավակնորդներին) թույլատրվում է մասնակցել տեստային քննությանը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի ներկայացման դեպքում,
  - գրավոր քննության ժամանակ թեկնածուներին (հավակնորդին) արգելվում է օգտվել օրենսդրական, ենթաօրենսդրական ակտերից եւ այլ նյութերից, մասնագիտական գրականությունից, տեղեկատուներից, երկխոսության մեջ մտնել մյուսների հետ,
  - գրավոր քննությանը հատկացված ժամանակի ավարտից հետո թեկնածուն (հավակնորդը) պարտավոր է տեստը պատասխաններով հանձնել հանձնաժողովի պատասխանատու անձին,
  - նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում հավակնորդը զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից, եւ նրա վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն,
  - տեստերի հարցերի գնահատումը եւ ամփոփումը կատարվում է հետեւյալ կերպ՝
    - Եթե ղեկավարի թեկնածուն (հավակնորդը) հավաքել է միավորների առավելագույն թվի մինչեւ 66 տոկոսը, ապա նա չի մասնակցում հանձնաժողովի նիստին, եւ վերջինս արձանագրում է, որ առաջադրված թեկնածուն իր որակավորմամբ եւ մասնագիտական առումով չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին,
    - Եթե ղեկավարի թեկնածուն (հավակնորդը) հավաքել է միավորների առավելագույն թվի 66 եւ ավելի տոկոսը, ապա նա մասնակցում է հանձնաժողովի նիստին՝ բանավոր (հարցազրույցի տեսքով) ստուգում անցնելու համար,
  - տեստային քննության արդյունքները գնահատվում են յոթ բալանոց սանդղակով: Ընդ որում, 66-70% ճիշտ պատասխանները գնահատվում են 1 բալ, 71-75%-ը՝ 2 բալ, 76-80% -ը՝ 3 բալ, 81-85%-ը՝ 4 բալ, 86-90%-ը՝ 5 բալ, 91-95%-ը՝ 6 բալ, 96- 100%-ը՝ 7 բալ,
  - բանավոր քննության արդյունքները գնահատվում են հինգ հարց պարունակող հարցաթերթիկի պատասխանների հիման վրա՝ վեց բալանոց սանդղակով (0-5 բալերով),
  - գրավոր եւ բանավոր քննությունների արդյունքում հավաքած բալերին գումարվում է՝
    - 1-2 տարի եւ 2 տարուց ավելի ֆինանսաբանկային համակարգում մասնագիտական աշխատանքային փորձի առկայության դեպքում՝ համապատասխանաբար 1 եւ 2 բալ,

- մասնագիտական գիտական աստիճանի առկայության դեպքում՝ 1 բալ,
- մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներին մասնակցելու վկայականների առկայության դեպքում՝ 1 բալ:

– այսինքն քննության վերջնական արդյունքները գնահատվում են 16 բալանոց սանդղակով,

– տեստային եւ բանավոր քննության արդյունքներով հանձնաժողովը տվյալ անձի որակավորման եւ մասնագիտական համապատասխանության վերաբերյալ տալիս է հետեւյալ եզրակացություններից մեկը՝

- դրական եզրակացություն, եթե ղեկավարի թեկնածուն (հավակնորդը) հավաքել է 8 եւ ավելի բալ,
- բացասական եզրակացություն, եթե ղեկավարի թեկնածուն (հավակնորդը) հավաքել է 8-ից քիչ բալ,

– եթե բանկի խորհրդի անդամը մշտապես բնակվում է ՀՀ տարածքից դուրս, ապա նրա որակավորման եւ մասնագիտական համապատասխանության վերաբերյալ հանձնաժողովը տալիս է եզրակացություն՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի կողմից հաստատված հարցաթերթիկի պատասխանների արդյունքների ամփոփման հիման վրա (հեռակա քննում): Ընդ որում, եթե 3 ամսվա ընթացքում անհնար է դառնում բանկի խորհրդի անդամի հեռակա քննումը, ապա բանկը պարտավոր է ներկայացնել խորհրդի անդամի նոր թեկնածություն:

- **Որակավորում շնորհելը.**

– հարցազրույցի արդյունքների հիման վրա ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը արձանագրում է բանկի խորհրդի նախագահի համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին,

– բանկի ղեկավարների համար սահմանված փաստաթղթերի տվյալների եւ հարցազրույցի արդյունքների հիման վրա հանձնաժողովը արձանագրում է բանկի խորհրդի անդամների համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին,

– հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա ընդունված որոշման օրվանից ոչ ուշ, քան 2 օրվա ընթացքում, լրացվում եւ ղեկավարի թեկնածուին (հավակնորդին) տրվում է որակավորման ու մասնագիտական համապատասխանության վկայական: Հավակնորդի կողմից 10-օրյա ժամկետում հանձնաժողովի հիմնավոր կարծիքով անհարգելի պատճառով վկայականը չստանալու դեպքում ՀՀ կենտրոնական բանկի նախագահի հրամանով քննության արդյունքները չեղյալ են համարվում,

- **Մերժումը.**

– եթե բանկի կողմից ներկայացված ղեկավարի թեկնածուն չի համապատասխանում որակավորման եւ մասնագիտական համապատասխանության չափանիշներին, ապա բանկը պարտավոր է 45-օրյա ժամկետում կենտրոնական բանկ ներկայացնել նոր թեկնածություն: Այդ ընթացքում տվյալ պաշտոնում որպես ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել այլ անձ կամ տվյալ անձը,

– որակավորման եւ մասնագիտական համապատասխանության չափանիշներին չբավարարած անձի թեկնածությունը բանկը կարող է կրկին անգամ առաջարկել ոչ շուտ, քան 6 ամիս հետո՝ ներկայացնելով գրավոր միջնորդագիր: Ընդ որում, գրանցման եւ լիցենզավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա կենտրոնական բանկի նախագահի հրամանով որակավորման եւ մասնագիտական համապատասխանության չափանիշներին չբավարարած թեկնածուին կարող է թույլատրվել 6 ամսվա ընթացքում հանձնել կրկնակի քննություն:

Որակավորման վկայականի անվավեր համարելը

- **Վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերում անարժանահավատ կամ կեղծ տվյալներ ներկայացնելու դեպքում տրված վկայականը համարվում է անվավեր եւ վերադարձվում հանձնաժողովին:**

57. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի թիվ 372 որոշմամբ հաստատված կարգով

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ լիցենզիան անհրաժեշտ է կրթական գործունեություն իրականացնելու համար, այդ թվում՝**
  - նախադպրոցական հաստատությունների (մանկապարտեզներ, մսուր-մանկապարտեզներ, ընտանեկան մանկապարտեզներ),
  - հանրակրթական (տարրական, հիմնական, միջնակարգ) դպրոցների, վարժարանների եւ կրթահամալիրների,
  - հատուկ ընդհանուր եւ գիշերօթիկ դպրոցների,
  - նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների,
  - միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների,
  - բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների,
  - հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնագիտական հաստատությունների,
  - ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի, այդ թվում՝
    - օտարերկրյա հաստատությունների մասնաճյուղերի:

Լիցենզիայի առանձնահատկությունները

- **լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի համար,**
- **տրամադրվում է անժամկետ,**
- **փորձաքննության պահանջ կա,**
- **ոչ պետական ուսումնական հաստատությունները կրթական գործունեության իրավունք են ձեռք բերում լիցենզիա ստանալու, իսկ պետական ուսումնական հաստատությունները՝ հիմնադրման պահից,**
- **տարբեր ծրագրեր իրականացնող կրթական գործունեության յուրաքանչյուր տեսակի համար տրվում է առանձին լիցենզիա,**
- **սույն լիցենզիան, ինչպես նաև նրա ներդիրը չի կարող փոխանցվել կամ օտարվել:**

Լիցենզավորող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մ-Խորենացու-13,
    - Հեռախոս՝ 526602:

Լիցենզիա ստացողը

- **Լիցենզիա կարող են ստանալ իրավաբանակն անձինք այն դեպքում, եթե ունեն.**
  - հիմնական մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմ,
    - բարձրագույն մասնագիտական հաստատության դեպքում՝
      - պրոֆեսորադասախոսական կազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինի տվյալ ուսումնական հաստատության (կազմակերպության) հիմնական հաստիքային աշխատող,
      - առնվազն 50 տոկոսը պետք է ունենա գիտական աստիճան կամ պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական կոչում, այդ թվում՝յուրաքանչյուր մասնագիտության գծով 3-ը՝ մասնագիտական առարկաներից.
  - լաբորատոր բազա և ուսումնական տարածք,
    - պետք է հագեցված լինի նախարարության կողմից սահմանված անհրաժեշտ նյութերով, չափիչ-ստուգիչ սարքերով, սարքավորումներով, համակարգչային դասարանով, իսկ բժշկական ուսումնական հաստատությունների համար՝ նաեւ կենդանանոցով (վիվարիում).
    - ուսումնական հաստատությունը պետք է ունենա մարզադահլիճ, որն առնվազն 25 սովորողի միաժամանակյա պարապմունքի անցկացման հնարավորություն է ընձեռում,

    - սեփական ուսումնալաբորատոր եւ մարզական բազաների բացակայության դեպքում պետք է կնքվի համապատասխան այլ բազաներից օգտվելու պայմանագիր,
  - ուսումնամեթոդական ապահովում,
  - գրադարանային-տեղեկատվական համակարգ,
    - գրադարանի բացակայության դեպքում պետք է կնքվի գրադարանից օգտվելու պայմանագիր,
  - ուսումնաարտադրական պրակտիկայի բազա (միջին եւ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների համար):

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է...

- **ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հավատարմագրման ծառայություն ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝**
  - դիմում, որտեղ նշվում են.
    - իրավաբանական անձի լրիվ անվանումը,
    - կազմակերպական իրավական ձեւը,
    - գտնվելու վայրը,
    - հեռախոսը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը,
    - կրթական գործունեության տեսակները եւ կրթության ձեւը (առկա, հեռակա, դրսեկություն)՝ ըստ կրթական աստիճանների, մասնագիտությունների, լրացուցիչ կրթական ծրագրերի եւ դասընթացների ցանկի,
  - կանոնադրության պատճենը,
  - պետական գրանցման վկայականի պատճենը,
  - փաստաթղթեր հիմնական մանկավարժական եւ պրոֆեսորադասախոսական կազմի, լաբորատոր բազայի, ուսումնական տարածքի, ուսումնամեթոդական ապահովման, գրադարանային-տեղեկատվական բազայի, ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի վերաբերյալ,
    - ուսումնական հաստատությունում գրադարանի բացակայության դեպքում ներկայացվում է գրադարանի հետ կնքած պայմանագրի պատճենը,
    - ուսումնալաբորատոր եւ մարզական բազաների բացակայության դեպքում ներկայացվում են տեղեկանք համապատասխան այլ բազաներից օգտվելու պայմանագրերի պատճենները
- **փորձաքննությունը.**
  - ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն պետք է ներկայացնել հետեւյալ տեղեկությունները՝ վերջինիս կողմից դրանք մեկամսյա ժամկետում ստուգելու նպատակով.
  - տարածքներ զբաղեցնելու վերաբերյալ տվյալներ՝ սահմանված սանիտարական նորմերին համապատասխան,
  - ուսումնամեթոդական փաստաթղթերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին՝
    - մասնագիտության ուսումնական պլանը,
    - ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրերը (հանրակրթական, միջին եւ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների համար),
    - սովորողների ընդունելության, ավարտական եզրափակիչ քննությունների հանձնման եւ դիպլոմային նախագծերի պաշտպանության, տեղափոխման եւ փոխադրման կարգերը (հանրակրթական, միջին եւ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների համար),
    - ուսումնական հաստատության (կազմակերպության) մանկավարժական եւ պրոֆեսորադասախոսական կազմը,
    - հիմնական մանկավարժական եւ պրոֆեսորադասախոսական կազմի, լաբորատոր բազայի, ուսումնական տարածքի, ուսումնամեթոդական ապահովման, գրադարանային-տեղեկատվական բազայի, ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի համապատասխանությունը ներկայացված պահանջներին,
  - Ուսումնական հաստատությունը ներկայացնում է իր բնագավառի բազային հաստատությունների, հիվանդանոցների եւ կազմակերպությունների ցանկը, ինչպես նաեւ դրանց հետ կնքված պայմանագրերի պատճենները, որտեղ նշվում են՝
    - պրակտիկա անցնողների թիվը եւ անհրաժեշտ աշխատատեղերը,
    - պրակտիկայի աշխատանքային ծրագիրը եւ ժամկետը:
- **վճարել պետական տուրքը,**

- 24 հազար դրամ,
- տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում լիցենզիա ձեռք բերելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:

- **կրկնօրինակը.**
  - իրավաբանական անձը լիցենզիայի վկայականը կորցնելու դեպքում դիմում է նախարարություն, որը 15-օրյա ժամկետում տալիս է "Կրկնօրինակ" նշագրմամբ լիցենզիայի նոր վկայական, որի համար գանձվում է պետական տուրք՝ 24 հազար դրամի չափով:

Լիցենզիայի տրամադրման գործընթացը

- **Փորձաքննության ժամկետները.**
  - փորձաքննության համար հատկացվում է մեկամսյա ժամկետ,
  - ժամկետի ավարտից հետո նախարարության հավատարմագրման ծառայությունը եզրակացությունը ներկայացնում է նախարարին, որի հրամանով 15 օրվա ընթացքում կարող է անցկացվել կրկնակի փորձաքննություն:
- **Որոշման ընդունումը.**
  - լիցենզավորման կամ մերժման վերաբերյալ որոշումն ընդունվում է Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության կողմից,
  - փորձաքննության ավարտից հետո 5 օրվա ընթացքում հայտատուն պետք է տեղեկացվի նախարարությաան կողմից լիցենզիայի ընդունման կամ մերժման մասին,
  - Նախարարությունը լիցենզիա տալու մասին տեղեկությունը հրապարակում է մամուլում:
- **Մերժումը.**
  - լիցենզիա ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - փաստաթղթերում ներկայացբած տվյալները չեն համապատասխանում իրականությանը,
    - փաստաթղթերում ներկայացված տվյալները չեն համապատասխանում ներկայացված պահանջներին,
  - լիցենզավորող մարմինն իրավունք չունի հայտը մերժել աննպատակահարմարության շարժառիթով,
  - լիցենզիայի հայտի մերժման մասին որոշումը հայտատուն իրավունք ունի ընթացքում գանգատարկել դատական կարգով:
- **Խախտումները.**
    - իրավաբանական անձի կողմից լիցենզիայի պայմաններից որեւէ մեկի խախտման դեպքում նախազգուշացվում է նախարարության կողմից,
    - իրավաբանական անձը պարտավոր է 6-ամսյա ժամկետում վերացնել նշված խախտումները եւ դրանց վերացման մասին հայտնել նախարարություն՝ ներկայացնելով հիմնավորող փաստաթղթեր,
    - սահմանված ժամկետում խախտումը (խախտումները) չվերացվելու դեպքում կասեցվում է համապատասխան մասնագիտության (մասնագիտությունների) գծով ընդունելությունը՝ մինչեւ խախտման (խախտումների) վերացումը:

Լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչելը

- **Լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում, երբ՝**
  - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվել է ուսումնական հաստատության (կազմակերպության) գործունեությունը,
  - իրավաբանական անձը դիմել է լիցենզիան հանձնելու խնդրանքով,
  - իրավաբանական անձի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են ակնհայտ կեղծ տեղեկություններ,
  - իրավաբանական անձը լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի հրամանի արձակման պահից զրկվում է կրթական գործունեություն իրականացնելու իրավունքից: Ուժը կորցրած ճանաչված լիցենզիան 10-օրյա ժամկետում ենթակա է վերադարձման ծառայություն,
- **Նախարարությունը 5-օրյա ժամկետում լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին իրազեկում է իրավաբանական անձին եւ համապատասխան տեղեկատվություն հրապարակում մամուլում կամ զանգվածային լրատվության մյուս միջոցներով:**
- **Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:**

58. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի թիվ 372 որոշմամբ

Ընդհանուր բնութագիրը

- **Տվյալ գործընթացն անհրաժեշտ է անցնել ՀՀ միջնակարգ եւ բարձրագույն մասնագիտական պետական եւ ոչ պետական ուսումնական հաստատությունների եւ դրանց մասնագիտությունների հավատարմագրման համար:**

Հավատարմագրի առանձնահատկությունները

- **Պետական ուսումնական հաստատությունները և դրանց մասնագիտությունները, ինչպես նաև ոչ պետական ուսումնական հաստատությունների բժշկական մասնագիտությունները պարտադիր պետք է անցնեն հավատարմագրման գործընթաց,**
- **ուսումնական հաստատությունների մասնագիտությունների հավատարմագրումն իրականացվում է առանձին փուլերով՝ ըստ որակավորման աստիճանների,**
- **պետական հավատարմագրման համար նախատեսված փորձաքննության, պետական քննությունների, գործուղման, տեղեկատվություն տալու եւ այլ ծախսերը, անկախ ատեստավորման գործընթացի արդյունքից, պայմանագրային կարգով հատուցում է ուսումնական հաստատությունը,**
- **ուսումնական հաստատության առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումները (կրթահամալիրների, մասնաճյուղերի) և դրանց մասնագիտությունները հավատարմագրվում են ընդհանուր հիմունքներով,**
- **փորձաքննության պահանջ կա,**
- **հավատարմագրման վկայականը օտարման ենթակա չէ:**

Հավատարմագրող մարմինը

- **Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարություն.**
  - հասցե / հեռախոսներ՝
    - Երեւան 375010, Մ-Խորենացու-13,
    - Հեռախոս՝ 526602:

Հավատարմագիր ստացողը

- **Հավատարմագիր կարող են ստանալ իրավաբանական անձինք այն դեպքում, եթե ապահովված են հետեւյալ պահանջները.**
  - պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսուցման որակի ապահովումը,
  - առանձին մասնագիտության գծով երկու տարի անընդմեջ շրջանավարտների առնվազն 60 տոկոսի ատեստավորման դրական արդյունքները,
  - ուսումնական հաստատության գծով՝ այդ հաստատության մասնագիտությունների առնվազն 75 տոկոսի պետական հավատարմագրման առկայությունը:

Հավատարմագրման ստանալու համար անհրաժեշտ է...

- **իրականացնել սեփական գործունեության վերլուծություն, որն ընդգրկում է՝**
  - պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության հիմնավորումը,
  - ուսումնական հաստատության ուսումնագիտական ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատումը,
  - ուսումնական հաստատության զարգացման ծրագրի հիմնական ուղղությունները,
  - լիցենզավորման պահանջների կատարման գնահատումը,
- **փորձաքննությունը.**
  - հավատարմագրման հայտ ներկայացրած իրավաբանական անձը պայմանագրային հիմունքներով դիմում է համապատասխան որակավորում ունեցող եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հավատարմագրման ծառայության կողմից երաշխավորված իրավաբանական անձին, հիմնարկին, կամ անհատ ձեռնարկատիրոջը, որն իրականացնում է ուսումնական հաստատության ուսումնական գործունեության փորձաքննություն:

- **վճարել պետական տուրքը,**
  - 24 հազար դրամ,
  - տուրքի չափը սահմանվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ որպես բազիսային գումարի 24-ապատիկ: Բազիսային գումարի փոփոխման դեպքում հավատարմագիր ստանալու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը համապատասխանաբար կփոխվի:
- **կրկնօրինակը.**
  - Ուսումնական հաստատությունը պետական հավատարմագրման վկայականը կորցնելու դեպքում դիմում է նախարարություն, որը 15-օրյա ժամկետում տալիս է "Կրկնօրինակ" նշագրմամբ պետական հավատարմագրման նոր վկայական, որի համար գանձվում է պետական տուրք 24 հազար դրամ չափով

Հավատարմագրի տրամադրման գործընթացը

- **Փորձաքննության ժամկետները.**
  - ուսումնական հաստատությունը փարձաքննության ավարտից հետո մեկամսյա ժամկետում ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հավատարմագրման ծառայություն է ներկայացնում փորձագիտական եզրակացությունը եւ վերլուծության մեկ օրինակը:
- **Ատեստավորումը.**
  - փորձագիտական եզրակացության եւ անընդմեջ 2 տարվա շրջանավարտների առնվազն 60 տոկոսի ատեստավորման դրական արդյունքների հիման վրա հավատարմագրման ծառայությունը մեկամսյա ժամկետում պետական հավատարմագրման մասին եզրակացություն է ներկայացնում կրթության և գիտության նախարարին:
- **Որոշման ընդունումը.**
  - հավատարմագրման ծառայությունը պետական հավատարմագիր տալու կամ պետական հավատարմագիր տալը մերժելու մասին նախարարի հրամանը 5-օրյա ժամկետում հաղորդում է ուսումնական հաստատությանը,
  - ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հավատարմագրային ծառայությունը հավատարմագրման մասին տեղեկությունը հրապարակում է մամուլում կամ զանգվածային լրատվության մյուս միջոցներով:
- **Մերժումը.**
  - հավատարմագիր ստանալու հայտը կարող է մերժվել, եթե՝
    - նախարարության հավատարմագրման ծառայության եզրակացությունը բացասական է,
    - մեկ տարվա շրջանավարտների ատեստավորման դրական արդյունքները ցածր են 60 տոկոսից,
  - հավատարմագրի հայտի մերժման մասին որոշումը հայտատուն իրավունք ունի ընթացքում գանգատարկել դատական կարգով:
- **Խախտումները.**
  - իրավաբանական անձի կողմից հավատարմագրի տրամադրման պայմաններից որեւէ մեկի խախտման դեպքում նախազգուշացվում է նախարարության կողմից,
  - իրավաբանական անձը պարտավոր է 1-ամսյա ժամկետում վերացնել նշված խախտումները եւ դրանց վերացման մասին հայտնել նախարարություն՝ ներկայացնելով հիմնավորող փաստաթղթեր:

Հավատարմագրի գործողության ուժը կորցրած ճանաչելը

- **Հավատարմագիրն ուժը կորցրած է ճանաչվում, երբ՝**
  - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվել է ուսումնական հաստատության գործունեությունը,
  - հավատարմագրված մասնագիտությունների գծով անընդմեջ 2 տարի սովորողների 50 տոկոսը կրկնակի բացասական են ատեստավորվել,
  - նախազգուշացման համար հիմք հանդիսացող խախտումները սահմանված ժամկետում չեն վերացվել,
  - լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել,
  - ուսումնական հաստատություն ներկայացված փաստաթղթերում առկա են ակնհայտ կեղծ տեղեկություններ:
- **Հավատարմագրման ծառայությունը պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի հրամանը հրապարակում է մամուլում կամ զանգվածային լրատվության մյուս միջոցներով:**
- **Ուսումնական հաստատությունը պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի հրամանն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է իր ստացած պետական հավատարմագրման վկայականը վերադարձնել ծառայություն:**

- Հավատարմագրման ծառայությունը պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի հրամանը հրապարակում է մամուլում կամ զանգվածային լրատվության մյուս միջոցներով:
- Ուսումնական հաստատությունը պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի հրամանն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է իր ստացած պետական հավատարմագրման վկայականը վերադարձնել ծառայություն:
- Պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

WWW.LICENSING.AM

Երևան - 2001